3621-
-3622

Կովկասի Հայոց Հոգեւորական Ընկերութիւն № 2

ՀՈՒԻՍ ՈՒՈՂՂԻՍ

# ԲԷՆ ՀՈՒՐ

Վէպ Յիսուսի ժամանակից

II ՀԱՏՈՐ

Թարգմ. անգլիերէնից

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Թիֆլիս
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Մուխրանեան փող., № 13. Հեռախօս № 566.
1911

27.08.2013

3622

# ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Հայաստանի ազգային գրադարան
ՀԱՄԱՐ
5090-2009

Ա.

## *Գրատուսին զգուշացնում են*

Պալատի դահլիճում տեղի ունեցած գինարբուքի առաւօտեան երիտասարդ պատրիկները հարբած ընկած էին թախտերի վրայ։ Թող Մաքսէնտիուսն, եթէ ուզենար, Անտիոք գար և թող քաղաքը նրան դիմաւորելու դուրս վազէր. թող զրահավառ լեգէոնը նրան դղրունելու համար Սուլպիուս սարից վայր իջնէր. թող ընդունելութեան հանդէսը դեռ Արևելքում չտեսնուած շքով կատարուէր,—ինչ փոյթ հարբածներին. նրանք կըշարունակէին մրափել իրենց ընկած տեղերում։

Սակայն բոլորն էլ այդքան պինեհար չէին։ Հէնց որ առաւօտեան լոյսը ներս շողաց՝ Մէսալան ոտքի ելաւ և պահակը գլխից հանեց իբրև նշան, թէ խնջոյքն արդէն վերջացած է. յետոյ պարեգօտը հագաւ, տեսարանն աչքի անցրեց և առանց մի բառ ասելու՝ դէպի իր բնակարանը հեռացաւ։ Կիկերոնն անգամ աւելի աղնիւ վեհութեամբ մեկնած չէը լինիլ Ծերակոյտի պիշերուայ նիստից։

Երեք ժամ յետոյ նրա սենեակը երկու մարդիկ մտան և երկուսն էլ նրանից մի մի ծրար ընդունեցին միևնոյն բովանդակութեամբ. դրանք կնքուած նամակներ էին առ Վալերիուս Գրատուս կուսակալը, որ դեռ նստած էր Կեսարիայում։ Թէ ո՛րքան կարևոր էր նամակների շուտ ու ստոյգ տեղ հասնելը, աւելորդ է ասել։ Երկու սուրհանդակներից մէկը ցամաքի ճան-

պով պիտի մեկնէր, միւսը՝ ծովի. երկուսն էլ պիտի շտապէին։

Այդպէս ուղարկուող նամակների բովանդակութիւնը հետևեալն էր.

«Անտիոք, XII յուլիս ամսի.

**Մէսալաց Գրատուսին։**

«Մի զարմանալի դէպք պիտի յայտնեմ քեզ, որ թէև տակաւին մի կարծիքական բան է, բայց և այնպէս քո շուտափոյթ ուշադրութեան արժանի։

«Նախ, թոյլ տուր, յիշողութիւնդ արթնացնեմ։ Կըմտաբերե՞ս արդեօք շատ տարիներ առաջ Երուսաղէմում բնակուած մի հնօրեայ և անչափ հարուստ հրէից իշխանի ընտանիք... Բէն Հուր անունով։ Եթէ յիշողութիւնդ տկար է, թող գլխիդ սպին այդ անունը քեզ յիշեցնէ։

«Հետաքրքրութիւնդ գուցէ շարժուի, եթէ յայտեմ, որ կեանքիդ դէմ գործուած դաւը պատժելու համար— ի հանգստութիւն խղճիդ կըմաղթեմ աստուածներից որ չհաստատուի, թէ այդ դաւը մի լոկ դիպուած էր— ընտանիքը բռնուել էր և ծածուկ վերցուել մէջտեղից, իսկ գոյքն ու կայքը գրաւուել։ Եւ որովհետև յետոյ այս պատիժն իմաստուն և արդար միտպետի հաստատութեան արժանացաւ—թող նրա սեղանները ծաղկազարդ մնան, յաւիտեան—ուստի գրաւուած գոյքից մեզ հասած գումարների յիշատակը մի նախատական բան չէ բնաւ, և ես երբեք չեմ դադարել լինձ վիճակուած մասի համար քեզ շնորհակալ լինելուց, մանաւանդ եթէ շարունակեմ այնպէս ազատ վայելել նրան, ինչպէս որ այժմ եմ վայելում։

«Այն էլ քեզ կըյիշեցնեմ, իբրև խոհեմութեանդ մի ուրիշ ապացոյց, որ դու մեր նպատակին հասնելու համար բարւոք էիր դատել լուսթեան, այսինքն մի անխուսափելի, բայց բնական մահուան դատապարտել վերոյիշեալ ընտանիքը։ Զարագործի մօր և քրոջ վերաբերմամբ դրած վճիռդ անտարակոյս կըյիշես. և եթէ ես այժմ կըփափագէի իմանալ—արդեօք նրանք դեռ կենդանի՞ են, թէ մեռած, բարութիւնդ ճանաչելով, վստահ եմ, Գրատուս, որ ներողամիտ կըլինիս և ցանկութիւնս կըկատարես։

«Համարձակւում եմ մի տեղ ձգել և մի ուրիշ բան, որ ներկայումս շատ աւելի կարևոր է։ Բուն յանցաւորը դատապարտուել էր սարկուեթեան և թիարկուեթեան ցկեանս—այս էր վճիռդ։ Եւ եթէ ասեմ, որ ես անձամբ կարդացել եմ գրաւոր վաւերացումն այն բանի, թէ նա իրօք յանձնուել էր նաև հրամանատար տրիբունին, այն ժամանակ նամակիս նիւթը և՛ս աւելի կըզարմացնէ քեզ։

«Հետաքրքրութիւնդ արդէն սկսում է շարժուել, չէ՞։

«Թիավար ստրուկների կեանքի միջին տևողութիւնը հաշուելով, այս պատժին ենթարկուածն արդէն մեռած պիտի լինէր, և ներիր բոպէական թուլութեանս, ով դու առաքինութեան և քնքշութեան նախատիպ... ես նրան այնքան սիրում էի և նա այնքան գեղեցիկ էր, որ իրաւունք ուներ ովկիանոսի երեք հազար յաւերժահարսներից գոնէ մէկի գիրկն ընկնելու... Ես նրան մեռած էի համարում և շարունակ հինդ տարի անվրդով վայելում էի այն հարստութիւնը, որ մասամբ նրան եմ պարտական։ Քաւ լիցի սակայն, որ ես ուրանամ, թէ որքան եմ շնորհապարտ յատկապէս և քեզ։

«Արդ գալիս եմ բուն խնդրին։

«Անցեալ գիշեր, մինչ ես գահերէցի պաշտօն էի վարում մի խնջոյքում, որ տրուած էր Հռոմից նոր

եկած և դեռ անփորձ պատանիների պատուին, մի տարօրինակ պատմութիւն լսեցի։ Դու գիտես, որ այսօր Մաքսենտիուսն Անտիոք է գալիս Պարթևաց դէմ արշաւանքի պատրաստութիւն տեսնելու համար։ Նրա փառասէր հեռւորդների թուումն է և հանգուցեալ Կուինտուս Արիուս երկապետի որդին։ Ես առիթ ունեցայ յատկապէս սրա մասին տեղեկութիւններ հաւաքելու։ Երբ Արիուսը ծովահէններին հալածելու գնաց և նրանց ջարդելով իր փառքի գագաթին հասաւ, նա ընտանիք չունէր. այն ինչ արշաւանքից յետ գալիս նա մի ժառանգ էլ բերաւ իր հետ։ Դէ, հանգիստ եղիր, ինչպէս վայել է հանգիստ լինել այնքան տաղանդներ ունեցող հարստին։ Իմ յիշած այդ ժառանգն ու որդին քո վճռով թիարկութեան ուղարկուած բէյն Հուրն է... այն իսկ բէյն Հուրը, որ արդէն հինգ տարի առաջ մեռած կըլինէր իր պատժից։ Այժմ նա վերադարձել է իբրև մի հարուստ և պաշտօնատար մարդ, գուցէ և իբրև հռոմէական քաղաքացի, որ... Սակայն դու այնքան ամուր ես նստած թամբիդ վրայ, որ անհանգիստ լինելու տեղիք չունիս. մինչդեռ ես վտանգի մէջ եմ, բարեկամ, և ինչո՞ւ... քեզ ասելն աւելորդ է։ Ո՞վ գիտէ այս, եթէ ոչ դու։

«Ի՞նչ կասես այս բոլորի մասին։—Թէ բոլորն էլ պատարկ բանե՞ր են։

«Երբ Արիուսը՝ ովկիանոսի գրկից փախած ուրուականին որդեգրող հայրը՝ պատերազմ է տալիս ծովահէններին, նրա նաւը և միջի մարդիկն ընկղմում են, բացի երկուսից... նոյն ինքն Արիուսից և այդ որդեգրից։

«Երկուսին էլ տախտակի վրայ գտնող ու փրկող սպաներն ասում են, թէ տրիբունի ընկերակիցը մի երիտասարդ մարդ է եղել և նաւի վրայ բերուելիս տրկի հագուստ է ունեցել։

«Այս բոլորն առնուազն համոզիչ է. բայց որպէս զի սասծներս ծիծաղելի չհամարես, կաւելացնեմ, բարեկամ, որ երեկ ես բախտ ունեցայ երես առ երես տեսնելու Արիուսի խորհրդաւոր ժառանգին։ Այժմ ես հաստատ պնդում եմ,—թէև չկարողացայ ճանաչել նրան,—որ նա Բէյն Հուրն է, իմ նախկին խաղընկերը, այն իսկ Բէյն Հուրը, որ—եթէ նա մի տղամարդ է, անգամ յետին դասակարգից—այժմ վրէժ է որոճում... ես էլ նոյնը կանէի, եթէ նրա տեղը լինէի... մի այնպիսի վրէժ, որ կարելի է մահով միայն յագեցնել—վրէժ իր մօր, իր քրոջ, իր անձի փոխարէն և... այս ասում եմ հուսկ յետոյ, թէև կուզենայիր, որ ամենից առաջ ասէի — վրէժ իր կորած հարստութեան փոխարէն։

«Արդ, ով բարեկամ և բարերար, եթէ նամակս մինչև այս կէտը կարդացած լինիս, քամահական ժպիտդ կանհետանայ, որովհետև քեզ նման մի բարձրաստիճան մարդու համար այնքան տաղանդներ կորցնելը հարուածներից ամենաչարը կըլինէր, և դու կըսկսես մտածել, թէ ինչ պէտք է անել այս մօտալուտ վտանգի դէմ։

«Անտեղի եմ համարում խորհուրդ տալ քեզ. աւելի լաւ է, որ ես քո պաշտպանութեան տակ մանեմ և ասեմ, թէ դու ես իմ Ոդիսևսը և քեզ կըպատշաճի խորհուրդ տալ ինձ։

«Զուարճութեամբ երևակայում եմ, թէ ինչպէս ես կարդում նամակս։ Տեսնում եմ՝ նախ լուրջ կերպով, յետոյ ժպտով ես աչքի անցնում տողերս. բայց երբ վարանքդ վերջանում է, որոշում ես այսպէս անել

կամ այնպէս, և ցոյց ես տալիս, որ Հերմէսի նման իմաստուն ես և կեսարի պէս վճռական։

«Արևն արդէն բարձրացել է։ Մի ժամից յետոյ երկու սուրհանդակ կընհառանան իմ շէմքից, երկուսն էլ նամակիս մի մի պատճէնը տանելով։ Մէկը կըմեկնի ցամաքային ճանապարհով, միւսը ծովի — այնքան կարևոր եմ համարում արագ և ստոյգ յայտնել քեզ մեր Թշնամու երևալը Հռոմէական պետութեան այս մասում։

«Ես այստեղ կըսպասեմ պատասխանիդ։

«Բէն Հուրի գնալու ժամանակը կախուած կըլինի իր մեծաւորի, այսինքն հիւպատոսի որոշումից. իսկ հիւպատոսը մէկ ամսից առաջ չի մեկնիլ, նոյնիսկ եթէ իր պատրաստութիւնները գլուխը ցերեկ փութացնէր։ Դու հօ գիտես՝ ինչ կընշանակէ զօրք ժողովել, սպառազինել և բոլոր պէտքերը հոգալ մի պատերազմի համար, որ մղուելու է ամայի, անշէն աշխարհում։

«Ես երեկ Դաւինէի անտառում տեսայ հրէին... Եթէ այժմ այնտեղ չլինի, անտարակոյս շրջակայքում կըլինի, և ես աչքաթող չեմ անիլ նրան։ Բայց եթէ հարցնես, թէ այս լոպէիս ո՞րտեղ է, ամենամեծ վստահութեամբ կարող եմ ասել—Արմաւենեաց անտառումն է, դաւաճան Իլդերիմ Շէյխի վրանում, Շէյխի, որ այլ ևս մեր զօրեղ բազկից չի փախչիլ։ Զգարմանաս ուրեմն, եթէ Մաքսէնտիուսի առաջին գործն այն լինի, որ ձերբակալէ այս արաբին և նաւով Հռոմ ուղարկէ։

«Հրէի ո՞րտեղ լինելը յիշատակում եմ որոշումդ դիւրացնելու համար։ Ես արդէն այնքան սովորել եմ և իմաստութեան մէջ զարգացել, որ պարծենալով կասեմ, թէ իւրաքանչիւր մարդկային գործ երեք բան է պահանջում—ժամանակ, տեղ և միջոց։



«Եթէ վճռես, թէ գործելու տեղն Անտիոքն է, մի՛ յապաղիր անելիքդ ինձ յանձնել՝ հաւատարիմ բարեկամիդ, որ կըցանկար նաև ամենաժիր աշակերտդ հանդիսանալ։

**Մէսալա»**

**Բ.**

## *Պատրաստութիւն*

Վաղ առաւօտեան՝ այն իսկ ժամին, երբ սուրհանդակները նամակներն ստանալով՝ հեռանում էին Մէսալայի տանից, Բէն Հուրն Իլդերիմի վրանը մտաւ։ Նա արդէն լողացել էր, նախաճաշել, և այժմ մի անթև ներքնակ էր հագած, որի եզերքը հաղիւ էր հասնում ծնկներին։

Շէյխը ողջունեց նրան թախտի վրայից։

—Խաղաղութի՛ւն քեզ, որդիդ Աբիուսից,—ասաց նա, հիանալով տղամարդու վրայ։ Մի այդպիսի բողբոջուն, զօրեղ և ինքնավստահ արիութեան օրինակ նա դեռ երբէք չէր տեսել։—Գալդ բարի՛։ Ձիերն արդէն պատրաստ են. ես էլ եմ պատրաստ։ Իսկ դո՞ւ։

—Դարձնում եմ խաղաղութեան ողջոյնդ, ով բարի Շէյխ, և շնորհակալ եմ մաղթանքիդ համար։ Ե՛ս էլ ահա պատրաստ եմ։

Իլդերիմը ծափահարեց։

—Ուզում եմ որ ձիերն առաջ բերեն։ Նսափը։

—Արդէն սարքուա՞ծ են։

—Ո՛չ։

—Ուրեմն թոյլ տուր, որ այդ գործը ես ինքս հոգամ,—ասաց Բէն Հուրը։—Ինձ անհրաժեշտ է ծանօ-

թանալ արաբներիդ հետ, նրանց անուննները սովորել և բնութիւնը ճանաչել, որովհետև նրանք մարդկանց պէս են: Եթէ շատ քաջասիրտ են, պէտք է փոքր ինչ զսպել նրանց, իսկ եթէ վեհերոտ են—քաջալերել ու գգուել: Հրամայիր բերել նրանց սարքը:

—Կառքն ի՞նչ,—հարցրեց Շէյխը:

—Կառքն այսօր չեմ գործածիլ: Դրա փոխարէն թող մի հինգերորդ ձի բերեն, եթէ ունես: Պէտք է որ նա անթամբ լինի և միւսների չափ սրընթաց:

Իլդերիմի հետաքրքրութիւնը գրգռուեց, և նա իսկոյն մի ծառայ կանչեց:

—Աստ, որ իսկոյն քառաձիի սարքը բերեն և մի երասան Շնիկի [1]) համար:

Իլդերիմը վեր կացաւ:

—Շնիկն իմ սիրելին է, ես էլ նրա սիրելին եմ, ով որդիդ Արիուսի:—Քանի տարի է, որ ես ու նա ընկերներ ենք վրանում, ռազմում և անապատի ամենի արկածներում: Ահա իսկոյն ցոյց կըտամ քեզ:

Շէյխը քաշեց վրանի միջին վարագոյրը, և Բէն Հուրը միւս կողմն անցաւ: Բոլոր ձիերը Շէյխին մօտեցան և մէկը՝ փոքրիկ գլխով, ցոլուն աչքերով, աղեղնաձև կոր վզով, հուժկու լանջքով և ծփծփուն թաւ բաշով, որ մի կնոջ մազերի նման փափուկ էր,—նրան տեսնելուն պէս ուրախ ուրախ վրնջաց:

—Ա՛յ քաջ ձի,—ասաց Շէյխը, կենդանու թուխ այտը շոյելով,—բարի լոյս, իմ քաջ ձիս:—Դառնալով յետոյ Բէն Հուրին, շարունակեց.—Սա Շնիկն է, այս չորսի հայրը: Իսկ մայրը Միրան է, որ սպասում է մեր վերադարձին: Մենք նրան տանը թողինք. մեզք

[1]) Մեծ-Շան համաստեղութեան ամենապայծառ աստղը՝ Sirius:



կըլինէր ենթարկել նրան այստեղի օդի վտանգներին: Այս էլ կասեմ, որդիդ Արիուսի, որ մեր ցեղը հազիւ թէ այն թանկագին էակի բացակայութեան դիմանար: Նա մեր փառքն է. բոլորն էլ նրան պաշտում են և ուրախ կըլինէին ամբակակոխ լինել նրանից: Այսօր տասը հազար գինուորներ, բոլորն էլ անապատի որդիք, կըհարցնեն.—Ի՞նչ լուր ունիս Միրայի մասին,—և երբ լսեն—առողջ է,—իսկոյն և եթ կըգոչեն.—Աստուած բարի է, նրա անունն օրհնած լինի:

—Միրա, Շնիկ... աստղերի անուն են, չէ՞, Շէյխ,—հարցրեց Բէն Հուրը, ձիերին մէկ մէկ մօտենալով և ամէն մէկին ձեռքը մեկնելով:

—Եւ ինչո՞ւ աստղերի անուն չկրեն,—պատասխանեց Իլդերիմը:—Երբ և է եղած ես դու անապատում գիշերով:

—Ոչ:

—Ուրեմն չես էլ կարող իմանալ, թէ աստղերն ինչ նշանակութիւն ունին արաբներիս համար: Մենք նրախօտագիտութեամբ փոխ ենք առնում նրանց անուններն և տալիս ենք մեր սիրելիներին: Իմ բոլոր նախնիքն ունեցել են մի մի Միրա, ինչպէս ես էլ ունիմ. և այս մանուկ ձիերն էլ մի մի աստղ են: Ահա սա Ռիգելն է, դա Անտարէսն է, նա Անթայրն է, այն մէկն էլ Ալդեբարանն է—ամենից չահեկը, բայց ոչ ցեղինը, ո՛չ: Ա՛յնպէս քամու դէմ թռցնէ քեզ, որ ականջներդ զըւզըւան: Ո՛ւր ասես կերթայ, ով որդիդ Արիուսի. այո՛, Սողոմոնի փառքը վկայ, նոյնիսկ առիւծի երախը կըտանէ քեզ, մէյն թէ սիրտ ունենաս իշխելու նրան:

Սարքերը բերին: Բէն Հուրն իր ձեռքով սանձ դրաւ ձիերին, իր ձեռքով դուրս տարաւ վրանից և իր ձեռքով երասաններն ուղղեց:

—Այժմ բերէք Շնիկին,— ասաց նա։

Նոյնիսկ արաբացին աւելի յաջող չէր ցատկիլ երիվարի վրայ։

—Այժմ երասանները։

Նա բռնեց երասանները և բաժանեց իրարից։

—Պատրաստ եմ, Շէյխ,—ասաց նա։—Թող մի մարդ իմ առջևից վէպի դաշտը գնայ և ծառաներիդ ասա, որ ջուր տանեն։

Սկիզբը յաջող էր։ Ձիերը չէին խրտնում։ Կարծես մի լուռ միաբանութիւն կար նրանց և նոր վարիչի միջև, որ վստահաբար յառաջ էր տանում իր գործը, ձիերին էլ վստահութիւն ազդելով։ Նա վազեցնում էր նրանց նոյն կարգով, ինչ կարգով որ պիտի վազէին, եթէ լծուած լինէին. իսկ ինքը նստած էր Շնիկի վրայ։ Իլդերիմը սիրտ առաւ, գոհ գոհ քրքրեց իր մօրուքը և ժպտալով ասաց ինքն իրեն.—Դա հռոմայեցի չէ, Աստուծու փառքը վկայ։—Նա հետի էր հետևում ձիերին։ Վրաններուի բոլոր բնակիչներն էլ—մարդիկ, կանայք և տղայք, խմբով գնում էին նրա հետից։

Դաշտը հարթ էր և արձակ։ Բէն Հուրը քշեց քառաձին նախ ուղիղ գծով և յամրաքայլ. յետոյ սկսեց լայն շրջաններ անել տալ. յետոյ ընդոստ վազեցնել և ապա թէ քառասմբակ արշաւով։ Այնուհետև շրջանները փոքրացրեց և ի վերջոյ, առանց կարգի ու դադարի, սկսեց քշել—այս կողմ, այն կողմ, առաջ ու յետ, աջ ու ձախ։ Այսպէս անցաւ մի ամբողջ ժամ. յետոյ նա հանդարտ քայլով Իլդերիմի դէմ քշեց ձիերը։

—Բանն արդէն պատրաստ է,—ասաց նա,—միայն թէ պէտք է այս վարժութիւնը դարձեալ փոքր ինչ շարունակել։ Ուրախ եմ, Շէյխ, որ այսպիսի ծառաներ



ունիս։ Տես—Բէն Հուրը ձիուց իջաւ և միւսներին մօտեցաւ—մորթերի փայլն անարատ է և այնպէս թեթև են շունչ քաշում, որ կասես չեն էլ վազել։ Այո, շատ ուրախ եմ, Շէյխ, և յաջողութիւն եմ մաղթում քեզ։—Նա վառ աչքերով մտիկ տուաւ ալևորի երեսին.—Աւետ կըլինի մեզ, եթէ յաղթանակ չտանենք և մեր...

Նա լռեց, շրխնեց և գլուխ տուաւ, նոր նշմարելով Շէյխի մօտ կանգնած Բաղդասարին և երկու քօղապատ կինս։ Կանանցից մէկին նայելիս նրա սիրտը դողաց։—Եգիպտուհին է անտարակոյս,—իսկոյն անցաւ նրա մտքից, իսկ Իլդերիմը նրա անաւարտ խօսքը լրացրեց.

—Եւ մեր վրէժը կըհանեն՛ք։—Ապա թէ յարեց գոչելով.—Ես ոչ մի բանից երկիւղ չունիմ, ով որդիդ Աբիուսի, և գոհ եմ. դու իմ սրտի ուզած մարդն ես։ Թող վերջն էլ այնպէս լինի, ինչպէս որ սկիզբն էր, այն ժամանակ կըտեսնես, թէ ինչ գանձ կայ վարձատրելու հնար ունեցող արաբի ձեռքում։

—Շնորհակալ եմ, ով բարի Շէյխ,—համեստաբար պատասխանեց Բէն Հուրը։—Հրամայէ ջուր բերել. ձիերի համար։

Նա ինքը ջուր տուաւ ձիերին։

Յետոյ նորից նստեց Շնիկի վրայ և կրթանքը նորոգեց, առաջուայ պէս ծանր քայլից վազքի, վազքից արագընթացքի և վերջապէս սուր արշաւի անցնելով։ Նայողները միաբան գովեցին երիտասարդի հմտութիւնը և հիացան քառաձիի վրայ, որ թէ առաջ սլանալիս և թէ պտոյտներ անելիս միշտ ճիում էր հաւասար։ Եւ ինչպէս չհիանային, քանի որ նրանց շարժուձևերի մէջ, որոնք առանց յոգնութեան կամ ճգնութեան էին կատարւում, միութիւն, գեղեցկու-

թիւն, զօրութիւն և շնորհ կար... Ով որ այդ ձիերի վրայ մի պարսաւելի բան գտնէր, յետ չուող ծիծեռների թռիչքի մէջ էլ խծբծելու բան կըգտնէր։

Մինչ ամենքը ուշի ուշով մտիկ էին տալիս մարգանքին, Մալուխը երևայ դաշտի վրայ և Իլդերիմին մօտեցաւ։

—Քեզ յայտնելու լուր ունիմ, վեհանձն Շէյխ,—ասաց նա խօսելու միջոց գտնելուն պէս,—լուր Սիմոնիդէս վաճառականից։

—Սիմոնիդէսից,—գոչեց արաբը։—Շատ ուրախ եմ։ Թող մահուան հրեշտակը նրա թշնամիներին կործանէ։

—Պատուիրեց ինձ, որ նախ՝ Աստուծու սուրբ խաղաղութիւնը մաղթեմ քեզ,—շարունակեց Մալուխը,—և յետոյ այս նամակները յանձնեմ քեզ, խնդրելով որ իսկոյն կարդաս։

Իլդերիմը ծրարի կնիքն իսկոյն կոտրեց և նուրբ կտաւի պատեանից երկու նամակ հանելով, անմիջապէս սկսեց կարդալ։

№ 1.

Սիմոնիդէսը Իլդերիմ Շէյխին

«Ո՜վ բարեկամ.

«Նախ հաւատաի եղիր, որ դու սրտիս խորքերի խորքում տեղ ունիս։

«Յետոյ—

«Քո վրանում մի գեղեցիկ երիտասարդ կայ, որ իբեն Աբիուսի որդի է անուանում և իրօք նրա որդին է։

«Այդ երիտասարդը մի թանկագին անձն է ինձ համար։



«Նրա պատմութիւնը զարմանալի է։ Այսօր կամ վաղն ինձ մօտ եկ, որ այդ պատմութիւնը քեզ պատմեմ և խորհուրդ հարցնեմ։

«Ա՛ւ ժամանակ՝ ինչ էլ խնդրի, կատարի, միայն թէ խնդրածը պատուի հակառակ բան չլինի։

«Ոչ ոքի չասես, որ ես հետաքրքրւում եմ այդ երիտասարդով։

«Ողջոյն իմ կողմից և միւս հիւրիդ։ Նա, նրա դուստրը, դու ինքդ և ամենքը, որոնց կըբերես, հիւրերս էք կրկէսի խաղերի միջոցին։ Տեղերն արդէն բռնել եմ տուել։

«Խաղաղութիւն քեզ և քոյիններին։

«Ի՞նչ եմ ես, ով բարեկամդ՝ եթէ ոչ բարեկամդ։

**Սիմոնիդէս։**

№ 2.

Սիմոնիդէսը Իլդերիմ Շէյխին

«Ո՜վ բարեկամ.

«Փորձառութեանս առատ գանձարանից քեզ մի խօսք եմ ուղարկում։

«Իւրաքանչիւր ոչ-հռոմայեցու համար, որ կուզենար իր գոյքն ու կայքը յափշտակութիւնից ազատ պահել, մի զգուշացնող նշան կայ. այդ նշանը որ և է բարձրաստիճան և լիազօր հռոմայեցու իր պաշտօնավայրը ժամանելն է։ Մաքսէնտիուս հիւպատոսն այսօր գալիս է։

«Զգուշացիր։

«Մի ուրիշ խորհուրդ էլ կըտամ քեզ։

«Այս առաւօտ իսկ հրաման հասցրու հարաւային ճանապարհներին վերահսկող դէտերիդ, որ նրանք ամեն մի երթևեկ մարդի խուզարկեն։ Եւ եթէ նրանք քեզ և



1990-2003

կամ գործերիդ վերաբերեալ մի նամակ գտնեն, այդ նամակը դու ինքդ կարդա։

«Ես դեռ երեկ պիտի գրէի քեզ այս տողերը. սակայն այսօր էլ ուշ չէ, եթէ իսկոյն և եթ գործ տեսնես։

«Քո լրտեսները կարճ ճանապարհներին տեղեակ են և անշուշտ գերի կը բռնեն այս առաւօտ Ագնտիոքից մեկնած սուրհանդակներին։

«Մի՛ յապաղիր։

«Կարդալուդ պէս նամակս այրիր։

«Քեզ բարեկամ՝

**Սիմոնիդէս»։**

Նամակները երկու անգամ կարդալուց յետոյ՝ Իլդերիմը վերստին ծալարեց նրանց և գօտու մէջ թաքցրեց։

Փոքը ինչ յետոյ մարզանքները վերջացան. նրանք ընդամենն երկու ժամ էին տևել։ Բէն Հուրը դարձեալ եկաւ քառաձիով Իլդերիմի առջև և ասաց.

—Քո հաճութեամբ, Շեյխ, ես ինքս արաբներին վրան կը տանեմ և երեկոյեան դէմ նորից մի անգամ դուրս կը հանեմ։

Բէն Հուրը դեռ նստած էր Շնիկի վրայ։

Իլդերիմը մօտեցաւ նրան և ասաց.

—Մինչև խաղերի վերջանալը դրանք քոնն են, ով որդիդ Աբիուսի։ Այս երկու ժամում դու աւելի քան գլուխ բերիր, քան թէ այն հռոմայեցին—թող շնագայլերը նրա լեշը պատառեն—երկու շաբաթում։ Ինչ կը տանենք մրցանակը... Աստուծու փառքը վկայ լինի, կը տանենք՞։

Մինչև ձիերի խնամուիլը Բէն Հուրը վրանում մնաց. յետոյ լճում լողացաւ, մի բաժակ գինի պալ-



պեց Շեյխի հետ, որ շատ ուրախ էր տրամադրուած, և վերջապէս նորից հագնելով իր հրէական հանդերձը, գնաց Մալուխի հետ ծառերի տակ մանգալու։

Նրանք մի երկար խօսակցութիւն ունեցան. մեզ անհրաժեշտ է դրա մէկ մասը միայն առաջ բերել։

—Ես քեզ կը խնդրեմ, որ հակերս այստեղ բերես, —ասաց Բէն Հուրը։—Նրանք գտնւում են Սելևկեան կամրջի այս կողմի խանում։ Եթէ հնար լինի, հէնց այսօր բեր։ Եւ բացի այդ, սիրելի Մալուխ... սակայն գուցէ յոգնեցնեմ քեզ խնդիրներովս...

Մալուխը սրտանց յօժարութիւն յայտնեց ծառայելու նրան։

—Շնորհակալ եմ, Մալուխ, շնորհակալ։ Ուրեմն խօսքդ խօսք է։ Չէ՞ որ մենք միևնոյն ազգի որդիք ենք և Հռոմը բոլորիս թշնամին է։ Եւ որովհետև դու գործի մարդ ես, մինչ Իլդերիմի մասին նոյնն ասել կարելի չէ...

—Ո՞ր արաբն է գործի մարդ, որ նա էլ այդպէս լինէը,—վրայ բերաւ Մալուխը։

—Նրբամիտ են, բայց... սիրելի Մալուխ, լաւ կը լինի, որ մենք ինքներս արթուն և զգոյշ գտնուենք։ Հէնց առաջուց ամեն մի արգելք և որոգայթ խափանելու համար ցանկալի է, որ դու անձամբ կրկէսի դրասենեակը գնաս և իմանաս, թէ արդեօք Շեյխը ճի՞շտ է կարգադրել ամեն բան։ Եթէ յայղուրի քեզ կանոնագրի օրինակներից գոնէ մինը ձեռք բերել, դա ինձ անշուշտ պէտք կը գայ։ Շատ հարկաւոր է իմ կրկնու հագուստի գոյնն էլ իմանալ և մանաւանդ այն կայանի համարը, որտեղից որ սկսելու եմ արշաւս։ Եթէ դա Մէսալայի կայանին կից է,—շատ լաւ. իսկ եթէ ոչ, աշխատիր կայանս փոխել տալ, այնպէս որ ես հռոմայեցու կողքին տեղ բռնեմ... աչ կողմից թէ

ձախից—բոլորը մին է: Յիշողութիւնդ լաւ է, Մալուխ:

—Շատ անգամ է խաբել ինձ, ով որդիդ Արիուսի. բայց ոչ երբէք, երբ սիրտս էլ նրան աջակցել է, ինչպէս որ այժմ:

—Եթէ այդպէս է, դարձեալ մի բան կըխնդրեմ: Երեկ նկատեցի, որ Մէսալան իր կառքով պարծենում էր, և իրաւամբ, որովհետև նոյնիսկ կայսրի լաւագոյն կառքը չէր հաւասարուիլ նրանին: Արդեօք մի հնար չէ՞իր գտնիլ... կառքի շքեղութեան վրայ հիանալդ իբրև առիթ կեղծելով... ստուգելու, թէ նրա ծանրութիւնը կամ թեթեւութիւնը որքան է: Եթէ ուրիշ բան չիմանաս էլ, յամենայն դէպս տեղեկացիր, թէ որչափ բարձր է գետնի երեսից նրա անիւի լիսեռը: Հասկանո՞ւմ ես ինձ, Մալուխ: Ես չէի կամենալ, որ նա իմ կառքի վրայ որ և է առաւելութիւն ունենայ: Մէսալայի փառահեղ պատմուճանը հոգ չէ ինձ: Եթէ ես յաղթեմ, այդ պատմուճանը էլ աւելի կըդառնացնէ նրա պարտութեան կսկիծը և էլ աւելի կըլրացնէ իմ յաղթանակի պարծանքը: Եթէ կայ որ և է էական առաւելութիւն, ինձ անհրաժեշտ է գիտենալ:

—Հասկանում եմ,—ասաց Մալուխը:—Կըցանկայի՛ր որ լիսեռի բարձրութիւնը չափեմ, գետնից մինչև նրա մէջտեղը:

—Ճի՛շտ այդպէս... և ուրախացիր, Մալուխ, այդ է վերջին յանձնարարութիւնս: Այժմ վրան մտնենք:

Վրանի առջև մի սպասաւոր զովարար խմիչք առաջարկեց նրանց. այնուհետև Մալուխը շտապով քաղաք վերադարձաւ:

Իլդերիմի հրամանով, Սիմոնիդէսի թելադրութեան համեմատ, մի սպառազէն ձիաւոր արդէն սլանում էր Անտիոքից դէպի հարաւ: Ձիաւորը մի արաբ էր. գրաւոր բան չունէր իր հետ:



## Դ.

## *Մէսալայի լրտեսութիւնը*

Հետևեալ օրուայ երրորդ ժամին մի արաբ եկաւ Իլդերիմի մօտ: Շէյխն իսկոյն ճանաչեց նրան:

—Ո՛վ Շէյխ,—ասաց եկուորը,—ինձ հրամայուած է քեզ հասցնել այս ծրարը և խնդրել, որ անյապաղ բանաս ու կարդաս: Եթէ պատասխան տալու լինիս, ես որքան կամենաս, կըսպասեմ:

Իլդերիմը ծրարն աչքի անցրեց. կնիքն արդէն կոտրուած էր: Հասցէն էր. «Վալէրիուս Գրատուսին, ի Կեսարիա»:

—Նաւարի հրեշտակը տանի նրան,—մրմռաց Շէյխը, նկատելով որ նամակի լեզուն լատիներէն է:

Եթէ նամակը յունարէն կամ արաբերէն գրուած լինէր, էլի կըկարդար. բայց այժմ կարողացաւ միայն խոշոր լատինական տառերով գծուած հասցէն հեգել և խոշոր ստորագրութիւնը—*Մէսալա*: Իլդերիմի աչքերը պսպղացին:

—Երիտասարդ հրէան որտեղ է,—հարցրեց նա:

—Դաշտումն է ձիերի հետ,—պատասխանեց մի սպասաւոր:

Շէյխը ծրարեց գրութիւնը և գօտու մէջ թաքցնելուց յետոյ՝ ձի հեծաւ: Միևնոյն րոպէին նրան մօտեցաւ մի օտարական, որ կարծես թէ քաղաքից էր:

—Կամենում եմ տեսնել վեհանձն կոչուած Իլդերիմ Շէյխին,—ասաց նա:

Եկուորը թէ լեզուով և թէ հագուստով հռոմայեցու նման էր: Իլդերիմը դժուարանում էր լատիներէն կարդալ, բայց խօսել կարող էր:

—Իլդերիմ Շէյխը ես եմ,—ասաց նա:

Նորեկն աչքերը խոնարհեց և յետոյ ասաց արհեստական հանգստութեամբ.

—Լսած եմ, որ ձիերիդ համար մի վարիչ ես որոնում:

Իլդերիմի շրթունքներն արհամարհական ժպտով կծկուեցին իր սպիտակ բեխերի տակ:

—Բարով եկար, բարով գնաս,—ասաց նա:—Արդէն ունիմ մի վարիչ:

Նա շուռ եկաւ հեռանալու, սակայն մարդն անշարժ մնաց և շարունակեց.

—Ես ձիերի սիրահար եմ, Շէյխ՛: Լսածիս նայելով՝ քո ձիերից լաւերը չկան աշխարհումս:

Ծերունի Շէյխը վախկացաւ. նա իր երիվարի սանձը քաշեց, ասես թէ տեղի տալով շողոքորթի խօսքերին. բայց և իսկոյն միտքը փոխեց և ասաց.

—Այսօր չէ, մի ուրիշ օր ցոյց կըտամ քեզ ձիերս: Այժմ զբաղուած եմ:

Շէյխը դաշտ արշաւեց, իսկ օտարականը ժպտուն դէմքով վերադարձաւ դէպի քաղաք: Նա իր նպատակին հասած էր: Այնուհետև ամեն օր, մինչև խաղերի մեծ օրը, մի, երկու, երբեմն էլ երեք մարդ էր գալիս Շէյխի մօտ ձիավարի պաշտօն որոնելու պատրուակով: Դրանք գալիս էին Մէսալայի կողմից, Բէյն Հուրի վրայ հսկելու համար:

## Գ.

### *Բռնուած նամակը*

Շէյխը գոհունակութեամբ սպասեց, մինչև որ Բէյն Հուրը, կէսօրեայ մարզանքն աւարտելով, դաշտից յետ քերաւ ձիերը,—ասում ենք գոհունակութեամբ, որովհետև



ստուգեց, որ ձիերը այնպէս են վարժուել արշաւասոյր ընթացքի, որ չէիր ասիլ, թէ մէկը միւսից աւելի ծանր է կամ արագ, այլ թէ չորսն էլ իրրև մէկ ձի են վազում:

—Այսուհետև, Շէյխ, յետ կըտամ քեզ Շնիկը,—ասաց Բէյն Հուրը, երիվարի վիզը շփելով:—Երեկոյեան պիտի կառք վարեմ:

—Այսպէս շո՛ւտ,—հարցրեց Շէյխը:

—Սրանց նման ձիերի հետ մէկ օրն էլ բաւական է. մարդու խելք ունին և սիրով են հնազանդւում: Ահա սա—Բէյն Հուրն երասանով շօշափեց ամենից ջահելի գաւակը—կարծեմ Ալդէբարան անուանեցիր սրան... ամենից արագն է: Ասպարէզի մէկ շրջանում սա իր երկայնութեան երեք չափով միւսներից առաջ կանցնի:

Իլդերիմը մօրուքը թօթուեց և հրացայտ աչքերով ասաց.

—Ալդէբարանն ամենից արագն է. հապա ո՞րն է ամենից ծանրը:

—Ա՛յ դա:—Բէյն Հուրն Անտարէսի մէջքը շփեց երասանով:—Բայց յաղթանակը դա կըտանէ, Շէյխ, որովհետև ամբողջ օրը կարող է վազել, իսկ արևի մայր մտնելուց յետոյ՝ էլ աւելի արագացնել ընթացքը:

—Ա՛յդ էլ ուղիղ ասացիր,—նկատեց Շէյխը:

—Ես միայն մի բանից եմ վախենում, Շէյխ՛:

Շէյխը յօնքերը կիտեց:

—Միայն մի բանից, ազնիւ Շէյխ: Յաղթանակի թեկնածելիս հռոմայեցի մարդն անկարող է մաքուր պահել իր պատիւը: Անթիւ են նրանց նենգութիւնները խաղի մէջ... և ամեն տեսակ խաղի մէջ: Նրանց խարդաւանքը կառարշաւի ժամանակ ամեն բանի վրայ տարածւում է—ձիից սկսած մինչև կառավարը, կառա-

վարից մինչև տէրը։ Այս պատճառով, ո՛վ բարի Շէյխ, զգոյշ եղիր և քո ամեն բանների վրայ հսկիր։ Այս րոպէից սկսած մինչև արշաւանքի վերջանալը՝ այնպէս արա, որ ոչ մի օտարական չհամարձակուի ոչ միայն մօտենալ, այլև տեսնել ձիերդ։ Եթէ կամենում ես ապահով լինել, զինուած ձեռքով և արթուն աչքով պահպանիր նրանց. այն ժամանակ միայն չեմ վախենալ գործի ելքից։

Վրանի առջև նրանք իջան ձիերից։

—Ինչպէս ասացիր, այնպէս էլ կանեմ։ Երդւում եմ Աստուծու փառքով, որ իմ հաւատարիմ ծառաների ձեռքից զատ ուրիշ ոչ մի ձեռք չի դիպչիլ նրանց՝ Հէնց այս պիշեր պահապանները կըդնեմ։ Սակայն, որդիդ Արիուսի, տես, թէ ինչ է այս բանը։—Իլդերիմը դուռուց հանեց ծրարը և առանց տատանուելու բաց արաւ, մինչև որ Թախտին հասան և նստեցին։—Տես, ինչ է այս և օգնիր ինձ լատիներէն լեզուով։

Սա յանձնեց նամակը Բէն Հուրին։

—Ա՛հ կարդա, բարձր կարդա, և ինչ որ կարդաս, թարգմանէ ինձ պապերիդ լեզուով։ Ես առում եմ լատին լեզուն։

Բէն Հուրը միամիտ սրտով սկսաւ կարդալ Մէսալան Գրատուսին։ Եւ կանգ առաւ։ Մի նախազգացում նրա արիւնը սրտին մղեց։ Իլդերիմը նրա յուզմունքը նկատեց։

—Դէ՛, սպասում եմ։

Բէն Հուրը նորոգութիւն խնդրեց և նորից սկսեց ընթերցումը։ Բաւական է ասել, թէ գրուածքը այն երկու պատճէններից մէկն էր, որ գիշերային խնջոյքից յետոյ Մէսալան այնպիսի զգուշութեամբ ուղարկել էր Գրատուսին։

Նամակի առաջին մասը ցոյց էր տալիս, որ



հեղինակը դեռ չէ հրաժարուել հեգնաբար խօսելու սովորութիւից։ Երբ Բէն Հուրն այդ մասն անցաւ և հասաւ այն տողերին, որոնց նպատակն էր Գրատուսի յիշողութիւնն արթնացնել, նրա ձայնն սկսեց դողալ, և նա երկու անգամ կանգ առաւ ինքն իրեն նուաճելու համար։ Ապա թէ շարունակեց մեծ ճգնութեամբ։ «Այն էլ քեզ կըյիշեցնեմ, իբրև խոհեմութեանդ մի ուրիշ ապացոյց»,—կարդաց նա,—«որ դու բարւոք էիր դատել մեր նպատակին հասնելու համար»—նա նորից կանգնեց և շունչ քաշեց—«լուութեան, այսինքն մի անխուսափելի, բայց բնական մահուան դատապարտել վերոյիշեալ ընտանիքը»։

Կարդացողի ոյժը հատաւ։ Թուղթն ընկաւ նրա ձեռքից. նա ծածկեց իր երեսը։

—Մեռած են... մեռած։ Միայն ես եմ կենդանի։

Շէյխը երիտասարդի տանջանքին լուռ վկայ էր, բայց անպզայ չէր։ Նա վերկացաւ և ասաց.

—Ո՛վ որդիդ Արիուսի, այժմ ես եմ ներողութիւն խնդրում քեզնից։ Այդ նամակը մենակ կարդա։ Երբ բովանդակութեան մնացած մասն էլ ինձ պատմելու ոյժ ունենաս, իմաց տուր ինձ. ես յետ կըգամ։

Նա դուրս եկաւ վրանից և այս ակնածութեամբ դէպի երիտասարդի խոր վիշտը մի այնպիսի բան արաւ, որ պատիւ էր բերում իր սրտին։

Նրա հեռանալուն պէս Բէն Հուրը թախտի վրայ ընկաւ և ազատ ընթացք տուաւ իր զգացումներին։ Փոքր ինչ յետոյ ուշքի եկաւ և մտաբերելով, որ նամակի ընթերցումը չէ աւարտել, վերցրեց թուղթը և կարդաց. «Զարագործի մօր և քրոջ վերաբերմամբ դրած վճիռդ անտարակոյս կըյիշես. և եթէ ես կըփափագէի այժմ իմանալ—արդեօք նրանք դեռ կենդանի՞ են, թէ մեռած»... Բէն Հուրը սոսկաց. այս տողերը

մի քանի անգամ նորից կարդաց և վերջապէս աղաղակեց.—Ուրեմն չգիտէ՝ մեռած են, թէ ոչ: Փառք քեզ Տէր. դեռ յոյս կայ:—Պարբերուքիւնն աւարտելուց յետոյ նա այնքան զօրութիւն ղգաց, որ նամակի մնացորդը քայ քայ կարդաց:

—Նրանք չեն մեռած,—ասաց նա վերջը լինչ մտածելուց յետոյ:—Չեն մեռած, եթէ ոչ նա այս մասին լսած կըլինէր:

Նամակի երկրորդ և աւելի ուշադիր ընթերցումը նրա այս կարծիքը էլ աւելի հաստատեց: Եւ նա Շէյխին կանչել տուաւ:

Իլդերիմի ներս մտնելուն պէս՝ Բէյն Հուրն ասաց.

—Ո՛վ ազնիւ Շէյխ, վրանիս մէջ ոտք դնելիս ես մտադիր չէի իմ մասին քեզ ուրիշ բան ասել, բայց միայն այս, թէ ձիերդ վարելու ձեռնհաս կըլինիմ: Կեանքիս վէպը չէի ուզում պատմել քեզ: Բայց բախտի բերմամբ այս նամակը կարդալուցս յետոյ ես պարտաւոր եմ ամեն բան հաղորդել քեզ, մանաւանդ որ մեզ պէտք է մէկտեղ կռուել մի թշնամու դէմ, որ երկուսիս էլ վտանգ է սպառնում: Ես քեզ կըվարդամ և կըմեկնեմ այս նամակը. այն ժամանակ չես զարմանալ յուզմանս վրայ և չես վերագրիլ նրան մի մանկական թուլութեան:

Շէյխը լուռ և հանդարտ ականջ էր դնում ընթերցման, մինչև որ Բէյն Հուրը հասաւ այս տողերին. «ես երեկ Դաւինէի անտառում տեսայ հրէին... եթէ այժմ այնտեղ չլինէի, անտարակոյս շրջակայքում կըլինի, և ես աչքաթող չեմ անիլ նրանից: Բայց եթէ հարցնես, թէ այս րոպէիս ո՞րտեղ է, ամենամեծ վստահութեամբ կարող եմ ասել—Արմաւենեաց անտառումն է»...

—Աա՜,—գոչեց Իլդերիմը թէ զարմացման և



թէ ցասման եղանակով և իր ժօրուքը սաստիկ թօթուեց:

«Դաւաճան Իլդերիմ Շէյխի վրանում»,—շարունակեց կարդալ Բէյն Հուրը:

—Ես՝ դաւաճան,—աղաղակեց ալևորն անասելի բարկութեամբ: Նրա մօրուքը և շուրթերը դողում էին. ճակատի և վզի երակները քիչ էր մնում որ պայթէին ուռչելուց:

—Ա՛յլ ևս մի վայրկեան, Շէյխ,—ասաց Բէյն Հուրն աղերսական շարժուձևով:—Այս է Մէսալայի կարծիքը քո մասին. այժմ լսիր նրա սպառնալիքը:—Եւ շարունակեց կարդալ.—«Դաւաճան Իլդերիմ Շէյխի վրանում, Շէյխի, որ այլևս մեր զօրեղ բազկից չի փախչիլ: Զգարմանաս ուրեմն, եթէ Մաքսէնտիուսի առաջին գործն այն լինի, որ ձերբակալէ այս արաբին և նաւով Հռոմ ուղարկէ»:

—Հռո՞մ: Ի՞նձ... Իլդերիմի՞ն... տասն հազար սպառազէն ձիաւորների Շէյխին—Հռո՞մ՝:

Շէյխը ոտքի ելաւ, լաւ է ասել՝ տեղից ցատկեց և բաղուկները մեկնելով, սկսեց մատները մագիլների պէս ճկոտել և աչքերից օձի նման կրակ շաղթել:

—Ո՛վ Աստուած: Ո՛չ, ոչ աստուածներ, բացի Հռոմի աստուածներից՝... ե՞րբ պիտի վերջանայ այս լրբութիւնը...ես ազատ մարդ եմ, ազգս էլ ազատ՝: Եւ սարսուռ մեռնենք և կամ թէ—որ աւելի վատթար է—շանն պէս ապրենք, տէրերի ոտքին քծնելով: Եւ ես համբուրե՞մ այն ձեռքը, որ խարազանով ծեծում է ինձ: Այլևս իմս չլինի՛ այն բոլորը, ինչ որ ինձ է պատկանում, և ես ամեն մի շնչիս համար շնորհակալ լինեմ Հռոմայեցուն...Ո՜հ, թէ իմ ալևոր հերքը անէային. ո՜հ, թէ մի քանի տարով...տասը տարով—պէթ հինգ տարով մանկանայի, պէթ հինգ տարով՝:

Աստվածները կրճտելով՝ ծափ ծափի տուաւ Իլդեբրիմը. յետոյ մի ուրիշ զգացման մղումով արագ հեռացաւ Բէն Հուբրից. յետոյ կրկին նրա դէմ վազեց և տւսից ամուր բռնեց։

—Եթէ քեզ պէս լինէի, ով որդիդ Արիուսի... այսպէս քաջառողջ, այսպէս ուժեղ, այսպէս զինավարժ. եթէ ունենայի վրէժ լուծելու այնքան զօրեղ շարժառիթ, որ քոնի չափ սրբագործէր ատելութեան զգացումը... կորչի՛ դիմակը մեր երեսից... Որդիդ Հուրի, որդիդ Հուրի՛, ասում եմ ես...

Այս անունը յիշուելուն պէս Բէն Հուրի արիւնը սառեց, և նա ապշած, շփոթուած մտիկ տուաւ Իլդեբրիմի աչքերին, որոնք ամենայն պսպղում էին։

—Բէն Հուրի որդի, կրկնում եմ ես, եթէ ես քո տեղը լինէի, եթէ ես քո զրկանքների ու վշտերի կէսը կրած լինէի և այդպիսի յիշատակներով այրուէի, չէի հանդչի՛։—Ծերի խօսքերը ջրի պէս էին ցայտում շրթերից։—Ես իմ կրած թշնամանքը ամբողջ աշխարհի կրած ու զգացած նախատինքի հետ կշռադատեի և կեանքիս միակ նպատակը վրէժխնդրութիւնը կըլիներ։ Ես կերթայի երկրէ երկիր, ամբողջ մարդկութիւնը ոտքի կըհանէի։ Ազատութեան կռիւ չէր լինիլ, որին ես էլ չմասնակցէի, ոչ մի պատերազմ Հռոմի դէմ, ուր ես էլ զինուոր չդրուէի։ Կերթայի նոյնիսկ պարթևների մօտ, և եթէ մարդիկ չօգնէին ինձ... հահահա... մինչև անգամ առիւծներին և վագրերին կըդիմէի՝ բոլորին էլ մեր թշնամու դէմ մղելու համար։ Ամեն մի զէնք ու միջոց գործ կըդնէի։ Բաւական է, որ զոհերս հռոմայեցի լինէին, որպէս զի նրանց կոտորելով հրճուէի։ Ոչ մէկին չէի դթալ և ոչ ոքից չնորհ չէի խնդրիլ։ Կրակի կըմատնէի ամեն բան, ինչ որ միայն հռոմէական է. այն ժամանակ միայն հռոմայեցուն՝ Գիշերը



ցերեկ կաղաչէի Աստուածուն, որ փոխ տայ ինձ իր սոսկալի արհաւիրքը—փոթորիկ, կայծակ, տօթ, երաշտ, սառնամանիք... և այն ամեն ժանտ թոյներն ու ախտերը, որոնք մահ են բերում թէ ցամաքի, թէ ծովի վրայ։ Ո՜հ, ես հանգիստ ու քուն չէի գտնիլ, մինչև... մինչև որ...

Շէյխը լռեց, որովհետև շունչը բռնուել էր, և սկսեց ձեռքերը կատել հևալով։ Կրքերի այս փոթորկումից Բէն Հուրը մի՛այն այս հասկացաւ, որ արաբն անչափ զայրացած է։

Տարիներից ի վեր այս առաջին անգամն էր, որ անբախտ երիտասարդն իր անունը լսեց ուրիշի բերնից։ Ուրիմն գոնէ մի մարդ ճանաչում էր նրան առանց ապացոյց պահանջելու, և այս մէկն էր մի արաբ անապատից։

Ո՞րտեղից էր իմացել այդ անունը։ Նամակի՞ց... Ո՛չ։ Նամակը յիշատակում էր Բէն Հուրի գերդաստանին հասած աղէտը, յիշատակում էր և որդուն հասած պատիժը. բայց չէր ասում, թէ նա ինքն է այն զոհը, որի ազատութիւը պատուհասից նամակի բուն բնաբանն էր։ Նա ինքն ուզում էր այս կէտը պարզել Շէյխին, եթէ Շէյխը մինչև վերջը հետևած լինէր թղթի ընթերցմանն։ Նոր յոյսով ոգևորուած՝ նա աշխատեց հանգիստ երևալ և ասաց.

—Ո՛վ բարի Շէյխ, այս նամակն ինչպէս ձեռք բերիր։

—Քաղաքներն իրար հետ կապող ճանապարհների վրայ ես դարանակալ մարդիկ ունիմ. ահա նրանք են եկել այդ նամակը մի սուրհանդակից,—պատասխանեց Իլդեբրիմը։

—Յայտնի՛ է, որ նրանք քո մարդիկն են։

—Ո՛չ: Աշխարհի աչքում նրանք աւազակները են, որոնց բռնելն ու սպանելն իմ պարտքն է:

—Շէյխ, դու անուանեցիր ինձ Հուրի որդի. այդ իմ հօր անունն է: Ես կարծում էի, թէ աշխարհիս երեսին ոչ մի մարդու յայտնի չեմ: Ո՞րտեղից ես ճանաչում ինձ:

Իլդերիմը մի քանի վայրկեան լուռ մնաց և յետոյ մի այն պատասխանեց.

—Ճանաչում եմ քեզ, և թող քեզ այս բաւական լինի: Աւելին ասելու իրաւունք չունիմ:

—Եւ ո՞վ է քեզ արգելում:

Շէյխն ուզում էր հեռանալ, բայց Բէյն Հուրի չփոթութիւնը տեսնելով, կանգնեց և ասաց.

—Ջլսօսանք այդ մասին: Ես քաղաք պիտի գնամ: Յետոյ գուցէ աւելի պարզ կըխօսեմ քեզ հետ: Տուր ինձ նամակը:

Իլդերիմը ծրարն զգուշութեամբ փաթաթեց և յանկարծ նորից ժրացաւ:

—Ես յայտնեցի քեզ,—ասաց նա,—թէ ինչ կանէի, եթէ քո տեղը լինէի: Դու ինձ պատասխան չտուիր:

—Ուզում էի պատասխան տալ և կըտամ, աղնիւ Շէյխ,—ասաց Բէյն Հուրը, որի ձայնն ու դէմքը հաղիւ զսպուած վշտի հետք էին ցոյց տալիս:—Ինչ որ ասացիր, կանեմ... կանեմ գոնէ այն ամենը, ինչ որ կարող է մի մարդ անել: Վաղուց արդէն կեանքս նուիրուած է վրէժխնդրութեան: Հինգ տարի է, որ դիշեր ցերեկ և ամեն ժամ մի այն այս զգացումով եմ ապրել: Հանգստութիւն չեմ ունեցել, հեշտանքներ չեմ վայելել: Հոմի հրապոյրները չեն գրաւել ինձ: Բնակուել եմ այնտեղ, որպէս զի մի այն վրէժս հանելու պատրաստուիմ: Հրաւիրել եմ հոչակաւոր վարժապետները... սակայն ոչ թէ ճարտասանութիւն կամ փիլիսոփայութիւն ուսանելու համար—ափսոս, այդ անելու ժամանակ չկայ,—այլ զինուորին անհրաժեշտ արուեստները սովորելու: Իմ վարժապետները սուսերամարտ ըմբիշներն էին, կրկէսի մէջ մրցանակ տանող քաջերը: Հոմի գլխաւոր բանակի նոյնիսկ առաջին մարզիչներն ինձ աշակերտ ընդունեցին և պարծենում էին իմ ցոյց տուած արդիւնքով: Ես զինուոր եմ, ու բարի Շէյխ. սակայն տենչալի նպատակիս հասնելու համար կարևոր եմ համարում զօրավար դառնալ, և այս մտքով պիտի մասնակցեմ պարթևաց դէմ ձեռնարկուելիք արշաւանքին: Երբ որ դա վերջանայ և Աստուած ինձ կեանք և զօրութիւն պարգևէ—Բէյն Հուրը բռունցքը վերցրեց և սաստկութեամբ գոչեց—այն ժամանակ ես կըլինիմ ամեն բանում հռոմայեցուն վարժուած թշնամի և նոյն ժամանակ թող Հռոմն իր անզգամութեան փոխարէն հռոմայեցոց կեանքեր վճարէ ինձ՜: Պատասխանս լսեցիր, Շէյխ:

Իլդերիմը հիացած էր: Նա գրկեց երիտասարդին, համբուրեց նրան և եռանդով գոչեց.

—Եթէ Աստուածդ քեզ չօգնէ, ով որդիդ Հուրի, ուրեմն նա մեռած է: Ա՛ռ խոստումս, եթէ կամենաս՝ և կրդումս... որ ոչ միայն իմ ձեռքերը և ձեռքերիս լիութիւնը, այլ մարդիկս էլ, ձիերս էլ, ուղտերս էլ, անապատն էլ այժմ քոնն են նպատակիդ ծառայելու համար: Երդւում եմ: Ա՛ռ ժամանակ հերիք է: Գիշերուանից առաջ կըտեսնես ինձ և կամ թէ ինձնից լուր կառնես:

Իլդերիմն արագ շուռ եկաւ և անյապաղ ճանապարհ ընկաւ դէպի քաղաք:

## Ե.

### *Բէն Հուրը մենակ*

Բռնուած նամակը շատ կարևոր բաներ պարզեց Բէն Հուրին։ Նամակի նիւթը մասամբ խոստովանութիւն էր, թէ Բէն Հուրի ընտանիքը սպանուելու համար էր մէջտեղից վերցուել, և մասամբ հաստատութիւն այն բանի, թէ հեղինակը հաւանութիւն էր տուել այդ չար մտքին և ընդունել յափշտակուած հարստութեան մէկ մասը, որ տակաւին վայելում էր, թէ նա այժմ, իր ասելով, երկիւղ էր զգում դլխաւոր չարագործի անակնկալ յայտնուելուց և մի տեսակ վտանգ սպասում այդ անձից, և թէ վերջապէս նա պատրաստ էր այս վտանգի դէմ ամեն միջոց գործ դնել, ինչ որ միայն խորհուրդ կըտար գործ դնելու կեսարիայում նստած ընկերը։

Եւ այս նամակը, որ այժմ իր գրուելուն առիթ տուող մարդու ձեռքին էր գտնւում, թէ կատարուած ոճրի ապացոյց էր և թէ մի նոր չարիքի ազդարար։

Ուստի Իլդերիմի մնկնելուն պէս Բէն Հուրն սկսեց իր անելիքի վրայ մտածել։ Նրա թշնամիները խորամանկ էին և զօրաւոր. եթէ նրանք երկիւղ էին զգում իր անձից, ասել է թէ նա ինքն աւելի ևս պիտի զգուշանար նրանցից։ Նա ուզում էր պարզել իր դիրքը, բայց այս բանը նրան չէր յաջողւում։ Առ ժամանակ նա սփոփւում էր այն յուսով, թէ իր մայրն ու քոյրը կենդանի են, թէև այս յոյսը մի ենթադրութեան արդիւնք էր։ Հերիք է, որ գտնէ մի մարդ նրանց պահած տեղը գիտէր. այս արդէն, իր կարծիքով, մի երաշխաւորութիւն էր, թէ նրանք շուտով կըգտնուին... Թէև այս բոլորը լոկ զգացումից առաջ եկող վարկածներ



էին, բայց և այնպէս Բէն Հուրը, դրանց ազդեցութեան ենթարկուելով, կուրօրէն հաւատում էր, թէ Աստուած անշուշտ կօգնէ նրան, և այս հաւատը յորդորում էր նրան հանդիսա ինալ։

Յետոյ նա Իլդերիմի խօսքերը յիշեց և զարմանում էր, թէ ո՞րտեղից է իմացել նա իր անունը։ Հարկաւ ոչ Մալուխից, ոչ էլ Սիմոնիդէսից... սա արդէն իր շահից ստիպուած լուռ կըմնար... Միթէ Մէսալինն էր յայտնողը... Ո՛չ, ո՛չ։ Նա ինքն իրեն վճռած կըլինէր յայտնելով։ Գուշակութիւններ անելը զուր էր. այնուամենայնիւ Բէն Հուրը զգում էր, թէ գիտեցողն ով էլ լինի, իրեն բարեկամ մարդ կըլինի և սէրաք եղած ժամին իրրև բարեկամ երևան կըգայ։ Այդպես փոքր ինչ համբերութիւն... երկար սպասելու հարկ չի լինիլ։ Գուցէ Շէյխը շուտով կըլուծէր հանելուկը...

Եւ Բէն Հուրը պատրաստ էր սպասել, միայն թէ գիտենար, որ մայրն ու քոյրն էլ սպասում են իրեն այս յոյսերով։

Նա պարտէզ գնաց իր մտքերը փարատելու համար։ Զբօսնելիս մերթ կանգ էր առնում արմաւենաղող մշակների մօտ, մերթ նայում ոտաերի մէջ բոյն դրած թռչնիկներին և կամ թէ ծաղիկների շուրջն ու մարգի վրայ հոյլերով բզզող մեղուներին։ Լճի ափին բաւական երկար դեգերելիս նա յիշեց գեղեցիկ եգիպտուհուն և Բաղդասարին, որի զարմանալի պատմութիւնը մինչև այժմ անկարող էր ըմբռնել։ Յետոյ յիշեց հրէից նորայայտ թագաւորին, որին այնպիսի ջերմ հաւատով սպասում էր իսմաստուն մարդը։ Նա մերժում էր բաղդասարի մեկնութիւնը նոր հիմնուելիք թագաւորութեան մասին. մի թագաւորութիւն, որ պիտի հոգիներից բաղկացած լինէր, անկարելի էր թւում նրան, եթէ ոչ ցնորական։ Ուրիշ բան է հրէից թագաւորութիւն—սա հասկանալի

է... Այսպիսի թագաւորութիւն առաջ էլ կար և կարող էր նորից լինել: Եւ այս թագաւորութիւնը նոյնիսկ Սողոմոնի պետութիւնից լայն հիմքերի վրայ հաստատուած և դրանից աւելի փառաւոր ու զօրաւոր երևակայելը հաճելի էր նրա հրէական հպարտութեան: Այս տրամադրութեամբ Բէն Հուրը նորից վրան մտաւ:

Ճաշելուց յետոյ նա հրամայեց դուրս քաշել կառքը և նրա բոլոր մասերն ուշի ուշով զննելիս գոհութեամբ ստուգեց, որ նա յունական ձևով է շինուած,—մի հանգամանք, որ Բէն Հուրի համար շատ աւելի արժէք ունէր, քան հռոմէականի շքեղութիւնը: Յունական կառքն աւելի լայն անիւներ ունէր, աւելի ցածր էր և ամուր: Կշիռը հարկաւ հռոմէականից աւելի ցածր էր, բայց այս պակասութիւնը կարող էր հեշտ փոխարինուել արաբական ձիերի աւելի մեկուն զօրութեամբ:

Կառքը լաւ զննելուց յետոյ ձիերը լծեց և կրթանքի դաշտը քշեց, ուրև մի քանի ժամ մարզեց նրանց լծի տակ վազելու: Երեկոյեան դէմ յետ եկաւ. արդէն զուարթ և հանգիստ էր: Նա վճռել էր մինչև խաղերի վերջանալը թաքուն պահել իր անելիքը Մէսալայի դէմ: Չէր ուզում իր ոսոխին ամբողջ Արևելքի աչքի առջև յաղթելու հաճոյքից հրաժարուիլ: Չէր էլ ուզում անդամ մտածել, թէ ուրիշ մրցակիցներ էլ դուրս կըգան: Նրա վստահութիւնն իր արուեստի և անզուգական ձիերի վրայ բացարձակ էր:

—Թող նա զգուշանայ, լաւ զգուշանայ, չէ՞, Անտարէա, չէ՞, Ալդէբարան: Ուղիղ չե՞մ ասում, ազնիւ Ռիգել և դու Աթայր, որ նժոյգների թագաւորն ես:

Այսպէս ասելով ման էր գալիս ձիերի շուրջը և շոյում նրանց ոչ իբրև տէր, այլ եղբայր:



## Զ.

### Հրաւէրը

Գիշերն արդէն վրայ էր հասել և Բէն Հուրը նստած էր վրանի առջև, իլդերիմի վերադարձին սպասելով: Նա հանգիստ էր և վստահ, որ Շեյխը քաղաքից կըգայ և կամ գոնէ լուր կըտայ: Այսպէս էլ եղաւ: Շատ չանցած նա սմբակների ձայն լսեց, և փոքր ինչ յետոյ Մալուխը կանգնեց նրա առջև:

—Որդիդ Աբիուսէ՛,—ասաց եկուորը,—ողջունում եմ քեզ Շեյխի կողմից: Նա խնդրում է, որ ձի հնծնես և քաղաք գաս, ուր նա քեզ սպասում է:

Բէն Հուրը հարցուփորձ չարաւ Մալուխին և իսկոյն գնաց ձիերի կողմը: Ալդէբարանը նրան դիմաւորեց, ասես թէ իր ծառայութիւնն առաջարկելով: Բէն Հուրը գգուեց նրան և մօտեցաւ մի ուրիշ նժոյգի, որ չորսից չէր. նրանք պիտի խնայուէին արշաւի համար:

Մի քանի վայրկեան անցնելուց յետոյ՝ Մալուխն ու նա արագ արշաւում էին դէպի քաղաք:

Մալուխը լաւ համարեց արևմտեան կողմից Անտիոք մտցնել Բէն Հուրին: Դրա համար պէտք էր բաւական մեծ շրջան անել—մի զգուշութեան միջոց, որ հարկաւ անհիմն չէր:

Նրանք մօտեցան Սիմոնիդէսի նաւամատոյցին: Մալուխը կանգ առաւ կամրջի ներքև մեծ ամբարի յանդիման:

—Ահա եկանք,—ասաց նա:

Բէն Հուրն այդ տեղը ճանաչեց:

—Ո՞րտեղ է Շեյխը,—հարցրեց նա:

—Հետևիր ինձ,—պատասխանեց Մալուխը:

Մի պահապան ձիերն ընդունեց, և Բէն Հուրը լայն կտրի վրայ ոտք դնելուն պէս՝ մի հրաւէր լսեց տան միջից.—Ներս մտիր Աստուծով՛:

## Ը.

## Սիմոնիդէսի հաշիւը

Մալուխը դռան մօտ յետ մնաց, Բէն Հուրը մենակ ներս մտաւ:

Մտած սենեակը նրան ծանօթ էր. անցեալ անգամ այդտեղ էր տեսել Սիմոնիդէսին: Փոփոխութիւն չէր երևում սենեակում. միայն թէ այժմ բազկաթոռի մօտ կանգնած էր մի մարդահասակ փայլուն արոյրէ աշտանակ, որի շարժուն ստեղների վրայ վեց արծաթէ կանթեղ էր վառուած: Նրանց լուսով կարելի էր տեսնել որմերի զանազան դրուագները, ոսկեզօծ գնդակները կրող ծնօտներն ու մանուշակագոյն կամարը:

Մի քանի քայլ անելուց յետոյ Բէն Հուրը կանգնեց: Ներկայ էին երեք անձինք—Սիմոնիդէսը, Իլդերիմը, Եսթերը—և երեքն էլ նրան էին մտիկ տալիս:

Նա արագ աչքի անցրեց ամէն մէկին, կարծես թէ իմանալու, թէ ինչ են ուզում իրենից, և հանգիստ ձնաց. բայց իր մտքերը լարուած էին և նա ակամայ հարցնում էր իրեն.—Արդեօք ինչ է սրանց պիտանութիւնը. բարի՞, թէ չար:

Վերջապէս նրա աչքերը կանգ առան Եսթերի վրայ: Երեքն էլ բարութեամբ փոխարինեցին նրա հայեացքը. բայց Եսթերի դէմքի վրայ մի բան կար, որ բարութիւնից էլ աւելի էր—մի այնպիսի հոգեկան բան, որ չէր կարելի բնորոշել, և որ սակայն մինչև նրա սրտի խորքը թափ անցաւ:



—Որդի՛ Հուրի՛...

Հուրը դարձաւ խօսողին:

—Որդի՛ Հուրի՛,—կրկնեց Սիմոնիդէսը շեշտելով, կարծես թէ այս խօսքերի բոլոր իմաստն ըմբռնելու համար երիտասարդին,—մեր հայրերի Աստուծու խաղաղութիւնը քեզ հետ լինի՛: Ընդունիր ինձնից այս օրհնութիւնը:—Եւ փոքր ինչ յետոյ—ինձնից և իմերից:

Խօսողը նստած էր բազկաթոռում. նրա հոյակապ գլխին, գունատ երեսին, ազդու արտայայտութեան նայելիս կըմոռանայիր, որ նա մի ջարդուած ու հաշմեակ է: Սև աչքերը հեզ փայլում էին թաւ ու սպիտակ ցօղքերի տակից: Նա մի քանի վայրկեան այսպէս ձնաց և յետոյ ձեռքերը կրծքին դրաւ:

Ծերունու վարուելու և ողջոյնի եղանակը չէին կարող թիւր հասկացուիլ Բէն Հուրից:

—Սիմոնիդէս,—պատասխանեց նա յուզուած սրտով,—մաղթած սուրբ խաղաղութիւնդ ընդունում եմ և միևնոյնը քեզ դարձնում որդիաբար: Ինդրում եմ՝ թող մեր միջև թիւրիմացութիւն չլինի:

Այս քնքոյշ ակնարկով Բէն Հուրը փորձեց ստորադրեալի և տիրոջ յարաբերութեան փոխարէն՝ մի աւելի բարձր և սրբազան առնչութիւն հաստատել:

Սիմոնիդէսը ձեռքերը վայր թողեց և դառնալով Եսթերին, ասաց.

—Դասրիկ, մի աթոռ բեր մեր տիրոջ համար:

Եսթերը մի աթոռ բերաւ և շիկնելով կանգնեց, մէկ իր հօրը, մէկ էլ Բէն Հուրին նայելով: Երկուսն էլ քաշւում էին աթոռը դնելու տեղն ասել, որովհետև չէին ուզում հրամայող տէր երևալ: Այս նեղիչ լռութեանը վերջ տալու համար Բէն Հուրը առաջ անցաւ, աթոռն աղջկայ ձեռքից առաւ և Սիմոնիդէսի ոտքի կողմը դրաւ:

—Ես այստեղ կընստեմ,—ասաց նա։

Նրա աչքերը օրիորդի աչքերին դիպան... միայն մի վայրկեան, բայց դա բաւական էր, որ երկուսն էլ իրար հասկանան—Բէն Հուրը օրիորդի շնորհակալութիւնը, իսկ օրիորդը նրա վեհանձնութիւնն ու զիջողութիւնը։

—Ետքե՜ր,—ասաց Սիմոնիդէսը, կարծես թէ մի թեթեւութիւն զգալով,—այժմ թղթերն այստեղ քե՛ր։

Աղջիկը մի քանի հատ ծրար հանեց որմի դարակից և հօրը տուաւ։

—Լաւ ասացիր, որդիդ Հուրի,—սկսեց Սիմոնիդէսը,—թող մեր միջև թիւրիմացութիւն չլինի։ Իրաւացի պահանջ յայտնելուդ սպասելով... որի մասին ես ինքս քեզ կըյիշեցնէի, եթէ դու զլանայիր յայտնել... ահա գրած եմ մի տեղեկագիր, որ ամէն թիւրիմացութեան առաջը կառնէ։ Իմ կարծիքով ամենից կարևորը նախ ստացուածքիդ խնդիրն է և երկրորդ մեր յարաբերութեան խնդիրը։ Այս երկու կէտն էլ տեղեկագրիս մէջ կըգտնես։ Արդեօք կըցանկա՞ս իսկոյն կարդալ։

Բէն Հուրը թղթերն ընդունեց և Իլդերիմին նայեց։

—Շէյխը կարող չէ արգելք լինել կարդալուդ,—ասաց Սիմոնիդէսը։—Տեղեկագիրս մի այնպիսի բան է, որ վկայ է պահանջում։ Մինչև վերջը կարդալուց յետոյ Իլդերիմ Շէյխի ստորագրութիւնն էլ կըտեսնես։ Նա ամէն բան դիտէ և քեզ բարեկամ է։ Ինչ որ նա ինձ համար է, քեզ համար էլ կըլինի։

Այս խօսքերն ասելիս ծեր հրէան մտերմաբար գլուխ տուաւ արաբին. սա էլ նոյնն արաւ և հանդիսաբար հաստատեց.

—Դու ասացիր [1]։

[1]) Արևելեան երդման պարզ ձևն է։ Տես. Մատթ. Ա.եհ. Ի.Ջ. 63,64։



Բէն Հուրը պատասխանեց.

—Փորձով գիտեմ Շէյխի բարեկամութեան արժէքը, բայց դեռ առիթ չեմ ունեցել գործով շնորհակալ լինելու։—Եւ թղթերը Սիմոնիդէսին յետ տալով՝ յարեց.—Ցետոյ կըկարդամ ուշադրութեամբ, այժմ յետ առ և եթէ չես դժգնած, մ՚միայն էութիւնը յայտնիր ինձ։

Սիմոնիդէսը գլանը յետ առաւ։

—Եսթեր, վերցրու թերթերը, որ չխառնուին։

Աղջիկը հօր կողքին նստեց, ձեռքը նրա ուսին դնելով, և երբ հայրը կարդալ սկսեց, կասէիր թէ նրանք միասին են հաշիւ տալիս։

—Այս թուղթը,—ասաց Սիմոնիդէսը, առաջին թերթը հանելով,—ցոյց է տալիս քո հօրից իմ մօտ ձգացած գումարի քանակը... սա միակ գումարն է, որ փրկուեց հռոմայեցոց ճանկերից։ Հնար չեղաւ միւս պէյքերն էլ փրկելու... միայն փողը փրկեցի։ Բայց սա էլ աւազակների ձեռքը կըընկնէր, եթէ մենք հրէաներս փոխանակագիր տալու սովորութիւն չունենայինք։ Փրկուած դրամը գոյացած է այն ստանալիքներից, որ ունէի Հռոմում, Ալէքսանդրիայում, Դամասկոսում, Կաղքեդոնում, Վալէնտիայում և ուրիշ առևտրական տեղերում։ Գումարն էր հարիւր քսանհինգ տաղանդ [1]։

Նա թերթը Եսթերին տուաւ և հետևեալը վերցրեց։

—Այս հարիւր և քսանհինգ տաղանդով սկսեցի գործել։ Այժմ լսիր, թէ որքան է արդիւնքը։ Արդիւնք եմ անուանում այն բոլոր ստացուածքը, որ գոյացել է դրամի կիրառութիւնից և շահից։

Ապա թէ սկսեց զանազան գումարներ կարդալ, որոնք, կոտորակները բաց թողնելով, այսպիսի թուեր էին կազմում.

[1]) Մի տաղանդը հաւասար էր 5760 ֆրանկի։

| | | |
|---|---|---|
| Նաւեր . . . . . | 60 | տաղանդ |
| Պահեստի ապրանք . . . . | 110 | » |
| Ուղարկուած ապրանք . . . | 75 | » |
| Ուղտ, ձի և այլն . . . . . | 20 | » |
| Մթերանոցներ . . . . . | 10 | » |
| Մուրհակներ . . . . . | 54 | » |
| Առ ձեռն դրամ . . . . . | 224 | » |

Գումար 553 տաղանդ։

Այս հինգ հարիւր և յիսուներեք տաղանդի վրայ հօրիցդ մնացած մայր գումարն էլ աւելացնելով, կըստացուի վեց հարիւր եօթանասունուերկ տաղանդ—որ բոլորն էլ քոնն է։ Ասել է թէ, ով որդիդ Հուրի, դու այս աշխարհի ամենահարուստ հպատակն ես։

Սիմոնիդէսը եօթերից առաւ թղթերը և մի թերթ պահելով, միւսները յանձնեց Բէն Հուրին։ Ծերունու դէմքի վրայ փայլող հպարտութիւնը վիրաւորական չէր. դա կարող էր յառաջ գալ թէ պարտքը լաւ կատարելու գիտակցութիւնից և թէ այն ուրախութիւնից, որ նա զգում էր Բէն Հուրի մեծ հարստութեան պատճառով։

—Այժմ բան չկայ, որ չկարենաս կատարել—յարեց նա, իջեցնելով իր ձայնը, բայց ոչ աչքերը։

Շատ խորհրդաւոր վայրկեան էր։ Սիմոնիդէսը դարձեալ ձեռքերը կցեց. եօթերը տպտպած էր, Իլդերիմը զրպռուած։ Մարդս երբէք այնպէս սաստիկ չէ ենթարկուում փորձութեան, ինչպէս որ մի անակնկալ և արտակարգ բախտաւորութեան րոպէին։

Բէն Հուրը ծրարն առաւ, ոտքի կանգնեց և իր զգացումները ճնշելով ասաց.

—Այս բոլորը մի երկնային լոյս է՝ իմ գիշերը ու ցերեկը վառատելու համար ուղարկուած,—այն երկար



խաւար գիշերը, որ կարծես երբէք վերջանալու և լուսանալու չէր։ Նախ գոհանում եմ Աստուծուց, որ նա ինձ չէ մոռացել, և ապա քեզ եմ շնորհակալութիւն յայտնում, Սիմոնիդէս։ Ես հաւատարմութիւնն ուրիշների գաղանութիւնից զօրեղ է և պատիւ է բերում մարդկային ընութեան։ «Այժմ բան չկայ, որ չկարենամ կատարել», հմ։ Թող այդպէս լինի։ Ո՞վ է կոչուած այս խորհրդաւոր րոպէին ինձնից աւելի վեհանձնութիւն ցոյց տալու։ Վկայ եղիր, Իլդերիմ Շէյխ՛. ասելիքս լաւ լսիր և ամուր պահիր մտքումդ։ Դու էլ, Եսթեր, որ քարի հօրդ քարի հրեշտակն ես, ականջ դիր։

Բէն Հուրը Սիմոնիդէսին մեկնեց ծրարը։

—Ինչ որ յիշուած է այս թղթերում—նաւեր, տներ, ուղտեր, ձիեր, ապրանք ու դրամ—և ամէն բան, թէ փոքրագին, թէ մեծարժէք, քեզ եմ վերադարձնում, Սիմոնիդէս, և այս բոլորի լիազօր տէր հրատարակում և հաստատում քեզ ընդ միշտ։

Եսթերը ժպտում էր արտասուալիր աչքերով. Իլդերիմը մօրուքը քրքրելով կրակ էր շանթում սև աչքերից։ Սիմոնիդէսը միայն հանգիստ էր։

—Ընդ միշտ քեզ եմ հրատարակում և հաստատում այս բոլորի լիազօր տէր,—շարունակեց Բէն Հուրն իր յուզումը սանձելուց յետոյ,—միայն թէ մի բացառութեամբ և պայմանով։

Ունկնդիրները շունչերը բռնեցին լսելու համար։

—Հօրս պատկանած հարիւրքսանհինգ տաղանդը ետ կըտաս ինձ։

Իլդերիմի դէմքը զուարթացաւ։

—Եւ կօգնես ինձ մօրս և քրոջս գտնել, բոլոր գոյքդ, եթէ հարկ լինի, այս նպատակի համար ծախսելով, ինչպէս և ես բոլոր գոյքս կըծախսեմ։

Սիմոնիդէսն իր սրտի խորքից զգացուեց և ձեռքը մեկնելով ասաց.

—Տեսնում եմ ոգիդ, ով որդիդ Հուրի, և փառք եմ տալիս Աստուծուն, որ նա քեզ այնպէս է պահել ինչպէս որ կաս: Միամիտ եղիր. ինչպէս որ ես քո հօրն եմ ծառայել, քանի որ նա կենդանի էր, և յետոյ նրա յիշատակին, այնպէս էլ քեզ կը ծառայեմ. միայն թէ պայմանդ անկարող եմ կատարել:

Եւ պահած թերթը բանալով՝ ասաց.

—Դեռ ամբողջ տեղեկագիրը չես լսած: Ա՛ռ այս թերթը և կարդա... բարձր կարդա:

Բէն Հուրը թերթն առաւ և կարդաց.

—«Հուրի սորուկների ցուցակը՝ պատրաստուած նրա գոյքերի տնտես Սիմոնիդէսի ձեռքով.

«1. Ամրա, եգիպտուհի, Երուսաղէմի պալատի պահապան:

«2. Սիմոնիդէս, գործակալ Անտիոքում:

«3. Եսթեր, Սիմոնիդէսի դուստրը.»:

Բէն Հուրի մաքից երբէք չէր անցել, թէ Սիմոնիդէսի աղջիկը, օրէնքի զօրութեամբ, բաժանակից է հօր վիճակին: Նա համարել էր Եսթերին Բաղդասարի աղջկան համահաւասար օրիորդ, որ գուցէ մի օր իր սիրոյ առարկան կը դառնար: Անակնկալ յայտնութիւնը վշտացրեց նրան, և նա կարմրելով մտիկ տուաւ Եսթերին, որ նոյնպէս կարմրելով իր աչքերը խոնարհեց: Այնուհետև Բէն Հուրը թուղթը ծրարեց և ասաց.

—Վնաս հարիւր տաղանդի տէրն իրօք հարուստ է և կարող է իր ուզեցածն անել. սակայն այս փողից աւելի հազուագիւտ և պատուական է այդ հարստութիւնը դիզող ոգին և դիզելուց յետոյ աղնիւ մնացած մարդկային սիրտը: Սիմոնիդէս... և դու, սիրուն իմ Եսթեր, մի՛ վախենաք: Թող Իլդերիմ Շէյխը վկայ լինի,



որ այս րոպէից սկսած ես ձեզ ազատ եմ հրատարակում: Այո, ազատ էք, և ինչ որ ասում եմ, նոյնը գրով էլ կը հաստատեմ: Բաւական չէ՞ այս: Է՛լ ի՞նչ անեմ:

—Որդիդ Հուրի,—պատասխանեց Սիմոնիդէսը,—դու արդարև հեշտացնում ես ստրկութիւնը: Սակայն ես սխալուած էի: Դու չես կարող ամեն բան անել. չես կարող օրէնքով ազատել մեզ: Ես քո մշտական սորուկն եմ, որովհետև հայրդ մի օր գամել էր ինձ դռան հեծանիին [1])... մեխի հետքը դեռ ականջիս վրայ է:

—Եւ հաճելի էր այդ անողը:

—Մի՛ դատիր նրան,—վրայ բերաւ Սիմոնիդէսը:—Նա իր սորուկն արաւ ինձ, որովհետև ես ինքս էի աղաչել նրան, որ այդպէս անէ: Եւ չեմ զղջում: Այդ ընդհակառակը էր, որ ես ստացայ Ռաքելիս՝ այս սիրասուն զաւակիս մօրը: Ռաքելը չէր ուզում կինս լինել, մինչև որ ես էլ իր վիճակին վիճակակից չդառնամ:

—Նա սորուկ էր:

—Այո՛:

Բէն Հուրն սկսեց վեր ու վայր մտնել՝ զբաղուած:

—Ես հարուստ էի,—գոչեց նա,—աղնիւ Արիուսի ժառանգութիւնն ստանալով հարուստ: Այժմ գալիս է այս անհուն կարողութիւնը և դեռ սրան հաւաքողի հանճարը: Միթէ այս բոլորի մէջ Աստուծու մատը չի՞ երևում: Օգնի՛ր ինձ, Սիմոնիդէս, քո բարի խորհուրդներով: Օգնի՛ր ինձ արդարութիւնը ճանաչել և ըստ այնմ գործել: Օգնի՛ր ինձ անուանս արժանի հանդիսանալ, և ինչ որ դու օրէնքով ես իմ առջև, ես էլ գորով նոյնը կը լինիմ քեզ համար: Ես յաւիտեան ծառադ կը լինիմ:

---

[1]) Մի մարդու ականջ դռան հեծանիին գամելը կամ մեխելը նրան սորկացնելու նշան էր:

Սիմոնիդէսը բորբոքուն ու զուարթ դէմքով պատասխանեց.

—Ո՛վ հանգուցեալ տիրոջս որդիդ։ Քեզ օգնելը դեռ քիչ է... դրանից աւելի բան եմ։ Հոգուս և սրտիս բոլոր զօրութեամբ կը սիրեմ քեզ։ Ես այլևս մարմին չունիմ... դա կորաւ քո շահերին նուիրուելով։ Սակայն հոգիս ու սիրտս դեռ կարող են ծառայել քեզ, և կը ծառայեն։ Երդւում եմ մեր Աստուծու սեղանով և սեղանի վրայ նրան մատուցուող նուէրներով։ Միայն թէ այնպէս արա, որ օրէնքի առջև էլ ես այն լինիմ, ինչ որ եմ իսկապէս։

—Աւա՛ղ ինչ։

—Գոյք ու կայքիդ օրինական կառավարիչ համարիր ինձ։

—Այս բոպէից համարիր քեզ կառավարիչ։ Եթէ կամենաս, գրով կը հաստատեմ։

—Լոկ խօսքդ էլ բաւական է։ Հայրդ միշտ այդպէս էր անում. որդուցն էլ ուրիշ բան չեմ ուզում։ Արդ, եթէ մեր միաբանութիւնը կատարեալ է...

Սիմոնիդէսը լռեց։

—Իմ կողմից այդպէս է,—ասաց Բէն Հուրը։

—Այժմ դու խօսիր, Ռաքելի դուստր,—դիմեց Սիմոնիդէսը Եսթերին, նրա ձեռքն իր ուսից իջեցնելով։

Աղջիկը մի վայրկեան շփոթուած ծնաց ու կարմրեց. յետոյ Բէն Հուրին դարձաւ և ասաց կուսական վայելչութեամբ.

—Մօրիցս աւելի լաւ չեմ ես, և որովհետև նա վախճանուած է, թոյլ տուր, տէր իմ, որ ես հօրս խնամեմ։

Բէն Հուրը բռնեց նրա ձեռքից և մօտեցնելով նրան բազկաթոռին, ասաց.



—Դու բարի զաւակ ես։ Թող կամքդ կատարուի։

Սիմոնիդէսը նորից աղջկայ բազուկն իր ուսին դրաւ, և մի քանի վայրկեան լռութիւն տիրեց սենեակում։

## Ը.

### Յուստացուած թագաւորութիւնը

Վերջապէս Սիմոնիդէսն աչքերը բարձրացրեց, այժմ էլ իբրև հրամանատու, ինչպէս և առաջ։

—Եսթեր,—ասաց նա,—գիշերն արագ անցնում է։ Հրամայէ խմիչք բերել, որ փոքր ինչ կազդուրուենք յառաջիկայ գործի համար։

Աղջիկը զանգակը հնչեցրեց, և մի աղախին ներս մտաւ, հաց ու գինի բերելով։

—Ո՛վ, տէր իմ,—շարունակեց Սիմոնիդէսը,—իմ կարծիքով միաբանութիւնը դեռ թերի է։ Այսուհետև մեր կեանքը միախառնուած գետերի նման մի հոսանքով պիտի ընթանայ, և ինձ թւում է, թէ հոսանքը աւելի վսեմ յառաջ կերթայ, եթէ բոլոր ամպերը ջրի երեսից վարատուին։ Անցեալ անգամ դու իմ տանից հեռացար երևի թէ այն կարծիքով, թէ ես մերժում եմ իրաւունքներդ, որոնց արդարութիւնն ահա իսկոյն հանդիսաբար և անպայման խոստովանեցի։ Սակայն դու սխալւում էիր։ Եսթերը կարող է վկայել, որ ես քեզ ճանաչեցի, իսկ Մալուխը կը հաստատէ, որ ես քեզ աչքաթող չարի։

—Մալուխը՞,—գոչեց Բէն Հուրը։

—Ինձ նման բազկաթոռին կապուած մարդը, եթէ կամենայ գործող լինել այս աշխարհում, որից չարաչար կտրուած է, շատ ձեռքեր պիտի ունենայ. և ես ունիմ այդպիսի ձեռքեր, և Մալուխը լաւերից մէկն է։

Բայց երբեմն—Սիմոնիդէսը մի երախտագիտութեան հայեացք նետեց Շէյխի վրայ—բարեկամներիս օգնութեան էլ դիմում եմ. նրանցից մէկն է վեհանձն ու քաջարի Իլդերիմը։ Թող նա ասէ՝ արդեօք ուրացել կամ մոռացել եմ քեզ։

Բէն Հուրը մռիկ տուաւ արաբին։

—Ուրեմն դա էր, ով ազնիւ Իլդերիմ, որ իմ մասին քեզ պատմեց։

Իլդերիմը գլուխը խոնարհեց, իբրև նշան վաւերացման։

—Ո՞վ կարող է, տէր իմ,—շարունակեց Սիմոնիդէսը,—մի մարդու դատել՝ առանց նրան փորձելու։ Ես հէնց սկզբից ճանաչեցի քեզ. քեզ տեսնելով կարծես թէ հօրդ տեսայ. սակայն ինչ մարդ լինելդ չգիտէի։ Շատերի համար հարստութիւնը մի աքօղուած անէծք է։ Գուցէ դու էլ նրանցից էիր։ Այս իմանալու համար էր, որ ես Մալուխին քո եաևից ուղարկեցի, և այս գործում նա իմ աչքն ու ականջն էր։ Մի նեղանար վրան. նա քո մասին լաւ լուր բերաւ։

—Չեմ նեղանում,—սրտանց ասաց Բէն Հուրը։—Բարութեանդ մէջ իմաստութիւն կայ։

—Ասքերդ ինձ սիրելի են, — պատասխանեց վաճառականը չերմութեամբ։—Այսուհետև թիւրիմացութիւնից երկիւղ չունիմ։ Թող այժմ գնտերը միասին վազեն՝ դէպի ուր Աստուած նրանց ուղղէ։

Եւ փոքր ինչ լռելուց յետոյ շարունակեց.

—Ճշմարտութիւնը հարկադրում է ինձ խօսել։ Ջուլհակը նստած է քարգահի առջև, և մինչև մաքուրը գնում գալիս է և կտաւն աճում է, նկարները շատանում են, նա շարունակում է երազել... Այսպէս էլ իմ ձեռքի տակ հարստութիւնը, գնալով գնալով աճում էր և ես զարմանում էի այդ բանից։ Ես չէի կարող չհասկանալ, որ ինձնից դուրս մի զօրութիւն կար, գործերիս յաջողութեան մասին հոգ տանող։ Ուրիշների կարաւաններն աւազով ծածկող անապատի խորշակը իմ կարաւաններին խնայում էր։ Ծովեզերքի վրայ աւերմունք սփռող փոթորիկը ոչ միայն չէր վնասում իմ նաւերին, այլ դեռ նպաստում էր աւելի շուտ նաւահանգիստ հասնել։ Եւ ինչ որ ամենից զարմանալին է—ես որ ուրիշներից կախուած եմ և իբրև մի անշունչ իր այս աթոռին կապկանդուած,—ես երբէք վնաս չեմ կրել իմ որ և է գործակալից։ Տարերքն ինձ ծառայում էին և բոլոր սպասաւորներս հաւատարիմ էին ինձ։

—Արդարև զարմանալի բան,—ասաց Բէն Հուրը։

—Իմ կարծիքն էլ այդպէս էր և է։ Վերջ ի վերջոյ, ով տէր իմ, ես համոզուեցի, որ այս բոլորն Աստուծու գործն է։ Յետոյ սկսեցի հարցնել ինձ, թէ ինչ է նրա խորհուրդը, որովհետև անխորհուրդ բան չի անում Աստուած։ Այս հարցումը տարիներից ի վեր վրկնում էի և պատասխանին սպասում։ Անդրդուելի էր հաւատս, թէ այս բոլորը Աստուծու կամքով է կատարուում, և թէ ուրեմն մի օր նա ինձ իր խորհուրդը կըյայտնէ և ցոյց կըտայ, ինչպէս մի սպիտակ տուն, որ կանգնած է բլրի վրայ։ Եւ ահա արդէն ցոյց է տալիս։

Բէն Հուրը լսում էր ամենախորին ուշադրութեամբ։

—Շատ տարիներ առաջ ես մերոնց հետ նստած էի... մայրիկդ էլ, Եսթեր, ինձ հետ էր՝ գեղեցիկ, իբրև Ջիթենեաց լերան արշալոյսը... նստած էի երուսաղէմի հիւսիսային ճանապարհ մօտ, արքայական գերեզմանների յանդիման։ Յանկարծ մեր առջևից մեծ ու սպիտակ ուղտեր նստած երեք անծանօթ մարդիկ անցան։ Այնպիսի ուղտեր ոչ մի ժամանակ չէինք տեսած սուրբ քաղաքում։ Մարդիկ գալիս էին շատ հեռաւոր երկիրներից։ Նրանք կանգ առան և առաջինը հարցրեց.—Ո՞ր-

տեղ է հրէից նորածին թագաւորը։—Եւ կարծես թէ իմ զարմանքը մեղմելու համար յարեց.—Տեսանք նրա աստղն Արևելքում և եկել ենք նրան երկրպագելու։—Ես չհասկացայ նրան, բայց և այնպէս մինչև Դամասկեան դռները մարդկանց եռակից գնացի։ Եւ նրանք ամեն պատահողի միևնոյն բանն էին հարցնում, և ամեն մի լսող ինձ նման զարմացած էր մնում... Այնուհետև տարիներ անցան, և ես այն դէպքը մոռացայ, թէև նա շատ զրոյցների նիւթ էր տուել և իբրև Մեսիայի գալստեան նշան մեկնուել... Ո՜հ, աւաղ։ Ի՞նչ են մարդիկ և նոյնիսկ իմաստունները մեր միջից, եթէ ոչ երեխաներ։ Աստուած շրջում է երկրի վրայ և մենք նրա քայլերը չենք տեսնում... Բաղդասարին տեսե՞լ ես։

—Այո՛, և լսել իր պատմութիւնն իր իսկ բերնից, —ասաց Բէն Հուրը։

—Հրաշք է, արդարև հրաշք՛,—գոչեց Սիմոնիդէսը։—Ո՛վ, տէր իմ, երբ նա այդ բանն ինձ պատմեց, կարծես թէ ես այն պատասխանը լսեցի, որին սիրտս փափագում էր—Աստուծու խորհուրդը պարզուեց ինձ... Երբ թագաւորը մեզ մօտ գայ, նա աղքատ և անոք կըլինի, հետևորդներ, քաղաքներ ու բերդեր, զօրք ու զէնք չի ունենալ։ Նախ պէտք է նրա թագաւորութիւնը հաստատել, ապա Հռոմը կործանել։ Տեսնո՞ւմ ես, տէր իմ, դու, որ այրական զօրութեամբ լի ես, որ զէնքի քաջալարժ ես և գանձերով բեռնաւորուած... տեսնո՞ւմ ես, թէ Աստուած ինչպիսի առիթ է շնորհում քեզ։ Ո՞ր մարդը կարող էր մի աւելի մեծ վաճառքի համար ծնուած լինել։

Այս խօսքերը Սիմոնիդէսը ճշմարիտ ոգևորութեամբ արտասանեց։

—Սակայն թագաւորութիւնը՛, թագաւորութիւնը՛,—գոչեց Բէն Հուրը։—Բաղդասարն ասում է, թէ



այդ թագաւորութիւնը հոգիներից կազմուած կըլինի։

Հրէական հպարտութեամբ լի Սիմոնիդէսը հեգնելով պատասխանեց.

—Տէր իմ, Բաղդասարը զարմանալի բաներ, հրաշքներ տեսած ծերունի է։ Երբ նա խօսում է այդ բաներից, ես հաւատով խոնարհում եմ նրա առջև։ Սակայն նա բուն եգիպտացի է, մինչև անգամ ոչ նորադարձ, և հազիւ թէ լաւ գիտենայ, թէ Աստուած ինչ յարաբերութիւն է ունեցել Իսրայէլեան ազգի հետ, և կամ այնքան գիտենայ, որ մեր իմացածից աւելի լինէր։ Մարգարէներն էլ նրա նման լոյս ունէին երկնքից, բայց նրանք շատ են, իսկ նա մէկ։ Եհովան միշտ Եհովա կըմնայ. ես հաւատում եմ մարգարէներին։—Եսթեր, բե՛ր ինձ Թօրան [1]։

Եւ առանց սպասելու աղջկան՝ շարունակեց.

—Մի թէ կարելի՞ է մի ամբողջ ազգի վկայութիւնն արհամարհել, առ ոչինչ համարել։ Անցիր, տէր իմ, եթէ կամենաս, ծովափնեայ Տիւրոսից, որ հիւսիսում է, մինչև եղովմայեցոց հարաւային անապատի մայրաքաղաքը, և չես գտնիլ սովորական աղօթքները մրմնջող, Տաճարում ողորմութիւն տուող և Պասեքի գառան միսն ուտող որ և է մարդ, որ ասէր քեզ, թէ ապագայ թագաւորի ձեռքով մեզ՝ Ուխտի մանկանցս համար հիմնուելու թագաւորութիւնը մի ուրիշ բան կըլինի, միայն եթէ այս աշխարհի թագաւորութիւն, ինչպէս որ Դաւթինն էր։ Ո՞րտեղից է մեր այս հաւատը։ Իսկոյն կըտեսնես։

Եսթերը բերաւ մի քանի գրչագիր գլաններ, որոնք փաթաթուած էին ոսկետառ մակագրութիւն ունեցող կտաւներով։

—Բռնիր ղրանց, դստրիկ իմ, և հերթով տուր

[1] Մովսիսի Հնգամատեանը։

ինձ՝ որն ուզենամ,—ասաց հայրը քնքշաբար և շարունակեց փաստաբանել.

—Տէր իմ, երկար կըտևի, եթէ փորձեմ մի առ մի յիշատակել աստուածաշունչ մարգարէներին և գրուածքից յետոյ երևացած գուշակներին ու քարոզիչներին. այն իմաստուններին, որոնք իրենց լոյսը Մաղաքիայի գահից փոխ առան. այն Հիլել և Շամմայի կոչուած վարժապետներին, որոնց անունները միշտ պիտի հնչուին դպրոցներում: Հարցնե՞մ դրանց, թէ ինչ կասեն թագաւորութեան մասին: Ո՞վ է, օրինակի համար, Ենովքեան գրքում յիշուած Ոչխարների Հովիւը: Ո՞վ, եթէ ոչ այն թագաւորը, որի վրայ խօսում ենք: Նրա համար մի գահ կըհաստատուի. նա ոտքով գետնին կըզարկէ, և միւս թագաւորներն իրենց գահերից վայր կըընկնին և Իսրայէլի հալածիչները հրեղէն անդունդը կըվիժուին: Մարգարէներին հաւատո՞ւմ ես, տէր իմ,—հարցրեց նա փոքր ինչ դինի խմելուց յետոյ:—Անտարակոյս հաւատում ես, որովհետև ամբողջ առնմդ էլ հաւատացել է:—Եսթեր, տուր ինձ Եսայի գիրքը:—Ծերն առաւ օրհորդի մեկնած մագաղաթը և կարդաց. «Ժողովուրդ որ գնայր ընդ խաւար՝ եռես լոյս մեծ. և որ բնակեալ էք յաշխարհի և ի ստուերն մահու, լոյս ծագեաց ձեզ...Զի մանուկ ծնաւ մեր, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն եղև ի վերայ ուսոց իւրոց... Մեծ է իշխանութիւն նորա, և խաղաղութեան նորա չիք սահման: Յաթոռն Դաւթի նստցի և զարքայութիւն նորա յաջողեսցէ, և զօրացուսցէ զնա իրաւամբք և արդարութեամբ յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց»:—Հաւատո՞ւմ ես մարգարէներին, ով տէր իմ:—Եսթեր, այժմ տուր Տիրոջ խօսքն առ Միքիէն:

Եսթերը տուաւ խնդրուած գլանը:

—«Եւ դու»,—կարդաց Սիմոնիդէսը,—«և դու Բեթղեհէմ, տուն Եփրաթայ սակաւաւոր, իցես լինել ի հազարաւոր Յուդայ. ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի:»—Ահա դա էր, որին տեսաւ Բաղդասարը, որպէս մանուկ, և երկրպագութիւն արաւ:



—Հաւատո՞ւմ ես, տէր իմ, մարգարէներին:—Եսթեր, տուր ինձ Երեմիայի խօսքերը:

Եւ ծերունին կարդաց. «Ահա աւուրք գան, ասէ Տէր. և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան, և թագաւորեսցէ թագաւոր և ի միտ առցէ և արասցէ իրաւունս և արդարութիւն ի վերայ երկրի: Յաւուրս նորա փրկեսցի Յուդա, և Իսրայէլ բնակեսցէ յուսով»:—Որպէս թագաւոր պիտի թագաւորէ, որպէս թագաւոր, ով, տէր իմ... Հաւատո՞ւմ ես մարգարէներին... Դէ, դատիկ, այժմ տուր Յուդայի անբիծ որդու խօսքերը:

Աղջիկը Դանիէլի գիրքը տուաւ նրան:

—Լսիր, տէր իմ. «Տեսանէի ի տեսլեան գիշերոյ՝ և ահա ընդ ամպս երկնից իբրև որդի մարդոյ գայր... Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութիւն. և ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայեսցեն, և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական որ ոչ անցանէ, և թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի»:—Հաւատո՞ւմ ես, տէր իմ, մարգարէներին:

—Հերիք է, հերի՛ք. հաւատում ե՛մ,—գոչեց Բէն Հուրը:

—Ուրեմն՞,—հարցրեց Սիմոնիդէսը:—Եթէ թագաւորն աղքատ գայ, իմ տէրը չի՞ օգնիլ նրան իր լիութիւնից... Սակայն ինչո՞ւ եմ ասում, թէ նա աղքատ պիտի գայ:

—Եսթեր, տուր ինձ Աստուծու խօսքն առ Զաքարիան,—ասաց Սիմոնիդէսը:—Աղջիկը տուաւ նրան մի գլան:—Արդ լսիր, թէ թագաւորն ինչպէս կըմտնէ Երուսաղէմ:—Եւ նա կարդաց.

—«Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի։ Ահա թագաւոր քո գայ, արդար և փրկիչ. նոյն հեզ և հեծեալ ի վերայ իշոյ՝ և յաւանակի նորոյ»։

Բէն-Հուրն աչքերը մի կողմ դարձրեց։

—Ի՞նչ ես տեսնում, տէր իմ։

—Հռոմը,—պատասխանեց երիտասարդը դառնութեամբ,—Հռոմը և իր լեգէոնները։ Ես ապրել եմ նրանց բանակում. ճանաչում եմ նրանց։

—Դու կըլինիս թագաւորի լեգէոնների սպարապետը,—ասաց Սիմոնիդէսը,—և միլիոնների մէջից ընտրութիւն կանես։

—Միլիոնների՞ մէջից,—գոչեց Բէն Հուրը։

Սիմոնիդէսը փոքր ինչ մտածեց և ապա թէ ասաց։

—Թող չտաքնապէ քեզ զօրութեան խնդիրը՞։

Բէն Հուրը հարցական աչքով նայեց նրան։

—Դու մտածում էիր թագաւորի մասին, որ գալու է իւրայինների մօտ խոնարհ կերպով,—շարունակեց Սիմոնիդէսը։—Դու տեսար նրան ալ կողմդ կանգնած, իսկ ձախ կողմդ տեսար կայսրի զրահավառ լեգէոնները և հարցրիր քեզ.—Ի՞նչ կարող է թագաւորն անել։

—Միտքս ուղիղ դուշակեցիր։

—Ո՜հ, տէր իմ, մեր Իսրայէլի զօրութիւնը չգիտես դու,—ասաց Սիմոնիդէսը։—Դու պատկերացնում ես նրան իբրև մի ծերուկ, որ լաց է լինում բաբելոնեան ջրերի ափին։ Բայց գնա Զատկին Երուսաղէմ, կաց Տաճարի սիւնազարդ դաւթում կամ շուկայում և աչքով տես մեր ազգը։ Տիրոջ կողմից Յակոբ նահապետին եղած խոստումը մի օրէնք էր, որի ներքև մեր ազգն երբէք չդադարեց բազմանալ, բազմանալ նոյն իսկ գերութեան մէջ։ Մինչ աճեցինք եգիպտական սարկութեան մէջ։ Հռոմի ճնշումը միայն կազդուրիչ սնունդ տուաւ մեզ. և այժմ իրօք մենք մի ազգ ենք և



ազգերի ժողով։ Եւ ոչ միայն այս, ով տէր իմ։ Իսրայէլի զօրութիւնը և կամ որ նոյնն է—թագաւորի զօրութիւնը չափելու համար պէտք չէ միայն բնական աճումն ի նկատ առնել, այլ պէտք է հաւատի տարածումն էլ հաշուի ունենալ, և այն ժամանակ ծանօթ աշխարհի սահմաններին կըհասնենք։ Սովորութիւն է ասել, թէ Երուսաղէմն է Իսրայէլը. սակայն Երուսաղէմը մեր Տաճարի վէմն է միայն, մարմնի սիրտը։ Դարձրու աչքերդ հռոմէական լեգէոններից, որքան էլ նրանք շատ լինին, և համարիր հաւատացողների մարդակոյտ բազմութիւնը, որ սպասում է միայն կոչին—«Դէպի վրանները դ, Իսրայէլ՛»։ Համրիր Պարսկաստանում ցիրուցան եղած սերունդը. համրիր մեր այն եղբայրներին, որոնք վխտում են Եգիպտոսի և Աֆրիկայի վաճառաշահ քաղաքներում. համրիր Արևմուտք՝ Լոդինում և Սպանիա գաղթած հրէաներին. համրիր Յունաստան և կղզիները գնացած, Պոնտոս և Անտիոք եկած հրէաներին և նոր բադարձներին. համրիր, եթէ կամենաս, և՛ նրանց, որոնք դեգերում են նոյն իսկ Հռոմի պիղծ պարիսպների շրջանում. համրիր Տիրոջ պաշտողներին մօտաւոր և անդր Նեղոսեան անապատներում, կասպից ծովի երկիրներում և էլ դէնը—Գոգի և Մագոգի [1]) աշխարհներում, որոնք ամեն տարի նուէր են առաքում սուրբ Տաճարին,—համրիր բոլորին և ընտրիր։ Եւ երբ հաշիւդ աւարտես, կըտեսնես, տէր իմ, որ սպառազէն զօրքդ պատրաստ է, պատրաստ և մի թագաւորութիւն նրա համար, որ ամբողջ աշխարհի վրայ արդարութիւն և իրաւունք պիտի հաստատէ, թէ Սիոնում և թէ Հռո-

[1]) Մի առասպելական իշխանի և նրա երկրի անուններն են։ Տես՝ Եզեկիել 38,39 և Յայտնութիւն Յովհաննու 20, 8։ Ոմանք կարծում են, թէ այդ անունները տրուած էին հիւսիսային բարբարոս ազգերին և մանաւանդ սկիւթացոց։

մում անխոհեր։ Այն ժամանակ հարցիդ պատասխանն էլ կըստանաս—ինչ որ կարող է Իսրայէլն անել, նոյնը կանէ և թագաւորը՛։

Այս՝ ոգևորութեամբ նկարուած պատկերը փողի հնչման տպաւորութիւն արաւ Իլդերիմի վրայ։

Ո՛հ, թէ յետ գար իմ ոյժը,—գոչեց նա և վերկացաւ։

Բէն Հուրն անշարժ էր։ Սիմոնիդէսի ճառը մի հրաւէր երևաց նրան՝ իր կեանքն ու գոյքը այն խորհրդաւոր էլին նուիրելու, որ ակներև մեծ յոյսերի կենդրոն էր կազմում թէ Սիմոնիդէսի և թէ բարեպաշտ եգիպտացու համար։ Արդէն տեսանք, որ այն գաղափարը Բէն Հուրի համար նոր բան չէր և արդէն մի քանի անգամ ներկայացել էր նրա մտքին—նախ, երբ նա շրջում էր Մալուխի հետ Դաւինէի անտառում. յետոյ՝ երբ նա լսում էր Բաղդասարի մեկնութիւնը, վերջապէս, երբ զբօսնելով Իլդերիմի լճի ափին, մտածում էր մի և նոյն պաղափարի վրայ և գլխեթ մի որոշ վճռի յանգում։ Բայց և այնպէս այս բոլորը նրա համար մի վերացական բան էր, երևակայութեան արգասիք։ Իսկ այժմ այդպէս չէր։ Այժմ թագաւորութիւնը նրա աչքում մի հնարաւոր բանի կերպարանք առաւ։ Այնքան թէ յանկարծ նրա առջև մի ծածուկ դուռ բացուեց և նրա վրայ մի լոյսի հոսանք հեղեղուեց և նրան մի պաշտօն ցոյց տուին—մինչև այսօր երազուած պաշտօն, որ այժմ մի արդիւնաշատ ապագայ էր խոստանում և նրա փառասիրութիւնը կատարուած պարտքի գիտակցութեամբ վարձատրում... Այժմ մէյն մի դրդում էր հարկաւոր։

—Դիցուք թէ այդ բոլորն ուղիղ է, Սիմոնիդէս,—ասաց նա։—Դիցուք թէ թագաւորը կըգայ և նրա թագաւորութիւնը Սողոմոնի թագաւորութեան պէս փա-



ռաւոր կըլինի. ընդունենք նաև, թէ ես յօժարութեամբ իմ անձն ու գոյքը և ամեն բան նրա դատին կընուիրեմ. այն էլ ընդունենք, թէ կեանքիս դէպքերը և մեր հարստութեան հրաշալի աճումը քո ձեռքի տակ խորհրդապէս կապակից են այս բոլորի հետ... Իսկ յետո՞յ... Մի՞թէ այսո՛հետև էլ կոյրերի նման գործ տեսնենք. մի՞թէ սպասենք, մինչև որ թագաւորը գայ և մեզ կանչէ։ Տարիքն ու փորձառութիւնը քո կողմն են։ Պատասխան տուր։

Սիմոնիդէսն անմիջապէս պատասխանեց.

—Մեր առջև ընտրութիւն չկայ, ոչ մի ընտրութիւն։ Այս նամակը մեզ համար—նա Մէսալայի գրութիւնը հանեց—արագ գործելու մի նշան է։ Մենք Մէսալայի և Գրատուսի դաւադրութեանը դիմադրելու չափ ղօրեղ չենք. մենք ոչ Հռոմում բաւական մեծ ազդեցութիւն ունինք, ոչ էլ այստեղ ղօրութիւն։ Նրանք կըսպանեն քեզ, եթէ մենք յապաղենք։ Իմ անձի վրայ տես նրանց գթասիրութեան օրինակը։—Ծերունին ցընցուեց զարհուրելի յիշատակներից։—Ո՛վ, տէր իմ,—շարունակեց նա,—ինչպէս ուժով ես... բարի կամքով, կըցանկայի ասել։

Բէն Հուրը նրան չհասկացաւ։

—Յիշում եմ, թէ որքան աշխարհը գեղեցիկ էր երիտասարդութեանս ժամանակ,—շարունակեց Սիմոնիդէսը։

—Բայց և այնպէս ամենամեծ զոհաբերութեան ընդունակ էիր,—ասաց Բէն Հուրը։

—Այո՛. սիրուց՛։

—Ուրիշ համազօր շարժառիթներ չկա՞ն կեանքում։

Սիմոնիդէսը գլուխը թօթուեց։

—Օրինակ՝ փառասիրութիւնը՞։

—Փառասիրութիւնն արգելուած է Իսրայէլի որդուն։

—Իսկ վրէժխնդրութիւնը՞։

Այս կայծը մի դիւրավառ նիւթի դիպաւ. ծերի աչքերը բորբոքուեցին, ձեռքերը դողացին, և նա շտապով պատասխանեց.

—Վրէժխնդրութիւնը հրէի իրաւունքն է. դա օրէնք է։

—Ուղտն անգամ, շունն անգամ չի մոռանում իրեն հասած նախատինքը,—գոչեց Իլդերիմը։

Սիմոնիդէսը շարունակեց իր միտքը բացատրել.

—Մի գործ կայ թագաւորի համար անելու, մի գործ, որ նրա գալուց առաջ պիտի արուի։ Մենք չպիտի կասկածենք, որ Իսրայէլը կոչուած է նրա աջ ձեռքը լինելու. սակայն, աւաղ, այս ձեռքը խաղաղութեան ձեռք է և անվարժ պատերազմի արուեստին։ Միլիոնների մէջ մի մարդուած գունդ, մի գնդապետ չես գտնիլ։ Հերովդէսի վարձկաններին չեմ հաշուում. նրանք մի՛այն մեզ ընկճելու համար են։ Մեր վիճակը ճիշտ այնպէս է, ինչպէս որ Հռոմը կըցանկար. նրա բռնակալութիւնն իր փափագած պտուղները տուաւ։ Բայց ահա յեղաշրջման ժամանակը հասել է. այժմ հովիւն էլ պիտի զրահ հագնէ, սէգ ու սուսեր վերցնէ և հօտը արածելու տեղ՝ առիւծների դէմ մարտ մղէ։ Անհրաժեշտ է, որպեսզի իմ, որ գոնէ մի մարդ թագաւորի աջ ձեռքը հանդիսանայ։ Ո՞վ կրլինի այդ մարդը, եթէ ոչ նա, որ այս գործը գլուխ կըբերէ։

Այս հեռապատկերն երևակայելիս Բէն Հուրը բորբոքուեց. բայց և այնպէս նկատեց.

—Որ մի բան անել անհրաժեշտ է՝ մէկ խնդիր է, բայց ինչպէս անելը—ուրիշ խնդիր։



Սիմոնիդէսը մի ումպ գինի ընդունելուց յետոյ պատասխանեց.

—Տէր իմ, Շէյխը և դու գլխաւոր առաջնորդները կըլինիք—դու քո մասում, նա իր մասում. իսկ ես այստեղ կըմնամ և առաջուայ պէս առևտուր կանեմ, որպէս զի մայր աղբիւրը չցամաքի։ Դու կերթաս Երուսաղէմ, այնտեղից կերթաս անապատ և ռազմի ընդունակ հրէաների թիւը կըհամարես, տասների և հարիւրների կըբաժանես, իւրաքանչիւր խմբի համար պետեր կընտրես, կըմարզես, ծածուկ տեղերում զէնք կըդիզես։ Այս բոլորի համար ես քեզ դրամ կըհասցնեմ։ Պերէայից սկսելով գործդ, կանցնես կերթաս Փալիլիա. այնտեղից Երուսաղէմ ժամանելը մի քայլ է։ Պերէայում անապատը քո ետևը կըլինի և Իլդերիմը քեզ մօտիկ։ Նա ճանապարհները կըբռնէ, և բան չի պատահիլ, որ դու իմանայ չիմանաս։ Նա ամեն կերպով կօգնի քեզ։ Մինչև որ այս բոլորը պատրաստուի, մեր որոշումը թաքուն կըմնայ։ Իմ պաշտօնը ծառայական կըլինի։ Արդէն խօսած եմ Իլդերիմի հետ։ Դու ի՞նչ կասես։

Բէն Հուրը Շէյխին մտիկ տուաւ։

—Այդ բոլորը ճիշտ է, որդիդ Հուրի,—նկատեց արաբը։—Ես արդէն խօսք եմ տուել և հանդիսատ եմ։ Իսկ քեզ ահա երդւում եմ, որ ոչ միայն ես, այլև բոլոր ինձնուորներս քեզ հետ կըկապուենք, և ինչ որ իմս է, քոնը կըլինի։

Սիմոնիդիսը, Իլդերիմը, Եսթերը—երեքն էլ ակնկատոյց նայում էին Բէն Հուրին։

—Ամեն մարդու,—ասաց նա վշտագին եղանակով,—տրուում է մի ուրախութեան բաժակ, որ նա կարող է վաղ թէ ուշ վերցնել և վայելել, բայց ոչ թէ ինձ։ Տեսնում եմ, Սիմոնիդէս և դու, ազնիւ Շէյխ, թէ ուր է տանում ձեր առաջարկութիւնը։ Եթէ ես դրան ըն-

դունեմ և առջևս բացուող ասպարէզի վրայ ոտք դնեմ, այնուհետև բարով մնաս խաղաղութիւն՝ հետդ կապուած յոյսերով՝... Այդ ասպարէզը մտնելուս պէս՝ իմ եռանդից հանդիսատ կեանքի դռները կըփակուին այլևս երբէք չբացուելու պայմանով, որովհետև նրանց վրայ արձուն հսկում է Հռոմը: Հռոմն ինձ կըհալածէ, նրա դահիճներն ինձ հետամուտ կըլինին, և ես կըստիպուեմ քաղաքներից դուրս՝ քարայրներում հանգիստ որոնել և հաց ուտել:

Մի հեկեկանք հնչեց յանկարծ և ամենքը մոխիկ տուին Եսթերին, որ լալով իր երեսը հօր ուսի վրայ թաքցրեց:

—Ի՛նչ վրայ չէի մտածել, Եսթերիկ,—ասաց հայրը դորովով, որովհետև ինքն էլ յուզուած էր:

—Սիմոնիդէս,—ասաց Բէն Հուրը,—մի կարեկից հոգի տեսնելը սփոփանք է վշտակիր մարդուն: Թոյլ տուէք՝ շարունակեմ:

Եւ նրանք նորից սկսեցին Բէն Հուրին լսել:

—Ուզում եմ ասել, թէ ինձ համար մի ուրիշ ընտրութիւն չկայ, բայց եթէ առաջարկութիւնդ ընդունել: Եւ որովհետև այստեղ մնալս մի անփառունակ մահուան հաւասար կըլինէր, ես կուզենայի իսկոյն և եթ սկսել գործը:

—Արդեօք մեր դաշինքը գրով չհաստատե՞նք,—հարցրեց Սիմոնիդէսն իր գործնական եղանակով:

—Ես վստահանում եմ ձեր խօսքին,—ասաց Բէն Հուրը:

—Ես էլ,—կրկնեց Իլդերիմը:

Այսպէս կնքուեց այն միութեան դաշինքը, որ Բէն Հուրի կեանքին մի նոր ընթացք պիտի տար: Եւ նա յարեց անմիջապէս.

—Ուրեմն գործը վերջացած է:



—Թող Աբրահամի Աստուածն օգնէ մեզ՛,—աղաղակեց Սիմոնիդէսը:

—Այլևս մի խօսք, բարեկամներ,—ասաց Բէն Հուրը թեթևացած սրտով:—Ձեր թոյլտուութեամբ կըցանկայի մինչև խաղերի վերջանալը դեռ ինձ ինձ պատկանել: Հաւանական չէ, որ Մէսալան ինձ, մինչև որ կուսակալի պատասխանը չընդունէ. իսկ այդ կըլինի նամակն ուղարկելուց առ նուազն եօթն օր յետոյ: Նրան կըկէսում հանդիպելը ինձ համար մի այնպիսի զուարճութիւն է, որից ես ոչ մի կերպով չէի կամենալ զրկուիլ:

Իլդերիմն ամենայն սիրով հաւանութիւն տուաւ այդ խնդրին, որ իրեն այնքան սիրելի էր: Սիմոնիդէսը տեսական կէտից նայելով խնդրին, ասաց.

—Շատ լաւ, տէր իմ: Այդ որոշումդ ժամանակ կըտայ ինձ մի ծառայութիւն անելու քեզ: Լսած եմ, որ դու ժառանգութիւն ունիս Արիւսից: Անչափ կայք է:

—Մի ամարանոց Միզենումի մօտերքում և տներ Հռոմում:

—Իմ կարծիքով լաւ կըլինէր այդ տները վաճառել և դրամն ապահովել: Տուր ինձ նրանց ցուցակը. ես հաւատարմագրեր կըպատրաստեմ և մի գործակալ կուղարկեմ վաճառումը գլուխ բերելու համար: Գուցէ այս անգամ կայսերական աւազակների առաջն առնենք:

—Մինչև վաղը կըհասցնեմ քեզ, ինչ որ պէտք է:

—Ուրեմն, եթէ ուրիշ ասելիք չունինք, մեր այս դիշերուայ գործը վերջացած է,—ասաց Սիմոնիդէսը:

Իլդերիմը հաճութեամբ շփեց իր մօրուքը և գոչեց.

—Եւ լա՛ւ վերջացա՞ծ:

—Եսթեր, դարձեալ բեր մեզ հաց ու գինի: Իլդերիմ Շէյխը շնորհ կանէ մեզ մօտ մնալու այս գիշեր: Իսկ դո՛ւ, տէր իմ...

—Հրաման տուր, որ ձիերը բերեն,—ասաց Բէն Հուրը։—Թշնամուց ապահով կըլինիմ, եթէ այժմ վերադառնամ Արմաւենեաց պարտէզը, և—նա նայեց Իլդերիմին— ձիերդ էլ կուրախանան ինձ տեսնելով։

Առաւօտեան մթնշաղին Բէն Հուրը և Մալուխը ձիերից իջան Իլդերիմի վրանի առջև։

## Եսթերն ու Բէն Հուրը

Հետևեալ գիշերուայ մօտաւորապէս չորրորդ ժամին Բէն Հուրը կանգնած էր Եսթերի հետ մեծ մթերանոցի տանիքի վրայ։ Ներքևը՝ նաւամատոյցի վրայ մարդիկ սաստիկ շարժման մէջ էին—հակեր էին տանում պռաւոլով, սնդուկներ կրում, և ջահերի ծխոտ լուսի մէջ նրանց դէմքերն արևելեան հէքիաթի ոգիներն էին յիշեցնում։ Բանուորների բազմութիւնն շատ էր մի մեծ նաւ բեռնաւորել, որ շուտով մեկնելու էր։ Սիմոնիդէսը դեռ նստած էր զրասենեակում, ուր հրահանգներ էր տալիս նաւապետին, որ անյապաղ պիտի Հռոմի ծովախորշը՝ Օստիա գնար, այնտեղ մի ճանապարհ ցամաք իջեցնէր և յետոյ հանդարտ սպանիական ափերը դիմէր, և յատկապէս Վալէնցիա։

Ճանապարհ էր այն գործակալը, որ Արիուս երկպետից Բէն Հուրին կտակուած ժառանգութիւնը պիտի վաճառէր։ Նաև պարանները բացուելուն և նրա ծով մանելուն պէս՝ Բէն Հուրը պիտի կապուած մնար այն գործի հետ, որ որոշուած էր նախորդ գիշերը։ Սակայն եթէ լաւ համարէր Իլդերիմի հետ դրած պայմանը յետս կոչել, այդ յայտնելու և իր խօսքից հրա-



ժարուելու համար նրան մի փոքր միջոց էր տրուում։ Տէրը նա էր, և նրան կըմնար վերջին կամքն արտասանել։

Նա բազուկները խաչած և ինքն իր հետ մաքառելով մտիկ էր տալիս գետեզերքի տեսարանին։ Նա երիտասարդ էր, գեղեցիկ, հարուստ, Հռոմի պատրիկեան շրջաններից նոր եկած. բնական է ուրեմն, որ աշխարհը հրապուրէր նրան և թելադրէր անչափ մեծ արժէք չտալ տաժանելի պարտքի զգացման և փառասիրական ձգտումներին, որոնք աքսոր ու վտանգ էին սպառնում նրան։ Կարող ենք մինչև անգամ երևակայել, թէ ինչ կասկածներ էին պաշարում նրան այդ րոպէին—արդեօք մի ունայն բան չէ՞ր կռիւ սկսելը կայսրի դէմ. արդեօք սո՞յզ էր այն բոլորը, ինչ որ վերագրուում էր Թագաւորին և նրա գալուն. արդեօք կարժէ՞ր ընդմիշտ կորցնել այն հանգիստը, պատիւներն ու պաշտօնները, որոնք գնելի ապրանքի պէս մատչելի էին նրան, և մանաւանդ նորից զրկուել հայրենիքից և նրա հրապոյրը ջաղցրացնող մտերիմներից։ Վերջին հիմքի զօրութիւնը նա միայն կըհասկանայ, ով որ անձամբ փորձել է երկարամեայ պանդխտութիւնը։ Եթէ աւելացնենք, որ Բէն Հուրի այս փաստաբանութեան Եսթերն էլ ճարտար կերպով աջակցում էր, այն ժամանակ նրա մտքերը մեզ հասկանալի կըլինին։

—Դու երբ և է Հռոմում եղել ես,—հարցրեց նա Եսթերին։

—Ո՛չ,—պատասխանեց աղջիկը։

—Կուզենայի՞ր այնտեղ գնալ։

—Չեմ կարծում։

—Ինչո՞ւ։

—Որովհետև սարսափ եմ զգում Հռոմից,—դողալով ասաց Եսթերը։

Երիտասարդը նայեց աղջկանը և թէպէտ ջահելի աղօտ լուսով նրա երեսը որոշ տեսնել չէր կարող, բայց և այնպէս նրան նայելիս յանկարծ յիշեց Թիրզային և մի գորովական յուզմունք զգաց... Թշուառ քոյրը ճիշտ այդպէս էր կանգնած նրա հետ կարի վրայ այն սոսկալի առաւօտեան, երբ Գրատուսի պատահարը տեղի ունեցաւ: Ողճուկ Թիրզա: Ո՞րտեղ է արդեօք... Այս յիշատակով Բէն Հուրի սրտում բռնկած զգացումը նպաստաւոր եղաւ Եսթերին: Մի՞թէ սա էլ նրա քոյրը չէր... չէ՞ որ նա Եսթերին երբէք աղախնի տեղ չէր դրել. և եթէ Եսթերն իրօք աղախին լինէր, չէ՞ որ այդ իսկ պատճառով պէտք կըլինէր աւելի մեղմ և քնքուշ վարուել նրա հետ:

—Ես չեմ կարող երևակայել Հռոմն իբրև պալատներով ու տաճարներով զարդարուն քաղաք,—շարունակեց Եսթերը հանգիստ ձայնով:—Այդ քաղաքն ինձ մի հրէշ է թուում, երկիրները յափշտակող և բնակիչներին կորուստ ու մահ սպառնացող հրէշ, մի արիւնարբու, չար գազան, որին անկարելի է դիմադրել: Եւ ինչո՞ւ դու...

Նա կանգ առաւ և վայր նայեց:

—Շարունակիր,—սիրտ տուաւ նրան Բէն Հուրը:

Եսթերը մի քայլ մօտեցաւ նրան, աչքերը բարձրացրեց և ասաց.

—Եւ ինչո՞ւ դու քեզ թշնամի անես Հռոմը: Եւ ինչո՞ւ, ընդհակառակն, քեզ բարեկամ չանես նրան և հաշտ չլինես նրա հետ: Դու շատ աղէտներ կրեցիր, բայց և թշնամիներիդ որոգայթից ազատուեցիր: Ցաւն ու վիշտը ծաղիկ հասակդ մաշեցին. ինչ հարկ կայ այսուհետև էլ կեանքդ գառնութեան մատնելու:

Մինչ Եսթերը խօսում էր, նրա կուսական դէմքին աւելի գունատ էր պատկերանում Բէն Հուրին: Սա



կացաւ դէպի նա և մտերմութեամբ հարցրեց.

—Ի՞նչ խորհուրդ կըտայիր ինձ, Եսթերիկ:

Եսթերը մի վայրկեան լռեց և ապա թէ իր կողմից հարցում արաւ.

—Հռոմի մօտ ունեցած կալուածքդ մի տո՞ւն է:

—Այո:

—Եւ սիրո՞ւն:

—Շատ սիրուն... Պարտէզի և ճեմելիքների միջև կանգնած մի պալատ է՝ ներսն ու դուրսը շատրուաններով և անդրինեներով զարդարուած. շրջակայ այգեէտ բլուրներից նայելիս՝ մինչև անգամ Նէապօլն ու Վեզուվը կըտեսնես: Ոտքերիդ տակ ծովը կապուտակ դաշտի նման է երևում: Կայսրի ամարանոցն էլ հեռու չէ. սակայն Արիուսինը, շատերի ասելով, նրանից էլ գեղեցիկ է:

—Եւ կարելի՞ է այնտեղ հանգիստ ապրել:

—Ոչ մի տեղ չէ կարելի աւելի հանգիստ ամառուայ օր, աւելի քաղցր լուսնեակ գիշեր վայելել... հարկաւ երբ որ հիւրեր չլինին: Այժմ, երբ առաջուայ տէրը վախճանուած է և ես այստեղ եմ, ոչ մի բան չէ ընդհատում այն պալատի լռութիւնը, բացի ծառանների փսփսուքից, երջանիկ թռչունների ծլվլոցից և շատրուանների կարկաջից: Այնտեղ կատարուող միակ փոփոխութիւնն այն է, որ հին ծաղիկները թառամում են, օրէցօր նորերն են բացւում և արևի լոյսը մերթ ընդ մերթ տեղի է տալիս թեթև ու թուխիկ ամպերին: Այնտեղի կեանքն ինձ համար անչափ հանգիստ էր և ես շատ անգամ կշտամբում էի ինքս ինձ, որ այնքան անելիք ունենալով հանդերձ, մի փափուկ ու դատարկ կեանք էի անցկացնում պալատում:

Եսթերը գետին էր մտիկ տալիս:

—Ի՞նչ էր հարցմանդ պատճառը,—ասաց Բէն Հուրը:

—Բարի տէր իմ...

—Ո՛չ, ո՛չ, Եսթեր: Անուանիր ինձ բարեկամ, եթէ կամենաս՝ ընկեր, եղբայր, բայց ոչ տէր: Ես տէրդ չեմ և չեմ ուզում լինել: Դու ինձ եղբայր անուանիր:

Եթէ մութ չլինէր, Բէն Հուրը կըտեսնէր, թէ Եսթերն ինչպէս ուրախութիւնից կարմրեց և նրա աչքերը ցնծութիւնից վառուեցին:

—Ջեմ հասկանում,—ասաց Եսթերը,—թէ ինչպէս կարող ես աւելի յարգել այն նոր կեանքը, որ...

—Որ բռնութեամբ և գուցէ արիւնով լի կըլինի,—լրացրեց Բէն Հուրը:

—Այո՛,—վրայ բերաւ Եսթերը,—աւելի յարգել այն նոր կեանքը, որ սկսելու ես, քան թէ այն, որ հնար ունէիր վայելելու քո գեղեցիկ պալատում:

—Սխալւում ես, Եսթեր: Ես ընտրութիւն չեմ անում. հռոմայեցիք այնքան բարի չեն, որ թոյլ տան ինձ ընտրութիւն անել: Այստեղ միայն մահուան հաւասար կըլինէը... Հոմ էլ որ գնամ, նոյն վախճանը կըսպասէ ինձ—թունաւոր բաժակ, սրիկայի դաշոյն և կամ թէ մի անարդար մահուան վճիռ: Մէսալան և Գրատուս կուսակալը հօրս գոյքերի գրաւումով են հարստացած, և այդ գոյքերի ապահովութիւնը նրանց համար այժմ շատ աւելի կարևոր է, քան թէ նախկին գրաւումը: Գործը հաշտութեամբ վերջացնելու հնար չկայ—դա յանցանքի խոստովանութիւն կըլինէը նրանց կողմից: Եւ յետոյ...յետոյ...ով Եսթեր, եթէ հաշտուելու հնար էլ լինէը, չգիտեմ՝ արդեօք կուզենայի այդ բանը փորձել: Ինձ համար հանգստութիւն չկայ, չկայ նոյն իսկ ամարանոցի թմրեցուցիչ ստուերներում, ոչ էլ անուշիկ օդի մէջ... ով էլ լինէը այն անձը, որ կամենար անձնուէր սիրով կեանքիս բեռը հեշտացնել: Հանգստութիւն չեմ գտնիլ ես, քանի որ սիրելիներս կըրած



են: Եթէ նրանք յայտնուին էլ, միթէ կարելի է, որ ես նրանց տանջանքի վրէժը չլուծեմ: Միթէ չարագործները պիտի անպատիժ մնան: Եւ եթէ նրանք բռնի մահով մեռած լինին, միթէ թոյլ կըտամ, որ նրանց սպանիչները փախչեն... Ո՛չ, քնիս մէջ անգամ իմ խիղճը կըտանջէը ինձ և սուրը սէրն անգամ կորած հանգիստս յետ չէր տալ:

—Ուրեմն գործդ այդքան վա՞տ է, — հարցրեց Եսթերը տագնապով:—Եւ միթէ ոչ մի պարման... ոչ մի դարման չէ՞ կարելի գտնել:

Բէն Հուրը նրա ձեռքից բռնեց:

—Դու ինձ այդքան կարեկի՞ց ես:

—Այո՛,—պարզաբար պատասխանեց աղջիկը:

Նրա ձեռքը տաք էր և կորել էր Բէն Հուրի ձեռքում: Յանկարծ սա յիշեց եգիպտուհուն, որ այնքան տարբէր էր համեստ ու հեզիկ Եսթերից... այնքան խիզախ, այնքան դիւթիչ...

—Եսթեր, դու ինձ համար երկրորդ Թիրզան պիտի լինե՞ս,—ասաց Բէն Հուրը, Եսթերի ձեռքն իր շրթունքին դնելով:

—Թիրզան ո՞վ է:

—Այն վոքրիկ քոյրս, որին հռոմայեցիք յափշտակեցին և որին ես պարտաւոր եմ նախ գտնել, որպէս զի կարողանամ հանգիստ և բախտաւոր լինել:

Այդ րոպէին կարի վրայ մի լոյս ընկաւ և երկուսին էլ լուսաւորեց: Նրանք շուռ եկան և նկատեցին Սիմոնիդէսին, որին մի ծառայ դուրս էր բերում աթոռով: Երկուսն էլ նրան մօտեցան:

Նաւի պարանները բացուեցին: Նա մի արագ շրջան արաւ և նաւաստիների ուրախ գոչիւնով ուղղակի շտապեց դէպի ծով: Բէն Հուրը միայն ծառայելու «թագաւորին»:

## Ժ.

### Ծրագիրը

Խաղերից մի օր առաջ, երեկոյան դէմ, Իլդերիմի ձիերն ու կառքը քաղաք բերուեցին և կրկէսի մօտերքում մի ապահով տեղ պահուեցին: Միևնոյն ժամանակ Շէյխը հրամայեց իր վրանները հաւաքել և ուղտերով ու հօտերով, կահկարասիքով, ծառաներով ու պինուորներով ճանապարհ ընկնել: Փողոցի մարդիկ ծիծաղում էին այդ խայտաբղետ թափօրի վրայ. բայց Իլդերիմը, չնայելով իր ցասկոտութեան, հանգիստ էր: Եթէ, ինչպէս որ նա ենթադրելու հիմք ունէր, Մէսալայի լրտեսները դիտէին էլ նրան և նրա ամբողջ բանակով կառաջնային նայելու գալը ծաղրէին, նրան հոգ չէր: Արդէն հետևեալ առաւօտեան կարաւանն անապատում կըլինէր և թշնամուց ապահով: Հեռատես արաբացին լաւ գիտէր, որ ծաղրի առարկայ դարձող մարդն արդէն վտանգից ազատ է:

Մէսալայի ազդեցութիւնը լաւ յայտնի էր թէ նրան և թէ Բէյն Հուբրին, բայց և այնպէս երկուսն էլ կարծում էին, թէ մինչև արշաւի վերջանալը հռոմայեցին դաւ չի գործիլ իրենց դէմ: Եթէ նա յաղթուի, և մանաւանդ Բէյն Հուբրից, այն ժամանակ ինչ վատութիւն ասես կանէ, գուցէ և առանց լուր առնելու Գրատուսից: Այս պատճառով Շէյխն ու Բէյն Հուբրը որոշել էին պատրաստ լինել վտանգի դէմ: Այժմ նրանք ձիեր նստած՝ զուարթ գալիս էին միասին և վստահ էին, թէ կըյաղթեն:

Ճանապարհին նրանք հանդիպեցին իրենց սպասող Մալուխին: Հաւատարիմ ծառան ոչ մի բանով ցոյց չտուաւ, թէ գիտէր Բէյն Հուբրի և Սիմոնիդէսի



յարաբերութիւնը և կամ նրանց դաշնադրութիւնը Իլդերիմի հետ: Նա սովորական եղանակով ողջունեց և Շէյխին դիմելով մի թուղթ հանեց և ասաց.

—Ահա խաղերի տեսչի նոր յայտարարութիւնը, որի մէջ արշաւին մասնակցող ձիերի հետ քո ձիերն էլ յիշուած են: Խաղերի կանոններն էլ յիշուած են: Առանց երկար սպասելու՝ ես հիմիկուց չնորհաւորում եմ յաղթանակդ, ով բարի Շէյխ:

Թուղթն Իլդերիմին յանձնելուց յետոյ՝ Մալուխը դարձաւ Բէյն Հուբրին.

—Քեզ էլ, որդիդ Աբիուսի, մաղթում եմ յաջողութիւն: Այժմ համարձակ գնա Մէսալայի դէմ. այլ ևս արգելք չկայ: Պատրաստութիւնները տեսնուած են... Այս ես գիտեմ նոյնիսկ տեսչից:

—Շնորհակալ եմ, Մալուխ,—ասաց Բէյն Հուբրը:

Մալուխը շարունակեց.

—Քո նշանն սպիտակ է, Մէսալայինը՝ ոսկեգոյն և ծիրանի: Արդէն ամեն տեղ երեխաներն սպիտակ ժապաւէններ են վաճառում, և մինչև վաղը արաբ ու հրեայ չի մնալ, որ մի մի հատ չկրէ: Ինքդ կըտեսնես կրկէսում, որ նստարանների վրայ ոսկին ու սպիտակը գրեթէ հաւասար բաժանուած կըլինին:

—Գուցէ նստարանների վրայ, բայց ոչ թէ Յաղթական դռան օթեակներում:

—Ո՛չ: Այնտեղ ոսկի-ծիրանին առաւելութիւն կունենայ: Բայց եթէ մենք յաղթենք,—Մալուխը զուարճութիւնից քրքջաց,—տես ինչպիսի սարսափ կըզգայ պատրիկների վրայ: Տարակոյս չկայ, որ նրանք արհամարհելով ամեն բան, ինչ որ հռոմէական չէ, Մէսալայի համար գրաւ բռնելիս երկու, երեք, մինչև անգամ հինգ կըզնեն մէկի դէմ, որովհետև նա հռոմայեցի է:—Ձայնն իջեցնելով Մալուխը յարեց.—

Տաճարում որևէ կշիռ ունեցող հրէային չի վայելիլ այսպէս խաղալ դրամի հետ. բայց... մեր մէջ ինայ... ես կունենամ հիւպատոսի օթեակի եռևը մի ընկեր, որին պատուիրել եմ գրաւ բռնողների առաջարկն ընդունել և մեկի դէմ երեք դնել, հինգ, տասը և կամ որքան կամենան...՝ Այս նպատակով ես յանձնել եմ նրան վեց հազար շեքել [1]):

—Բարեկամ,—ասաց Բէն Հուրը,—հռոմայեցիք սովոր են միայն հռոմէական դրամով գրաւ բռնել: Չէնց այսօր գաիր ընկերիդ և դիր նրա տրամադրութեան նեղքոյ որքան սեստերց և կամենաս: Եւ ասա նրան, որ աշխատէ Մէսալայի կուսակիցների հետ գրաւ բռնել—Իլդերիմի քառաձին Մէսալայի քառաձիի դէմ:

Մալուխը մտածեց մի վայրկեան:

—Այսպիսով ընդհանուր ուշադրութիւնը ձեր երկուսի վրայ կենդրոնացած կըլինի:

—Իմ ուղածն էլ հէնց այդ է, Մալուխ:

—Հը, հասկացայ:

—Այո, Մալուխ: Եթէ կամենում ես իրօք լաւութիւն անել ինձ, այնպէս արա, որ ամենքի աչքն իմ և Մէսալայի մրցման վրայ ուղղուած լինի:

—Կարելի է,—արագ վրայ բերաւ Մալուխը:

—Ուրեմն արա:

—Եւ կանեմ: Ես ահագին գրաւներ կառաջարկեմ... եթէ ընդունեն, աւելի լաւ:

—Միթէ այնքան չտանիմ, ինչքան որ յափշտակել են ինձանից,—ասաց Բէն Հուրը, կարծես թէ ինքն իր հետ խօսելով:—Մի ուրիշ առիթ գուցէ երբեք չպատահի: Միթէ չտանիմ, եթէ տանելուս ոչ միայն

[1]) Շեքելը կամ սիկղը հաւասար էր 1 ունկի ոսկու:



նրա գոռոզութիւնը, այլև նոյն իսկ իրեն կործանելու լինէի: Մեր Յակոբ նահապետն անգամ բան չէր ասիլ դրա դէմ:

Բէն Հուրի գեղեցիկ դէմքի վրայ վճռականութիւն նկարուեց, և նա գոչեց ազդու ձայնով.

—Այո, այդպէս պիտի անեմ: Լսիր ինձ, Մալուխ: Սիսաերցներով գոհ մի մնար. տաղանդներով գրաւ բռնիր, եթէ տեսնես, որ այդքան գումարի մրցող կայ: Հինգ, տասը, քսան... այո, մինչև անգամ յիսուն տաղանդ առաջարկիր, եթէ միայն ինքն Մէսալան գրաւ բռնէ:

—Դրանք սոսկալի գումարներ են, —նկատեց Մալուխը:—Մի երաշխաւոր պէտք կըլինի ինձ:

—Եւ կունենաս: Գնա Սիմոնիդէսի մօտ և իմ կողմից ասա նրան, որ այս գործը կարգադրէ: Ասա նրան, թէ ես ուզում եմ կործանել, ոչնչացնել Թշնամուս. և թէ հանգամանքներն այնքան յաջող են, որ ես վստահանում եմ խիզախել: Թող մեր հայրերի Աստուածը մեզ հետ լինի: Գնա, Մալուխ, և մի թողնիր, որ յարմար առիթը փախցնենք:

Մալուխը գոհ սրտով ողջունեց նրան և ձին քշեց. բայց իսկոյն էլ յետ եկաւ:

—Ներիր,—ասաց նա Բէն Հուրին:—Էլի ասելու բան ունիմ: Ես ինքս անձամբ չէի կարող շատ մօտենալ Մէսալայի կառքին. մի ուրիշն իմ պատուէրով չափեց նրան, և ես իմացայ, որ նրա կառքի լիսեռը մեկ թզի չափ աւելի բարձր է գետնի երեսից, քան թէ քոնի լիսեռը:

—Մեկ թզի չափ: Այդքան շատ,—գոչեց Բէն Հուրը խնդութեամբ:

Եւ հակուելով դէպի Մալուխը, շարունակեց.

—Մալուխ, ազատելով աղաչում եմ քեզ—շտա-

պէր քեզ համար մի տեղ գրաւել Յաղթական դռան վերի մասում, այն պատշգամի կողքին, որ սիւների հանդէպ է, և լաւ դիտէր։ Երբ որ ես այնտեղ հասնեմ... սակայն, Մալուխս, լաւ է՝ չասեմ... Միայն թէ այնտեղ գոնուիր և լաւ մտիկ արա։

Այդ վայրկենին Իլդերիմը մի զարմացման ձայն հանեց։

—Էա՜։ Աստուծու փառքը վկայ, — գոչեց նա, մատը յայտարարութեան թղթին դնելով։—Այս ինչ բան է։

—կարդա,—ասաց Բէյն Հուրը։

—Չէ, դու՛ կարդա։

Բէյն Հուրը թուղթն առաւ նրա ձեռքից։ Դա այժմեան ափիշների նման մի ազդագիր էր, ուր նահանգապետը, իբրև խաղերի կարգադրիչ, մի առ մի յիշատակում էր կրկէսում լինելիք զբօսանքները։ Նախ պիտի գար մի շքեղ թափօր՝ Կոնսուս [1]) չաստուծուն մատուցանելի ընծաներով և յետոյ սկսուէին խաղերը—վազ, ոստիւն, գօտեմարտ և կռիւամարտ։ Ազդագրում նշանակուած էր իւրաքանչիւր մրցակցի անունը, ազգութիւնը, նրա հրահանգման վարժուցը և թէ մինչև այժմ ո՛րտեղ էր ասպարէզ եղած և ինչպիսի մրցանակ տարած։ Այս վերջին յօդուածի տակ գոյնզգոյն տառերով ցոյց էին տրուած այժմ բաշխուելիք գումարները—մի նշան, թէ արդէն անցել էր այն դարը, երբ յաղթողը մի հասարակ դափնէ պսակով էր շատանում և փառքը փողից վեր դասում։

Բէյն Հուրը վեր ի վերոյ աչքի անցրեց ծրագրի այդ մասը։ Բուն արշաւի յիշատակութեանը հասնելուն

[1]) Երկրի և երկրի բերքերի աստուածն ըստ հին իտալական դիցաբանութեան, որի տօնին, հունձքի ժամանակ, կատարում էին զանազան խաղեր և կառարշաւի հանդէսներ։



պէս սկսեց աւելի ծանր կարդալ։ Այդտեղ ասուած էր, թէ մինչև այժմ Անտիոքում չտեսնուած զուարճութիւններ պիտի տրուին. թէ քաղաքն է հանդէսը սարքում հիւպատոսին պատուելու համար. թէ մրցանակը հարիւր հազար սեստերց է և մի հատ դափնէ պսակ։ Այնուհետև ազդագիրն իմաց էր տալիս, թէ ընդամինը վեց քառաձի պիտի վազեն, և աւելացնում, աւելի մեծ հետաքրքրութիւն շարժելու համար, թէ նրանք միասին պիտի դուրս գան ասպարէզ։

Ի վերջոյ գալիս էր քառալուծների նկարագրութիւնը։

«1) Լիվիպպոս կորնթացու քառաձին—երկու գորշ, մի աշխէտ և մի պիտակ։ Դրանք ասպարէզ են եկած անցեալ տարի Ալէքսանդրիայում և յաղթանակ տարած։ Կառավարն է Լիվիպպոս. գոյնն է դեղին։

«2) Մէսալա հռոմայեցու քառաձին—երկու սպիտակ, երկու սևուկ. յաղթած են մի տարի առաջ Մաքսիմուսի կրկէսում։ Կառավարն է Մէսալա. գոյնը ձիրանի և ոսկի։

«3) Կլէանթէս աթենացու քառաձին—երեք գորշ, մի աշխէտ. յաղթած են անցեալ տարի Իսթմեան խաղերում։ Կառավարն է Կլէանթէս. գոյնը՝ կանաչ։

«4) Դիկէոս բիւզանդացու քառաձին—երկու սև, մի գորշ, մի աշխէտ. յաղթած են այս տարի Բիւզանդիայում։ Կառավարն է Դիկէոս. գոյնը՝ սև։

«5) Սիդոնացի Ադվենտուսի քառաձին—չորսն էլ գորշ. երեք անգամ յաղթած Կեսարիայում։ Կառավարն է Ադվենտուս. գոյնը՝ կապոյտ։

«6) Անտպատի Իլդերիմ Շեյխի քառաձին—չորսն էլ աշխէտ։ Արշաւում են առաջին անգամ։ Կառավարն է Բէյն Հուր, հրէայ. գոյնը՝ սպիտակ»։

Կառավարն է Բէյն Հուր, հրէայ։

Ինչո՞ւ էր այս անունը՝ փոխանակ Աբիւսի։

Բէն Հուրը նայեց Իլդերիմին։ Այժմ իմացաւ, թէ ինչո՞ւ էր Շէյլան աղաղակել։ Երկուսն էլ միևնոյն եզրակացութեան եկան։

Մէսալայի մատն ակնբիև էր։

Ժ.Ա.

## Դրպասպրութիւն

Երեկոյեան ժամը հասնելուն պէս՝ Անտիոքի սիւնաշարների երկայնութեամբ մարդկային հեղեղը դէպի արևելք և արևմուտք սկսեց շարժուիլ Բաքոսին և Ապոլոնին նուիրուելու համար։

Եւ ո՞րտեղ կարող էր զբօսասէր բազմութիւնն աւելի լաւ զուարճանալ, քան այդ ձեղնայարկ և մղոններով երկայն մարմարեայ սիւնաշարներում, որոնք անմահանալու տենչ ունեցող թագաւորների ընծաներ էին։ Ճանապարհը ծայրէ ծայր լուսաւորուած էր և ամեն տեղ հնչում էր երգ ու ծիծաղ և շառաւանների վիժման խոխոջ։

Օտարականը կըզարմանար այդտեղ գումարուած ազգութիւնների բազմազան տարբերութիւնը տեսնելիս. բայց Անտիոքի համար դա նոր բան չէր։ Համաստարած հռոմէական կայսրութեան նպատակներից մէկն էր իրար հետ ձուլել զանազան ազգերը և իրար մօտեցնել այլ և այլ տարրերը. ուստի և ամբողջ ազգեր վեր էին կենում և ուր ասես ազատ դնում, իրենց հագուստի տարազը, իրենց սովորոյթներն ու ծէսերը, աստուածները և լեզուն մի տեղից միւս տեղ տանելով, և ուր որ նստում, այնտեղ էլ սկսում էին



առևտուր անել, տներ շինել և բազիներ կանգնել, ինչպէս իրենց բնիկ երկրում։

Բայց և այնպէս՝ մի ինքնուրոյն բան էր աչքի ընկնում այդ գիշեր. գրեթէ ամեն մարդ վաղուան արշաւին մասնակցող այս կամ այն կառավարի գոյնն էր կրում—այդ գոյնի մի ժապաւէն, մի հանգոյց և կամ փետուր։ Գոյները կուսակցութեան նշանակ էին. կանաչ գոյնով ճանաչւում էր աթենացի Կլէանթէսի կուսակիցը, սևով՝ բիւզանդացի Դիկէոսի կուսակիցը և այլն։ Սա մի հին սովորութիւն էր—մարդկային յիմարութեան ծիծաղելի երևոյթներից մինը։

Նշանները դիտելիս կըտեսնէիր, որ բազմութեան մէջ երեք գոյն է գերակշռում—կանաչ, սպիտակ և ծիրանի-ոսկի։

Փողոցից դուրս գալով անցնենք կղզու պալատը։

Դահլիճի աշտանակները նոր են վառուած։ Հասարակութիւնը գրեթէ նոյնն է, որ տեսել էինք և առաջ։ Թախտերի վրայ այժմ էլ ընկած են քնած մարդիկ և վերարկուներ. այժմ էլ հնչում են սեղանների վրայ բուէի ձայներ. բայց հասարակութեան մեծագոյն մասը պարապ է։ Ոմանք ման են գալիս, ոմանք յօրանջում, ոմանք իրար մօտենում և դատարկ ու չնչին հարցումներ անում, թէ արդեօք վաղը լաւ եղանակ կըլինի. արդեօք խաղերի պատրաստութիւնները վերջացած են. արդեօք Անտիոքի կրկէսում էլ նոյն կանոնները են ընդունուած, ինչ որ Հռոմի կրկէսում... կարճ ասել՝ երիտասարդները ձանձրանում են։ Նրանց գլխաւոր գործն արդէն վերջացած է։ Նրանց փոքրիկ տախտակներն աչքի անցնելով՝ կըտեսնենք վազի, զօտեմարտի, կռիւմարտի և ամեն տեսակ խաղերի համար նշանակուած գրաւներ, բայց միայն ոչ կառարշաւի։

Եւ. ինչո՞ւ։

Որովհետև մարդ չկայ, որ ուզենար դէթ մէկ դինարի գրաւ բռնել Մէսալայի դէմ։

Դահլիճի մէջ տիրում էր մի՛այն նրա գոյնը։

Ոչ ոքի մտքից չէր անցնում, թէ նա կարող է յաղթուել։

—Ո՞վ է նրա չափ քաջալարժ,—ասում էին ամենքը։—Չէ՞ որ նոյն իսկ կայսերական մարզարանից վկայական ունի... Նրա ձիերը չէլ՞ն, որ մրցանակ տարան Մաքսիմուսի կրկէսում։ Եւ վերջապէս՝ բաւական է, որ հռոմայեցի է։

Ինքը Մէսալան հանգիստ բազմած էր թախտի անկիւնում։ Նրա շուրջը նստած և կամ կանգած ընկերները պաշարում էին նրան հարցուփորձերով։ Խօսակցութեան նիւթը հարկաւ մի՛այն արշաւն էր։

Ահա մօտենում են Դրուզուսն ու Ցեցիլիուսը։

—Ո՜ւֆ, յոգնած եմ,—գոչում է առաջինը։

—Ո՞րտեղ էիր,—հարցնում է նրան Մէսալան։

—Դրսում, ամեն տեղ։ Քաղաքը խճողուած է բազմութիւնով. այդքան մարդ դեռ չէի տեսած Անտիոքում։ Ասում են, թէ ամբողջ աշխարհը վաղը կրկէսում կըլինի։

Մէսալան քամահաբար ծիծաղեց։

—Տխմարները՛,—ասաց նա,—դեռ կայսերական խաղեր չեն տեսել։

—Ոչինչ։

—Ի՞նչպէս թէ ոչինչ,—մէջ մտաւ Ցեցիլիուսը։—Մոռացա՞ր։

—Ի՞նչ եմ մոռացել,—հարցրեց Դրուզուսը։

—Սպիտակների թափօրը։

—Այո՛, այո՛,—գոչեց Դրուզուսը։—Սպիտակների



մի խումբ տեսանք. դրօշակ էին կրում... հա, հա, հա։

Նա ծիծաղելով մէջքը թախտին դէմ տուաւ։

—Շարունակի՛ր, շարունակի՛ր,—դրդեց Մէսալան։

—Անտպատի դիրքը տեսանք, Մէսալա, և Երուսաղէմի տաճարում փորոտիք լափող մուրացիկները... Ի՞նչ գործ ունիմ ես դրանց հետ։

—Չէ՛, չէ՛,—նկատեց նրա ընկերը։—Դրուզուսը վախենում է ծիծաղելի երևալ. բայց ես ոչ, Մէսալա։

—Դէ ուրեմն դո՛ւ պատմիր։

—Լաւ... մենք կանգնեցրինք նրանց և...

—Եւ մի գրաւ առաջարկեցինք, — ընդհատեց ընկերին Դրուզուսը։—Եւ... հա, հա, հա... նրանցից մէկը առաջ եկաւ. ես տախտակս հանեցի։—Մարդդ ո՞վ է,—հարցրի ես։—Բէն Հուր հրէան,—պատասխանեց նա։ Ես ասացի.—Ո՞րքան դնենք։ Պատասխանեց.—Մի... մի...—Ների՛ր, Մէսալա։ Արամազդը վկայ, ես թուլանում եմ ծիծաղից։ Հա, հա, հա։

Ունկնդիրներն և՛ս աւելի մօտեցան։

Մէսալան դիմեց Ցեցիլիուսին։

—Մի շէքել՛,—բացատրեց սա։

—Մի շէքե՛լ, մի շէքե՛լ։

Այս կրկնութեան մի արհամարհական քըքիչ յաջորդեց։

—Իսկ Դրուզուսն ի՞նչ արաւ,—հարցրեց Մէսալան։

Այդ րոպէին դռան մօտերքում մի շարժում լսուեց, և մինչ շատերն այն կողմն էին վազում աղմկի պատճառն իմանալու համար, Ցեցիլիուսը յարեց.

—Աղնիւ Դրուզուսն իր տախտակը գրպանը դրաւ և... այն շէքելը կորցրեց։

Եւ այս ասելուն պէս՝ ինքն էլ վազեց դէպի դուռը։

—Ահա մի սպիտակ, մի սպիտակ։

—Թող գայ, թող գայ։

Այս ձայների մէջ անկարելի էր խօսակցութիւնը շարունակել։ Նոյնիսկ նարդ խաղացողները ոտքի ելան, քնածները զարթեցին և եկւորի շուրջը խըռնուեցին։

—Առաջարկում եմ քեզ...

—Ես էլ...

—Ես էլ...

Այսպիսի թափով ողջունուած մարդը այն հրէան էր, որ Կիպրոսից սկսած ուղեկցել էր Բէն Հուրին։ Նա ներս մտաւ ծանր, վստահ ու վայելուչ քայլերով։ Նրա հանդերձն անբիծ սպիտակ էր. գլխի փաթաթոցը նոյնպէս սպիտակ։ Ալ ու ձախ գլուխ տալով և իր գտած ընդունելութեան վրայ ժպտալով, նա յամրաքայլ գնաց մօտեցաւ կենդրոնական սեղանին։ Այդտեղ հասնելուն պէս վերարկուն վեհութեամբ իրանի շուրջը փաթաթեց, նստեց և ձեռքով նշան արաւ։ Նրա մօտի վրայ փայլող հրաշալի գոհարը բաւական ազդեց նայողների վրայ, որոնք և իսկոյն լռեցին։

—Հռոմայեցիք, ով քաջազուն հռոմայեցիք, ընդունեցէք ողջոյնս,—ասաց նա։

—Արամազդը վկայ։ Հանդարտ։ Ո՞վ է դա,—հարցրեց Դրուզուսը։

—Մի իսրայէլացի շուն, անունը Սանբալատ... Զօրքի հայթայթիչ է, հռոմաբնակ. անչափ հարուստ և հարստացած այն պարէնով, որ երբէք չէ հասցնում բանակին։ Զարամիտ է և գիտէ սարդից էլ նուրբ ցանցեր մանել։ Բայց և այնպէս բռնենք դրան։

Մէսալան այդ ասելուն պէս վերկացաւ և Դրուզուսի հետ մօտեցաւ հրէի շուրջը հաւաքուած խմբին։ Հրէան հանեց իր յուշատախտակն և ասաց.

—Դրսում ինձ ասողներ եղան, թէ պալատի



մարդիկ դժգոհ են, որ ոչ ոք չի ուզում Մէսալայի դէմ գրաւ բռնել։ Աստուածներին գոհ է հարկաւոր. ահա պատրաստ եմ։ Գոյնս տեսնում էք. դէ սկսենք... Նախ որքան որքանի դէմ, յետոյ գումարը։ Ի՞նչ կառաջարկէք ինձ։

Մարդու համարձակութիւնը լսողներին շփոթեց։

—Շուտ արէք,—ասաց նա։—Հիւպատոսն ինձ սպասում է։

Այս դրդումը ներգործեց։

—Մէկի դէմ երկու,—գոչեցին միասին հինգ-վեց հոգի։

—Ի՞նչ,—բացականչեց զարմանալով հայթայթիչը։—Մէկի դէմ միայն երկո՞ւ։ Եւ դուք հռոմայեցի՞ք էք։

—Ուրեմն երե՞ք։

—Երե՞ք։ Միայն երե՞ք... Ձօրս ասացէք։

—Թող չորս լինի՛,—ասաց մի երիտասարդ։

—Հինգ ասացէք... ասացէք հինգ՛—գոչեց հրէան։ Հասարակութեան մէջ լռութիւն տիրեց։

—Թոյլ տուէք, որ գոնէ ի պատիւ Հռոմի հինգ գրեմ,—ասաց հրէան։

—Թող հինգ լինի՛,—հնչեց մի ձայն։

Մի ընդհանուր շարժում յաջորդեց դրան. հաւանութեան աղաղակ որոտաց—և Մէսալան առաջ եկաւ։

—Հինգ,—կրկնեց նա։

Սանբալատը ժպտաց և ուզում էր գրել։

—Եթէ վաղը կայսրը մեռնի, Հռոմը որը չի՞նալ,—ասաց նա։ Գոնէ դեռ մի քաջասիրտ մարդ կունենայ... Վեց չգրե՞մ։

—Թող վեց լինի՛,—պատասխանեց Մէսալան։

Գովքի ձայներն աւելի սաստիկ թնդացին։

—Ուրեմն վե՛ց,—կրկնեց Մէսալան։—Վեց մէկի դէմ... տարբերութիւնը մի հռոմայեցու և հրէի միջև։

Եւ որովհետև այս քեզ արդէն յայտնի է, ևկ այժմ գումարը որոշենք։

Սանբալատը գրեց և իր տախտակը Մէսալային տուաւ։

—Կարդա, կարդա,—գոչեցին ամեն կողմից։

Եւ Մէսալան կարդաց.

«Ծանօթութիւն։—Կառաջաւ։ Հռոմայեցի Մէսալան գրաւ է բռնում հռոմաբնակ Սանբալատի հետ, թէ նա կըյաղթէ Բէն Հուր հրէին։ Գրաւի գումարն է՝ քսան տաղանդ։ Տանողի օգտին—վեց մէկի դէմ։

Վկաները— Սանբալատ»

Գերեզմանի լռութիւն։ Մարդիկ կարծես սառած մնացին այն դիրքում, ուր գտել էր նրանց ընթերցողը։ Մէսալան ակնապիշ մտիկ էր տալիս տախտակին, իսկ շուարուած ընկերները՝ Մէսալային։ Նա զգաց, որ ամենքն էլ իր վրայ են նայում... և սկսեց մտածել։ Եթէ ղևնար ստորագրել, իր վարկն ընկերութեան մէջ կորած էր. բայց ստորագրել անկարող էր... Նա չունէր հարիւր քսան տաղանդ. սրա վեցերորդ մասն էլ չունէր։ Նա լուռ կանգնած էր սիրթնած դէմքով։ Յանկարծ մի բան մտածեց։

—Այ՛, դու հրէայ,—գոչեց նա։—Ո՞րտեղից ունիս դու քսան տաղանդ։ Ապացոյց բեր։

Սանբալատի դրգռիչ ժպիտը աստակացաւ։

—Ահա քեզ,—ասաց նա և մի թուղթ տուաւ Մէսալային։

—Կարդա, կարդա,—գոչեցին հռոմայեցու ընկերները։

Եւ Մէսալան դարձեալ կարդաց.

«Անտիոք, 16 Թամմուզի։

«Մուրհակս ստացող հռոմաբնակ Սանբալատը ունի ինձ մօտ պահեստի դրած, իր հրամանով վճարելի, յիսուն տաղանդ կայսերական ոսկով։—Սիմոնիդէս»։

—Յիսուն տաղանդ, յիսուն տաղանդ,—գոչեցին զարմացած երիտասարդները։

Այժմ Դրուզուսը գոռաց.

—Հերկուլէսը վկայ, այդ մուրհակը սուտ մուրհակ է և այս հրէան խաբեբայ։ Կայսրից զատ ով ունի յիսուն տաղանդ իր պատուէրին ենթակայ։ Կորչիր անզգամ սպիտակը։

Այս բարկութեամբ ասուած խօսքերը բարկութեամբ էլ կրկնուեցին։ Սանբալատը սակայն հանգիստ էր մնում իր անփոփոխ հեգնիչ ժպտով։

Վերջապէս Մէսալան ասաց.

—Լռութիւն՛։ Մեր պայմանով՝ գրաւը վեց էր մէկի դէմ, չէ՞, այ թլպատուած հրէական շուն։

—Այո՛,—հանգստութեամբ պատասխանեց ծերունին։

—Թող այժմ ես նշանակեմ գրաւի գումարը։

—Լաւ, միայն թէ չնչին չլինէր այդ գումարըյ—վրայ բերաւ Սանբալատը։

—Գրի՛ր հինգ՝ փոխանակ քսանի։

—Այդքան ունի՞ս։

—Այս գումարի ընկալագիր ցոյց կըտամ քեզ։

—Կարիք չկայ։ Քեզ նման հռոմայեցու խօսքն էլ արդէն բաւական է... Միայն թէ գումարը չուխտ արա —վեց ասա և ստորագրիր։

—Թող ուրեմն վեց լինի՛։

Եւ նրանք իսկոյն տախտակները փոխանակեցին։

Սանբալատը վերկացաւ։ Այժմ ժպտով չէր նայում նա իր շուրջը, այլ արհամարհական հպարտութեամբ։

—Հռոմայեցի՛ք,—գոչեց նա,—եթէ սիրտ ունիք, դարձեալ մի գրա՛... Հինգ հնգի դէմ սպիտակի համա՛։ Ասպարէզ եմ կանչում բոլորիդ միասին։

Վերատին շուարմունք տիրեց հասարակութեան։

—Ի՞նչ,—գոչեց նրանց երեսին Սանբալատը,—ուզում էք որ վաղն ամբողջ կրկէսում մարդիկ ասեն, թէ երեկ մի հրէայ շուն պալատ է գնում, ուր միայն աղնիւ հռոմայեցիք էին հաւաքուած... և նրանց միջև նոյնիսկ կայսրի շառաւիղը... և հրէան առաջարկում է հինգ տաղանդի գրաւ բռնել, և ոչ ոք սիրտ չի անում ընդունելու այդ գրաւը։

Այս խայթման չէր կարելի դիմանալ։

—Թող այդպէս լինի, այ դու լիրբ,—ասաց Դրուզուսը։—Գրիր պայմանդ և սեղանի վրայ դիր։ Մենք վաղը կիմանանք, արդեօք կարող ես դու մի այդպիսի գումարով խաղալ, և այն ժամանակ ես, Դրուզուս, գրաւդ կընդունեմ։

Սանբալատը նորից գրեց և առաջուայ պէս անխռով ասաց.

—Տես, Դրուզուս, առաջարկը քեզ մօտ եմ թողնում։ Մտորագրելուց յետոյ յետ կըտաս ինձ, միայն թէ արշալոյից փոքր ինչ առաջ։ Ես նստած կըլինիմ հիւպատոսի մօտ, Յաղթական դռան վերի օթեակում։ Խաղաղութիւն քեզ, խաղաղութիւն ամենքիդ։

Նա գլուխ տուաւ և հեռացաւ՝ անուշադիր այն ծիծաղին, որով նրան ճանապարհ դրին։

Արտասովոր գրաւի լուրը հէնց այն գիշեր թռաւ անցաւ փողոցէ փողոց և տարածուեց քաղաքում։ Լուրը հասաւ և Բէն Հուրին, որ գտնւում էր քառակուսի մօտ, և նրան ասացին, թէ Մէսալան իր ամբողջ կարողութիւնը վտանգել է։

Ոչ մի ժամանակ նա այնպէս հանգիստ չէր քնել, ինչպէս որ քնեց այդ գիշեր։



## ԺԲ.

## Կրկէսը

Անտիոքի կրկէսը գետի հարաւային ափի վրայ էր գտնւում՝ կղզուն հանդէպ, և իր հիմնագծով չէր տարբերւում ուրիշ այդպիսի շէնքերից։

Խաղերը բաւիս բուն առմամբ մի պարզ էին ժողովրդին. ուստի մուտքն ամենքի համար ազատ էր։ Կրկէսի բացումից դեռ մի օր առաջ բազմութիւնը հաւաքուել էր նրա շուրջը, որովհետև չնայելով շէնքի մեծութեանը՝ երկիւղ կար, թէ ամեն մարդ տեղ չի գտնիլ։ Մուտքերը բացուեցին կէս գիշերին, և բազմութիւնն իսկոյն սկսեց նեբս խուժելով տեղ բռնել։ Այնուհետև մի՛այն մի երկրաշարժ և կամ տէգերով զինուած մի զօրք կարող կըլինէր դուրս քշել մարդկանց կրկէսից։ Դիշերուայ մնացորդը նրանք նստարանների վրայ անցրին, այնտեղ էլ նախաճաշ արին և մինչև խաղերի վերջը այնքան հետաքրքրութիւն և բան տեսնելու եռանդ պահեցին, որքան ունէին և սկզբում։

Կանխաւ ապահոված տեղեր ունեցող հարուստ մարդիկ առաւօտեան առաջին ժամին սկսեցին խմբուել կրկէսում։ Աղնուականները և մեծատուններն աչքի էին ընկնում իրենց դեսպակներով և միահանդերձ սպասաւորներով։

Երկրորդ ժամին եկողների բազմութեան դիմը մի անընդհատ գետի նման էր։

Հէնց որ արևի ժամացոյցը մէկ և կէս ցոյց տուաւ, սպառազէն և դրօշակիր լեգէոնները Սուլպիուս լերան ծոցանոցից իջան, և երբ վերջին կոհորնաները կամուրջն անցնելով անհետացան, քաղաքն արդէն դատարկ էր։ Կրկէսը հարկաւ անկարող էր իր մէջ առնել քաղաքի

բոլոր բնակիչներին, բայց և այնպէս ամենքն էլ դուրս էին թափուել քաղաքից։

Կրկէսում տեղ չգտնող բազմութիւնը սպասում էր քարափի վրայ՝ հիւպատոսի նաւով գալը տեսնելու համար։ Այս մեծ մարդու ցամաք իջնելու րոպէին լեգէոնի կատարած զինուորական ցոյցերը մի վայրկեան կրկէսի հրապոյրը թուլացրին։

Մօտ երեք ժամին, երբ հանդիսականներն արդէն նստած էին իրենց տեղերում, մի փողի ձայն հնչեց, և խլոյն աւելի քան հարիւր հազար մարդկանց աչքը շինութեան արևելեան մասի վրայ ուղղուեց։

Դա ունէր մի հիմնայարկ՝ Պորտուս Պոմպէ [1]) կոչուած կամարակապ մեծ դռնով. այս դռան վերի մասում բարձրացող մի դրօշակազարդ ու շքեղ բեմի վրայ նստած էր հիւպատոսը։ Պորտուս Պոմպէից դէպի աջ ու ձախ հիմնայարկը բաժանուած էր կարծեցէս ասուած արգելանոցների, որոնցից ամեն մէկը մի մի հատ մեծ դուռն ունէր։ Արգելանոցների վրայ, կրկէսի բոլոր լայնութեամբ, ձգուում էր մի ծանր ծնօտ, որի եռանի ատամիճանարար բարձրանում էին իշխանների և պաշտօնեաների աթոռները։ Շինութեան այս արևելեան մասի աջ ու ձախ կողմերը վերջանում էին աշտարակներով, որոնք ոչ միայն գեղեցկութեան համար էին շինուած, այլև վալէրիան կամ ծիրանի ծածկոցը բռնելու համար, որ քաշուած էր նրանց միջև, մի ախորժելի ստուեր սփռելով շէնքի վրայ։

Նստենք մտքով հիւպատոսի բեմի վրայ, որ նայում է դէպի արևմուտք։ Մեր դէմը կըտեսնենք աշտարակների հիմքից անցնող ահագին դռներ. դրանք աւազ մուտքերն են։ Բեմի ներքևը տարածուած է մրցարանը.

[1]) Հանդիսաւոր դուռն։



դա սպիտակ աւազով ծածկուած մի բաւական լայն հարթավայր է, ուր խաղերն են տեղի ունենում, բացի արշաւից։

Փոքր ինչ դէնը, դէպի արևմուտք, մի մարմարեայ պատուանդանի վրայ կանգնած են երեք կոնաձև ու գրշաքար ցածր սիւներ։ Այսօր շատերի աչքը այդ սիւներին յառուած կըլինի, որովհետև դրանք են արշաւի առաջին կէտ-նպատակը և սկիզբն ու վախճանը ցոյց տալիս։ Պատուանդանից էլ փոքր ինչ դէնը մի սեղան կայ և փոքրիկ անցք. այնուհետև մի պատ է սկսւում տան ոտնաչափ լայնութեամբ և վեց ոտնաչափ բարձրութեամբ, որի երկայնութիւնը ճիշտ վեց հարիւր ոտք և կամ մի ոլիմպական ստադիոն է։ Պատի միւս, այսինքն արևմտեան ծայրին դարձեալ կըտեսնենք սիւներ կրող մի պատուանդան—դա երկրորդ նպատակն է։

Մրցակիցները պարտաւոր են առաջին նպատակի աջ կողմից սկսել արշաւը, պատը ձախ կողմը թողնելով։ Ուրեմն արշաւի սկզբնակէտը և վերջակէտը կեցած են ասպարէզի երկու ծայրին՝ հիւպատոսին դէմ յանդիման. այս պատճառով էլ ամբողջ կրկէսում նրա տեղն ամենից լաւն է։

Երևակայենք, թէ շարունակում ենք նստած մնալ նրա օթեակում Հանդիսաւոր դռան վրայ։ Կրկէսի տարածութիւնն աչքի անցնելիս դարձեալ մի պատ կըտեսնենք, մի ամրաշէն պատ քան ոտնաչափ բարձրութեամբ, որ կրկէսի արտաքին սահմանն է։ Դա էլ արևելեան կարցէրեսների ծնօտի նման մի պսակ ունի և երեք անցք—երկուսը հիւսիսային, մէկն արևմտեան։ Վերջինը հոյակապ է և կոչւում է Յաղթական դուռն, որովհետև մրցանակ տանողները խաղերից յետոյ պարտաւոր են այդ դռնից անցնել մեծահանդէս թափօրով։ Ծնօտների եռևը պայտաձև աստիճաններով բարձրա-

նում են հասարակ ժողովրդի նստարանները։ Դրանք լիքն են, և անհամբեր բազմութիւնը վաղուց սպասում է խաղերի սկսուելուն։

Վերջապէս երկրորդ անգամ մի փող է հնչում Հանդիսաւոր դռան կտրից. երաժիշտները նուագում են, և ներս է գալիս մի շքեղ թափօր—դրանք են խաղերի կարգադրիչը և քաղաքի պաշտօնեաները՝ փառաւոր զգեստներով և պսակներով զարդարուած։ Յետոյ բերում են կուռքերը՝ մի քանիսը դեսպակների, միւսները քառանիւ մեծ կառքերի վրայ դրուած. հուսկ յետոյ գալիս են մրցակիցները իրենց գոյնզգոյն հագուստներով։

Թափօրն անցնում է մրցարանից և յամրաքայլ շրջան անում կրկէսում—տեսարանը սքանչելի է։ Նրան ողջունում են որոտաձայն աղաղակով։ Բազմութիւնը հնչեցնում է իր սիրելիների անունը և ծաղիկ ու փնջեր նետում նրանց վրայ։

Աղմկալի է մանաւանդ ըմբիշների ընդունելութիւնը, որովհետև բազմութեան մէջ մարդ չկայ, որ գոնէ մի չնչին գրաւ բռնած չլինի նրանց համար։

Կառքերի անցնելու ժամանակ ամենքի ուշքն ու միտքը նրանց պերճութեան, ձիերի աննման գեղեցկութեան և մանաւանդ կառավարների վրայ է ուղղուած։ Իւրաքանչիւր կառավար իր գոյնի կարճ ու թեթև պարեգօտ ունի հագած նուրբ ասուից։ Ամեն մէկին ուղեկցում է մի ձիաւոր. միայն Բէն Հուրը ձիաւոր չունի, որովհետև լաւ է համարել մենակ լինել։ Աչքի է ընկնում նմանապէս, որ նա գլխաբաց է, մինչ միւսները սաղաւարտով են։ Նրանց մօտենալուն պէս հանդիսատեսները վեր են կենում տեղերից. ցնծութեան գոչիւնները սաստկանում են. կանանց ու մանկանց սուր ձայները ականջ են ծակում. կառավարների և կառքերի վրայ տարափի պէս վարդ է տեղում։ Ձիերն անգամ



մասն են ստանում ողջոյններից, և կարծես նոյնքան գիտակից են իրենց ընծայուող յարգանքին, որքան և տէրերը։

Ինչպէս որ ըմբիշների անցնելու ժամանակ, այնպէս էլ այժմ նկատուում է նախ՝ որ կառավարներից ոմանք աւելի են սիրուած ժողովրդից, ոմանք պակաս. երկրորդ՝ որ հանդիսականներից ամեն մէկը—տղամարդ, կին և մանուկ—մի գոյն է կրում, առաւելապէս մի ժապաւէն կրծքի վրայ կամ մազերում։ Գոյները մերթ կանաչ են, մերթ դեղին և մերթ կապոյտ. սակայն լաւ դիտելիս կըտեսնես, որ սպիտակն ու ծիրանի-ոսկին գերակշիռ են։

Այսօրուայ ձիարշաւներում գրաւ բռնող մարդիկ ամենից առաջ ձիերի յատկութեանն են առաւելութիւն տալիս. իսկ այն դարում ոչ թէ ձիերի արժանիքը, այլ կառավարների ազգութիւնն էր չափ ու կանոն դնողը։ Եթէ բիւզանդացին կամ սիդոնացին աւելի պակաս հաւանութիւն գտան, պատճառն այն էր, որ նրանց քաղաքներից շատ մարդ չկար նստարանների վրայ։ Յոյների թիւը թէև մեծ էր, բայց որովհետև նրանք երկու մասի էին բաժանուած—կորնթեան և աթենեան, ուստի կանաչ և դեղին գոյները բաւական նօսր էին երևում։ Մէսալայի ծիրանի-ոսկին էլ այդ վիճակին կըմատնուէր, եթէ Անտիոքի բնակիչները—շողոքորթների շողոքորթները—հռոմայեցոց հաճոյանալու համար նրանց սիրական պոյնն ընտրած չլինէին։ Մնում էին այնուհետև սիբիացիք, արաբացիք և հրէաները. նրանք հաւատում էին Իլդերիմի քառաձի ազնիւ ծագման և ատելով հռոմայեցոց՝ չկրմ փափագում, որ դրանք յաղթուէն, ամօթով ճնան, կորանան։ Հետևաբար բոլորն էլ կրում էին սպիտակ նշան, միւսներից աւելի գոռացող էին և գուցէ աւելի բազմաթիւ։

Երբ կառավարները երկրորդ նպատակին մօտեցան, օդը թնդաց «Բէն Հո՛ւր, Բէն Հո՛ւր» աղաղակով և դրա հետ խառն «Մէսալա՛, Մէսալա՛» գոչիւնով։

Թափօրի անցնելուց յետոյ հանդիսատեսները նորից նստեցին և շարունակեցին խօսակցել։

—Ա՜հ, Բաքոսը վկայ. գեղեցիկ էր, չէ՞,—գոչեց մի հռոմայեցի կին, որ իր մազերում ծիրանի-ոսկի գոյն ուներ։

—Եւ ինչպէս շքեղ էր նրա կառքը,—յարեց նրա հարևանը։—Ջուտ ոսկուց է և փղոսկրից։ Արամազդն օգնէ նրան յաղթելու՜։

Բոլորովին հակառակն էր լսւում նրանց ետևի նստարանի վրայ։

—Հարիւր շէքելի գրաւ եմ բռնում հրէի համար,—հնչեց մի բարձր և սուր ձայն։

—Խելքդ մի կորցնիլ, այ տղայ,—հանգստացնում էր նրան ընկերը։—Մեզ ներելի չէ խաղերի համար տաքանալ։ Չէ՞ որ այս խաղերն անիծուած են Տիրոջից։

—Այդպէս է, բայց այն էլ ասա, թէ երբ և է տեսած ես աւելի հանդիստ և ինքնավստահ կառավար։ Տեսա՞ր, ինչ զօրեղ բազուկներ ունի։

—Հապա ձիերը՜։

—Իսկ ճարպիկութիւնը,—մէջ մտաւ մի երրորդը։—Ասում են, թէ հռոմէական արուեստաներին քաջ հմուտ է։

—Այո՛, և նրանցից աւելի գեղեցիկ,—վրայ բերաւ մի կին, վերջին վճիռը դնելով։

Այս խօսքերից քաջալերուած՝ առաջին հրէան դարձեալ գոչեց.

—Հարիւր շէքել հրէի համա՜ր։

—Ա՛յ դու յիմար,—կանչեց նրա դէմ մի անտիոքցի,—մի՞թէ չգիտես, որ յիսուն տաղանդ է դրուած նրա



դէմ և վեց մէկի դէմ Մէսալայի համար։ Ամուր պահիր շէքելներդ, որ հայր Աբրահամը քեզ չպատժէ՜։

—Այդ անտիոքցի աւանակը կարծեմ չգիտէ, որ այդ գումարը Մէսալան ինքն է իր համար դրել,—պատասխանեց հրէան։

Եւ մարդիկ շարունակում էին և՛ս աւելի թունդ խօսքերով առաջ տանել իրենց վէճը։

Երբ վերադարձող թափօրը Հանդիսաւոր դռան հասաւ, Բէն Հուրն արդէն գիտէր, որ իր աղօթքը լսուած է—Արևելքի աչքը վկայ էր նրա կռուին Մէսալայի հետ։

## Ժ.Գ.

## Ընշաւի սկիզբը

Կէս օրից յետոյ մօտաւորապէս երեք ժամին խաղերն արդէն վերջացած էին, բացի միայն կառարշաւից։ Այնուհետև տեղի ունեցաւ մի դադար. մուտքի դռները բացուեցին և ժողովրդի մեծ մասը դուրս վազեց բան ուտելու պանդոկներում։ Մնացողները յօրանջում էին, խօսակցում, տախտակների վրայ հաշիւներ անում. դասակարգերի տարբերութիւնն այդ միջոցին մոռացուած էր... կային միայն երջանիկ տանտէրներ և դժգոհ ու նեղացած տարուողներ։

Այժմ կրկէսում մի նոր հասարակութիւն երևաց, որ կամենում էր միայն կառարշաւին ներկայ լինել, և սկսեց իրեն վերապահուած տեղերը բռնել։ Նորեկները յատկապէս այս հանգստեան ժամն էին ընտրել գալու համար, որպէսզի շատ աչքի չընկնին։ Նրանց թիւն էր և Սիմոնիդէսն իր ընկերներով։ Նա տեղ բռնեց հիւսիսային կողմի վրայ, գլխաւոր մուտքի մօտերքում, դէմ յանդիման հիւպատոսի օթեակին։

Շատերն ուշադրութիւն դարձրին այդ վաճառականի վրայ, որին չորս հուժկու ծառաներ դեսպակով ներս բերին: Նատելուն պէս նա իր անունը լսեց: Վերևում նստողներն այդ անունը կրկնեցին, և բերնէ բերան անցնելով դա ամեն տեղ արձագանգ գտաւ: Ժողովուրդը հետաքրքիր էր տեսնել մի մարդ, որի անհուն հարստութեան և ողբերգական կեանքի մասին առասպելական բաներ էր լսած:

Իլդերիմն էլ իսկոյն ճանաչուեց և ողջոյններ ընդունեց. սակայն նրա հետ եկած երկու կանանց ճանաչող չկար:

Ժողովուրդը յանգանքով ճանապարհ տուաւ եկւորներին, որոնք նստեցին ծնօտի առջև, որտեղից կարելի էր ամբողջ ասպարէզը լաւ տեսնել: Նրանց նստարանների վրայ բարձեր էին դրուած, ոտքերի տակ պատուանդաններ:

Կանայքն էին Իրասը և Եսթերը, երկուսն էլ քողապատ:

Նստելուց յետոյ Եսթերն իր քօղը բանալով՝ մի երկչոտ հայեացք նետեց կրկէսի վրայ և ապա թէ իսկոյն երեսը ծածկեց. իսկ եգիպտուհին քօղն ուսերի վրայ թողեց, իբր թէ անգիտակ, որ ուրիշներն իր դէմքը տեսնում են:

Դեռ նոր էին այս եկւորներն աչքի անցրել կրկէսը, երբ մի քանի ծառաներ մրցարանը մտան և կաւճով ներկուած մի պարան քաշեցին առաջին նպատակի սիւների առջև մի պատշգամից դէպի միւսը:

Միևնոյն ժամանակ Հանդիսաւոր դռնից ելան վեց մարդիկ և կարցէրէանների մօտ կանգ առան: Նոյն րոպէին ամեն կողմից մի երկարատև շշուկ հնչեց:

—Տես, տես: Կանաչը գնում է չորրորդ համարի աջ կողմը. աթենացին այնտեղ է:



—Մէսալան երկրորդ համարուն է:

—Իսկ կորնթացին...

—Ահա սպիտակը... Նա գնում է դէպի ձախ... նրա համարն առաջինն է:

—Չէ, առաջին համարը սևինն է: Սպիտակն ունի երկրորդը:

—Իրաւ ես ասում:

Այս նկատողութիւնները վերաբերում էին կառավարների գոյներով շապիկ հագած վեց հակողներին: Նրանց տեղերին նայելով ամեն մարդ կիմանար, թէ ո՛ր արգելոցի մէջ էր սպասում իր ընտրածը:

—Երբ և է տեսած ես հռոմայեցի Մէսալային,— հարցրեց եգիպտուհին Եսթերին:

—Ո՛չ:

Հրէայ աղջիկը սարսափեց: Չէ՞ որ այդ հռոմայեցին հէթ ոչ նրա հօր, գէթ Բէն Հուրի թշնամին էր:

—Ապոլոնի պէս գեղեցիկ է՛,—ասաց Իրասը:

Իրասի աչքերը փայլում էին և նա արագ շարժում էր իր ականակուռ հովհարը: Եսթերը նայեց նրան, ինքն իրեն մտածելով.—Մի՞թէ Բէն Հուրից գեղեցիկ է...—և նոյն րոպէին Իլդերիմի ձայնը լսեց, որ ասում էր նրա հօրը.—Այո՛, երկրորդ համարուն է, Հանդիսաւոր դռան ձախ կողմը:—Եսթերն աչքերն այն կողմն ուղղեց, բայց և իսկոյն վայր թողեց և մի համառօտ աղօթք ասաց:

Այդ վայրկենին Սանբալատը մօտեցաւ:

—Հէնց արգելոցից եմ գալիս, ով ազնիւ Շէյխ,—ասաց նա, Իլդերիմին գլուխ տալով:—Ձիերը շատ լաւ դրութեան մէջ են:

Իլդերիմը կարճ պատասխանեց.

—Եթէ նրանք յաղթուին, կըցանկայի որ յաղթողը Մէսալան չլինէր:

Սանբալատը դիմեց յետոյ Սիմոնիդէսին և գրպանից մի տախտակ հանելով, ասաց նրան.

—Քեզ համար էլ նորութիւն ունիմ: Ինչպէս որ գիտես, երեկ դիշեր գրաւ բռնեցի Մէսալայի հետ, միւսն էլ թողի, որ ստորագրեն և այսօր իսկ խաղերից առաջ ինձ հասցնեն: Ահա ստորագրուած պայմանը:

Սիմոնիդէսը տախտակն առաւ, դումարը կարդաց և ասաց.

—Այս ինձ արդէն յայտնի է: Նրանք մարդ էին ղրկել հարցնելու ինձ, թէ արդեօք դու այդքան գումար պահած ունի՞ս իմ ձեռքի տակ: Այս տախտակը լաւ պահիր: Եթէ գրաւներդ կորցնելու լինիս, գիտես թէ ում կը դիմես: Իսկ եթէ տանես...—Շէյխի դէմքը խստացաւ—եթէ տանես, լաւ զգուշացիր, բարեկամ, որ ստորագրողները չփախչեն: Սակայն նրանց, որ մինչև վերջին շէքելը վճարեն: Նրանք էլ մեզ հետ նոյնը կանէին:

—Վստահ եղիր վրաս,—պատասխանեց միջնորդը:

—Ձե՞ս կամենալ մեզ մօտ նստել,—ասաց Սիմոնիդէսը:

—Շնորհակալ եմ, շատ բարի ես. բայց եթէ հիւպատոսից հեռու լինիմ, մանուկ Հռոմը շատ կը լացնայ այն կողմում... Խաղաղութիւն քեզ և բոլորիդ:

Դատարն արդէն վերջացել էր:

Փողահարը բացականչերին յետ կանչեց:

Ծառաներից մի քանիսը պատի վրայ բարձրացան և մինչև նրա արևմտեան ծայրը գնալով եօթ հատ փայտէ գնդակ դրին պատուանդանի վրայ՝ երկրորդ նպատակի մօտերքում. յետոյ յետ եկան դէպի առաջին նպատակը և այդտեղ դրին եօթ հատ փայտէ դելֆին:

—Ի՞նչ են նշանակում այդ գնդակները և դելֆինները, Շէյխ,—հարցրեց Բաղդասարը:



—Երևի թէ մինչև այժմ երբէք արշաւանք չես տեսած:

—Երբէք. չեմ էլ հասկանում, թէ ինչո՞ւ եմ այստեղ:

—Դրանք համբելու նշաններ են: Ամեն մի շրջան անելուց յետոյ վերցնում է մի գնդակ և մի դելֆին:

Այժմ ամեն բան պատրաստ էր:

Մի շքեղ փողահար ոտքի ելաւ սկսելու նշանը տալու համար: Աղմուկը լռեց: Ամենքի աչքը դէպի արևելք ուղղուեց, մտիկ տալով արգելոցներին, ուր փակուած էին մրցակիցները:

Սիմոնիդէսի դէմքի անսովոր կարմրութիւնից կարելի էր գուշակել, թէ ընդհանուր զրգռութիւնը նրան էլ արդէն վարակել է: Իլդերիմն անհամբեր քրքրում էր իր մօրուքը:

—Լաւ ուշք դարձրու հռոմայեցուն,—ասաց եգիպտուհին Եսթերին:—Եսթերը նրան չլսեց, այլ քօղով ամուր փաթաթուած և սրտատրոփ՝ սպասում էր, թէ երբ կերևայ Բէն Հուրը:

Մի կարճ և սուր փողի հնչիւն—և հակողները նպատակի սիւների մօտ կանգնեցին՝ օգնելու ձիերին, եթէ նրանք խրտնէին:

Դարձեալ մի անգամ փող հնչեց—և արգելոցների դռները բացուեցին:

Դուրս ելան նախ կառավարների հինգ ձիաւոր ուղեկիցները: Արդէն գիտենք, որ Բէն Հուրը ձիաւորի ծառայութիւնը մերժել էր:

Կաւիճ քսած պարանը վայր թողին ձիաւորներին ճանապարհ տալու համար և յետոյ նորից քաշեցին: Զնայելով ձիաւորների շքեղութեան, ոչ ոք նրանց վրայ ուշադրութիւն չդարձրեց. բազմութիւնն ակնապիշ մտիկ էր տալիս արգելոցներին, որտեղից այժմ կառավարների

պոչիւն և ձիերի դոփիւն էր դուրս թռչում։

Կաւճած պարանը նորից ընկաւ, և վեց քառալուծները փոթորկի պէս դուրս սլացան։

Ահագին բազմութիւնը ոտքի ելաւ և կրկէսը ծափերի թնդիւնից որոտաց։ Տենչալի վայրկեանը հասել էր։

—Ահա նա, տէս,—գոչեց Իրասը, մատնացոյց անելով Մէսալային։

—Տեսնում եմ,—ասաց Եսթերը, որ նայում էր Բէն Հուրին։

Եսթերի քօղն ընկել էր։ Այդ րոպէին նա հասկացաւ, թէ ինչ ուրախութիւն է մարդու համար բիւրաւոր մարդկանց առջև մի հերոսական գործ կատարելը, այդպիսի ժամանակ յաղթութեան հեռամուտ ոգին, մոլեգնութիւնից վառուելով, կարող է նոյնիսկ մահուան վտանգն արհամարհել և կամ իսպառ մոռանալ։

Այժմ մրցակիցները տեսանելի էին կրկէսի ամեն կէտերից. սակայն արշաւը դեռ չէր սկսւում։

Մրցակիցների հաւասար մեկնումը ճշտելու համար կաւճած պարանը լարեցին։

Պարանին չդիպչելու համար—որ կընշանակէր կամ գլորուիլ և կամ հէնց սկզբից յետ մնալ—անհրաժեշտ էր հասնել նրան ի՛սկ և ի՛սկ նրա ընկնելու վայրկենին։ Այսպէս անողն այն մեծ առաւելութիւնը կունենար, որ աւելի շուտ և առաջինը տեղ կըզբաւէր ասպարէզի ներքին կողմը՝ մինչև պատի մօտերքում։ Տարածութիւնը մինչև պարանն երկու հարիւր յիսուն ոտնաչափ էր. կառավարները շատ սուր աչք, զօրեղ ձեռք և հանգիստ կշռադատում պիտի ունենային՝ որ դէպի պարանը նետուելիս յանկարծ իրար չբախուէին։

Քառալուծները միասին հասան պարանին։ Փողը հնչեց, ամբոխը գոռաց և նոյն ակնթարթին—ոչ վաղ, ոչ ուշ—պարանն ընկաւ։ Մէսալայի ձիերից մէկի սմբակն



արդէն նրան դիպել էր։ Անվեհեր հռոմայեցին մտրակը ճօճեց, երասանները թուլացրեց, կռացաւ և յաղթական աղաղակով պատին կից շաւիղը բռնեց։

—Արամազդը մեզ հետ է, Արամազդը մեզ հետ,—որոտացին հռոմայեցիք, ուրախութիւնից մոլեգնած։

Մինչ Մէսալան դէպի պատն էր շեղում ձիերին, նրա սոնակի բրոնզէ գլուխն աթենացու աչ փոկաձիի առջևի ոտքին զարկուեց և լծակցի դէմ հրեց նրան։ Երկու ձիերն էլ երերուեցին, ծառացան և յետ մնացին։

—Մերը կըյաղթէ,—գոռաց Դրուզուսը խելագարի պէս, Մէսալայի առաջ վազելը տեսնելով։

—Արամազդը վկայ, մերը կըյաղթէ, կրկնեցին նրա ընկերները։

Սանբալատը, տախտակը ձեռքին, նրանց դիմեց. այդ րոպէին ասպարէզի կողմից մի ճայթիւն թնդաց, և նա ստիպուեց վայր նայել։

Նենդութեամբ մի կողմ հրուած աթենացին, Մէսալայի անցնելուց յետոյ, միայն կորնթացուն մրցակից ունէր աչ կողմից և ուզում էր այդ կողմն ուղղել իր քառաձին. սակայն նրա չար բախտից՝ բիւզանդացու անիւը կալով դիպաւ նրա կառքի յետին մասին և ջախջախեց։ Ճարճատման, կատաղութեան, սարսափի ձայները լսուեցին... և թշուառ Կլէանթէսն իր իսկ ձիերի սմբակների տակ ընկաւ։ Այս սոսկալի պատահարը տեսնելուն պէս Եսթերն իր աչքերը փակեց։

Եւ յառաջ սլացան կորնթացին, բիւզանդացին, սիդոնացին։

Սանբալատը, Բէն Հուրին դիտելով, նորից դիմեց Դրուզուսին և նրա ընկերներին.

—Հարիւր սեստերց հրէի համար,—գոչեց նա։

—Ընդունում եմ,—պատասխանեց Դրուզուսը։

—Դարձեալ մի հարիւր—աղաղակեց Սանբալատը։

Կարծես ոչ ոք չլսեց նրան։ Նա նորից կանչեց, սակայն ներքևի տեսարանը այն աստիճան պակուցիչ էր և հոմայեցիք այնքան յափշտակուած էին «Մէսալա, Մէսալա, Արամազդը մեզ հետ է» գոռալով, որ այլ ևս Սանբալատին ուշք դարձնող չկար։

Երբ Եսթերը վերստին վայր նայելու սիրտ առաւ, մի քանի սպասաւորներ հեռացնում էին աթենացու ձիերին, մի քանիսն էլ նոյնիսկ անբախտ կառավարին մէջտեղից վերցնում։ Կրկէսում մի յոյն չկար, որ բարձրաձայն անէծք չթափէր և վրէժխնդրութիւն չսպասնար։ Եսթերը յանկարծ Բէն Հուրին նկատեց. նա անշնաս կանգնած էր կառքում, Մէսալայի կողքին արշաւելով՝։ Նրանց հետևում էին, մի խումբ կազմած, սիդոնացին, կորնթացին և բիւզանդացին։

Կառարշաւը բորբոքուած էր։ Մրցակիցների հոգին էր նրա մէջ։ Բիւրաւոր մարդիկ նայում էին նրանց շնչասպառ։

## ԺԴ.

### Արշաւը

Դիրք բռնելու համար սկզբում մրցակցող վեց հոգուց՝ Բէն Հուրն արտաքինն էր ձախ կողմում։ Նա էլ միւսների նման մի վայրկեան շլացաւ ասպարէզի պայծառ լոյսից, սակայն իսկոյն իր ոսոխին ճանաչեց և նրա դիտաւորութիւնն ըմբռնեց։ Նենգաւոր, գոռոզ ու ժպիրն Մէսալայի դեղնցիկ դէմքը մի ամենի վճռականութիւն էր ցոյց տալիս։

Բաւական է, որ Բէն Հուրը տեսնէր նրան, որպէսզի իր արիութիւնը սաստկանար. սակայն նրա հոգին



չպղտորուեց ատելութեան կոյր կրքից, մարքի պարզութիւնը չայլայլուեց արեան ուժգին եռումից. նա լաւ էր կշռել իր անելիքը և այժմ աւելի վստահ, աչալուրջ ու կզոյշ էր, քան երբեք։

Մինչ կրկէսի բազմութիւնը զարհուրած նայում էր աթենացու պատահարին, իսկ սիդոնացին, բիւզանդացին և կորնթացին հնար եղածին չափ ճգնում էին չթախուել նրան և չընկնել, Բէն Հուրն արագ շրջան տուաւ և հասաւ Մէսալային։

Այժմ մի փոքր անջրպետով բաժանուած՝ նրանք երկուսն էլ կողք կողքի էին ընթանում, դիմելով երկրորդ նպատակին։

Այդտեղի երեք սիւների պատուանդանը կիսաշրջանի ձև ունէր։ Դրա մօտ ճանապարհ ծուռում էր, և ահա այս ծուռ գծով մի յաջողակ շրջան անելը վարպետի գործ էր համարւում։ Կրկէսի մէջ մի անշշուկ լռութիւն տիրեց—սոսկալի հետաքրքրութեան ապացոյց։

Մէսալան արագ մտիկ տուաւ Բէն Հուրին և լրութեամբ գոչեց.—կորչէ՛ Սէրը, կեցցէ՛ Մարսը։ Կորչէ՛ Սէրը, կեցցէ՛ Մարսը,—կրկնեց նա և մտրակով չհշտակի խփեց Բէն Հուրի սրարշաւ արաբներին, որոնք դեռ իրենց օրում այսպիսի հարուած չէին ստացել։

Բազմութիւնը ցաստումով նկատեց այս խայտառակ արարքը, և լռութիւնը սաստկացաւ... սպասում էին հետևանքին։ Սակայն վայրկեան չանցած՝ ամեն կողմից քարկոծութեան և պարսաւի ձայներ որոտացին։

Բէն Հուրի ձիերը զարհուրելով յառաջ թռան։ Մինչև այժմ սիրով վայելայող ձեռքից զատ մի ուրիշ բան չէր զգում նրանց. և ի՞նչ կարող էին անել նրանք, եթէ ոչ փախչել այն ապիրատ հարուածից... Եւ չորսն էլ մի կամքով ներշնչուածի պէս յառաջ սրացան։

Ամեն մի փորձառութիւն օգտակար է մարդուս

Թխավարութեան մէջ ամրացած զօրեղ բազուկներն ու ձեռքերն այժմ պէտք եկան Բէն Հուրին։ Ի՞նչ էր նրա կառքի երերումը՝ ալէկոծ նաւի սասանման ու ցնցման առջև... Կառքի մէջ ուղիղ կանգնած՝ նա իսկոյն երասանները թուլացրեց, փաղաքշական խօսքեր ասաց նժոյգներին և յաջող անցաւ վտանգաւոր տեղից։ Մի վայրկեան ևս, և նա արդէն նորից տէր էր քառալուծին և առաջին նպատակին դեռ չհասած՝ նորից Մէսալայի կողքին էր։ Սրանով նա բոլոր ոչ հռոմայեցի դիտողների սիրտը գրաւեց։ Նրանց հաւանութիւնը այնքան պարզ էր, որ Մէսալան չյանդգնեց իր գարշելի փորձը կրկնել։

Երբ կառքերը Եսթերի առջևից վազեցին, նա բէն Հուրի դէմքը նկատեց. այժմ սա փոքր ինչ ժժգոյն էր և գլուխն աւելի բարձրացրած, բայց և հանգիստ առաջուայ պէս։

Առաջին պտոյտը վերջանալուն պէս՝ մի մարդ բարձրացաւ պատի արևմտեան ծայրի վրայ և գնդակներից մէկը վերցրեց. միևնոյն ժամանակ մի ուրիշ մարդ էլ արևելեան ծայրից մի հատ դելփին վերցրեց։

Այսպէս անհետացան և երկրորդ գնդակը և երկրորդ դելփինը։

Յետոյ՝ երրորդ գնդակը և երրորդ դելփինը։

Երրորդ պտոյտից յետոյ էլ Մէսալան ներքին կողմը դրաւած էր պահում։ Բէն Հուրը շարունակում էր նրա կողքից ընթանալ. միւսները գալիս էին հետևից։ Մրցութիւնը կարծես երկարշաւի ձև էր ստացել որ յետոյ, այնքան ընդունուած էր Հռոմում—Մէսալան և Բէն Հուրը՝ բոլոր միւսներին հակառակ։

Չորրորդ շրջանի ժամանակ սիդոնացին կարողացաւ Բէն Հուրին կից տեղ բռնել, բայց շուտով նորից յետ մնաց։



Տեսուչները հազիւ էին կարողանում աթոռների վրայ նստած պահել ժողովրդին, որի աղաղակը կարծես արշաւողների հետ շրջան էր անում կրկէսում։

Վեցերորդ պտոյտի սկզբին բոլոր մրցակիցները միևնոյն կարգով էին ընթանում, միայն թէ այժմ արշաւի արագութիւնը սաստկացել էր, քշողների եռանդը բորբոքուել։ Կառավարները և ձիերն ասես հաւասար զգում էին, որ վճիռը մօտենում է և յաղթողը շուտով կերևայ։

Կրկէսի հետաքրքրութիւնը, որ հէնց սկզբից հռոմայեցու և հրէի վրայ էր ամփոփուած, այժմ արդէն երկիւղի էր տեղի տալիս երկրորդի նկատմամբ։ Հանդիսատեսները նստարաններից կանգնում էին և անձկութեամբ հետևում ախոյեաններին։

Իլդերիմը դադարել էր իր մօրուքը շփելուց և Եսթերն իր ահը մոռացել։

—Հարիւր սեստերց հրէի համար՛,—գոչեց Սանբալատը հիւպատոսի օթեակում նստած պատրիկներին։

Ոչ ոք պատասխան չտուաւ։

—Մի տաղանդ... հինգ տաղանդ... տաճը տաղանդ, ընտրեցէք,—գոռում էր նա, իր յիշատակարանն իրրև սպառնալիք ճօճելով։

—Ընդունում եմ սեստերցիներդ,—վերջ ի վերջոյ պատասխանեց մի հռոմայեցի երիտասարդ և ուզում էր թիւը գրել։

—Չանեմ, չանեմ,—զգուշացրեց նրան մի ընկեր։

—Ինչո՞ւ։

—Մէսալան արդէն իր արագութեան վերջին կէտին է հասել։ Տես, ինչպէս է յառաջ կռացել կառքի շուրթից և երասաններն արձակել. այն ինչ հրէան...

Երիտասարդը Բէն Հուրի վրայ հայեացք նետեց։

—Հերակլը վկայ,—գոչեց նա, իր վստահութիւնը

կորցնելով։—Այն շունը դեռ բոլոր ուժով երասաններըը քաշում է։ Եթէ աստուածները մեր բարեկամին չօգնեն, հրէան նրան կըյաղթէ։ Բայց ո՛չ... դեռ ո՛չ։ Արամազդը մեզ հետ է, Արամազդը մեզ հետ։

Այս աղաղակը լսելիներէն կրկնուելով՝ մինչև վերին նստարաններն արձագանգ գտաւ։

Եթէ Մէսալան իր արագութեան վերջին կէտին հասած էլ լինէր, դարձեալ առաւելութիւնը նրա կողմն էր, որովհետև նա բաւական յառաջ էր անցել։ Նրա ձիերը սլանում էին գլուխները շատ քաշ արած. վերևից նայելիս՝ նրանց փորերը գետնին էին քերւում. պինչերն արիւնի պէս կարմրած էին. աչքերը գրեթէ դուրս էին թռչում կապիճներից։ Յամենայն դէպս խեղճ ձիերը ոչ մի ջանք չէին խնայում, ոչ մի ճիգ, բայց մինչև ե՞րբ կըտոկային... Երկրորդ նպատակին որ հասան, Բէն Հուրի քաւալուծը դեռ չատ էր ծանր ոսոխի կառքից։

Մէսալայի բարեկամների ցնծութիւնը չափ չունէր. նրանք գոռում, գոչում էին և նրա գոյնի նշաններըը ճօճում։ Սանբալատը հազիւ էր ժամանակ գտնում գրի առնելու նրանց առաջարկած գրաւները։

Մալուխը կանգնած էր Յաղթական դռան կողի վրայ։ Նա այլևս զուարթ չէր. արդէն սկսել էր վհատուել։ Նա լաւ էր յիշում Բէն Հուրի ակնարկը, թէ արևմտեան սիւների մօտով շրջան անելիս մի բան պիտի պատահի... Բայց ահա վեցերորդ պտոյտն էլ սկսուել էր և դեռ ոչինչ չէր պատահել։ Եւ Բէն Հուրը հազիւ էր իր դիրքը պահպանում ոսոխի կառքի առաջում։

Սիմոնիդէսն և նրա ընկերները արևելեան ծայրում լուռ էին։ Վաճառապետը կոր ի գլուխ նստած էր. Իլդերիմը յօնքերը կիտելով քրքրում էր իր



մօրուքը. Եսթերը հազիւ էր շունչ քաշում։ Զուարթ էր միայն Իրասը։

Վեցերորդ պտոյտի վերջին կէսին առաջինը Մէսալան էր, իսկ Բէն Հուրը, թէև մօտիկից նրան հետամուտ, բայց երկրորդ։

Այդպէս էին նրանք, երբ առաջին նպատակին հասան և սրա շուրջը պտոյտ արին։ Մէսալան իր դիրքը չկորցնելու համար աշխատում էր պատի մօտով յառաջ վազել. նրա կառքը կըփշրուէր, եթէ նա մի քայլ աւելի դէպի ձախ բռնէր։ Երբ որ նրանք կորաձև ուղին յետ թողին, արդէն ոչ թէ երկու կառքի, այլ միայն մէկի արահետ էր նշմարւում—այնպէս մօտիկից էր հետամտում նրան Բէն Հուրը։

Եսթերը նորից տեսաւ Բէն Հուրի դէմքը, որ առաջուանից աւելի գունատ էր։

Սիմոնիդէսն Իլդերիմին դառնալով ասաց.

—Ո՞վ բարի Շեյխ, ինձ թւում է թէ Բէն Հուրը մի բան ունի իր—մտքում։ Այդ տեսնում եմ նրա դէմքից։

Իլդերիմը պատասխանեց.

—Տեսնո՞ւմ ես՝ ինչպէս թարմ և մաքուր են ձիերը։ Աստուածու փառքը վկայ, բարեկամ, նրանք դեռ վազել չեն սկսել, բայց հիմա տեսնես։

Մնացել էին միայն մի դնդակ և մի դելֆին։ Բազմութիւնը երկար ու խոր շունչ քաշեց—վախճանի սկիզբը մօտեցել էր։

Նախ սիդոնացին իր ձիերին մարակեց. նրանք յուսահատ յորդան տուին, փոքր ինչ յառաջ անցնելով, բայց այդ երկար չտևեց։ Կորնթացին էլ նոյնն արաւ, բիւզանդացին էլ նոյնը, բայց ի զուր... Այնուհետև հռոմայեցիներից զատ միւս բոլոր դիտողների յոյսը

Բէն Հուրի վրայ էր, և այս զգացումը նրանք բացարձակ յայտնեցին:

—Բէն Հուրը,— գոռում էին նրանք, և ձայների որոտը գնում բախւում էր հիւպատոսի օթեակին:

—Յաղթութիւն, այ Բէն Հուր:

—Մօտեցիր պատիւն:

—Թող երասաննները՝ մտրակ տուր:

—Առաջդ առնելու թոյլ չտաս: Այժմ կամ երբէք:

Այսպէս էին թնդում ձայները: Մարդիկ նստարանների վայր էին կախւում և ձեռքերը պաղատանքով դէպի նա մեկնում:

Բէն Հուրը կամ չէր լսում նրանց կամ այլևս ոյժ չունէր, որովհետև պատյտի կէսից յետոյ էլ փոփոխութիւն չէր ցոյց տալիս... նա դեռ յառաջ չէր անցել:

Շրջան անելու համար Մէսալան սկսեց դէպի ձախ քաշել իր ձիերը, որով նրանց վազը պիտի նուազէր: Նա զուարթ էր, Հռոմը յաղթող: Հարստութիւն, պատիւներ, փառք, յաղթանակ—այս բոլորը ժպտում էին նրան երեք սիւների մօտերքում, մինչև վեց հարիւր ոտք տարածութեան վրայ:

Այդ րոպէին Մալուխը վերևից տեսաւ, թէ ինչպէս Բէն Հուրը յառաջ հակուեց և քառալուծի երասաննները թուլացրեց: Առանց ձիերին խփելու՝ նա մտրակը ճօճեց օդում, և արաբներն իրրև մէկ հոգի մարեն ձի յառաջ թռան և մէկ ոստիւնով Մէսալայի կողքին տեղ բռնեցին: Նրանց դոփիւնը Մէսալան լսեց, բայց նպատակի վտանգաւոր մօտերքում վախենում էր յետ նայել Բէն Հուրի մտքը իմանալու համար: Բազմութիւնը ոչ մի նշան չէր տալիս նրան: Համատարած աղաղակների միջից նա լսում էր մինչև մի ձայն—Բէն Հուրի ձայնը, որ խրախոյս էր տալիս



արաբների Շէյխի հին արամէական բարբառով.

—Յառաջ, Աթայր: Յառաջ, Ռիգել: Ա՜յ Անտարէս, դու ուզում ես յետ մնալ: Ա՜յ ապրես դու, Ալդեբարան՝: Վրանի տղերքն ու կանայք ձեր փառքն են երգում, աստղիկնե՛ր... Ահա այդ լաւ էր, շատ ապրէք, իմ սիրելիք: Վազը տանը կըլինիք... սև վրանը կըմտնէք... Պրծաւ, շատ լաւ պրծաւ. հա, հա, հա: Տապալեցինք, զգետնեցինք անզգամին: Մեկ խփող ձեռքը փոշու մէջ է թաւալւում: Մենք յաղթեցինք. փառքը մերն է: Հա, հա... Լաւ էր, շատ լաւ: Վերջացաւ: Կանգնեցէք:

Ոչ մի ժամանակ այսպէս հեշտ և գրեթէ մի ակնթարթում պլուխ չէր բերուած այսպիսի բան:

Հէնց այն վայրկենին, երբ Բէն Հուրը մտադիր էր իր անելիքն իրագործել, Մէսալան նպատակի շուրջը ծուռելու վրայ էր: Նրանից առաջ անցնելու համար անհրաժեշտ էր, որ Բէն Հուրը նրա կառքի ճանապարհը կտրէ. այս շարժումը, այն էլ յառաջընթաց ուղղութեամբ, մեծ վարպետութիւն էր պահանջում: Անհրաժեշտ էր նմանապէս շրջան անել ըստ կարելւոյն նեղ անկիւնագծով: Բիւրաւոր մարդիկ բանի էութիւնը հասկացան. նրանք տեսան Բէն Հուրի նշան տալը ձիերին և յաջողութեան վկայ եղան: Նրա քառալուծը Մէսալայի աջ անիւի մօտով սլացաւ, նրա ձախ անիւը Մէսալայի կառքին դիպաւ... Ամբողջ կրկէսում մի ճարճատման ձայն թնդաց, և հռոմայեցու կառքի բեկորները մտքից արագ դէս ու դէն թռան աւազի վրայ: Մէսալան գլխիվայր փոշու մէջ ընկաւ՝ իր երասաններում խճճուած:

Ասես թէ այս րոպէի արհաւիրքը սաստկացնելու համար՝ սիդոնացին, որ անմիջապէս Մէսալային հետամուտ էր, հետևաբար և չէր կարող կանգ առնել,

ուռնատակ արաւ նրան և զարհուրելի դղրդումով նրա մոլեգնած քաւալուծի մէջ մխուեց։ Իրար անցնող երիվարների խառնակումից և փոթորկուող փոշու միջից Մէսալան նկատեց, որ կորնթացին և բիւզանդացին աշխատում են Բէն Հուրի եռևից հասնելու, որ ոչ մի վայրկեան չէր կանգնել։

Բազմութիւնը կանգնեց նահապանների վրայ և հաւանութեան գոռում-գոչում արձակեց։ Մէսալան սմբակներից կոխկրտուելով՝ անշարժ ընկած էր իր ջարդուած կառքի կտորների վրայ։ Նրան մեռած կարծեցին։ Մեծամասնութեան աչքը Բէն Հուրին էր հետևում, բայց և այնպէս նկատող չեղաւ, թէ ինչպէս նա երասանների շարժումով ձիերին հեշտ դէպի ձախ վարեց և իր կառքի երկաթապատ լիսեռի ծայրով ոսոխի անիւը խորտակեց։ Տեսան միայն նրա ամբողջ երևոյթի փոխուիլն և այն հերոսական զօրութիւնը, այն վարակիչ եռանդն ու ոգին, որ նա յանկարծ աչքով, խօսքով և շարժումով ներշնչեց իր արաբներին։ Եւ ինչպէս գրոհ տուին նրանք... Արշաւ չէր այն, սլացում չէր, այլ առիւծի հուժկու ոստիւն, արծուի թռիչք։ Բիւզանդացին և կորնթացին դեռ ճամպռու կէսը չէին կտրել—Բէն Հուրը հասաւ նպատակին։

Յաղթութիւնը տարուած էր։

Հիւպատոսը վերկացաւ։ Բազմութիւնը խեղդուում էր գոռալուց։

Յաղերի կարգադրիչը ներքև իջաւ և պսակեց յաղթողներին։

Կոփամարտում մրցանակ գրաւողը մի շիկահեր, ցածր ճակատով, վայրագադէմ սաքսոն էր, որի վրայ Բէն Հուրն ակամայ ուշք դարձրեց։ Այդ մարդը նրա զինաւարժութեան վարժապետն էր եղած Հռոմում, և աշակերտին սիրող վարժապետը։



Հետևեալ վայրկենին երիտասարդ հրէան դէպի վեր նայեց և գոռաց Սիմոնիդէսին ու ձեռքով իրեն շնորհաւորող բարեկամներին։ Եսթերը նստած էր Ճեմում, իսկ Իրասը կանգնեց և հովհարով ողջոյն տուաւ Բէն Հուրին... բայց մենք գիտենք, որ այս ողջոյնը նա Մէսալայի համար էր պահած...

Այնուհետև կազմուած թափօրը ցնծութեան աղաղակները լսելով Յաղթական դռնից դուրս եկաւ։

Տօնական օրն անցել էր։

## ԺԲ.

### Իրասի հրաւէրը

Բէն Հուրը և Իլդերիմը գետի միւսի ափի վրայ ճնացին, որովհետև ժամադրութեան համեմատ մտադիր էին կէս գիշերին ճանապարհ ընկնել կարաւանին հասնելու համար, որ արդէն երեսուն ժամ առաջ էր մեկնած։

Երջանիկ էր Շէյխը, արքայական էին նրան առաջարկած պարգևները. բայց Բէն Հուրն ամեն բան մերժեց։ Նա ասում էր, թէ ինքը լիովին վարձատրուած է արդէն թշնամուն ընկճելով։

—Մոռացէ՛ք,—ասում էր Շէյխը,—թէ ինչ բան արիր ինձ համար։ Ամեն տեղ, ուր որ միայն վրաններ կան, Միրայիս և նրա զաւակների անունը կըհռչակեն։ Այսուհետից մինչև Աքաբան և Ովկիանոսը, մինչև Եփրատն և Հայաստանը, մինչև նոյնիսկ Սկիւթեան ծովը նրանց փառքը երգով կըյիշեն... ինձ էլ կըգովեն, մոռանալով, որ արդէն հասել եմ կեանքիս խոր աշունքին։ Եւ ամեն անտէր զինուորներն իմ շուրջը

կըհաւաքուին և իմ քաջերի թիւը հազարներով ու բիւրերով կըստուարանայ։ Դու չգիտես՝ ինչ կընշանակէ մի այսպիսի զինակիր ուժի տէր լինելն անապատում. սրանով ես անհաշուելի նիւթական օգուտ ձեռք կըբերեմ և անկախութիւն թագաւորներից... Ա՜հ, երգւում եմ Սողոմոնի սրով—եթէ իմ պեսպանը կայսրից անգամ ինձ համար շնորհ խնդրելու լինի, այդ շնորհը կըստացուի։ Եւ դու ոչինչ չե՞ս ուզում... ոչի՞նչ։

Բէն Հուրը պատասխանեց.

—Ինչ սիրտն ու աչքը միթէ արդէն իմս չե՞ն, ով բարի Շեյխ։ Աճող զօրութիւնդ և ապրեցութիւնդ մեր սպասած թագաւորի համար վերապահիր։ Ո՞վ կարող է ասել, թէ այդ բոլորը նրա համար չէ շնորհուած քեզ։ Սկսելու գործիս ընթացքում ես գուցէ շատ կարիքներ ունենամ։ Այժմ առաջարկդ մերժելով, ապագային աւելի համարձակ քո օգնութեան կըդիմեմ։

Մինչ նրանք այսպէս խօսում էին, երկու եկեղեցիներ երևացին—մէկը Մալուխն էր, միւսը մի անծանօթ։ Նախ առաջինը ներս թողուեց։

Հաւատարիմ ծառան չփորձեց թաքցնել այն ուրախութիւնը, որ զգում էր օրուայ դէպքի պատճառով։

—Սիմոնիդէս տէրս,—ասաց նա յետոյ,—յայտնում է քեզ, թէ մի քանի հռոմայեցիք բողոքել են քո տարած գումարի վճարման դէմ։

Բարկութեամբ տեղից թռաւ Իլդերիմն ու գոչեց.

—Երգւում եմ Աստուծու փառքով, ամբողջ Արեւելքը վկայ է, որ յաղթութիւնն աղնիւ կերպով ձեռք բերուած։

—Բայց բողոքը մերժուել է, — շարունակեց



Մալուխը։ — Խաղերի կարգադրիչը գումարն արդէն վճարեց։

—Իրա՞ւ։

—Կարգադրիչը ծրծաղեց այն առարկութեան դէմ, թէ Բէն Հուրը Մէսալայի կառքը կոտրել է, և յիշեցրեց բողոքողներին այն մարակի հարուածը, որ ստացել էին արաբները նպատակի շուրջը վազելիս։

—Իսկ աթենացին ի՞նչ եղաւ։

—Մեռաւ։

—Մեռա՞ւ,—գոչեց Բէն Հուրը։

—Մեռա՞ւ,—կրկնեց Իլդերիմը։—Ի՞նչ բախտ ունին այդ հռոմայեցիք։ Աթենացին մեռաւ, իսկ Մէսալան դեռ ապրո՞ւմ է։

—Ապրում է, այո՛, բայց նրա համար կեանքը բեռ կըդառնայ։ Բժիշկներն ասում են, թէ այլ ևս երբեք չի կարենալ ոտքով մանգալ։

Բէն Հուրը լռութեամբ նայեց դէպի երկինք։ Նրա աջն պատկերացաւ Սիմոնիդէսի պէս աթոռին մեխուած և սպասաւորներին ապաւինուած Մէսալան... Ծեր հրէան ընտելացել էր իր վիճակին. բայց այն գոռոզամիտ, ամբարտաւան հռոմայեցին ի՞նչպէս պիտի իր դրութեան դիմանար։

—Սանբալատն ընդհարում ունեցաւ Դրուզուսի հետ,—շարունակեց Մալուխը։—Դրուզուսը և միւս սատրապները Մաքսենտիուսին ներկայացրին իրենց կորցրած հինգ տաղանդի վճարման խնդիրը։ Հիւպատոսը պատուիրեց նրանց կայսրին դիմել։ Մէսալան էլ չի կամենում վճարել, և Սանբալատն իր կողմից բողոքել է հիւպատոսին։ Աւելի բարեմիտ հռոմայեցիք ասում են, թէ վճարումից հրաժարուիլը վատթար բան է, և միւս բոլոր կուսակցութիւններն այս կարծիքին համա-

միտ են։ Այս վէճն այժմ ամբողջ քաղաքի գայթակղութեան նիւթ է դարձել։

—Սիմոնիդէսն ինչ է ասում,—հարցրեց Բէն Հուրը։

—Նա ծիծաղում է և շատ գոհ է։ Եթէ հռոմայեցին վճարելու լինի, անտարակոյս կըսանձնականայ. իսկ եթէ չվճարէ, կանարգուի։ Կայսերական վճիռը բանի էութիւնը չի փոխիլ։ Արևելքին զրկանք հասցնելով, պարթևաց դէմ պատերազմ սկսելը յիմարութիւն կըլինէր... Իսկ Իլդերիմ Շէյխին վիրաւորելը, կընշանակէր ամբողջ անապատը դրգռել և Մաքսէնտիուսի թիկունքը չարաչար վտանգել։ Այս պատճառով Սիմոնիդէսը խընդրում է ձեզ հանգիստ լինել. Մէսալան ստիպուած կըլինի վճարելու։

Իլդերիմը նորից զուարթացաւ։

—Գնանք այժմ,—ասաց նա, ձեռքերը շփելով։—Դրամական գործերը Սիմոնիդէսը լաւ կըկարգադրէ, փառքը մերն է։ Իսկոյն ձիերը բերել կըտամ։

—Սպասիր,—ասաց Մալուխը։—Դուրսը մի ուրիշ լրաբեր կայ։ Ձե՞ս ընդունիլ նրան։

—Ա՜հ, բոլորովին մոռացել էի։

Մալուխը գնաց։ Այնուհետև մի սիրուն պատանի ներս մտաւ և չոքելով ասաց.

—Բաղդասարի դուստր Իրասը, որ յայտնի է Իլդերիմ Շէյխիդ, պատուիրում է ասել քեզ, թէ դու նրան մի մեծ շնորհ արած կըլինիս, եթէ ընդունես նրա շնորհաւորութիւնը, որ առաքում է քառասնօրիդ յաղթութեան առթիւ։

—Բարեկամիս դուստրը շատ բարի է,—ասաց Իլդերիմը վառվռուն աչքով։—Տուր նրան այս մատանին իբրև հաւաստիք հաճութեանս, որով ընդունում եմ նրա շնորհաւորութիւնը։

—Աչքիս վրայ, վեհանձն Շէյխ,—ասաց պատանին



և շարունակեց.—Եգիպտացու դուստրը մի ուրիշ պատուէր էլ տուաւ ինձ։ Նա խնդրում է քեզ իմաց տալ երիտասարդ Բէն Հուրին, թէ իր հայրն առ ժամանակ հաստատուել է Իդերնէի ապարանքում, և թէ նա կըցանկար այնտեղ տեսնել Բէն Հուրին վաղը՝ ցերեկուայ չորս ժամից յետոյ։

Շէյխը նայեց Բէն Հուրին, որի դէմքը կարմրել էր։

—Ի՞նչ կասես,—հարցրեց նա։

—Եթէ թոյլ տաս, կուզենայի տեսնել եգիպտուհուն։

Իլդերիմը ծիծաղելով ասաց.

—Ո՞վ կարող է թոյլ չտալ երիտասարդին երիտասարդութիւն վայելել։

Ապա թէ Բէն Հուրը պատասխան տուաւ լրաբերին.

—Ասա տիրուհուդ, թէ ես, Բէն Հուրս, կայցելեմ նրան Իդերնէի ապարանքում վաղը՝ ցերեկուայ չորս ժամին։

Պատանին լուռ գլուխ տուաւ և գնաց։

Կէս գիշերին Իլդերիմը ճանապարհ ընկաւ, մի ձի թողնելով Բէն Հուրի համար և մի ուղեկից։ Բէն Հուրը յետոյ պիտի հետևէր նրան։

## Ը.Գ.

### *Թակարդ*

Հետևեալ օրը Բէն Հուրը դուրս եկաւ Ոմփալոսից, որ քաղաքի կենդրոնական մասումն էր, և Հերովդէսի սիւնաշարքը մտնելուց յետոյ՝ շուտով հասաւ Իդերնէի պալատին։

Բէն Հուրը կանգ առաւ կամարակապ գաւթի ստուերում՝ աչքի անցնելու նրա մարմարեայ աստիճանները, սիւները, քանդակները և զարդերը. յետոյ

բուն պալատը ոտք դրաւ. դռները բաց էին։ Առաջին անցքը բարձրայարկ էր և բաւական նեղ. յատակը կարմիր աղիւսից, որմերը նոյնպէս կարմիր։

Բէն Հուրը յամրաքայլ յառաջ գնաց։ Շուտով պիտի չքնաղ Իրասի դիմացը կանգնէր, նրա հրացայտ աչքերը տեսնէր, ձայնը, երգը, կատակները լսէր։ Նա զմայլական երազների մէջ էր ընկղմած։

Անցքի ծայրում մի փակ դուռ կար, որի առջև Բէն Հուրը փոքր ինչ սպասեց. յանկարծ դռան թևերն սկսեցին բացուիլ, թէև ոչ ոք չէր դիպել նրանց ոչ ձեռքով, ոչ էլ ոտքով։ Բէն Հուրն իր աչքին ներկայացող տեսարանից հիացած՝ մոռացաւ դռան տարօրինակ հանգամանքը։

Դռան միջով նեղս նայելով՝ նա տեսաւ մի հռոմէական տան ատրիում[1])—մի ընդարձակ և առատալեալական շքեղութեամբ զարդարուած սրահ, որի խորութիւնը կարծես անվերջ էր։ Դրա նման սրահ Բէն Հուրը դեռ չէր տեսել։ Յատակը զննելիս նա նկատեց, որ ինքը կանգնած է մի կարապ շոյող Լէդայի[2]) մերկ կրծքի վրայ և որ ամբողջ յատակը ծածկուած է մուսիոնից շինուած դիցաբանական պատկերներով։ Զորս կողմը կանգնած էին նուրբ աթոռներ ու բազմոցներ, շքեղ քանդակուած սեղաններ և նստելու հրաւիրող թախտեր։ Պատի պատկերները և շրջակայ կարասիքը որոշ ցոլանում էին յատակի վրայ, ասես թէ մի անշարժ ջրում լողալով. նոյնպէս և անդրիներն ու ձեղունի նկարները շողշողում էին յատակի ողորկ հայելու մէջ։ Ձեղունը գմբէթաձև էր և նրա վերի բացուածքի միջով լոյսն անարգել վայր էր սահում։ Բացուածքի

[1]) Ներքին կամարակապ անդաստակ։

[2]) Թինդարի կինը՝ սիրուած Արամազդից, որ կարապի պատկեր էր առել նրան հրապուրելու համար։



տակը՝ յատակում շինուած աւազանը[1]) շրջապատուած էր բրօնզէ ցանկով. ձեղունը և բացուածքի ոսկեզօծ սիւները կրակի պէս փայլում էին արևից և անդրադառնում կարծես անյատակ ջրի մէջ։ Զքնաղ արձանները, հազուագիւտ աշտանակները, անօթներն ու սափորները մի առանձին գեղեցկութիւն էին տալիս սրահին։

Բէն Հուրը հաճութեամբ շրջում էր սրահի մէջ, որովհետև հետաքրքրուած էր իրեն շրջապատող իրերով։ Իրասի ուշանալը բացատրում էր նրանով, թէ օրիորդը դեռ պատրաստ չէ... և անշուշտ շուտով կերևայ։ Իւրաքանչիւր հռոմէական ապարանքում հիւրերի ընդունարանն ատրիումն էր։

Նա երկու-երեք անգամ պտոյտ արաւ սրահի մէջ. երեք անգամ ձեղունի լուսամուտի ներքև կանգնեց, կապուտակ երկինքը դիտելով, յետոյ մի սիւնի յենուելով, սկսեց լոյսի ու ստուերի խաղերը զննել։ Ժամանակի ընթացքը վերջ ի վերջոյ բաւական ծանր երևաց նրան... և նա զարմանում էր, թէ ինչո՞ւ այդքան ուշանում է Իրասը։ Նա նորից սկսեց աչքի անցնել յատակի սիրուն նկարները, բայց ոչ առաջուայ հաճութեամբ։ Այդ անելիս ստէպ կանգնում էր և ակամայ զննում. անհամբերութեան ջերմն արդէն շօշափել էր նրա հոգին։ Այս ջերմը գնալով գնալով սաստկացաւ, և Բէն Հուրն այն աստիճան ծանրութիւն զգաց տան մէջ տիրող լռութիւնից, որ ակամայ սկսեց կասկածել և երկըայել։ Սակայն դեռ աշխատում էր ժպտալով հեռու վանել այս զգացումը և յուսալ։—Է՛հ, Իրասը դեռ զբաղուած է իր թերթերունքը սևացնելով—ասում էր նա

[1]) Այդ աւազանը, որ անձրևի ընդունարանն էր, կոչւում էր impluvium, իսկ վերևի բացուածքը, որով անձրևն իջնում էր —compluvium.

ինքն իրեն,—և կամ թէ փուռնջ է հիւսում ինձ համար։ Ուշ էլ լինի, հարկաւ կըգայ, և քանի ուշ գայ, այնքան գեղեցիկ կըլինի։—Յետոյ նստեց մի աշտանակի դէմ նրա զարդերը դիտելու։ Բայց լռութիւնը սաստիկ ճնշում էր նրան, և նա աշտանակի շղթաները զննելիս անգամ չէր դադարում ականջ դնել։ Այնուամենայնիւ ձայն չկար... պալատը կարծես գերեզման էր։

Արդեօք չէ՞ր սխալուած։ Ո՛չ։ Լրաբերը հկած էր եգիպտացի օրիորդի կողմից և այս էր Իդերնէի պալատը։ Բէն Հուրը յանկարծ յիշեց դռան բացուելու հղանակը—այն խորհրդաւոր կերպով և ինքն իրեն բացուելը,—և ուզեց միևնոյն դուռը նորից տեսնել։

Նա մօտեցաւ դռանը։ Սակայն չնայելով կամաց կամաց ոտք դնելուն, իր քայլերը մի այնպիսի արձագանգ տուին, որ նա դողաց։ Նա ուզեց դուռը բանալ. բայց հռոմէական ծանր փականքն ընդդիմացաւ նրա փորձին. նա փորձեց երկրորդ անգամ և այս անգամ բոլոր ուժով—դուռն անշարժ էր... Արիւնը սառեց Բէն Հուրի սրտում. վտանգի զգացումից պաշարուելով՝ նա մի վայրկեան վարանած մնաց։

Ո՞վ կար արդեօք Անտիոքում, որ կամենար վնասել նրան։

Մէսալան։

Պալատն անշուշտ մի հռոմայեցու պատկանող տուն էր։ Դա, իրաւ է, ամենամեծ փողոցի վրայ էր գտնւում և հեշտ չէր մէջը բռնութիւն կատարել. բայց ինչ որ դժուար էր ուրիշներին, կարող էր հեշտ երևալ ոխերիմ թշնամու յանդուգն ոգուն... Այժմ Բէն Հուրի աչքում աւերիումը մի ուրիշ կերպարանք ստացաւ. այս սրահն իր բոլոր պերճութեամբ ու փայլով մի որոգայթ երևաց նրան։ Երկիւղը միշտ սևացնող է...

Բէն Հուրը զայրացաւ այս գաղափարից։



Աւերիումի աջ ու ձախ կողմը շատ դռները կային, և Բէն Հուրը փորձեց բանալ նրանց, բայց բոլորն էլ փոցուած էին։ Ամաչելով ազմուկ հանել, նա վերջապէս մի բազմոցի վրայ նստեց իր անելիքը կշռելու համար։

Արդէն պարզ էր, որ նա բռնուած է. բայց ո՞վ էր բռնողը և ինչո՞ւ։

Մի՞թէ իրօք Մէսալան էր... Բէն Հուրը գլուխը բարձրացրեց և արհամարհական ժպտով շուրջը նայեց։ Ամեն մի սեղան կարելի էր մի զէնքի տեղ բանեցնել։ Սակայն ոսկի վանդակում անգամ թռչունը կարող է սովամահ լինել։ Մի՞թէ իրեն այսպիսի մահուան կը-մատնեն... Անկարելի է։ Աթոռ ու բազմոց չի մնալ, որ նա դռները խորտակելու համար չգործածէ... Նա ուժեղ է, և ո՛վ կարող է դէմ դնել նրա յուսահատ կատաղութեան։

Մէսալան անձամբ պալատ չի գալ. այժմ նա Սիմոնիդէսի նման մի հաշմ է՝ տեղից շարժուելու անզօր. բայց կարող է ուրիշներին շարժել։ Եւ ո՞րտեղ չկան նրա կամքին հետևելու յօժար մարդիկ...

Բէն Հուրը վերկացաւ և նորից փորձեց դռները։ Մի անգամ էլ բարձր գանչեց։ Սրահն այնպիսի արձագանգ տուաւ, որ նա սոսկաց։ Վերջ ի վերջոյ նորից նստեց և որոշեց հանդարտ սպասել և յետոյ միայն դուռը խորտակելով ելք գտնել։

Այսպիսի դրութեան մէջ մարդուս հանդիստն ու գրգռութիւնը ծովի նաւազման և խաղացքի պէս մէկը միւսին յաջորդում են։ Բաւական երկար սպասելուց յետոյ նա վճռեց, թէ մէջ տեղը մի թիւրիմացութիւն կայ... Պալատը հարկաւ մի տէր կունենայ, տէրն էլ մի ծառայ կամ դռնապան, և այս դռնապանը մինչև երեկոյ և կամ գոնէ գիշերուայ դէմ յետ կըգայ... Ուրեմն համբերութիւն։

Այսպէս մտածելով Բէն Հուրը լաւ համարեց դարձեալ սպասել։

Վերջին անցաւ մի քառորդ ժամ—անասելի երկար մէկոց նրա համար—և ահա նրան ներս թողնող դուռն երկրորդ անգամ անձայն բացուեց, և նա ոչինչ չլսեց։

Այդ րոպէին նա նստած էր սրահի հեռաւոր անկիւնում։

Յանկարծ քայլերի հնչիւն դիպաւ նրա ականջին։

—Վերջապէս Իրասը գալիս է,—մտածեց նա ուրախ սրտով և ոտքի ելաւ։

Քայլերը ծանր էին և փայտէ կոպիտ սանդալների շաչիւն էին հանում։ Բէն Հուրի և դռան միջև կանգնած էին ոսկեզօծ սիւներ. նա սիւներից մէկին յենուեց և խօսակցութեան ձայներ լսեց... տղամարդկանց ձայներ էին—մէկը խռպոտ։ Ի՞նչ էին ասում խօսողները, չհասկացաւ. նրանց լեզուն ոչ հարաւային, ոչ էլ արեւելեան Եւրոպայի լեզու էր։

Եկւորները սրահն աչքի անցնելուց յետոյ՝ դէպի ձախ դարձան և Բէն Հուրի տեսութեան շրջանը մտան։ Երկու հոգի էին—երկուսն էլ պարեգօտ հագած, երկուսն էլ բարձրահասակ, բայց մէկը միւսից պնդակազմ։ Տանուիրոջ և կամ ծառայի նմանութիւն չունէին։ Ամեն բան զարմացնում էր նրանց. ինչ էլ տեսնէին՝ շօշափում էին։ Գեհենիկներ էին։ Նրանց այցելութիւնից ատրիումը կարծես պղծւում էր։ Մի և նոյն ժամանակ նրանց հանդարտ քայլերը և վստահութիւնը տեղիք էին տալիս ենթադրելու, թէ մի որ և է պաշտօն ունին կամ անելիք։ Սակայն ինչ անելիք և ո՛ւմ դէմ...

Իրար հետ զրուցելով նրանք երկար թափառեցին սրահի մէջ և վերջապէս մօտեցան այն սիւնին, որի ետև Բէն Հուրը կանգնած սպասում էր։ Փոքր ինչ դէնը,



ուր լոյսի շեղ ճառագայթը շողալով ընկնում էր մուսիոնի յատակի վրայ, մի անդրի կաթ, որ նրանց ուշադրութիւնը գրաւեց։ Նրանք կանգ առան այդ անդրին դիտելու համար։

Պալատի գաղտնիքը նորից գրգռեց Բէն Հուրին, երբ նա տեսաւ, որ օտարականներից մէկն այն հուժկու նորմանն է, որին ճանաչում էր դեռ Հռոմից և որ մի օր առաջ կռփամարտի յաղթանակ էր տարել կրկէսում։ Այս վիթխարի մարդու սպիներով ու վէրքերով ծածկուած և վայրենի կրքերից բրտացած դէմքը, նրա մերկ անդաստիները և Հերկուլեան ուսերի լայնութիւնը բաւական էր տեսնել, որ Բէն Հուրն զգար, թէ իր կեանքը վտանգի մէջ է, և սարսափէր։ Մի ներքին ձայն նրան ասաց, թէ այս պալատում մարդ սպանելը հեշտ բան է. թէ այն երկուսի միասին գալը մի լոկ պատահման արդիւնք չէ... և թէ նրանք սպանութեան համար իր դէմ ուղարկուած սրիկաներ են։

Նա կասկածով նայեց նորմանի ընկերին, որ մի սևաչեայ, սևահեր և բուն հրէական դէմքով երիտասարդ էր, և նկատեց, որ երկուսն էլ կռուարանում գործածուող հագուստով են։ Այլ ևս տարակոյս չկար, որ նրան չար մտքով են պալատ որսացել... Նա պիտի մեռնէր այս հոյակապ ապարանքում զուրկ որ և է օգնութիւնից։

Մինչ Բէն Հուրը մոլորուած նայում էր մերթ մէկին, մերթ միւսին, նրա հոգու մէջ տեղի գտաւ այն հրաշքը, որի զօրութեամբ մեր կեանքն իր բոլոր մանրամասներով յանկարծ անցնում է մեր առջևից, իբրև մի ուրիշի կեանք։ Նա տեսաւ իր անցեալն և նրա խորքերը թափանցելիս ըմբռնեց, որ իր այժմեայ կեանքը շատ տարբեր է նախկինից. առաջ նա բռնութեան զոհ էր, իսկ այժմ ինքը զոհ պահանջող։ Դեռ երեկ էր, որ նա արդէն պատժեց մէկին։ Բուն քրիստոնեան այս դիպ-

ուածում խղճի խայթ կըզգար. բայց Բէն Հուրը անուած էր առաջին օրէնսդրի ուսմունքով, ոչ թէ երկրորդի և ամենից մեծի: Իր կարծիքով՝ նա իրաւամբ էր պատժել Մէսալային, այլ ոչ թէ անիրաւել նրա դէմ: Նա յաղթել էր Աստուծու կամքով: Այս հաւատի մէջ նա ջօրւթիւն գտաւ վտանգի ժամուն:

Նոր կեանքը մի առաքելութիւն երևաց նրան, մի սրբազան առաքելութիւն յոգուստ սպասուող թագաւորի, որին ծառայելու համար ներելի էր բռնութեան դիմել արդէն մի՛ակ այն պատճառով, որ ուրիշ կերպ վարուել չէր կարելի: Յանցանք չէր լինիլ երկիւղ զգալ մի այսպիսի առաքելութեան հէնց սկզբում:

Հոգուով ու մարմնով զօրացած՝ նա գօտին արձակեց, գլուխը մերկացրեց, իր հրէական սպիտակ թիկնոցը դէն ձգեց և մի՛այն պարեգօտը մարմնի վրայ թողնելով, անվեհեր յառաջ անցաւ: Այնուհետև մէջքը սիւնին դէմ տալով՝ բազուկները կրծքի վրայ խաչեց և սկսեց հանգիստ սպասել:

Անդրիի զննութիւնն աւարտելուց յետոյ Նորմանը շուռ եկաւ և մի բան ասաց ընկերին. յետոյ երկուսն էլ Բէն Հուրի կողմը մտիկ տուին և վերջապէս մօտեցան:

—Ովքե՞ր էք դուք,—հարցրեց Բէն Հուրը լատիներէն:

Նորմանը ժպտաց և վայրագաբար պատասխանեց.

—Բարբարոսներ:

—Սա Իդերնէի ապարանքն է: Դուք ո՞ւմ էք փընտրում այստեղ: Կացէք և պատասխան տուէք:

Այս խօսքերը Բէն Հուրը սաստկութեամբ արտասանեց: Մարդիկ կանգ առան և Նորմանն իր կողմից հարցում արաւ.

—Իսկ դու ո՞վ ես:



—Հռոմայեցի:

Վիթխարին գլուխը թօթուեց:

—Հա, հա, հա: Լսած եմ, որ մի օր աղ լիզող կովից աստուած է ծնուել. բայց որ հրէան կարողանար հռոմայեցի դառնալ—այդ դեռ երբէք չէի լսած:

Ծիծաղելուց յետոյ նա դարձեալ խօսեց ընկերի հետ, և նրանք և՛ս աւելի մօտեցան:

—Կացէք,—ասաց Բէն Հուրը, նրանց դէմ գնալով:—Էլի մի խօսք:

Մարդիկ նորից կանգնեցին:

—Միայն մի խօսք, ոչ աւելի—շեշտեց Նորմանը:—Ասա, լսեմ:

—Դու Թորդ անունով Նորմանն ես:

Հսկայի կապոյտ աչքերն ապշած մնացին:

—Դու կափամարտի վարժապետ էիր Հռոմում:

Նորմանը գլխով հաստատութեան նշան արաւ:

—Ես մի ժամանակ քո աշակերտներից մէկն եմ եղել:

—Ո՛չ,—ասաց Թորդը, իր գլուխը ցնցելով:—Իրմինի [1]) մօրուքը վկայ, ես երբէք կռուի արուեստում հրէայ աշակերտ չեմ վարժել:

—Բայց ես կապացուցանեմ, որ վարժել ես:

—Ի՞նչպէս:

—Դուք եկել էք ինձ սպանելու, չէ՞:

—Այո՛:

—Ուրեմն թո՛ղ ընկերդ մենակ դուրս գայ կռուելու, և ես խօսքերիս ուղիղ լինելը նրա մարմնի վրայ ցոյց կըտամ քեզ:

Նորմանի երեսի վրայ ժպիտ խաղաց: Նա մի

---

[1]) Հին գերմանացոց Թօռ աստուծու մի ուրիշ անունն է, որ նշանակում է ընդհանուր, ամենակալ:

բան շշնջաց ընկերին և այնուհետև մի զուարճացող երեխայի միամտութեամբ ասաց.

—Կաց և սպասիր, մինչև որ սկսելու նշան տամ։

Նա ոտքի շարժումով մի փորդ վայր քաշեց բազմոցից, ոտքով էլ փռեց յատակի վրայ և իր ստուար մարմնով վրան հանգիստ պառկելուց յետոյ՝ պարզ հրամայեց.

—Այժմ սկսեցէք։

Բէն Հուրն իսկոյն ոտնթին դիմեց, ասելով.

—Լաւ պաշտպանուիր։

Մարդը ձեռքերը բարձրացրեց։

Մինչ երկուսը դէմ ու դէմ էին կանգնած, մի նշմարելի տարբերութիւն չէր երևում նրանց միջև. ընդհակառակն՝ նրանք եղբայրների պէս իրար նման էին։ Օտարականի անձնավստահ ժպտի հանդէպ Բէն Հուրը մի այնպիսի հանդարտութիւն էր ցոյց տալիս, որ ոտնթին վտանգաւոր կը թուէր, եթէ վերջինս նրա ճարպիկութիւնը ճանաչէր։

Բէն Հուրը մի չարձակման շարժում կեղծեց աջ ձեռքով։ Հակառակորդը թեթևակի ձախ բազուկը մեկնեց նրա դէմ։ Մինչ նա ուզում էր նորից սպասողի դիրք ընդունել, Բէն Հուրը բազմամեայ թիարկութեան մէջ երկաթի պէս ամրացած ձեռքով արագ բռնեց նրա դաստակից։ Այս գործողութիւնը կատարեալ էր, յանկարծահաս։ Նոյն ակնթարթին մարդու վրայ ընկնելը, նրա բազուկը կոկորդի վրայով աջ ուսը ճնշելը և այսպիսով նրա ձախ կողքը դէպի առաջ դարձնելը և իր ազատ ձախ կռուփով նրա ականջի տակից մեկ վզին զարնելը—միևնոյն գործողութեան մէյ՛ն զանազան մասերն էին։ Երկրորդ հարուածի կարիք չկար։ Մարդն ընկաւ առանց մի ձայն հանելու և անշարժ մնաց։



Բէն Հուրը դարձաւ Թորդին։

—Չ՞ը։ Այդ ինչ էր։ Իրմինի մօրուքը վկայ,—աղաղակեց զարմանալով նորմանը և նստեց։ Յետոյ ծիծաղեց։

—Հա, հա, հա։ Ես ինքս այդ բանը քեզնից լաւ չէի անիլ։

Նա ոտքից մինչև գլուխը սառն աչքով չափեց Բէն Հուրին, յետոյ վերկացաւ և սկսեց հիացմամբ դիտել նրան։

—Այդ իմ հնարքն էր... այն հնարքը, որ տասը տարի գործ եմ դրել Հռոմի մեծ կռուարանում։ Դու հրէայ չես։ Ո՞վ ես դու։

—Դու ճանաչո՞ւմ էիր Արիուս երկապետին։

—Կուինտուս Արիուսի՞ն։ Այո՛, նա իմ պաշտպանն էր։

—Նա մի որդի ունէր, չէ՞։

—Այո՛,—ասաց Թորդը, և նրա ջարդուած դէմքի գծերը կարծես փոքր ինչ զուարթացան։—Ճանաչում էի այն տղային. կարող էր մի լաւ ըմբիշ դառնալ։ Կայսրը նրան օգնութիւն էր խոստացել։ Ես էի նրան սովորեցրել այն հնարքը, որ դու սրա վրայ գործ դրիր,—մի հնարք, որ մէյ՛ն իմ աշակերտը կարող էր բանեցնել։ Նա ինձ համար շատ մրցանակներ գրաւեց։

—Ես եմ Արիուսի այն որդին։

Թորդը մի երկու քայլ մօտենալով Բէն Հուրին, աւելի սուր դիտեց նրան։ Նրա աչքերը մի իսկական ուրախութեամբ վառուեցին, և նա ձեռքերը մեկնելով ծիծաղեց։

—Հա, հա, հա։ Ասել էր, թէ մի հրէայ կը գտնեմ այստեղ... մի հրէայ... մի շուն հրէայ, որին սպանելն աստուածներին հաճելի գործ կը լինէր։

—Ո՞վ էր ասել,—հարցրեց Բէն Հուրը և մարդու ձեռքը բռնեց։

—Նա... Մէսալան... Հա, հա, հա։

—Ե՞րբ, Թորդ։

—Անցած գիշեր։

—Ես կարծում էի, թէ նա ջարդուած է։

—Եւ այնպէս ջարդուած, որ էլ տեղից չի վերկենալ։ Նա ինքն ինձ այդպէս ասաց, իր անկողնում տնքալով։

Մէսալայի ոխն ակներև յայտնուեց Բէն Հուրին։ Այս հռոմայեցին մինչև վերջը պիտի հալածէր նրան և աշխատէր իր կործանուած կեանքը մեայն վրէժխնդրութեամբ քաղցրացնել. և այս պատճառով էր նա ղանում կորցրած գրաւը Սանբալատին վճարել։ Բէն Հուրը տեսաւ, թէ քանի՜ տեսակ հնարներ ունի թշնամին ձլասելու նրան այն գործում, որ սկսուած էր գալոց թագաւորին օգնելու համար։ Ինչո՞ւ ինքն էլ հռոմայեցու բանեցրած հնարներին չդիմէր... Սպանութեան համար վարձուած մարդը կարող էր վարձուիլ և առաջին վարձողին սպանելու համար։ Բէն Հուրը կարող էր աւելի մեծ գին վճարել նրան։ Փորձութիւնը սաստիկ էր և նա պատրաստ տեղի տալու. բայց նա յանկարծ մտիկ տուաւ դիտապատ ըմբշին, որի դէմքն այնքան իրենին նման էր, և դառնալով Թորդին ասաց.

—Թորդ, ինձ սպանելու համար Մէսալան որքան պիտի տար քեզ։

—Մի հազար սեստերց։

—Այդ հազարը դու ինձնից կըստանաս, և եթէ անես, ինչ որ կասեմ, այդ գումարից դատ ես քեզ էլի երեք հազար կըվճարեմ։

Հսկան սկսեց ձայնով հաշուել։

—Երեկ ես տարայ հինգ հազար. հռոմայեցուց էլ մէկ հազար—վեց հազար։ Տուր ինձ չորս հազար, բարի Արիուս... մինայն չորս հազար... և ես քո մարդը կը



դառնամ, եթէ Թօռ աստուածը մուրճով էլ գլխիս խփելու լինի։ Չորս արա՛, և ես կըսպանեմ անկողնում ընկած հռոմայեցուն. բաւական է, որ նրա բերանը թաթովս ծածկեմ—այ այսպէ՛ս։

Եւ նա պատկերացրեց այդ գործողութիւնը, իր ձեռքով բերանը ճնշելով։

—Հասկանում եմ,—ասաց Բէն Հուրը։—Տասը հազար սեստերցը լաւ գումար է։ Այս գումարով դու Հռոմում մի գինետուն կըբանաս Մեծ կրկէսի մօտերքում և քէֆով կապրես, ինչպէս վայել է Հռոմի առաջին կոփամարտիկին։

Ըմբշի դէմքի սպիներն և՛ աւելի բորբոքուեցին զուարճութիւնից։

—Կըտամ չորս հազար,—շարունակեց Բէն Հուրը,—և այս չորս հազարի փոխարէն անելու գործդ արիւն չի թողնիլ ձեռքիդ վրայ։ Լսիր ինձ, Թորդ։ Այս ընկերդ ինձ նման չէ՞։

—Երկուսդ էլ միևնոյն ծառի խնձոր էք։

—Լաւ։ Եթէ ես սրա պարեգօտը հագնեմ, իմ շորերըն էլ իրեն հագցնեմ, և յետոյ ես ու դու միասին դուրս գնանք այս պալատից, մի՞թէ սեստերցներդ լրիւ չես ստանալ Մէսալայից։ Կարժէ միայն, որ ասես նրան, թէ ես արդէն սպանուած եմ։

Թորդն այնպէս ծիծաղեց, որ այտերն արտասուքով թրջուեցին։

—Հա, հա, հա։ Դեռ ոչ ոք այսպէս հեշտ չէր վաստակել տասն հազար։ Եւ մի գինետուն Մեծ կրկէսի մօտերքում... մի անարիւն գործի համար։ Հա, հա, հա։ Ձեռքդ տուր, ով որդիդ Արիուսի։ Այժմ յառաջ... Հա, հա, հա։ Եթէ մի օր Հռոմ գաս, չմոռանաս Թորդ Նորմանի գինետունը մտնել։ Երդւում եմ քեզ Իրմինի

մօրուքով, ես քեզ մի այնպիսի գինի խմացնեմ, որ նոյնիսկ կայսրի մառանում չճարուի։

Երկուսն էլ իրար ձեռք թօթուեցին և այնուհետև հագուստները փոխուեցին։ Բէն Հուրը խօսք տուաւ Թորդին մի մարդու ձեռքով գիշերուայ դէմ հասցնել նրան չորս հազար սեստերց։ Այս պայմանը դնելուց յետոյ հսկան հրեց մուտքի դուռը. դուռը բացուեց։ Նրանք դուրս եկան սրահից և մտան մի սենեակ, ուր Բէն Հուրը սպանուած ըմբշի շորերով իր հագուստը լրացրեց։ Օմփալուսում Թորդը և նա բաժանուեցին իրարից։

—Զմոռանաս, Արիուսի որդի, ասա, չմոռանաս Մեծ կրկէսի գինետունը։ Հա, հա, հա։ Իրմինի մօրուքը վկայ, դեռ ոչ ոք այսպէս հեշտ հարստութիւն չէր վաստակել։ Աստուածները քեզ պահապան։

Ամրիուսից դուրս գալիս Բէն Հուրը վերջին անգամ աչքի անցրեց հրէական հագուստով յատակի վրայ ընկած դիակը և գոհ մնաց—նմանութիւնը կատարեալ էր։—Եթէ Թորդը չմտանէ, նենգութիւնը յաւիտեան գաղտնի կը մնայ,—մտածեց նա։

* * *

Գիշերուայ ժամին Բէն Հուրը գնաց Սիմոնիդէսի մօտ և պատմեց նրան, ինչ որ պատահել էր Իդերնէի պալատում։ Վաճառականը որոշեց, որ մի քանի օրից յետոյ պաշտօնական խուզարկութիւն անել կըտայ Արիուսի որդու ձրտեղ լինելն իմանալու համար և այս նպատակով Մաքսէնտիուսի առենին անգամ հարցում կանէ։ Եւ եթէ գաղտնիքն այնուհետև էլ ծածուկ մնայ, ասել է թէ Մէսալան և Գրատուսը կըմիամտանան, ինչ Բէն Հուրը համարձակ կերթայ Երուսաղէմում իր անհետացած մօրն ու քրոջը որոնելու։



Մնաս բարովի ժամանակ Սիմոնիդէսը նստած էր տանիքի վրայ բազկաթոռում, ներքևի գետին նայելով։ Նա ջերմ գորովով և հայրաբար օրհնեց Բէն Հուրին։ Եսթերը մինչև սանդուղքը ճանապարհ դրաւ մեկնողին։

—Եթէ ես մօրս գտնեմ, Եսթեր, դու Երուսաղէմ կըգաս, նրա աղջիկը և Թիրզայի քոյրը կըլինիս։

Եւ այս ասելիս Բէն Հուրը համբուրեց Եսթերին։

Արդեօք այս համբոյրը միայն հրաժեշտի համբոյր էր...

Բէն Հուրն անցաւ գետից Իլդերիմի վերջին կայանի մօտով, ուր գտաւ այն արաբին, որ իր առաջնորդը պիտի լինէր։ Նժոյգները պատրաստ էին։

—Այս մէկը քոնն է,—ասաց արաբը։

Բէն Հուրը նայեց—նժոյգը Ալդէբարանն էր, Միրայի սրընթաց և ամենասիրուն զաւակը, Իլդերիմի պաշտած ձին։ Նա գիտէր, որ այս պարգևն անելով, Շեյխը նրան իր սիրտն է ընծայում։

Ամրիուսում մնացած մարմինը Մէսալան նոյն գիշերը այրել տուաւ և սուրհանդակ ուղարկեց Գրատուսին իմացնելու, թէ Բէն Հուրն սպանուած է, այս անգամ անտարակոյս սպանուած։

Շատ չանցած Հռոմի Մեծ կրկէսի մօտերքում մի գինետուն բացուեց, որի նշանակն էր՝

**ԹՈՐԴ ՆՈՐՄԱՆԸ։**

## ԺԱ։

### *Անտոնիայի քերդը*

Այն գիշերուանից, երբ Բէն Հուրն Անտիոքը թողեց՝ Իլդերիմի հետ դէպի անապատը քաշուելու համար, անցել է երեսուն օր։

Այդ միջոցին մի նշանաւոր դէպք պատահեց,— նշանաւոր գոնէ մեր հերոսի ճակատագրի նկատմամբ. Վալերիուս Գրատուսին յաջորդեց Պոնտացի Պիղատոս պրոկուրատորը:

Անցողակի ասենք, որ առաջնի պաշտօնից հեռացումը ճիշտ հինգ հռոմէական տարեդարձ նստեց Սիմոնիդէսին. այս գումարը ստացաւ Սէյանուսը, որ կայսրի յայտնի խորհրդականն էր: Ծերունի հրէան կամենում էր այս ազդեցիկ պետական մարդու միջնորդութեամբ դիւրութիւն ձեռք բերել Բէն Հուրի համար՝ անարգել որոնելու մօրն ու քրոջը Երուսաղէմի մէջ և շրջակայքում: Հաւատարիմ ծառան այս բարի նպատակով գործ դրաւ Դրուզուսից և նրա ընկերներից տարած գրաւները: Փողը վճարելուց յետոյ նրանք բոլորն էլ Մէսալայի թշնամիները դարձան, և Մէսալայի վարկը սաստիկ ընկաւ Հռոմում:

Գրատուսը նոր էր յետ կոչուել, բայց հրէաներն արդէն գիտէին, որ նրա յաջորդն աւելի լաւ չպիտի լինի իրենց համար:

Անտոնիայի բերդապահ զօրքը փոխելու համար նոր եկած կոհորտները պիշերուայ ժամին քաղաք մտան: Լուսանալուն պէս շրջակայ բնակիչները նոր նշաններ նշմարեցին պարսպի վրայ — կայսերական անդրիներ, շրջապատուած հռոմէական արծիւներով ու գնդերով: Գրգռուած բազմութիւնն անմիջապէս դեսպանութիւն ուղարկեց Պիղատոսի իջած տեղը՝ Կեսարիա —խնդրելու նրան, որ առելի նշանները վերցուին: Դեսպանները հինգ օր և հինգ գիշեր պալատի առջև խոնուած մնացին. վերջապէս կուսակալը պիջաւ հանդիպելու նրանց կրկէսում. և երբ նրանք հաւաքուեցին, բոլորին էլ պինուորներով շրջապատեց: Հրէանները դիմադրութիւն ցոյց տալու տեղ՝ իրենց կեանքն առա-



ջարկեցին և յաղթեցին: Պիղատոսը հրամայեց անդրիները, ու նշանները Կեսարիա յետ բերել, ուր իր նախորդը պահած էր նրանց տասնումէկ տարի:

Ամենաչար մարդն անգամ երբեմն անում է մի բարի գործ: Այսպէս և Պիղատոսն իր պաշտօնավարութեան հէնց սկզբին հրամայեց հետապօտել Հրէաստանի բանտերը և պատրաստել կալանաւորների ցուցակը, նշանակելով թէ ում ինչ յանցանքի համար է պատժուած: Սրանով նա կամենում էր միայն իր պարտքը կատարած լինել. սակայն ժողովուրդը, նոր հրամանից բարի արդիւնք սպասելով, լաւ մեկնութիւն տուաւ նրան և... գոնէ առ ժամանակ գոհ մնաց:

Խուզարկութիւնը զարմանալի բաներ մերկացրեց: Արձակուեցին հարիւրաւոր մարդիկ, որոնց դէմ ոչ մի ամբաստանութիւն չէր եղած. գտնուեցին և այնպիսիները, որոնք վաղուց ի վեր մեռած էին համարուած: Ամենից զարմանալին սակայն այս էր, որ մի քանի բանտեր երևան եկան, որոնց գոյութիւնը ոչ միայն ժողովրդին յայտնի չէր, այլև նոյնիսկ վարչութիւնից մոռացուած էր:

Դառնանք այդ բանտերից մէկին, որ գտնուում էր Երուսաղէմում:

Անտոնիայի բերդը բռնում էր Մորիան լերան երկու երրորդ մասն և մակեդոնացիներից կառուցուած մի ղեղակ էր: Յետոյ Յովհաննէս Հիրկանոսը տաճարը պաշտպանելու նպատակով ամրոցի փոխարկեց նրան, և այս ամրոցն անառիկ էր համարուում: Հերովդէսը նրա պարիսպներն ընդարձակեց և մէջը շինեց զինաբանններ, շտեմարաններ, ջրամբարներ և մանաւանդ բանտեր: Նա հրամայեց լերան ժայռը հարթել, մէջը փոսեր բանալ և կամարներով ծածկել: Այնուհետև այս բոլորը նա միացրեց տաճարի հետ մի հոյակապ սիւ-

նաշարքով, որի վրայից կարելի էր սրբավայրի բոլոր գաւիթներն աչքի անցնել: Այսպէս էր բերդը, երբ հռոմայեցիք նրան տիրեցին: Նոր տէրերը բերդի ամրութիւնն ըմբռնելով, փութացին իրենց նպատակները ծառայեցնել նրան: Գրատուսի ամբողջ վարչութեան միջոցին Անտոնիան պահապան զօրքով պաշտպանուած մի ամուր միջնաբերդ էր և ստորերկրեայ բանտերի տեղ: Վայ էր երկրին, երբ կոհորտները դուրս էին խուժում նրա դռներից օր և է ապստամբութիւն ընկճելու համար: Վայ էր այն հրէին, որ ներս էր տաբուում այդ դռներով բանտի զնդանը ձգուելու համար:

Այս բացատրութիւնից յետոյ դարձեալ գալիս ենք մեր պատմութեան:

Կալանաւորների նկատմամբ նոր պրոկուրատորի տուած հրամանը Անտոնիայի բերդին էլ հասաւ և իսկոյն սկսուեց գործադրուիլ. սակայն քննութիւնը երկու օր տևեց: Պրոկուրատորին ուղարկուելու պատրաստ ցուցակն արդէն սպասում էր բերդապահ տրիբունի ստորագրութեան, և հինգ րոպէից յետոյ պիտի ուղարկուէր Պիղատոսին, որ նստած էր Սիոնի վրայ գտնուող պալատում:

Տրիբունի սենեակն ընդարձակ և լուսաւոր է. կահ կարասին վայելուչ: Առաւօտեան եօթներորդ ժամին տրիբունն արդէն յոգնած է և մտադիր է տեղակապիրն ուղարկելուն պէս հանգստանալ. նրան են թափակայ ծառայողներն էլ անհամբեր սպասում են այդ րոպէին:

Վերջապէս մի մարդ է մտնում կողքի սենեակը: Նրա գոտուց կախ են ընկած տեսակ տեսակ բանալիներ. ամեն մէկը մի մուրճի չափ ծանր է: Նրանց շաչիւնն իսկոյն հասնում է մեծաւորի ականջին:



—Ա՜, Գէզիուս, նէրս եկ,—ասում է տրիբունը:

Մինչ հեւորը մօտենում է տրիբունին, ծառայողները դիտում են նրան և նրա վարանած դէմքը նկատելով լուռ մնում՝ լսելու համար, թէ ինչ կասէ:

—Ո՜վ տրիբուն,—ասաց մարդը դլխակոր,—վախենում եմ ասել ասելիքս:

—Դարձեա՛լ մի սխալ... հմ, Գէզիուս:

—Եթէ մի՛այն սխալ լինէր, ես այսքան վախ չէի զգալ:

—Ուրեմն յանցա՛նք... և կամ մի աւելի վատթար բան—պարտազանցութի՛ւն: Դու կարող ես ծաղրել կայսրին և կամ հեգնել աստուածներին, և դարձեալ կենդանի մնալ: Բայց եթէ արծիւներին անպատուես... ա՛հ, Գէզիուս: Այն ժամանակ դու գիտես... Շարունակի՛ր:

—Ահա ութ տարի է, ո՛վ տրիբուն, ինչ որ ես այս բերդի բանտապահն եմ Վալէրիուս Գրատուսի հրամանով,—ասաց մարդն զգուշութեամբ:—Դեռ չիշում եմ պաշտօն մտնելուս առաւօտը: Նախորդ օրն ապստամբութիւն ու կռիւ էր ծագել փողոցներում: Մենք շատ հրէաներ կոտորեցինք, բայց ինքներս էլ բաւական կորուստ կրեցինք: Ասացին, թէ գործն սկսուել է Գրատուսի դէմ եղած սպանութեան փորձի պատճառով. նրան վիրաւորել և ձիուց վայր էին ձգել կարից նետուած մի աղիւսով: Դէպքից յետոյ ես նրան տեսայ այդ սեղանի մօտ, ուր որ այժմ դու ես նստած, ո՛վ տրիբուն. նրա գլուխը երիզներով փաթաթուած էր: Այն ժամանակ նա յայտնեց ինձ նոր պաշտօնի կոչուիլս և տուաւ ինձ այս բանալիները, որոնք խցկրին համեմատ թուեր ունին: Նա ասաց, թէ սրանք իմ պաշտօնի նշաններն են, և պատուիրեց, որ երբէք ձեռքիցս բաց չթողնեմ: Սեղանի վրայ մի մագաղաթի

գլան էր դրուած։ Կանչելով ինձ սեղանի մօտ, նա բաց արաւ գլանը, որ ունէր երեք թերթ։—Սրանք խցերի մակարդակն են,—ասաց նա։—Այս թերթը ցոյց է տալիս վերին յարկի բաժանումները. այս երկրորդը՝ երկրորդ յարկի, այս երրորդը՝ երրորդի, որ ներքևն է։ Ահա բոլորն էլ քեզ եմ յանձնում։—Ես թերթերն ընդունեցի, և նա ասաց.—Այժմ բանալիները ու քարտէզները քո ձեռքին են. իսկոյն գնա խցերի հետ ծանօթացիր և ամեն բան աչքի անցրու։ Եթէ ուրևէ կալանաւորի ապահովութեան համար բան պէտք լինի, հրամայիր անել, ինչպէս որ ինքդ յարմար կըտեսնես, որովհետև այստեղ դու ես իմ ստորադրեալը—ուրիշ ոչ ոք։

—Ես գլուխ տուի և ուզում էի հեռանալ. նա յետ կանչեց։ —Ա՜հ, մոռացայ, ասաց նա։—Հապա տուր ներքևի յարկի քարտէզը։—Տուի։ Նա սեղանի վրայ փռեց թերթը և ասաց.—Տես, Գէզիուս, այս խուցը։—Այս ասելով նա մատնացոյց արաւ V խուցը։—Այստեղ փակուած են երեք յանդուգն էակներ, որոնք մի պետական գաղտնիք էին ձեռք բերել և այժմ իրենց հեռաքրքրութեան համար տուժելու վրայ են։—Նա խստիւ վրաս նայեց և շարունակեց.—Այսպիսի բաներով հետաքրքրուիլը ոճիր գործելուց վատթար է։ Այս է պատճառը, որ օրէնքը նրանց կուրացրեց, լեզուները կտրեց և ցկեանս այդ գնդանը ձգեց նրանց։ Սնունդն ու ջուրը նրանք պիտի մի ծակի միջով ստանան։ Այդ ծակը դու կըգտնես. նա ծածկուած է մի շարժական արգելակով։ Լսո՞ւմ ես, Գէզիուս։—Այո, տէր, ասացի ես։—Լաւ ուրեմն,—շարունակեց նա և սպառնալով նայեց աչքերիս։—Զմոռանաս էլի մի բան. այս խցի դուռը... համար V խցի դուռը միւնոյն յարկում—նա մատը համարին դրաւ, որ լաւ նկատեմ—այս համար V խցի



դուռը ոչ մի դէպքում չպիտի բանաս, Գէզիուս։ Ո՛չ մի մարդ չպիտի մտնի այս դռնով, ոչ էլ դուրս գայ. անգամ դու ինքդ չպիտի մտնես։—Հապա եթէ մեռնի՞ն, հարցրի ես։—Եթէ մեռնեն, խուցը նրանց գերեզմանը կըլինի. հէնց դրա համար էլ այստեղ են ձգուած։ Խուցը բորոտութեամբ վարակուած է, իմացա՞ր։—Այս ասելով արձակեց ինձ։

Գէզիուսը լռեց և երեք հատ մագաղաթ հանեց պարեգօտի գրպանից—երեքն էլ դեղնած։ Մէկն ընտրելով՝ սեղանի վրայ փռեց տրիբունի առջև և ասաց.

—Ահա այս է ներքևի յարկը։

Բոլոր ներկայ եղողները հետևեալ մակարդակին մոտիկ տուին.

| Անցք | | | | Սանդուղք |
|---|---|---|---|---|
| V | IV | III | II | I |

—Ահա, տրիբուն, ճիշտ այսպէս եմ ստացել Գրատուսից։ Տես, ա՛ն համար V խուցը,—բացատրեց Գէզիուսը։

—Տեսնում եմ,—ասաց տրիբունը։—Շարունակի՛ր։ Խուցը բորոտուած էր նրա ասելով, չէ՞։

—Այո՛, բայց կուզենայի մի բան հարցնել,—նկատեց բանտապահը խոնարհաբար։

Տրիբունը հաւանութեան նշան տուաւ։

—Արդեօք ես իրաւունք չունէի՞ ստոյգ համարելու այս քարտէզը։

—Հարկաւ ունէիր։

—Բայց տեսէք որ ստոյգ չէ։

Տրիբունը զարմանալով վերև նայեց։

—Ստույգ չէ, կեղծ է,—կրկնեց բանտապահը — Սա ցոյց է տալիս միայն հինգ խուց, այն ինչ իրօք վեց հատ են։

—Վե՞ց։

—Ես կը գծեմ յարկի դիրքը, ինչպէս որ նա է իմ կարծիքով։

Գէզիուսը հետևեալ ձևը նկարեց քարէտախտակի վրայ և ցոյց տուաւ տրիբունին.

| Ա. ն ց ք | | | | Սանդուղք |
|---|---|---|---|---|
| V | IV | III | II | I |
| VI | | | | |

—Լաւ գծեցիր,—ասաց տրիբունը, նկարն աչքի անցնելով, և կարծեց թէ պատմութիւնն արդէն վերջացել է։—Ես կը հրամայեմ փոխել մակարդակը և կամ մի նորը գծել կըտամ։ Վաղը կըստանաս։

Ասաց և վերկացաւ։

—Ես էլի մի ասելիք ունիմ, ով տրիբուն։

—Վաղուան թող, Գէզիուս։ Վաղը կասես։

—Բայց ասելիքս յետաձգելու բան չէ, տէր։

Տրիբունը նորից նստեց։

—Ասելիքս կարճ կըկարեմ,—ասաց խոնարհ բանտապահը,—միայն թոյլ տուր, որ դարձեալ մի հարցում անեմ։ Իրաւունք չունէի՞ հաւատալու Գրատուսին, որ ասել էր թէ երեք կալանաւոր կայ հարար V խցի մէջ։

—Անշուշտ ունէիր։ Քո պարտքն էր հաւատալ, որ V-ը համարում երեք կալանաւոր կայ... երեք պետական յանցաւոր—կոյր և անլեզու։



—Բայց այդ էլ անստոյգ դուրս եկաւ,—ասաց բանտապահը։

—Մի՛թէ,—գոչեց տրիբունը սաստկացող հետաքրքրութեամբ։

—Լսի՛ր, տրիբուն, և ինքդ դատիր։ Պարտաւորութեանս համեմատ ես բոլոր խուցերն աչքի անցրի, սկսելով վերին յարկից։ Մինչև երեկ ճշտութեամբ կատարուած է V-րդ խուցը չբանալու պատուէրը. ամբողջ ութ տարի ոչ ոք այնտեղ ոտք չէ դրել և պատի ծակից է սնունդ տրուել երեքին։ Բայց երեկ դռան մօտով անցնելիս կամեցայ տեսնել խելքերին, որոնք այնքան տարի կենդանի էին մնացել ամեն ակնկալութեան հակառակ։ Փականքն ընդդիմացաւ բանալիին։ Մենք փոքր ինչ հրեցինք, և դուռն ինքն իրեն ընկաւ արդէն ժանգոտած ծղնիներից... Ես ներս մտայ և գտայ միայն մի մարդ... մի անլեզու, կոյր և մերկ ծերունի։ Նրա մազերը կոշտ փնջերով կախ էին ընկած ուսերի և կըրծքի վրայ. կաշի չէր՝ մագաղաթ էր։ Նա ձեռքերը մեկնեց. եղունգները ճանկերի պէս էին։ Հարցրի նրան, թէ ո՞րտեղ են իր թշուառութեան ընկերները։ Մարդը բացասաբար գլուխը թօթուեց։ Մենք խուցը հետազոտեցինք, բայց մի ուրիշ մարդ չգտանք... Յատակն ու պատերը չոր էին։ Եթէ երկուսն այնտեղ մեռած լինէին, գոնէ նրանց ոսկորները կըգտնէինք։

—Ուրեմն կարծում ես, թէ...

—Կարծում եմ, ով տրիբուն, որ ամբողջ ութ տարուայ ընթացքում միայն մի կալանաւոր է եղել այնտեղ։

Տրիբունը սուր սուր նայեց բանտապահին և ասաց.

—Զգուշացի՛ր. քո ասելով պրոկուրատորը ստահօն է։

Դէզիուսը գլուխը քաշ արաւ և խոնարհաբար պատասխանեց.

—Գուցէ սխալուած էր Գրատուսը։

—Բնաւ ոչ,—ասաց տրիբունը եռանդով։—Դու ինքդ չասացիր, թէ ութ տարի անունդ էր տալում երիք մարդու։

Ունկնդիրները հաւանութիւն տուին իրենց մեծատորի նրբամտութեան. բայց Դէզիուսը յաղթահարուած չէր թուում։

—Պատմութեան մի՛այն կէսը լսեցիր դու, ով տրիբուն,—շարունակեց նա։—Միւս կէսն էլ որ լսես, ասածս ուղիղ կը գտնես։ Աւդէն գիտես, թէ ինչ արի այն մարդուն. հրամայեցի բաղանիք տանել նրան, մազերը խուզել, հագցնել. յետոյ ես ինքս բերդի դռնից դուրս տարայ նրան և թողի որ ուր կամենայ գնայ։ Այսօր նա յանկարծ յետ եկաւ և աղերսական շարժուձևերով հասկացրեց, թէ կըցանկար իր խուզը վերադառնալ. կատարեցի նրա կամքը։ Մինչ մեր սպասաւորները նրան խուզը տանելու վրայ էին, նա առջևս չոքեց և ոտքերս համբուրելով խնացրեց, որ ես էլ իրեն ուղեկցեմ։ Գնացի։ Երիք անձի գաղտնիքը հանգստութիւն չէր տալիս ինձ։ Լաւ արի որ գնացի. այժմ գոհ եմ։

Հասարակութիւնը խորին լռութեամբ ականջ էր դնում այս պատմութեան։

—Երբ մենք խուզը մտանք, կալանաւորն իսկոյն ձեռքիցս բռնեց և տարաւ ինձ մի ծակի մօտ, որ ես երեկ չէի նկատել։ Ծերունին, առանց ձեռքս բաց թողնելու, իր երեսը ծակին դրաւ և մի անասնական ձայն հանեց։ Ես ապշեցի և նրան յետ քաշեցի։ Յետոյ ինքս մի մօտեցայ ծակին և գոչեցի.—Ո՞վ կայ այդտեղ։ Ոչ մի պատասխան։ Նորից գոչեցի, և—փառք քեզ, Տէր—լսեցի ձայնը կանացի էր։ Ես հարցրի.—Ո՞վ ես դու։ Պատասխանն էր.—Մի իսրայէլացի կին՝ կենդանի թաղուած իր աղջկայ հետ։ Շուտ օգնիր մեզ. ահա մեռնում ենք։—Ես սիրտ տուի նրանց և վազելով եկայ, որ կամքդ իմանամ։

Տրիբունն արագ ոտքի ելաւ։

—Ասածդ ուղիղ էր, Դէզիուս,—նկատեց նա,—և այժմ բանը պարզուում է։ Մակարդակը շինծու է և երիք մարդու պատմութիւնը՝ ստութիւն։ Լաւ հռոմայեցի չեմ անուանիլ Վալէրիուս Գրատուսին։

—Այո՛,—ասաց բանտապահը։—Կալանաւորի շարժուձևերից իմացայ, որ նա իր ստացած հացով ու ջրով միշտ կերակրել է այն կանանց։

—Բանը պարզուած է,—վճռեց տրիբունը, ստորադրեալներին նայելով,—և ես գոհ եմ, որ դուք վկայ էք։ Այժմ գնանք փրկելու կանանց։ Բոլորդ էլ եկէք։

—Պէտք կըլինի պատը քանդել,—ասաց բանտապահը գոհութեամբ։—Ես թէև հին դռան տեղը գտել եմ, բայց նա ամուր կապուած է քարերով ու շաղախով։

Տրիբունի հրամանով զրագիրներից մէկն իսկոյն գնաց բանուորներ և գործիքներ բերելու։

—Շտապի՛ր,—ասաց նրան տրիբունը,—իսկ տեղեկագիրը թող մօտդ մնայ. անհրաժեշտ է փոխել նրան։

Եւ ապա թէ բոլորը միասին հեռացան։

## ԺԸ.

### *Ուրուկները*

«Մի իսրայէլացի կին՝ կենդանի թաղուած իր աղջկայ հետ։ Շուտ օգնիր մեզ. ահա մեռնում ենք»։

Այս էր Դէզիուս բանտապահի լսած պատասխանը,

որ ստացել էր իր հաշուով VI համարուելու արգելանից։ Ընթերցողն անշուշտ իմացաւ, թէ ովքեր են նրա մէջ փակուած թշուառները, և ասաց ինքն իրեն.—Բէն Հուրի մայրը և քոյրը վերջապէս գտնուեցին։

Եւ այդպէս էր։

Ութ տարի առաջ, նրանց բռնուելու առաւօտեան, Գրատուսի հրամանով երկուսն էլ ձգուած էին Անտոնիա բերդի ղնդանը, որպէսզի այնտեղ ոչնչանան։ Գրատուսն ընտրել էր այս բերդը, որովհետև սա իր անմիջական իշխանութեան ներքոյ էր. իսկ յատկապէս VI համար խուցն ընտրելու պատճառն այն էր, որ նա կարող էր միւսներից հեշտ մոռացութեան մատնուիլ, և երկրորդ՝ նա բորոտուած էր։ Գրատուսը կամենում էր, որ բռնուած թշուառները ոչ միայն մի ապահով, այլև մահարեր տեղ փակուած լինին։ Նրանք բանտ էին տարուած ստրուկների ձեռքով գիշերուայ ժամին, երբ վկաներից երկիւղ չկար. և նոյն ստրուկներն իրենց դաժան գործը լրացնելու համար պատ էին քաշել խցի դռան մէջ. այնուհետև այդ ստրուկներին բաժանել էին իրարուց և այնպիսի տեղեր հեռացրել, որ հեռքերն անգամ չքանային։ Գրատուսը լաւ էր համարել՝ թէև յամր, բայց բնական մահով բնաջինջ անել իր զոհերին, որպէս զի իր անիրաւութիւնը բացուելու դէպքում նրանով իրեն արդարացնէ, թէ չէր կամեցել սպանել նրանց, այլ միայն պատժել։ Այս հաշուով նա գտել էր մի կուրացուած և լեզուահատ կալանաւոր և ձգելով նրան կանանց գբին միակ յարակից ղնդանը, պարտաւորել էր երկուսին էլ անունդ և ջուր հասցնել։ Այս խեղճին հրամայուած էր՝ ոչ մի կերպով երևան չհանել եղելութիւնը և չյայտնել ովքեր են նրանք և կամ ով է նրանց բանտարկողը։ Այսպէս ահա հռոմայեցին, մասամբ մէնաալայի չար խորհրդով, ճանապարհ էր հարթել բէն



Հուրի ստացուածքը գրաւելու, որի մի մասնիկն անգամ չէր հասել կայսերական գանձարանին։

Գրատուսն իր ծրագրի վերջին կէտն էլ գլուխ բերելու համար անմիջապէս հեռացրել էր բանտի հին պահապանին. այս մարդը թէև անտեղեակ էր եղելութեան, բայց լաւ գիտէր ստորին յարկի կազմութիւնը և մի օր կարող էր կալանաւորների այնտեղ լինելն իմանալ... Այնուհետև պրոկուրատորը մեծ՝ վարպետութեամբ նկարել էր մի նոր քարտէզ, որի վրայ VI խուցը, ինչպէս տեսանք, չէր գծուած, և տուել այն քարտէզը նոր կարգուած բանտապահին։ Այս կրճատուած անելով և խցի մէջ ոտք չդնելու հրաման տալով բանտապահին, Գրատուսն աւարտած էր համարել իր գործը. խուցը և նրա թշուառ բնակիչները համարեա թէ կորած էին...

Բէն Հուրի մօր և քրոջ այս ութ տարում կրած վշտերը փոքր ի շատէ հասկանալու համար՝ բաւական չէ միայն նրանց բանտարկութեան պարագաները իմանալ, այլև պէտք է նրանց կրթութեան չափը, նրանց ոգին և զգայութիւնը ճանաչել։ Այս նպատակով էր, որ մենք սոյն պատմութեան առաջին մասում Բէն Հուրի պալատը և կարի ընտանեկան տեսարանը նկարագրեցինք։ Այն ժամանակուայ հանգիստ, ախորժելի, երջանիկ կեանքը մի կողմից և չարչարանքը Անտոնիա բերդի մութ ղնդանում միւս կողմից—որքան իրարուց տարբեր բաներ։

Համար VI խուցը Գէդիւսի գծած դիրքն ունէր։ Նրա մեծութիւնը որոշել դժուար էր. բաւական է ասել, որ նա մի ընդարձակ աքրգելան էր հաստ որմերով և կոշտ ու կոպիտ յատակով։ Արտաքին որմի փոքրիկ ու միակ պատուհանից շատ սակաւ օդ էր իջնում, սակաւ

էլ ցերեկուայ լոյս, որ հազիւ էր փարատում ներսի խաւարը։

Արդ՝ չարաբաւես, ընթերցող։ V-րդ խուցից նոր ազատուած կոյր ու չամրի պատկերը յիշելով, պատրաստուիր այժմ գալիք արհաւիրքը տեսնելու։

Լուսամտի տակ իրար մօտ տեսնում ենք երկու կին—մէկը նստած, միւսը գլխով նրան յենուած։ Նրանց տակը մերկ յատակի վրայ ոչ մի բան չէ փռուած։ Վերևից առ շեղ ընկնող լոյսի նշոյլը մի ահռելի տեսարան է պատկերացնում մեր առջև, և սոսկալով նշմարում ենք, որ երկու կանայքն էլ մերկ են։ Բայց նրանց մէջ դեռ սիրտ և սէր կայ, որովհետև երկուսն էլ իրար ամուր գրկած են... Հարստութիւնը չքանում է, նիւթական բարիքը ցնդում է, սէրն է միայն յարատևում. Աստուած սէր է։

Այս երկուսի բռնած տեղի քարէ յատակը բոլորովին յղկուած է. ոմ կարող է ասել, թէ ութ տարուայ ընթացքում որքան ժամեր են անցրել նրանք յատակի վրայ, փրկութեան յոյս սպասելով այն մռայլ, կենարար նշուլից... Սրա ներս սահիլը նրանց համար նշան էր, թէ առաւօտը ծագել է. անհետանալը նշան էր, թէ պիշեր է իջնում աշխարհի վրայ, գիշեր, որ ոչ մի տեղ այնպէս երկար ու խաւար չէր, ինչպէս որ նրանց զնդանում։ Որմի ճեղքը մի արքայական լայն դուռն էր նրանց համար... Այս ճեղքից նրանք մտքով դուրս էին սլանում դէպի աշխարհ և ոգիների պէս թափառում, որոնելով ու հարցնելով—մէկը որդուն, միւսը եղբօրը։ Որոնում էին նրան ծովերի վրայ, կղզիների վրայ։ այս ինչ օր մի քաղաքում, վաղը միւսում. և ամեն տեղ ամեն ժամանակ նա մի անցաւոր ճանապարհ էր, որովհետև ինչպէս որ իրենք նրան, այնպէս էլ նա էր անշուշտ իրենց որոնում։ Այս անվերջ որոնման մէջ որքան



էին իրար հանդիպում նրանց մտքերը։ Որքան քաղցր էր կանանց սրտին ասել իրար.—Քանի որ նա կենդանի է, մենք մոռացուած չենք. քանի որ նա մեզ յիշում է, դեռ յոյս կայ։

Մտաբերելով այս երկու էակի նախկին վիճակը և պատկառելով նրանց վշտերի սրբութիւնից, չենք վստահանում մօտենալ նրանց, բայց և այնպէս նկատում ենք, որ նրանք սաստիկ փոխուել են։ Մի քանի ժամանակից և կամ բանտում երկար ճնալուց չէր կարող այսպիսի փոփոխութիւն յառաջ գալ... Մայրն առաջ մի գեղեցիկ կին էր, աղջիկը մի չքնաղ մանուկ։ Այժմ սէրն անգամ կըհրաժարուէր նոյնն ասել նրանց մասին, Նրանց մազերը երկայն են, խառն և արտաքոյ կարգի սպիտակ. նրանց պատկերը մի ակամայ պժգանք է պղպում...Այս ցաւագար գոյնը թերևս տակաւ լոյսի և կամ թէ նեխուած օդի հետևանք է... Գուցէ նրանք չարչարուում են անօթի ու ծարաւ լինելուց. չէ՞ որ կոյրի արձակուելուց, այսինքն երեկուանից ի վեր բան չեն կերել և չեն խմել։

Թիրզան մօրը սեղմուելով աղիողորմ հնձում է։

—Հանդարտ, Թիրզա։ Կըդան, կըդան։ Աստուած ողորմած է։ Մենք նրան միշտ յիշել ենք և ամեն անգամ տաճարի փողը հնչելուն պէս աղօթել ենք դէպի Նա։ Ճառագայթը ցոյց է տալիս, որ դեռ ցերեկ է. արևն այժմ հարաւային երկնքի վրայ է, և ժամը հազիւ թէ հօթը լինի։ Շուտով մեզ մօտ։ Հաւատանք։ Աստուած բարի է։

Այսպէս մայրը։ Նրա յուսադրանքը ղուր չանցաւ, թէև Թիրզան այժմ տասներեքամեայ մանուկ չէր, ինչպէս որ տեսել էինք նրան ութ տարի առաջ։

—Ես կաշխատեմ, մայրիկ, ամուր լինել,—ասաց Նա։—Տեսնում եմ, դու էլ ինձ նման տանջւում ես։

Քեզ և եղբօրս համար կըցանկայի ապրել. բայց լեզուս պապակւում է, շուրթերս չորացել են: Ո՜հ, ո՞րտեղ է նա և արդեօք երբ և իցէ կըգտնէ՞ մեզ:

Երկուսի ձայնն էլ մի անբնական, սուր ու չոր, մետալական հնչիւն ունէր:

Ե՛ւս աւելի իր կրծքին սեղմելով աղջկանը, մայրն ասում է.

—Անցեալ գիշեր երազումս տեսայ նրան, և այնպէս որոշ, ինչպէս ահա քեզ եմ տեսնում, սիրելի Թիրզա: Մեր հայրերը հաւատում էին երազներին, մենք էլ պիտի հաւատանք. շատ անգամ Աստուած երազներով է խօսել նրանց հետ: Ինձ թւում էր, թէ կանգնած ենք տաճարի մէջ, կանանց գաւթում, Գեղեցիկ կոչուած դռան առջև: Ուրիշ կանայք էլ կային այնտեղ: Նա եկաւ և դռան սուեղի մէջ կանգնելով, սկսեց դէս ու դէն նայել. մերթ մի կնոջ, մերթ միւսին: Սիրտս թնդաց: Անշուշտ մեզ էր որոնում. ես թևերս մեկնեցի, վազելով նրան մօտեցայ, անունը տուի: Նա ինձ տեսաւ և լսեց, բայց չճանաչեց: Հետևեալ վայրկենին անհետացաւ:

—Արդեօք այդպէս չի՞ լինիլ, եթէ իրօք էլ պատահենք նրան. չէ՞ որ այնքան փոխուած ենք:

—Հաւանական է, բայց...—Մօր գլուխը կախւում է, երեսը ցաւով կծկւում. բայց նա զսպում է ինքն իրեն և շարունակում.—Միթէ չի՞նք կարող մի նշան տալ, որով նա մեզ ճանաչէր:

Թիրզան նորից հառաչեց.—Ջուր, մայրիկ, մի կաթիլ ջուր:

Մայրը յուսահատ շուրջը նայեց: Այնքան շատ էր Աստուծուն կանչել, այնքան շատ էր նրա անունով խոստումներ արել, որ արդէն սկսում էր ծաղրելի համարել կրկնութիւնը: Յանկարծ մի սուեղ է սահում



լուսամտի աղօտ նշուլի վրայով և նրան թւում է, թէ մահն արդէն հասել է և միայն նրա հաւատի սպառուելուն է սպասում, որպէսզի իսկոյն ներս մտնի... Գրեթէ անգիտակ իր ասածին, այլ լոկ մի բան ասելու համար, խեղճ մայրը դարձեալ կրկնում է.

—Համբերիր, Թիրզա: Կըգան, կըգան... ահա գրեթէ այստեղ են:

Կարծես թէ նա մի ձայն լսեց պատի ծակից, որ միակ միջոցն էր նրանց հաղորդակցութեան աշխարհի հետ... Եւ իրօք մի վայրկեան յետոյ կոյր յանցաւորի մռնչիւնը լսելի եղաւ: Այս ձայնը Թիրզան էր լսեց: Մայր և աղջիկ ոտքի ելան իրար գրկած:

—Օրհնեա՛լ է Աստուած,—գոչեց մայրը նոր հաւատով և յուսով:

—Ո՞վ է այդտեղ,—լսեցին նրանք, և վոքը ինչ յետոյ.—Ովքե՞ր էք:

Ձայնը նրանց անծանօթ էր: Ի՞նչ փոյթ: Թիրզայի խօսքերից զատ՝ այս առաջին խօսքերն էին, որ մայրը լսում էր ութ տարուց ի վեր: Յեղաշրջումը սաստիկ էր... մահից դէպի կեանք—և այսպէս յանկարծահաս:

—Մի իսրայէլացի կին՝ կենդանի թաղուած իր աղջկայ հետ: Շուտ արա, օգնիր, մեռնում ենք:

—Հանդիստ եղէք, իսկոյնևեթ յետ կըգամ:

Կանայք հեկեկալով լաց եղան: Նրանք գտնուած էին. օգնութիւնը գալիս էր, ազատութիւնը ժպտում էր նրանց. տուն, հայրենիք, կարողութիւն, որդի և եղբայր—այս ամենը նորից պիտի ստանային... Մոռանալով ամեն ցաւ, քաղց ու ծարաւ, մահուան տագնապ, նրանք չօքեցին և խնդութիւնից լաց եղան մէկը միւսի գրկի մէջ:

Գէդիուսն իր զեկուցումն աւարտել էր: Տրիբունն արագ վրայ հասաւ:

—Ա՞յտեղ էք դուք,—գոչեց նա դէպի ներս։

—Այստեղ ենք,—ասաց մայրը դողալով։

Պատին ուժեղ մուրճի հարուածներ թնդացին։ Մայրը լուռ էր, Թիրզան լուռ։ Ներանք իմացան հարուածների իմաստը... ազատութեան դուռն էր բացւում նրանց համար...և սկսեցին ականջ դնել։ Այսպէս են ականջ դնում խոր բովքերում թաղուած մարդիկ ազատիչների մօտենալուն, նրանց բրիչների ու կռանների բախելուն, և սրտատրոփ մտիկ տալիս թնդիւնների հնչած կողմը, և չեն կարող ուրիշ կողմ նայել, վախենալով որ մի դուռեջ հարուածները դադարին և իրենք նորից յուսահատութեան մէջ ընկնեն։

Սակայն դրսի բազուկները հուժկու են, ձեռքերը վարժ, կամքը բարի։ Հարուածները հետզհետէ աստանում են. դրնդիւնով վայր է ընկնում մերթ մի կտոր, մերթ միւսը... ազատութիւնը մօտենում է։ Արդէն կարելի է բանուորների ձայնը լսել։ Մի րոպէ ևս —ոհ երջանկութիւն—և ահա ձեղքի միջով ջահերի կարմիր լոյս շողաց և ադամանդի պէս փալփլուն ճառագայթ ընկաւ խաւարի մէջ։

—Նա է, մայրիկ, նա։ Ահա վերջապէս մեզ գտաւ,—գոչեց Թիրզան իր հասակի դիւրաբորբոք եռանդով։

Սակայն մայրը հեզիկ ասաց.

—Աստուած բարի է։

Մի քար ընկաւ, դարձեալ մէկը, յետոյ մի շեղջ... և ահա դուռը բաց էր։ Ներս մտաւ կրի ու քարի փոշով ծածկուած մի ջահակիր մարդ և կանգ առաւ։ Նրան յաջորդեցին երկու-երեք ուրիշ մարդիկ, նոյնպէս ջահերով, և աջ ու ձախ տեղ բռնեցին՝ ճանապարհ տալու տրիբունին։ Կանանցից պատկառելը միայն մի աւանդական սովորոյթ չէ, այլ մարդկային բնութեան խորքից ծագող մի պահանջ։ Տրիբունը կանգնեց, սրովհետև



կանայք վախան ամօթից. բայց ոչ միայն ամօթից, ով ընթերցող։ Նրանց թաքնուած մութ անկիւնից տրիբունը լսեց մի կարճ բառ, որից աւելի վշտագին, աւելի ահեղ և աւելի վհատական բառ մարդկային լեզուն չէ ստեղծել։

—Մենք բորոտ ենք, մի մօտենար,—լսեց նա։

Մարդիկ ջահերը ցնցեցին և շուարած իրար մտիկ տուին։

—Բորոտ ենք, բորոտ,—հնչեց դարձեալ անկիւնից, իբրև մի աղէկէզ հեծեծանք։ Այսպէս հեծել կարող էր միայն դրախտից վռնդուած հրեշտակը։

Այսպէս կատարեց իր պարտքը բազմաչարչար այրին ու մայրը, նոյն րոպէին զգալով, որ իր տենչացած ազատութիւնը—հեռուից գրաւիչ և ոսկեփայլ—միայն Սոդոմի խնձոր էր [1]։

Նա ու Թիրզան բորոտ էին, ուրուվնե՛ր։

Թերևս ընթերցողին անյայտ լինի բորոտ բառի բուն իմաստը։ Ահա թէ ինչ է ասում բորոտութեան վերաբերեալ մի հին օրէնք, որ այսօր էլ դեռ զօրութիւն ունի Արևելքում.

«Մեռած պիտի համարուին այս չորսը—կոյրը, բորոտը, աղքատը և անօրէնը»։—Այսպէս է ասում Թալմուդը [2]։

Բորոտը մեռած էր համարւում. նրան դիակի պէս դուրս էին նետում քաղաքից. միայն հեռուից կարող էր նա խօսակից լինել իր սիրելիների հետ և միայն բորոտների հետ կարող էր ապրել։ Տաճար կամ սինա-

---

[1]) Առասպելական խնձոր՝ ծառի վրայ սիրուն երևացող, բայց ներքուստ փոշի։

[2]) Հրէական օրէնքների ժողովածու, որ ընդունում են իբրև Ս. Գրքի յաւելուած։

գոգ մտնել արգելուած էր նրան. անձայն ու լուռ պիտի շրջէր և մի՛այն պատահողներին զգուշացնելու համար «Մաքուր չե՞մ» գոչէր։ Բնակւում էր ամայի անձաւներում և կամ հեռաւոր անապատում։ Նա մի մերժուած ոգի էր—ուրիշների համար ահ ու սարսափի և գարշանքի առարկայ, իսկ իր համար կենդանի տանջանք, որից կարող էր մի՛այն մահով ազատուիլ, թէև մահից վախենում էր։

Մի օր մայրը—նա չէր կարող ասել, թէ յատկապէս ե՞րբ, որովհետև ժամանակի հաշիւը կորցրել էր,—թեպի պէս մի բան նկատեց իր՛ աջ ափի վրայ, մի չնչին բան, որ փորձեց լուանալով հեռացնել. սակայն թեպը չանհետացաւ։ Մի քանի օր մայրն անփոյթ էր այդ մասին. բայց յետոյ Թիրզան սկսեց գանգատուիլ, թէ ինքն էլ մի այդպիսի խոց ունի։ Ջուրը սակաւ լինելով նրանք ստիպուած էին ծարաւ մնալ և մի՛այն լուացման համար գործածել նրան, կարծելով թէ խոցերը լուացուելով կանցնին։ Բայց սրանք հետզհետէ փոուեցին, ամբողջ ձեռքի կաշին պայթեց, եղունգները մսից զատուեցին։ Մայրն ու աղջիկը շատ սուր ցաւ չէին զգում, այլ միայն շարունակ աճող տրտմութիւն։ Մի օր էլ նրանց շուրթերը սկսան ցամաքիլ ու քոսոտուել։ Մաքրութեան համար հոգատար մայրը վախենալով որ մի՛ գուցէ ախտը Թիրզայի երեսին էլ դիպած լինի, լոյսի դէմ տարաւ նրան և սոսկալով տեսաւ, որ նրա յօնքերը ձիւնի պէս սպիտակել են։

Օ՜հ, ինչպիսի ցաւ պատճառեց նրան այս դիւտը։

Թշուառ մայրը մի քանի րոպէ հոգեթէս ընկճուած, անբարբառ և անշարժ մնաց և միայն մի բան լսելու ընդունակ—բորո՜տ, բորո՜տ։

Եւ ուշքի գալով նա սկսեց ոչ թէ իր վրայ, այլ իր սիրասուն զաւակի վրայ մտածել. իր մայրական



գորովանքը քաջութիւն դարձաւ և նա վճռեց հերոսաբար իր սրտում թաղել նոր դիւտը. ինքն յուսահատ՝ նա կրկնապատկեց իր անձնուիրութիւնը Թիրզային, թաքուն պահեց աղջկանից իրենց հասած չարիքը և մինչև անգամ հաւատացրեց նրան, թէ վտանգ չկայ։ Զարմանալի նրբամտութեամբ նա սկսեց խաղեր հնարել Թիրզայի համար, առակներ պատմել, նրա երգերին ականջ դնել, ինքն էլ երգել սաղմոսներ—և այս բոլորը իրենց վիճակի դառնութիւնն ամոքելու համար և վառ պահելու իրենց հաւատն առ Աստուած, որ կարծես մոռացել էր նրանց, ինչպէս արել էր և աշխարհը...

Ահռելի ախտը յամր յամր, բայց անդիմադրելի հաստատութեամբ տարածւում էր նրանց մարմնի վրայ։ Սկզբում նա կանանց մազերը սպիտակացրեց, շրթերի և կոպերի վրայ փոսեր փորեց, ամբողջ մարմինը քոսով ծածկեց. յետոյ մխուեց կոկորդի մէջ և նրանց ձայնի հնչիւնը սրացրեց. այնուհետև յօդերին անցաւ և բջիջների հիւսուածքն ու կռճիկները կաթծրացրեց։ Վերջապէս այս ժանտ ցաւը, ինչպէս որ մայրը լաւ գիտէր, թոքերը, երակները և ոսկորները վարակեց, օր ըստ օրէ զգուելի անելով հիւանդներին, որոնք գուցէ տարիներով, մինչև իրենց մահուան օրը այդպէս թշուառ մնային...

Դարձեալ եկաւ մի սոսկալի օր, այն օրը, երբ մայրը, ստիպողական պարտքին տեղի տալով, վերջ ի վերջոյ ախտի անունն աղջկանը յայտնեց, և երկուսն էլ յուսահատութեան տագնապից Աստուծուն աղաչեցին, որ իրենց վախճանը շուտ հասնի։

Եւ սակայն—այնքան մեծ է սովորութեան ոյժը—այս թշուառները հետզհետէ վարժուեցին ոչ միայն իրենց հիւանդութեան վրայ հանգիստ նայել, այլև մարմնի զարհուրելի աւերմունքը մի հասարակ բան

համարել... և կեանքին յարուցած, կպած ճնալ: Դեռ կար մի յոդ, որ կապում էր նրանց երկրի հետ: Անուշադիր իրենց լքեալ վիճակին, նրանք ապրում էին Բէն Հուրի վրայ խօսակցելով, նրա մասին երազելով: Մայրը գուշակութիւն էր անում աղջկանը, թէ մի օր կըտեսնեն Բէն Հուրին. Թիրզան էլ նոյնն էր գուշակում իր մօրը—երկուսն էլ վստահ, թէ Բէն Հուրը նրանց հաւատարիմ է և իրենց պէս կուրախանայ հանդիպումից: Եւ այս սուրբ թելը մանելով ու մանելով, նրանք ապրելու հաճոյք էին գտնում և փափագ: Այսպէս էին իրար սփոփում և այն րոպէին, երբ քսանչորս ժամ սով ու ծարաւ կրելուց յետոյ Դէզիւսի ձայնը լսեցին:

Ջահերի բոցը լոյս էր տալիս զնդանին. ապատութեան ժամը հասել էր:—Աստուած բարի է,—գոչեց մայրը, անցեալ վշաերը մոռանալով:

Տրիբունն սկսեց քիչ քիչ մօտենալ նրանց: Այդ վայրկենին մայրը յանկարծ իր պարտքը յիշեց և իր թաքստեան անկիւնից այս ահեղ ազդարարութիւնը հնչեցրեց.

—Ուրուկներ ենք, բորոտներ:

Ի՜նչ անձնուրացութիւն էր հարկաւոր նրան այս պարտքը կատարելու համար: Վերահաս փրկութեան ազդած ուրախութեան մէջ անգամ նա չմոռացաւ այդ փրկութեան հետևանքը: Առաջուայ երջանիկ կեանքը կորած էր ընդ միշտ: Իր նախկին տան շէմքին անգամ չպիտի կարենար մօտենալ, այլ պիտի դուրսը կանգնած աղաղակէր—«Ուրուկ եմ»... Մինչև անգամ իր սիրասուն, անձկալի որդուց պիտի խոյս տար, եթէ նրան պատահէր, և չնայելով իր սրտի անզուսպ տենչին, ջերմ կարօտին, չպիտի կարենար նրան գրկել, կրծքին սեղմել, այլ նոյն իսկ սիրուց հարկադրուած



պիտի մերժէր նրան, գոչելով—«Ես ուրուկ եմ»... Եւ այս դատրիկը, որի մերկութիւնն աշխատում էր իր երկայն և տարաժամ ալևորուած մազերով ծածկել, այս դատրիկը նրա ժանտահար կեանքի ընկերակիցը պիտի լինէր...

Բայց և այնպէս քայլ կինն իր պարտքին հլու ճնաց և այն աղաղակն արձակեց, որ անյիշատակ ժամանակներից ի վեր նրա վիճակին ենթարկուած թշուառների ազդարարն է և ողջոյնի միակ ձայնը—Բորոտ ենք, բորոտ:

Տրիբունը սոսկաց այս ձայնը լսելիս, բայց չդադարեց:

—Ովքե՞ր էք դուք,—հարցրեց նա:

—Երկու կին՝ սովից ու ծարաւից կիսամեռ: Բայց—այժմ էլ մայրը չվարանեց ասելու. — Մի մօտեցնար մեզ, մի դիպչիր ոչ յատակին, ոչ պատին: Մենք բորոտ ենք:

—Ա՜յ կին, պատմիր ինձ գլխիդ հասած չարիքը: Ասա՛ ինձ ես, և ե՞րբ այստեղ ձգուեցար—ո՞ւմ ձեռքով և ինչո՞ւ համար:

—Մի ժամանակ Բէն Հուր անունով մի իշխան կար Երուսաղէմում—բոլոր ազնիւ հռոմայեցոց բարեկամ և նոյնիսկ կայսրին մերձաւոր: Ես նրա այրին եմ և սա նրա զաւակն է: Ի՞նչպէս ասեմ, թէ ինչո՞ւ ենք այստեղ թաղուած, քանի որ չգիտեմ մի ուրիշ պատճառ, բայց թէ այն, որ երբեմն հարուստ էինք: Միայն Վալերիուս Գրատուսը կարող է ասել, թէ ո՛վ է մեր թշնամին և ե՞րբ սկսուեց մեր գերութիւնը, իսկ ես—ոչ: Տես՝ ի՞նչ ենք դարձել... ո՛հ, տես և գթա մեզ:

Ծանտ հոտից և ջահերի ծխից օդը մղձկուտ էր. չնայելով դրան, տրիբունն իսկոյն իր մօտ կանչեց մի ջահակիր և բառ առ բառ գրի առաւ կնոջ պատաս-

խանը: Դա կարճ էր, պարզ էր. մէջը կար և՛ պատմութիւն, և՛ բաղաք, և՛ խնդիր: Մի հասարակ մարդ չէր կարող տալ մի այդպիսի պատասխան. տրիբունը հաւատաց նրան և կարեկցեց:

—Ա՜յ կին, անօգնական չես մնալ դու,—ասաց նա, յիշատակարանը գոցելով:—Ես քեզ սնունդ և խմիչք կուղարկեմ:

—Եւ հագուստ. եթէ կարելի է՝ լուացուելու էլ ջուր, ոմ վերանձն հռոմայեցի:

—Ո՜րքան կամենաս:

—Աստուած բարի է,—ասաց կինը փղձկալով:—Թող նրա խաղաղութիւնը լինի քեզ հետ:

—Սակայն—յարեց տրիբունը,—ես երկրորդ անգամ քեզ տեսնելու պատեհ րոպէ չեմ գտնիլ: Պատրաստուիր: Այս գիշեր իսկ բերդի դռնից դուրս կընանուիք... այնուհետև ազատ էք: Օրէնքը քեզ յայտնի է: Բարով մնաս:

Նա մի քանի պատուէր տուաւ իր մարդկանց և դուրս գնաց:

Փոքր ինչ յետոյ ստրուկները բերին մի լագան, կուժերով ջուր, մի երկու սաւան, հաց ու միս և անհրաժեշտ հագուստներ: Այս բոլորը կալանաւորներին մատչելի տեղ դնելուն պէս՝ նրանք փախչելով հեռացան:

Գիշերուայ առաջին պահուն նոյն ստրուկները բանտից հանեցին մօրն ու աղջկանը և փողոց տարան:

Այս կերպով հռոմայեցին ազատուեց այն երկուսի ներկայութիւնից, և նրանք վերստին ազատ դարձան իրենց մայրենի քաղաքում: Եւ մտիկ տալով աստղերին, որոնք առաջուայ պէս զուարթ ցոլում էին երկնքում, մայր ու աղջիկ հարցրին իրար.

—Այժմ ի՞նչ անենք... Ո՞ւր գնանք:



## ԺԹ.

### *Հին հայրենիք*

Համարեա թէ նոյն ժամին, երբ Գէզիուս բանտապանը և տրիբունը խօսում էին իրար հետ Անտոնիա բերդում, մի հետի ուղևոր Զիթենեաց սարն էր բարձրանում արևելեան ստորոտից: Ճանապարհն առապար ու փոշոտ էր և բուսականութիւնը խորշակահար, որովհետև երաշտի ամիսն արդէն հասել էր Հրէաստանում: Լաւ է որ ուղևորը մի զօրեղ երիտասարդ էր և արձակ ու թեթև հագուստով:

Նա յամրաքայլ առաջ էր գնում, ստէպ աջ ու ձախ նայելով, իբրև մի մարդ, որ երկար բացակայութիւնից յետոյ նորից տեսնում է իրեն ծանօթ առարկաները և գոհ գոհ ասում.—Ես ուրախ եմ, որ նորից ձեզ մօտ եմ:

Փոքր ինչ աւելի բարձրանալուց յետոյ, նա սկսեց ստէպ-ստէպ կանգնել և յետ նայել ընդարձակուող տեսարանը դիտելու համար, որի հորիզոնը գոցւում էր Մովաբի հեռաւոր լեռներով: Գագաթին մօտենալիս, չնայելով յոգնութեանը, քայլերն արագացրեց և փութաց. այլ ևս ոչ դադարում էր, ոչ յետ նայում: Բուն գագաթին հասնելուն պէս, ուր ժամանեց սովորական արահետից դէպի աջ շեղուելով, նա յանկարծ կանգ առաւ—ասես թէ մի զօրեղ ձեռք բռնեց նրան: Նրա աչքերը լայնացան, այտերը վառուեցին, շունչը սաստիկ արագացաւ. այս բոլորը հետևանք էր մի թռուցիկ հայեացքի այն բանի վրայ, ինչ որ նկատեց ներքևում:

Ուղևորը մեր Բէն Հուրն էր, նկատած պատկերը՝ Երուսաղէմը:

Բայց ոչ այժմեայ սուրբ քաղաքը, այլ Հերովդէսի Թողածը—Քրիստոսի սուրբ քաղաքը: Նա այսօր էլ գեղեցիկ է Ձիթենեաց սարից նայելիս. ինչ կըլինէր այն ժամանակ:

Բէն Հուրը մի քարի վրայ նստեց և գլխի սպիտակ փաթիթը հանելով, սկսեց տեսարանը դիտել:

Այն օրից ի վեր մի և նոյնը շատերն են արել—վեսպասիանի որդին, մուսուլմանը, խաչակիրը—բոլորն էլ աշխարհակալ. սակայն ոչ ոք չի մտիկ տուել այն տեսարանին աւելի սուր կսկիծով, աւելի վշտոտ հաճոյքով, աւելի դառն հպարտութեամբ՝ քան Բէն Հուրը: Հրէից պատմութեան յիշատակները, այս ազգի յաղթանակների և անկումների յիշատակները նրա սիրտը յուզեցին: Երուսաղէմը հրէից ազգի ձեռակերտն էր, նրա ոճիրների և բարեպաշտութեան, հանճարի և թուլութեան, կրօնի և անկրօնութեան դարաւոր վկան: Բէն Հուրը լաւ էր ծանօթ Հռոմի հետ, բայց և այնպէս հայրենի քաղաքից զոհ մնաց: Սրա տեսքը մի այնպիսի հպարտութիւն ազդեց նրան, որ մնափառութեան կը հասնէր, եթէ նա չմտաբերէր, որ այժմ այդ արքայական ոստանը մի ուրիշ ազգի է պատկանում, այլ ոչ թէ իր ազգին. եթէ չյիշէր, որ Աստուծու տաճարում աղօթելու համար նա պիտի օտարականից իրաւունք խնդրէ. որ Դաւթի բնակած բլուրն այժմ մի մարմարեայ պատրանք է—մի պաշտօնարան, ուր Աստուծու ընտրածներին ծանր հարկերով տանջում են և նրանց կրօնական եռանդը ծաղրում: Ամեն մի ազգասէր հրէայ մորմոքւում էր այս բաներից. բայց Բէն Հուրն ունէր և իր անձնական, իր մասնաւոր դժգոհութեան պատճառը, որի յիշատակը մի ուրիշ նկատումով չէր դուրս մղուել իր մտքից: Քաղաքի պատկերը միայն նորոգեց և սաստկացրեց այս յիշատակի կսկիծը:



Մինչ նրա աչքերը սքանչանալով յածում էին աշտարակների, պարիսպների, մարմարեայ շիրիմների, սինագոգի, Հերովդեան պալատի, կայսրական տան, հռոմէական դատարանի, Անտոնիա բերդի և մանաւանդ Սողոմոնեան ոսկեգմբէթ տաճարի վրայ, որի նման գեղեցիկ, համաչափ, հոյակապ ու վսեմ շէնք մարդկութիւնը դեռ չէր տեսել, արեգակը սկսեց մայր մտնել: Նրա լուսափայլ սկաւառակը մի քանի ժամանակ լեռների գլխին շողշողաց, ամբողջ երկինքն ու քաղաքը ոսկեզօծելով, և յետոյ յանկարծ վայր սուզուեց:

Երեկոյեան լռութեան մէջ Բէն Հուրի մտքերը դեպի իր հայրենի տունը սլացան և նրա աչքերը սևեռուած մնացին անզուգական տաճարի հիւսիսային կողմն ընկնող մի կէտի վրայ, որի ներքևը պիտի գտնուէր այն տունը, եթէ միայն կանգուն էր...

Անուշիկ, մեղմ ու զով օդը Բէն Հուրի սիրտն ամոքեց. նա սկսեց այն պարտքի վրայ մտածել, որին հետևելով այժմ եկել էր Երուսաղէմ:

Դեռ անապատում, ուր նա Իլդերիմի մօտ ապահով տեղ էր որոնում, իբրև վօրավար ծանօթանալով երկրի հետ, ուր մտադիր էր արշաւանքի համար պատրաստուել,—մի երեկոյ լրաբերը լուր էր բերել նրան և յայտնել, թէ Գրատուսը պաշտօնից հեռացուած է և նրան յաջորդած է Պոնտացի Պիղատոսը:

Մէսալան անկար անդամալոյծ, Գրատուսը անզօր, պաշտօնանկ, ինքը Բէն Հուրն արդէն սպանուած իր թշնամիների կարծիքով. ուրեմն ինչո՞ւ նա յապաղեր իր մօրն ու քրոջը որոնելու: Ուշից պիտի վախենար այժմ, եթէ չի կարող անձամբ խուզարկել Երէսատանի բանտերը, չէ՞ որ կարելի էր ուրիշներին յանձնել այս գործը: եթէ կորածները գտնուին, դժուար թէ Պոնտացի Պիղատոսը հիմք ունենայ երկարելու նրանց

արգելանի ժամանակը—գոնէ մի այնպիսի հիմք, որ հնար չլինէր փողով վերցնել մէջ տեղից։ Գանելուց յետոյ մի ապահով տեղ կըտանէ նրանց և այս առաջին պարտքը կատարելուն պէս՝ հանգիստ խղճով անձնատուր կըլինի սպասուած թագաւորի մեծ դատին։ Բէն Հուրի որոշումը կայացած էր։

Նոյն երեկոյին նա խորհուրդ տեսաւ Իլդերիմի հետ և նրա հաւանութիւնն ընդունեց։ Շէյխը նրան երեք արաբացի ուղեկից տուեց։ Նրանց հետ մինչև Երիքով գալուց յետոյ Բէն Հուրը նրանց այդտեղ թողեց Ալդէբարանի հետ միասին և ինքը հետի շարունակից ճանապարհը։ Մալուխը պիտի Երուսաղէմում հանդիպէր նրան։

Ապագան նկատի առնելով՝ Բէն Հուրը լաւ համարեց առ ժամանակ ինքն իրեն թաքուն պահել պաշտօնական անձերից և մանաւանդ հռոմայեցի լրտեսներից։

Ամենից առաջ պէտք էր իմանալ—ո՞րտեղից սկսել խուզարկութիւնը։ Արդեօք Անտոնիա բերդից չսկսե՞լ... Դեռ հին աւանդութեան ասելով՝ նրա ներքևը մի խաւար լաբիրինթ կար, որ նոյն իսկ բերդից և բերդապահ զօրքից աւելի սարսափ էր ազդում հրէաներին։ Հաւանական էր, որ իւրայինք այդ զնդանում փակուած լինէին։ Բացի այս՝ նա յարմար էր դատում մօրն ու քրոջ որոնումը այնտեղից սկսել, ուր որ նրանք բերուած էին։ Նա մոռացած չէր, որ զինուորները բերդի ուղղութեամբ հեռացրին նրանց։ Եթէ այժմ նրանք բերդում չլինէին, այլ միայն եղած լինէին, գոնէ մի յիշատակութիւն, մի ո՛ր և է հետք մնացած կըլինէր այս մասին. այնուհետև կըմնար միայն մինչև վերջը հետազօտել այս հետքը...

Մի ուրիշ յոյս էլ ունէր Բէն Հուրը։ Նա լսել էր Սիմո-



նիդէսից, թէ իր դայեակը դեռ ապրում է։ Ընթերցողը կըյիշէ, որ Հուրի ընտանեաց աղէտի օրը այս հաւատարիմ եգիպտացի սպասուհին զինուորների ձեռքից պրծել և դէպի տուն էր փախել, ուր նրան փակել ու կնքել էին։ Յաջորդ տարիների ընթացքում Սիմոնիդէսը նրա պէտքերը հոգացել էր, և կինն այսպէս պահպան էր մնացել այն տան, որ Գրատուսը, չնայելով իր ջանքերին, չէր կարողացել վաճառել։ Տան տէրերի պատմութիւնը բաւական էր, որ գնելու կամ վարձելու կամք ունեցող մարդիկն անգամ սարսափէին նրանից։ Ամենքը փսփսում էին նրա մօտովն անցնելիս. նա կախարդուած էր համարւում։ Պառաւ Ամրան մի մի ժամանակ երևան էր գալիս տանիքի վրայ և կամ վանդակաւոր պատուհանի մօտ, և ամենքի կարծիքով նա ամայի տան ուրուականն էր... Բէն Հուրը յոյս ունէր նրա միջնորդութեամբ ո՛ր և է տեղեկութիւն ձեռք բերել. ո՛րքան էլ դա չնչին լինէր, դարձեալ իրեն պէտք կըգար։

Եւ այսպէս նա որոշեց նախ և առաջ Ամրային տեսնել և հետը խօսել։

Եւ այս որոշումով իջաւ սարից արևելեան ուղղութեամբ և ոտք դրաւ Կիդրոնեան ձորի ճանապարհի վրայ, որ տանում էր դէպի Սելովամ պիւղն ու լիճը։ Այստեղ հանդիպեց մի հովուի, որ գառներ էր քշում դէպի շուկան. միացաւ նրան և նրա հետ անցնելով Գեթսեմանէի մօտերքից, Ձկան դռնով քաղաք մտաւ։

## IV.

### Հայրենի տան առջև

Արդէն մութն էր, երբ Բէն Հուրը հովուից բաժանուելով դէպի հարաւ տանող մի անձուկ փողոցի մէջ ոտք դրաւ։ Պատահողներից մի քանիսը միայն ողջու-

նեցին նրան։ Սալայատակն անհարթ էր. երկու կողմի տները ցած, խաւար, տրտում. դռները փակ։ Մերթ մերթ տանիքների վրայից լսւում էին երեխաներին օրօրող մայրերի ձայները։ Մենութիւնից, դիշերուայ մթնից և ներքին անվստահութիւնից Բէն Հուրը տխրեց։ Ընկճուած սրտով մօտեցաւ նա Բեթէզդայի լճին, որի հայելու մէջ անդրադառնում էր երկինքը։ Վերև նայելիս նա տեսաւ Անտոնիա բերդի հիւսիսային պարիսպը—մի սև զանգուած, որ որոշակի անջատւում էր երկնքի գորշ կամարից,—և կանգ առաւ, ասես թէ մի սպառնացող պահնորդի ձայն լսելով։

Բերդն այնպէս բարձրաշէն էր, այնպէս ամուր, հաստահիմն, որ Բէն Հուրն ակամայ նրա զօրութիւնը խոստովանեց։ Եթէ իր մայրն ու քոյրը այդ բերդի մէջ կենդանի թաղուած լինէին, ի՞նչ կարող էր անել նրանց համար։ Բռնութեամբ՝ ոչինչ։ Անգամ եթէ մի ամբողջ զօրք խոյերով և բարաններով հարուածելու լինէր այդ բերդը, նրա ճիգը միայն ծիծաղ կըշարժէր։ —Իսկ խորամանկութիւնը այնպէս հեշտ է ապարդիւն ծնում,—մտածում էր Բէն Հուրը,—և Աստուած՝ անոք-նեղիս վերջին յոյսը, այնքան ուշ է օգնում մեզ։

Երկբայած ու մտատանջ յառաջ գնալով, նա բերդին զուգընթաց փողոցը մտաւ և ծանրաքայլ դիմեց դէպի արևմուտք։ Գիտէր որ դէնը, Բեթէզդայում, մի խան կայ. մտադիր էր այնտեղ իջևանել, քանի որ կըմնար քաղաքում, բայց այժմ իրեն անզօր զգաց դիմադրելու տուն գնալու ուժգին տենչին. սիրտն այնտեղ էր մղում նրան։

Ոչ մի ժամանակ նրա ականջին այնպէս քաղցր չէին հնչել իրեն տրուած ողջոյնները։ Լուսինը ծագեց և արևմտեան երկնակամարն արծաթագոյն փայլ առաւ, իսկ արևմտեան կողմի առարկաները Սիոնի մեծ աշտարակների



հետ, որոնք մինչև այժմ չէին երևում, օդաչու դղեակների պէս աչքի ընկան, ստուերը սփռելով ներքևի հովտում։

Բէն Հուրը վերջապէս իր հայրենի տանը մօտեցաւ։

Ով որ երբ և է ունեցել է մի հայրենի տուն, որ այլ ևս իրենը չէ, մի յարկ, մի դրախտ, որը լի է մանկութեան քաղցր յիշատակներով, որից մի օր արտաքսուած էր և ուր սակայն կը փափագէր վերադառնալ,—նա միայն կը հասկանայ, ինչ որ զգաց Բէն Հուրն իր հօր տունը տեսնելիս։

Նա կանգ առաւ հին պալատի հիւսիսային դռան առջև։ Սրա նիգի վրայ դեռ նշմարւում էր կնքուած մոմի նշանը, իսկ որմի վրայ հետևեալ մակագրութեամբ տախտակը—

## ԱՅՍ ՏՈՒՆԸ

## ԿԱՅՍՐԻ ՍՏԱՑՈՒԱԾՔՆ Է։

Անջատման զարհուրելի օրից ի վեր դեռ ոչ մի մարդ ներս չէր մտել այս դռնովը։ Արդեօք առաջուայ հնչակը խիճ՞ը... Գիտէր, որ այդ անօգուտ է, բայց և այնպէս անկարող էր չփորձել։ Գուցէ Ամրան կըլսէր և այս կողմի պատուհաններից մէկի միջով դուրս կընայէր... Նա գետնից մի քար վերցրեց, լայն աստիճանի վրայ ոտք դրաւ և երեք անգամ դուռը բախեց։ Լսուեց մի խուլ արձագանգ։ Կրկին բախեց և աւելի սաստիկ, քան առաջ։ Լռութիւնը կարծես հեգնում էր նրան։ Յետոյ իջաւ դէպի փողոց և պատուհանները սկսեց դիտել։ Ոչ մի մարդ չէր երևում։ Կարի ծնօտը սուր դրերով որոշւում էր ջինջ երկնքից. եթէ այնտեղ մի բան շարժուէր, նա անպատճառ կըտեսնէր. բայց ոչ մի շարժուող բան չկար։

Նա արևմտեան կողմն անցաւ. դա ունէր չորս

պատուհան։ Ուշի ուշով դիտեց նրանց, երկար դիտեց, բայց դարձեալ զուր։ Մերթ ապարդիւն տենչերը էին յուզում նրա սիրտը, մերթ նա սարսում էր իր ցնորքների չքանալուց։ Շարժուող չկար. Ամրան նշան չէր տալիս. մի ոգի անգամ չէր խլրտուում։

Վերջապէս նա դէպի հարաւ սողոսկուեց։ Այնտեղ էլ դուռը կնքուած էր և մակագիր ունէր։ Բէյն Հուրը զայրացաւ մակագիրը կարդալիս և պոկելով նրա վահանակը, փոսը նետեց։ Յետոյ նստեց աստիճանի վրայ և աղօթեց, որ նոր թագաւորը շուտով գայ։ Արդէն բաւական յոգնած լինելով երկար ճանապից, որ անցել էր ցերեկւայ տօթին, նա քիչ քիչ գլուխը կախեց և վերջապէս քունը տարաւ։

Այդ միջոցին Անտոնիա բերդի կողմից երկու կնայք առաջ եկան փողոցով և Հուրի պալատին մօտեցան։ Հուռ էին նրանք, դողօրէն էին առաջ գալիս, շուտ շուտ կանգնում, ականջ դնում։ Տան գորշագոյն անկիւնի մօտ մէկը կամացուկ ասաց միւսին.

—Ահա, Թիրզա։

Եւ Թիրզան հայրենի տունը նշմարելուն պէս՝ մօր ձեռքը բռնեց և անձայն լացով նրա դիրկն ընկաւ։

—Հեռանանք, աղջիկս, որովհետև...։

Մայրը դողաց և բռնութեամբ տիրելով իրեն՝ շարունակեց.

—Որովհետև առաւօտը լուսանայ թէ չէ, մեզ քաղաքից դուրս կը քշեն... և ընդմիշտ։

Սարսափած Թիրզան քիչ էր մնում քարի վրայ ընկնի։

—Ո՜հ, այո, մոռացել էի,—հեկեկաց նա։—կարծում էի, թէ մեր տանն ենք. բայց չէ՞ որ մենք բորոտներ ենք և տուն չունինք։ Մենք մահուան ենք պատկանում։



Մայրը նրան նեցուկ տուաւ և գգուելով ասաց.

—Մենք այլևս վախենալու բան չունինք։ Գնանք, աղջիկս։

Եւ իրօք նրանք ձեռքերը միայն բարձրացնելով՝ կարող էին մի ամբողջ զօրք ահաբեկ անել և փախուստ տալ։

Երկու ուրուական ոգիների պէս պատի երկարութեամբ առաջ սահելով նրանք հասան տան դռանը, ուրկից կանգ առան։ Այդտեղ տեսան մակագրուած տախտակը և կարդացին, ինչ որ արդէն կարդացել էր Բէյն Հուրը։

## ՎԱՑՍ ՏՈՒՆԸ

### ԿԱՄՐԻ ՍՏԱՅՈՒԱԾՔՆ Է։

Մայրը ձեռքերն իրար կցեց և աչքերը երկինք ձգելով, սրտի խորքից հառաչեց։

—Ի՞նչ եղաւ քեզ, սիրելի մայրիկ։ Դու ինձ սարսափ ես պատճառում։

Մայրն ասաց.

—Ա՜խ, Թիրզա, աղքատ թէ մեռած՝ միևնոյն է։ Նա մեռած է։

—Ո՞վ, մայրիկ։

—Եղբայրդ։ Ամեն բան խլել են նրանից, ամեն բան... մինչև անգամ այս տունը։

—Աղքա՜տ,—գոչեց Թիրզան մտամոլոր։

—Եւ մեզ օգնելու անկարող։

—Ուրե՞մն, մայրիկ...

—Մեզ կը մնայ առաւօտեան ճանապի մօտ նստել և մուրալ, ինչպէս անում են ուրուկները։ Մուրալ կամ...

Թիրզան դարձեալ մօր դիրկն ընկաւ և թոթովեց.

—Լաւ է մեռնել, մեռնել, մայրիկ։

—Ո՛չ—ասաց մայրը հաստատուԹեամբ։—Մեր վախճանի ժամն Աստուծու կամքից է կախուած. այս քանուՀն էլ նրա որոշման կըսպասենք։ Ե՛կ։

Ասաց, բռնեց Թիրզայի ձեռքից և տան պատին քսուելով դէպի արևմտեան անկիւնը փութաց։ Այնտեղ էլ մարդ չտեսան։ Յետոյ անցան դէպի հետևեալ հարաւային անկիւնը, ուր լուսնի պայծառ շողքը յանկարծ նրանց շլացրեց։ Սակայն մայրը կանգ չառաւ և աղջկայ հետ համարձակ մտաւ լոյսի մէջ։ Այժմ ահա կարելի էր որոշ տեսնել, Թէ չար ախտը ինչպիսի ասելմունք էր գործել նրանց վրայ։ Նրանց շուրԹերը և այտերը, հսեմ և արիւնոտ աչքերը, ձեռքերի պայԹած կաշին ակնյայտնի նշաններ էին։ Ահռելի էին մանաւանդ նրանց երկայն, ոլորուն և գարշելի շարաւ ծորող մազերը, նման յօնքերը, որոնք մազերի պէս բոլորովին սպիտակ էին։ Անկարելի էր որոշել՝ ո՞րն է մայրը, ո՞րն է աղջիկը. երկուսն էլ կարծես պառաւ վհուկներ լինէին։

—Հանդարտ, աղջիկս,—ասաց մայրը։—Աստիճանի վրայ մէկը պառկած է... տղամարդ է։

Նրանք փողոցի ստուերոտ կողմը շտապեցին և մինչև դուռը գնացին։

—Ինած է, Թիրզա։

Պառկած մարդն անշարժ էր։

—Այստեղ կաց, իսկ ես կըփորձեմ դուռը բանալ։

Մայրն անշշուկ մօտեցաւ դռանը և դռնակը հրեց... Այդ րոպէին մարդը յոգուց հանեց և անհանգիստ շուռ եկաւ։ Նրա գլխի փաԹԹերը մի կողմ ընկաւ և լուսնի փայլն երեսի վրայ շողշողաց։ Կինը նայեց նրան և սարսափեց. յետոյ նորից մտիկ տուաւ կռնակովը։ Ապա Թէ իրանը շակեց, ձեռքերը կպեց և լուռ մաղԹանքով աչքերը երկինք գցեց։ Եւ յետոյ վազեց



գնաց Թիրզայի մօտ։

—Աստուածովս երդուում եմ—արագ արագ շշնջաց նա,—այս մարդն իմ որդիս է... եղբայրդ է։

—Եղբայրս... Յուդան։

Մայրն աղջկայ ձեռքից բռնեց եւանդով։

—Ե՛կ,—շշնջաց նա։ —Երկուսս միասին մտիկ տանք... պարձեալ մի անգամ... միայն մի անգամ... այնուհետև դու օգնիր աղախիններիդ, ով Աստուած։

Նրանք ձեռք ձեռքի տուած, իբրև ուրուականներ, հասճեալ անցան փողոցի լայնքը և հէնց որ իրենց տուները մարդուն դիպաւ՝ կանգ առան։ Նրա ձեռքերից մէկն աստիճանի վրայ էր տարածուած։ Թիրզան չոքեց և ուզում էր համբուրել նրան. մայրն աղջկանը յետ քաշեց։

—Ո՛չ, Աստուած քեզ հեռու պահէ այդ բանից։ Մեռնեմ էլ՝ դու չպիտի նրան դիպչես։ Մենք անմաքուր բորոտներ ենք,—շշնջաց նա։

Թիրզան ահով յետ Թռաւ մարդուց, ասես Թէ բորոտը նա լինէր։

Գեղեցիկ էր Բէն Հուրի այրական պատկերը։ Անապատի օդից ու տօթից նրա այտերն ու ճակատը Թխացել էին. կարմիր ու լիք շուրԹերը փայլում էին նուրբ բեխերի տակ, կլոր կզակն ու վիզը հազիւ էին ծածկուած մօրուքի փափուկ մազերով։ Ո՛րքան սիրուն էր նա մօր համար։ Ո՛րքան սաստիկ կըցանկար մայրը գրկել նրան, իր դոգն առնել նրա գլուխը և համբուրել, ինչպէս անում էր նրա մանկուԹեան օրերում։ Բայց որտեղից նա զօրուԹիւն գտաւ դիմադրելու այս հզօր տենչին։ Սիրուց, ով ընԹերցող,—մայրենի սիրուց, որ նրանով է ուրիշ սիրուց տարբերւում, որ ինչքան էլ քնքուշ լինի, բայց գիտէ ինքն իրեն բռնադատել և իր ետ զոհել։ Աշխարհումս ոչ մի բան—ոչ առողջու-

վհեան և հարստութեան վերադարձի խոստումը, ոչ վհեանքի երջանկութիւնը, ոչ էլ նոյնիսկ մահուան սաստը —ոչ մի բան չէր ստիպել նրան մի բորոտ համբոյր տալ որդուն: Բայց գոնէ կըշօշափէր նրան...չէ՞ որ իսկ և իսկ նրան գտնելու բոպէին ընդմիշտ պիտի զատուէր նրանից: Թող միւս մայրերն ասեն, թէ որքան դառն էր և որքան ծանր այս պարտքը: Նա չոքելով սողաց իր զաւակի ոտքերի մօտ և շուրթերով շօշափեց նրա փոշոտ սանդալներից մէկի նեբբանը... շօշափեց կրկին և կրկին, և իր հոգին իսկ այդ համբոյրների մէջ դրաւ:

Բէն Հուրը քնած տեղում շարժուեց և ձեռքը մեկնեց: Կանայք փոքր ինչ յետ քաշուեցին և լսեցին նրա մրմունջը.

—Մայրի՛կ: Ամրա՛: Ո՞ւր էք...

Նա վերստին խոր քուն մտաւ:

Թիրզան կարօտակէզ մտիկ էր տալիս եղբօրը: Մայրը, ճակատը փոշուն դէմ տալով, փորձում էր ճնշել մի հառաչանք... մի խոր ու սաստիկ հառաչանք, որից կարծես սիրտը պայթելու վրայ էր: Նա համարեա թէ կըցանկար, որ որդին զարթնէր քնից:

Որդին նրա անունը տուաւ, չէր մոռացել նրան, նրազուռն անգամ յիշեց նրան: Մի՞թէ այսքանը բաւական չէր...

Մայրը վերջապէս նշան արաւ Թիրզային. երկուսը միասին վերկացան. մի անգամ էլ մտիկ տուին պառկածին, ասես թէ նրա պատկերն անջնջելի անելու համար իրենց մտքում, և ձեռք ձեռքի տուած փողոցի ներքնակ կողմը դիմեցին: Այնտեղ նրանք պարապի տուներում գտանին նստեցին և սկսեցին նրա զարթնելուն սպասել... սպասել որևէ յայտնութեան, որևէ բանի... իրենք էլ չգիտէին՝ ինչ բանի: Ո՛վ կարող է նրանց սիրոյ համբերութեան չափը քննել:



Եւ ահա—ննջողը դեռ չէր արթնացել—մի կոնաձի էակ սկսեց մօտենալ տան անկիւնին: Մայրը և աղջիկը պարզ տեսան նրան լոյսի մէջ... նա մի փոքրիկ, կորաքամակ երևոյթ էր՝ թխագոյն դէմքով, գորշ մազերով, սպասուհու մաքուր հանդերձով. ձեռքին ունէր մի կողով:

Աստիճանի վրայ հանգստացող մարդուն նկատելուն պէս նա կանգ առաւ. յետոյ զգուշութեամբ մօտեցաւ, դռնակի նիգը մի կողմ քաշեց և ձեռքը բացուածքի մէջ դրաւ: Այնուհետև ձախ փեղկի տախտակներից մէկն անշշուկ տեղի տուաւ. եկուորն իր զամբիւղը ներս հրեց և մինչ ուզում էր ինքն էլ մտնել, ներքևում պառկած անծանօթի դէմքին նայեց:

Փողոցի միւս կողմից դիտողները մի մեղմ ճիչ լսեցին և նշմարեցին, թէ ինչպէս կինն իր աչքերը սրտրեց, ասես թէ աւելի պարզ տեսնելու համար. յետոյ կռացաւ, ձեռքերը կցեց, մտամտոր շուրջը նայեց, նորից կռացաւ մարդու վրայ և նրա ձեռքը՝ բռնելով քնքշաբար համբուրեց, ինչ որ մայրն ու քոյրն էլ ամենայն սիրով կանէին, եթէ միայն կարենային:

Այս շօշափումից զարթնելով՝ Բէն Հուրն իր ձեռքը մեքենաբար յետ քաշեց և նրա աչքերը կնոջ նայուածքին հանդիպեցին:

—Ամրա՛, ո՛վ Ամրա, դո՛ւ ես այս,—գոչեց նա:

Բարի սպասուհին խօսքով պատասխան չտուաւ, այլ նրա վզով փարուեց և խնդութիւնից լաց եղաւ:

Բէն Հուրն իր վիզը կամաց ազատեց նրա գրկից, նրա արտասուալից դէմքը բռնեց և համբուրեց՝ ոչ նուազ ուրախ, քան թէ նա: Այն ժամանակ միւս երկուսը նրա խօսքերը լսեցին.

—Մայրի՛կ: Թիրզա՛: Ո՞հ, Ամրա, պատմի՛ր ինձ, ինչ եղան նրանք: Խօսի՛ր, խօսի՛ր, աղաչում եմ:

Ամրան նորից սկսեց լալ։

—Դու նրանց տեսած կըլլինես. հարկաւ գիտես՝ ո՞րտեղ են։ Ա՜խ, շուտ ասա, որ նրանք տա՛ննն են։

Թիրզան մի արագ շարժում արաւ, բայց մայրը բռնեց նրան շշնջալով.

—Մի՛ գնա՛... մեռնելու էլ լինինք՝ չպիտի գնաս։ Բորոտ ենք։

Նրա սէրը բռնակալ էր։ Թէև երկուսի սիրտն էլ պայթում էր, բայց որդին չպիտի իմանար, թէ ինչ են նրանք, և մայրը յաղթեց։

Այն ինչ Ամրան շարունակում էր հեկեկալ։

—Դու ուզում էիր ներս մտնել, չէ՞,—հարցրեց Բէն Հուրը, բայց դռնակը տեսնելով։—Դէ մտիր, ես էլ կըգամ.—Նա ոտքի ելաւ։—Հոռմայեցիք... Տիրոջ անէծքը նրանց գլխին... սո՛ւտ են ասում,—շարունակեց նա։—Այս տունն իմս է։ Վե՛ր կաց, Ամրա, և ներս մտնինք։

Մի վայրկենում նրանք անհետացան, այն ինչ ստուերում սպասողները վշտահար մտիկ էին տալիս դռնակին, որի շէմքից այլևս երբէք չպիտի անցնէին նրանց ոտքերը... Նրանք փոշու մէջ ընկած մնացին։

Իրենց պարտքն արդէն կատարել էին։

Իրենց սէրը դիմացել էր փորձութեան։

Լուսադիմին անցորդները նրանց տեսան և քարեբով դուրս քշեցին քաղաքից։

—Գնացէ՛ք, կորէ՛ք։ Մեռելներ էք, մեռելների մօտ գնացէ՛ք։

Եւ այս անէծքով հալածուած՝ նրանք լուռ ու մունջ հեռացան։



## ԻԱ.

### *Գերեզման*

Այժմ սուրբ երկիրը գնացող ուխտաւորը, որ կըցանկար մեծահռչակ «Թագաւորի այգին» աչքի անցնել, պարտաւոր է Կիդրոնի և կամ Գիհոնի ու Հինոմի ձորերն իջնել և հասնելով մինչև Էն Րոգէլի հին հորը, նրա զով ջրի մօտ կանգ առնել, որովհետև դէնն այլ ևս տեսնելու արժանի բան չկայ։ Այնտեղ նա մտիկ կըտայ ջրհորը պատող ժայռերին, կիմանայ թէ որքան է նրա խորութիւնը, կըժպտայ ջուրը հանելու նահապետական եղանակի վրայ և դուրէ կարեկցաբար մի պարզ կըտայ ցնցոտաւոր պահապանին։ Յետ նայելիս հիացմամբ կըտեսնէ Մորիայի և Սիոնի լեռները, որոնք հիւսիսից գալով վերջանում են՝ մէկը Ոփելում, միւսը Դաւթի քաղաքում։ Նրա աջ կողմից կըբարձրանայ Գայթակղութեան յայտնի սարը, ձախ կողմից «Ջար Մորհրդի սար» կոչուածը, որոնք այնքան նշանաւոր են ռաբբիական զրոյցների մէջ։

Երկար կըլինէր մի առ մի թուել այդ սարի շուրջը գտնուող հետաքրքրական կէտերը։ Մեր պատմութեան համար բաւական է ասել, որ սարի հիմքը հաստատուած է քրիստոնէական դժոխքում և կամ թէ պահեն կոչուած կրակի ու ծծմբի անդունդում և թէ նրա կողերն ամենահին դարերից ի վեր այրերով ու գերեզմաններով կտրտուած են, ուր դեռ Քրիստոսի ժամանակ ախտաժէտ բորոտներն էին ապրում։ Այնտեղ նրանք հիմնած էին իրենց առանձին ընկերութիւնը, իրենց ջոկ վարչութիւնն ու քաղաքը, և բնակում էին միասին, իբրև Աստուծուց անիծուածներ։

Նախորդ գլխի դէպքերից յետոյ, երկրորդ օրուայ

լուսադիմին, Ամրան գնաց էն Րոգելի ջրհորի մօտ և մի քարի վրայ նստեց։ Նրան տեսնողն անշուշտ կասէր, թէ մի հարուստ տան աղախին է։ Նա բերել էր իր հետ մի ջրի կուժ և մի սպիտակ անձեռոցով ծածկուած զամբիւղ։ Այս երկուսն էլ գետնի վրայ դնելուց յետոյ նա գլխի շալն արձակեց, ձեռքերը կցեց և վարանելով դէպի վեր նայեց, որտեղից սարն աստիճանաբար վայր էր իջնում մինչև Բրուտների հովիտը, որ յետոյ Հակիլդամա կամ Արեան արտի անուն ստացաւ։

Դեռ շատ վաղ էր։ Ամրայից յետոյ եկաւ մի մարդ, որ մի չուան և մի կաշեղէն գոյլ էր տանում, թխագոյն կնկանը ողջունելուց յետոյ նա չուանը գոյլին կապեց և սկսեց սպասել յաճախորդներին։ Ամեն մարդ ջուր քաշելու իրաւունք ունէր, բայց եկողն այդ անում էր ի պաշտօնէ, միայն մի զերան [1]) պահանջելով այն ջրի համար, որ կարող էր տանել մի զօրեղ կին։

Ամրան լուռ նստած էր։ Նրա կուժը տեսնելով ջրհանը հարցրեց—չէ՞ր կամենալ որ կուժը լցուի։—Դեռ ոչ,—պատասխան տուաւ աղախինը։—Հէնց որ Զիթենեաց լերան գագաթի վրայ լոյս երևաց, յաճախորդները հետզհետէ հաւաքուեցին, և ջրհանն այժմ այնքան զբաղուած էր, որ հազիւ էր ջուր հասցնում ամենքին։ Ամրան շարունակում էր նստած մնալ, անթեթ նայելով սարի կողմը։

Արեգակն արդէն ծագել էր. կինը դարձեալ նստած էր մնում, նայելով ու դիտելով։

Մինչ նա այսպէս սպասում է, տեսնենք ի՞նչ էր նրա նպատակը։

Նա սովոր էր երեկոները սուսիկ փուսիկ գնալ

[1]) Դանկ, մանր փող։



շուկայ, այնտեղ իր պաշարը գնել—հաց, միս, բանջար, ձուկ—և յետ գալով տանը փակուել։

Դժուար չէ երևակայել, թէ ինչ ցնծութիւն զգաց նա Բէն Հուրին նորից իր հայրենի տանը տեսնելիս։ Իր տիրուհու կամ Թիրզայի մասին նրան հաղորդելու լուր չունէր, այլ ուզում էր, որ Բէն Հուրը դարձեալ իր սենեակում բնակուի, որ անփոփոխ էր մնացել։ Բէն Հուրը սակայն, լրտեսներից և մանաւանդ զուր հարցուփներից խոյս տալու համար, որոշեց տանը չմնալ, այլ մնայն գիշերները գալ Ամրայի մօտ և գիշերանց հեռանալ։ Դրանով էլ կինը գոհ էր և մտածում էր, թէ ինչ անէ, որ բաւականութիւն տայ նորեկին։ Նրա մտքից անգամ չէր անցնում, թէ Բէն Հուրն արդէն տղամարդ է. թէ մանկական ախորժքը թողած և կամ մոռացած կըլինի. կինն ուզում էր նրա սիրած կերակուրները պատրաստել։ Առաջ Բէն Հուրը քաղցրեղէնի սիրահար էր. Ամրան վճռեց այնքան անոյշ ուտեվիքներ պատրաստ պահել, որ երբ էլ Բէն Հուրը գայ, նրան հարկէ։ Միթէ կարելի՞ էր սրանից աւելի լաւ բան մտածել։ Եւ ահա կինը, հէնց հեռանալ երեկոյին թաքուն դուրս ելաւ զամբիւղով և Զկնեղէնի շուկան գնաց։ Մինչ այնտեղ մանէր գալիս և ընտիր մեղր որոնում, պատահմամբ մի մարդ տեսաւ, որ բան էր պատմում։

Ի՞նչ էր մարդու պատմածը. ընթերցողը կըգուշակէ, եթէ իմանայ, որ մարդը մէկն էր այն ջահակիր ծառաներից, որոնք առաջնորդել էին Անտոնիա Բերդի տրիբունին, երբ Բէն Հուրի մայրն ու քոյրը բանտի VI արգելանոցում գտնուեցին։ Մարդը պատմեց պիտի բոլոր հանգամանքները, և Ամրան լսեց, թէ

ռվքեր են յայտնուած կանայքը և ինչ պատասխան է տուել այրին...

Այս լսելիս Ամրան այն զգաց, ինչ որ միայն զգալու էր մի անձնուէր արարած: Պաշարը գնելը և ցնորուածի պէս տուն վազելը նրա համար մէկ եղաւ: Այն ինչ աւետիք էր, որ պիտի տար իր սիրասուն պատանուն... Արդէն գտել էր նրա մօրը: Ջամբիւղը վայր դնելով՝ նա սկսեց մերթ ծիծաղել, մերթ լաց լինել: Յանկարծ լռեց մտամոլոր: Բէն Հուրը կը մեռնի, եթէ իր մօր ու Թիրզայի բորոտանալն իմանայ... նա կերթայ Զաբ Խորհրդի ժամտ սարը, կը խուզարկէ ամեն մի այր թշուառներին գտնելու համար և վերջապէս ինքն էլ կը վարակուի...Իր ձեռքերը կոտրտելով Ամրան ոգորում էր ինքն իր հետ: Ի՞նչ անէր:

Սէրն օգնեց նրան ելք գտնել, ինչպէս օգնել է շատերին նրանից առաջ և յետոյ:

Նա գիտէր, որ բորոտները առաւօտեան վայր են իջնում այրերից և ջուր տանում էլ Րոգելի ջրհորից: Նրանք պարտաւոր էին անօթները վայր դնել և հեռուից սպասել, մինչև որ լցուին: Իր սիրուհին էլ հարկաւ այդպէս կանէր. որովհետև օրէնքը խիստ էր և բացառութիւն չէր թոյլ տալիս — հարուստ, թէ աղքատ, բորոտները հաւասար էին:

Ամրան վճռեց իր լսած պատմութիւնը ծածուկ պահել Բէն Հուրից և մենակ գնալ ջրհորի մօտ ու սպասել: Անշուշտ սոխն ու ծարաւը կըստիպէին ուրուկներին այնտեղ գալ, և նա հաւատացած էր, որ կը ճանաչէ նրանց և կամ թէ նրանք իրեն կը ճանաչեն:

Մինչ այս մինչ այն՝ նրա մօտ եկաւ Բէն Հուրը և յայտնեց, թէ մտադիր է հետևեալ օրը վնտրելու երթալ Մալուխի հետ: Նրա համբերութիւնը հատնելու վրայ էր, և նա ժամանակը կարճելու համար ուզում էր մի



թեթև պտոյտ անել սուրբ վայրերում: Խեղճ սպասուհին, չնայելով որ գաղտնիքը մի քարի պէս ծանրացել էր իր սրտի վրայ, կարողացաւ լուռ մնալ:

Բէն Հուրի հեռանալուն պէս՝ նա մեծ փութով զանազան ուտելիք պատրաստեց, զամբիւղը լցրեց, կուժն առաւ և Զկան դռնով, որ միւսներից վաղ էր բացւում, ճանապարհ ընկաւ դէպի Էն Րոգելի ջրհորը:

Արշալոյսից փոքր ինչ յետոյ, մինչ խոնումը ջրհորի մօտ սաստկանում էր և ամեն մարդ շտապում ջուր քաշել, որ ցերեկուայ տօթից առաջ տուն հասնի, սարի բորոտ բնակիչներն էլ երևան եկան և սկսեցին այրերից ու խորշերից ներքև իջնել: Նրանք գալիս էին դէպի հորը—կանայք կժեր կրելով, ծեր մարդիկ գաւազանին յենուելով, իսկ ամենից տկարները պատգարակի վրայ բերուելով: Երևում էին և մանուկներ: Ծայրատոյն թշուառութեան մէջ անգամ սիրոյ ոգին չէր մարած. մարդիկ իրար օգնում էին և իրենց կեանքը տանելի անում:

Ամրան իր նստած տեղից անշարժ և ակնապիշ մնիկ էր տալիս այս ուրուականի խմբերին: Շատ անգամ թւում էր իրեն, թէ ահա գտաւ, որոնց գտնել կըցանկար: Վատահ էր, որ նրանք սարի վրայ են. հաւաստի էր, որ կիջնեն:—Անպատճառ կըգան,—մտածում էր նա,—հէնց որ միւսները ջուր տանեն և հեռանան:

Սարի տորոտին մի լայնաբերան գերեզման կար և Ամրան սկսեց նրան դիտել: Մուտքի մօտ մի ահագին վէմ էր ընկած: Արեգակը թափանցում էր նրա մէջ. կարելի էր կարծել, թէ բացի թափուռիկ շներից այդ որջում բնակող էակ չկայ: Սակայն Ամրան յանկարծ նկատեց, որ այնտեղից երկու կին դուրս եկան, մէկը միւսին յենուելով... Երկուսն էլ սպիտակ մազերով

էին, երկուսն էլ կարծես պառաւ, բայց մաքրազգեստ, երկուսն էլ այնպէս մոլորուած, որ կասէիր թէ նոր են տեսնում շրջակայքը: Ներքևից դիտող Ամրան նկատեց, որ նրանք սոսկում զգացին, երբ որ տեսան, թէ ինչ ահռելի ընկերութեան են պատկանում: Դուցէ Ամրան սխալւում էր, բայց նրա սիրտն սկսեց թնդալ, և նա աչքերը բացառապէս այն երկուսի վրայ յառեց:

Մի քանի րոպէ նրանք վէմի մօտ կանգնած մնացին. յետոյ սկսեցին դէպի հորն իջնել յամրաքայլ և ահ ու դողով:

Հորի մօտից մի քանի ձայներ սաստեցին նրանց, որ չմօտենան. բայց նրանք շարունակեցին վայր իջնել: Ջրհանը քարեր վերցրեց, ուզում էր նետելով զգուշացնել նրանց: Ամբոխն սկսեց հայհոյել և գոչել.— Բորոտներ, բորոտներ:

—Անտարակոյս նորեկներ են, որ բորոտների սովորոյթները չգիտեն,—մտածեց Ամրան:

Նա ոտքի ելաւ և զամբիւղն ու կուժը վերցնելով այն երկուսի կողմը գնաց: Աղմուկն իսկոյն դադարեց:

—Այդ յիմար կինը հաց է տանում մեռելների ժո՞ւռ,—ծիծաղելով ասաց մէկն ամբոխից:

—Եւ եկել է այնքան տեղ,—նկատեց միւսը:— Գոնէ քաղաքի դռների մօտ սպասէր:

Բարի Ամրան իր սրտի դրդման հետևելով առաջ էր գնում, բայց այդ սիրտը դրեթէ պայթելու վրայ էր: Ամեն մի քայլին նրա շփոթութիւնն ու վարանումը աճում էր. մի տասն քայլի միջոց էր մնացել իր ու նրանց միջև... նա կանգ առաւ:

Մինչ այդ էր իր սիրելի տիրուհին, որի ձեռքն այնքան համբուրուած էր ջերմութեամբ, որի բարեմոյն, ազնիւ դէմքն այնպէս խոր տպաւորուած



էր իր սրտում... Եւ մինչ այդ էր սիրունիկ Թիրզան, որի մանկութիւնը նա խնամած էր, որի ցաւերն ամոքած և խաղերին մասնակցած... այն զուարթ, ժպտուն, կայտառ Թիրզան, ամբողջ տան լոյսն ու յոյսը, իր ծերութեան սփոփանքը: Դրանք են իր տիրուհին... իր հոգեակը... Մի վայրկեան ևս, և խեղճ սպասուհին ուշաթափ կըլինէր:

—Չէ,—ասաց նա ինքն իրեն:—Դրանք պառաւ կանայք են, բոլորովին անծանօթ: Արի յետ գնամ:

Եւ նա շուռ եկաւ...

—Ամրա,—գոչեց բորոտներից մէկը:

Եգիպտուհին կուժը վայր դրաւ և սարսռալով յետ նայեց:

—Ո՞վ կանչեց ինձ,—հարցրեց նա:

—Ամրա:

Աղախնու ապշութիւնը սաստկացաւ:

—Ովքե՞ր էք դուք,—գոչեց նա:

—Ձո որոնած կանայքն են:

Ամրան չոքեց:

—Ո՜հ, տիրուհիս, տիրուհի՛ս, օրհնեալ է Աստուած, քո և իմ Աստուածը, որ առաջնորդեց ինձ դէպի քեզ:

Եւ ուժասպառ սպասուհին շարունակեց չոքէչոք յառաջ գիմել:

—Հա՛ց, Ամրա: Մի՛ մօտենար. մենք բորոտ ենք:

Այս խօսքերը բաւական էին: Երեսի վրայ ընկաւ Ամրան և այնպէս սաստիկ հեկեկաց, որ հորի մօտ կանգնածներն էլ լսեցին: Սակայն յանկած շարունակեց:

—Ո՜վ տիրուհիս, հապա Թիրզան ո՞րտեղ է:

—Ե՛ս եմ Թիրզան, սիրելի Ամրա: Փոքր ինչ ջուր չե՞ս տալ ինձ:

—Տես, ահա քեզ հաց և միս:

Եւ արդէն ուզում էր սփռոցը փռել, բայց տիրուհին ասաց.

—Պէտք չէ, Ամրա։ Այդ մարդիկ կըքարկոծենք քեզ և թոյլ չեն տալ, որ ջուր խմենք։ Զամբիւղդ թող և գնա կժովդ ջուր բեր մեզ համար։ Երկուսն էլ մենք կըտանենք քարայրը։ Շտապիր, Ամրա։

Այս բոլորը տեսնող մարդիկ ճանապարհ տուին աղախնուն։ Նրա դէմքի թախիծն այն աստիճան սրտաշարժ էր, որ մինչև անգամ օգնեցին նրան կուժը լցնել։

—Ո՞վքեր են նրանք,—հարցրեց մի կին։

—Մի ժամանակ շատ բարի էին դէպի ինձ,—ասաց Ամրան մեղմ ձայնով։

Կուժն ուսին դնելով նա յետ շտապեց, և այնքան մոռացել էր ինքն իրեն, որ գրեթէ կըշփուէր տիրուհուն, եթէ—զգուշացիր, մենք բոլոտ ենք—աղաղակը յանկարծ նրան չսաստէր։ Նա կուժը զամբիւղի մօտ դրաւ և մի քանի քայլ յետ քաշուեց։

—Շնորհակալ եմ, Ամրա, — ասաց տիրուհին, կուժն ու զամբիւղը վերցնելով։—Դու շատ բարի եա՛ր

—Ո՛ր և է բան չե՞ս պատուիրիլ,—հարցրեց Ամրան։

Մայրը դողում էր ծարաւից, բայց և այնպէս սպասից և հաստատ ձայնով ասաց նրան.

—Այո, գիտեմ... Յուզան արդէն յետ է եկել։ Անցեալ գիշեր տեսայ նրան աստիճանի վրայ քնած. տեսայ, ինչպէս դու նրան զարթեցրիր։

—Ո՛վ տիրուհի, դու տեսար նրան և չեկար,—գոչեց նա։

—Չեկայ, որովհետև չէի ուզում սպանել նրան։ Ես չեմ կարող այլ ևս զրկել նրանից։ Ո՜հ, Ամրա, Ամրա, գիտեմ, դու նրան սիրում ես։

—Այո,—փղձկալով ասաց հաւատարիմ սպասու-



հին և նորից ընկաւ ծունկի վրայ։—Ես պատրաստ եմ կեանքս անգամ տալ նրան։

—Մօսքերիդ ճշմարտութիւնը գործով պիտի հաստատես, Ամրա։

—Յօժար եմ։

—Ուրեմն չասես նրան, թէ մենք այստեղ ենք, և դու մեզ տեսել ես... Այս է միայն պատուէրս, Ամրա։

—Բայց նա ձեզ որոնում է, և յատկապէս ձեզ պտնելու համար է եկել հեռու տեղերից։

—Նա չպիտի գտնէ մեզ, նա չպիտի մեր այս վիճակին հնթարկուի... Լսիր, Ամրա։ Դու մեր պէտքերը կըդարմանես, ինչպէս որ այժմ արիր։ Փոքր ինչ անուշադ կըըերես մեզ... և այդ երկար չի տևիլ, ոչ։ Ամեն առաւօտ և երեկոյ այստեղ կըգաս... և...—մօր ձայնը նուաղում էր, հզօր կամքը համարեա թէ լքանում—և նրա մասին կըպատմես մեզ, րվ Ամրա. բայց մեր մասին ոչ մի բան չես ասիլ նրան։ Լսո՞ւմ ես։

—Ո՜հ, ինչպէս լսեմ նրա խօսելը ձեր մասին, ինչպէս տեսնեմ նրա պըղտոելը ձեզ փնտրելով... նրա սէրը տեսնեմ և գոնէ չասեմ, որ դուք ապրում էք։

—Արդեօք կարող ես, Ամրա, ասել նրան, թէ երջանիկ ենք։

Սպասուհին ձեռքերով ծածկեց իր երեսը։

—Ո՞չ,—շարունակեց տիրուհին։ — Ուրեմն լուռ կաց։ Այժմ գնա և երեկոյեան նորից եկ։ Մենք կըսպասենք քեզ։ Մնաս բարով։

—Ո՜հ, շատ ծանր է այս բեռը, տիրուհիս... ես չեմ դիմանալ,—ասաց Ամրան, երեսի վրայ ընկնելով։

—Հապա որքան մեզ ծանր կըլինէր տեսնել նրան մեր վիճակին հանդիպած,—պատասխանեց մայրը, թիրախայն տալով զամբիւղը։—Այս երեկոյ դարձեալ եկ,—կրկնեց նա և դէպի այրը յետ գնաց։

Մինչև նրանց անհետանալը Ամրան չոքած նայում էր. յետոյ վերկացաւ և տրտում սրտով ճանապարհ ընկաւ դէպի տուն։

Երեկոյեան նորից եկաւ, և այնուհետև ամեն առաւօտ և երեկոյ գալիս էր նրանց պէտքերը հոգալու համար։ Ո՛րքան էլ ամայի և քարոտ լինէր գերեզմանի այրը, դարձեալ բերդի գնդանի չափ սոսկալի չէր։ Նրանք կարող էին արեգակ, երկինք, աստղեր տեսնել։ Բաց երկնքի տակ աւելի հեշտ էր հաւատով ապասել մահուան ժամին։

## ԻԲ.

### Կոիւ

Եբրայեցոց եօթնեերորդ ամսի—նրանց Թիշրիի, իսկ մեր հոկտեմբերի—առաջին թուի առաւօտեան Բէն Հուրն աշխարհից դժգոհ վերկացաւ իր իջևանի անկողնից։

Մալուխի գալուց յետոյ նրանք անմիջապէս սկսել էին խուզարկութիւն անել։ Մալուխը գնացել էր Անտոնիա բերդը և համարձակ պատմել հրամանատար տրիբունին Հուրի տան անցեալը և Գրաւուսին հասած պատահարի հանգամանքները. նա պարզ ցոյց էր տուել, որ ընաւ մի քրէական յանցանք չկար այն դէպքի մէջ։ Ապա թէ ասել, որ եթէ դժբախտ գերդաստանի անդամներից մէկը գտնուի, պէտք կըլինի մի աղերսագիր ուղղել կայսրին և խնդրել, որ գտնուողի ստացուածքը վերադարձուի և նրա քաղաքացիական իրաւունքները վերահաստատուին։ Կայսրն անշուշտ կըհրամայէ մի օրինական քննութիւն անել, և գերդաստանի բարեկամները վստահ են, որ դա մի ցանկալի հետևանք կունենայ։

Տրիբունն իր կողմից պատմել էր Մալուխին կանանց գտնելը բերդի մէջ և տուել նրան կարդալու և արտագրելու իր իսկ կազմած արձանագրութիւնը, որ հիմնուած էր նրանց յաւտուկ ցուցման վրայ։

Այս բոլորից յետոյ Մալուխը շտապով վերադարձել էր Բէն Հուրի մօտ։

Թէ ինչպէս ազդից երիտասարդ Բէն Հուրի վրայ Մալուխի բերած ահռելի լուրը,—նկարագրել անհնարին է։ Նրա մեծ ցաւն արտասուքով և կամ բարկութեան փոթորկումով յայտնուելու ցաւ չէր։ Նա երկար ժամանակ լուռ մնաց. դէմքը գունատ էր, սիրտը թնդում էր։ Յետոյ սկսեց մրմնջալ.

—Բորոտներ, ուրուկներ... Նրանք... մայրս, Թերզան... բորոտներ։ Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ, ով Աստուած։

Նրա կուրծքը կեղեքւում էր մերթ կարեկցութեան սուր ցաւից, մերթ վրէժխնդրութեան ահեղի տենչից։ Վերջապէս ոտքի ելաւ։

—Պիտի որոնեմ նրանց, — ասաց նա։—Գուցէ արդէն մեռնում են։

—Ո՞րտեղ պիտի որոնես,—հարցրեց Մալուխը։

—Մի տեղ միայն գնացած կըլինին։

Բէն Հուրը և Մալուխը միասին գնացին Զար Ծորհրդի սարին ներհակ դռան կողմը, որ հնուց ուրուկների մուրալու տեղն էր, և ամբողջ օրն այնտեղ մնացին, ողորմութիւն բաշխելով, կանանց մասին հարց ու փորձեր անելով և նրանց գտնելու համար առատ պարգև խոստանալով։ Նոյնն արին և հետևեալ օրը և ամեն օր, մի քանի շաբաթ շարունակ, մինչև վեցերորդ ամսի վերջը։ Նրանք մի քանի անգամ աչքի անցրին

Ջրհորին մօտակայ այրերը, հարցրին նրանց բնակիչ-
ներին, բայց ի զուր... որովհետև կանայք չէին գըտն-
ւում: Վերջապէս եօթներորդ ամսի առաջին թուին
առաւօտեան Բէն Հուրը և Մալուխը լուր առան, թէ
Նորերս ոստիկանութեան ծառաներն երկու կին են
քարերով վռնդել Ջհնների դռան մօտերքից: Այս իրո-
ղութեան ժամանակին և պարագաների մանրակրկիտ
քննութիւնը ցոյց տուաւ նրանց, որ հալածական
թշուառները վնտրուած կանայքը պիտի լինին:

Բայց ո՞րտեղ էին նրանք և ի՞նչ եղան—այս
խնդիրների լուծումն և՛ս աւելի դժուարացաւ:

—Ինչ է որ մօրս ու քրոջս բորոտութեամբ վարա-
կեցին,—ասում էր որդին դառն զայրոյթով,—դեռ
քարերով հալածել են մեր քաղաքի դռներից: Մայրս
մեռած է... Թիրզան մեռած... Միայն ես եմ կենդանի,
և ինչո՞ւ ես միայն... Մինչև ե՞րբ, ով Աստուած, մինչև
ե՞րբ կանգուն մնայ այդ Հռոմը:

Բարկացած, վհատած և վրէժխնդրութեամբ բոր-
բոքուած նա դուրս եկաւ սենեակից և մտաւ խանի
բակը. այնտեղ մի ահագին բազմութիւն կար, որ եկել
էր գիշերով: Նա ուշք դարձրեց մանաւանդ մի խմբի
վրայ. դա կազմուած էր զօրեղ, առոյգ երիտասարդ-
ներից, որոնք իրենց լեզուով, համարձակ շարժում-
ներով և անվեհեր հայեացքով ցոյց էին տալիս, որ
գիւղացիք են, այլ ոչ թէ Երուսաղէմի գռեհիկներ: Եւ
իրօք նրանք լեռների առողջ օդում մնծացած բնու-
թեան ազատ որդիք էին: Բէն Հուրն իմացաւ, որ
նրանք մտադիր են այն օրուայ Շեփորների տօնին
մասնակցել և եկած են Գալիլիայից, այսինքն այն
գաւառից, ուր նա յատկապէս ցոյս ունէր իր յառա-
ջադրած գործի համար ժիր օգնութիւն գտնելու:

Մինչ նա մտածում էր, թէ ինչ բաներ կարելի



է այդ քաջերի հետ դլուխ բերել, եթէ նրանք հռո-
մէական խիստ կարգերով հրահանգուած մի լեգէոն
կազմէին, մի մարդ եկաւ խանի բակը. նրա դէմքն ու
աչքերը յուզմունքից վառուած էին:

—Ինչո՞ւ էք այստեղ ժամանակ կորցնում,—գոչեց
նա, մօտենալով գալիլիացոց:—Տաճարի ռաբբիներն ու
ծերերն այժմ գնում են Պիղատոսի մօտ: Եկէք շուտով,
մենք էլ նրանց միանանք:

Մի վայրկենում մարդիկ նրա շուրջը խռնուեցին:

—Պիղատոսի՞ մօտ: Ի՞նչ են ուզում նրանից:

—Մի դաւադրութիւն է յայտնուել: Պիղատոսը
վճռել է իր նոր ջրանցքի ծախքերը տաճարի գանձից
վճարել:

—Ի՞նչ: Տաճարի սուրբ փողերի՞ց:

Այս հարցումը հրացայտ աչքով կրկնեցին մարդիկ:

—Դա կորբան է, Աստուծու գանձ: Հնապա թող
համարձակուի գոնէ մի շէքելի դիպչել:

—Գնանք,—գոչեց լրաբերը: — Թափօրն արդէն
կամրջից անցած կըլինի: Ամբողջ քաղաքը ոտքի վրայ
է և վազում է նրա ետևից: Շուտ արէք, մենք էլ
գնանք:

Երիտասարդները մի րոպէում աւելորդ հագուստը
և գլուխների փաթեթը դէն ձգեցին և արդէն պատ-
րաստ կանգնած էին իրենց անթև նետքնակով, որ
կրում են հնձողները արտը հնձելիս, թիավարները
նաւակում, հովիւները բլրից բլուր շրջելիս և մշակները
այգի քաղելիս: Նրանք ամրացրին գօտիները ու ասացին.

—Պատրաստ ենք:

Այժմ Բէն Հուրը դիմեց նրանց.

—Գալիլիացի՛ք,—ասաց նա,—ես Յուդայի որդին
եմ: Թոյլ կըտա՞ք, որ միանամ ձեզ հետ:

—Գուցէ բանը կռուի հասնի,—պատասխանեցին նրանք։

—Ես վախկոտներից առաջինը չեմ լինիլ։

Պատասխանը դիւր եկաւ նրանց, և լրաբերն ասաց.

—Տեսնում եմ, ուժով տղայ ես։ Ուրեմն եկ։

Բէն Հուրը վերարկուն հանեց։

—Միթէ, իրա՞ւ բանը կռուի կը հասնի,—հարցրեց նա հանդարտ ձայնով, մինչ ամրացնում էր գօտին։

—Այո՛։

—Ո՞ւմ հետ։

—Պահակների հետ։

—Լեգէոնի՞ց են։

—Հապա ո՞ւմ կը վստահանայ հռոմայեցին։

—Ի՞նչ զէնքով են։

Մարդիկ պատասխան չտուին։

—Դէ լաւ,—շարունակեց Բէն Հուրը,—ինչ որ կարելի է, այն կանենք։ Բայց լաւ կը լինէր մի առաջնորդ ունենալ։ Լեգէոնի զինուորները միշտ ունին մի առաջնորդ. այս պատճառով էլ միաբան են գործ տեսնում։

Գալիլիացիք շուարած մտիկ տուին նրան. այս գաղափարը մի նոր բան էր նրանց համար։

—Գոնէ խօսք տանք իրար, որ միասին կը մնանք, ասաց Բէն Հուրը։—Ես արդէն պատրաստ եմ, իսկ դո՞ւք։

—Մենք էլ պատրաստ ենք, գնանք։

Ճանը, ինչպէս որ արդէն ասած ենք, գտնւում էր Բեզէթայում, նոր քաղաքում, և պրետորիումը գնալու համար—այս հնչուն անունն էին տուել հռոմայեցիք Հերովդէսի սիրնեան պալատին—պէտք էր անցնել տաճարի հիւսիսային և արևմտեան կողմերն ընկնող տափարակով։ Ճումբը հասաւ Ակրա բլրին. այն-



տեղից մինչև պալատի աւագ դուռը մնում էր միայն մի քանի քայլ։ Ճանապարհին նրանց միացան և ուրիշ մարդիկ. նրանք էլ զայրացած էին տաճարի գանձերը ծախսելու մասին պտտուող լուրերից։ Երբ խումբը վերջապէս պրետորիումի մեծ դռանը հասաւ, արդէն ռաբբիներն ու ծերերը և նրանց բազմաթիւ հետևորդները ներս էին մտած, իսկ դուրսը մի ահագին բազմութիւն էր աղմկում։

Դռան մարմարեայ կամարի առջև մի սպառազէն վաշտ էր կանգնած հարիւրապետի հետ միասին։ Զինուորների սաղաւարտներն ու վահանները կարծես այրւում էին արևից. բայց նրանք շար ի շար կանգնած էին՝ անտարբեր թէ արևի կիզիչ շողքին և թէ խուժանի գոռումին։ Այդ միջոցին մի ստուար ամբոխ ներս խուժեց բրօնզէ դռնով և մի քանի մարդիկ դուրս եկան։

—Ի՞նչ են անում այնտեղ,—հարցրեց մի գալիլիացի դուրս եկածներից մէկին։

—Ոչինչ,—պատասխանեց վերջինը։—Ռաբբիները պալատի առջև սպասում են. ուզում են տեսնել Պիղատոսին, բայց նա ներսը փակուած, նստած է։ Մարդ են ուղարկել ասելու նրան, թէ չեն հեռանալ՝ մինչև որ իրենց ասելիքը չլսէ։ Մինչև այժմ սպասում են։

—Մտնենք,—ասաց Բէն Հուրը։

Նա տեսաւ—ինչ որ իր ընկերները հաւանականաբար չէին տեսնում,—որ դատաւորի և բողոքողների միջև ոչ միայն մի գժտութիւն, այլև ուրիշ շատ կարևոր խնդիր կայ, այն է, թէ ո՞վ որին տեղի կը տայ։

Դռան միւս կողմը սաղարթալի ծառեր էին բուսած։ Անց ու դարձող հրէաները խուսափում էին նրանց ստուերից, որ ընկնում էր մաքուր ու սպիտակ սալայատակի վրայ, որովհետև—տարօրինակ բան—մի ռաբ-

բիական օրէնք արգելում էր ձրևէ ծառ կամ թուփ տնկել Երուսաղէմի շրջապատում: Աւանդութեան ասելով՝ իմաստուն թագաւորն անգամ ստիպուած էր ոչ թէ այդտեղ, այլ ներքևի ձորում, էն Րոգելի կողմերում տնկել եգիպտացի սիրուհուն նուիրած պարտէզը:

Ծառերի գագաթներից շատ բարձր էր պալատի փայլուն ճակատը: Մեր խումբը դէպի աջ դիմելով՝ մի ընդարձակ քառակուսի բակ մտաւ. նրա արևմտեան մասումն էր կանգնած դատաւորի ապարանքը: Բակը լի էր զրգռուած և տաքացած բազմութեամբ: Ամենքի աչքը նախագաւթի փակ դռանն էր յառած: Դրա ներքևը շարուած էին ուրիշ լեգէոնի զինուորներ:

Բազմութիւնն այնպէս հոծ էր, որ եթէ ընկերները կամենային էլ առաջ անցնել, չէին կարող. նրանք կանգ առան վերջին շարքում, իրենց շուրջը նայելով: Փաթի մէջ տեսան մեծ մեծ վաթթոցներով ռաբբիներ, որոնց անհամբեր շարժուձևերը գրգռում էին նոյնիսկ եաևը կանգնած ամբոխին: Մտէպ լսում էր.—Ո՛վ Պիղատոս, եթէ դու դատաւոր ես, գնւրս եկ, դուրս եկ:

Բարկութիւնից կարմրած մի մարդ բազմութիւնը ճեղքելով դուրս եկաւ ու գոռաց.

—Այստեղ Իսրայէլն արժէք չունի: Շներն անգամ աւելի յարգի են Հռոմում, քան մենք այստեղ մեր սրբազան հողի վրայ:

—Չի՞ ուզում դուրս գալ:

—Դուրս գա՞լ: Երեք անգամ արդէն մերժեց:

—Ի՞նչ են մտադիր անելու ռաբբիները:

—Ինչ որ արին Կեսարիայում—ծնալ, սպասել մինչև որ լսէ:

—Ի՞նչ ես կարծում, հօ չի՞ համարձակուիլ գանձին դիպչել,—հարցրեց մի գալիլիացի:



—Ո՞վ գիտէ: Միթէ հռոմայեցի չէր այն մէկը, որ սրբութիւն սրբոցը պղծեց: Ո՞ր բանն է սուրբ հռոմայեցու համար:

Մի ժամ անցաւ, և թէպէտ Պիղատոսը չէր զլանում պատասխան տալու, ռաբբիներն ու ամբոխը դեռ ծնում էին սպասելով: Կէս օր եղաւ. արևմուտքից տեղատարափ վրայ հասաւ, բայց դարձեալ ոչ մի փոփոխութիւն—միայն թէ բազմութիւնը ստուարանում էր և յուզմունքը գնալով աճում:—Դուրս եկ, դուրս եկ,—անընդհատ գոչում էին ամեն կողմից մի քանի անպատկառ յաւելուածներով... Բէն Հուրն աշխատում էր, որ իր խումբը չցրուի. նա հաւատում էր, որ հռոմայեցու խոհեմութիւնը տեղի կըտայ հպարտութեան, և կռիւը շուտով կըսկսուի: Պիղատոսը միայն մի առիթի էր սպասում բռնութեամբ ընկճելու ըմբոստներին:

Եւ ահա բազմութեան մէջ հարուածների թնդիւն հնչեց... հարուածներին ցաւի ճիչեր յաջորդեցին: Գաւթում կանգնած ռաբբիները շուռ եկան: Եաևի ամբոխը առաջ գրոհեց. մէջտեղի մարդիկ ճիգ էին թափում դուրս պրծնելու. հակընդդէմ ուժերի ճնշումն ու իրարանցումը սաստկացաւ: Հազարաւոր ձայներ միանուագ հարցնում էին, թէ ինչ է պատահել: Մի պատասխան տուող չկար. ժխորն արդէն տագնապիչ էր:

Բէն Հուրը շարունակում էր զգաստ մնալ:

—Չե՞ս կարող տեսնել—ասաց նա գալիլիացիներից մէկին:

—Ոչ:

—Արի՛ ես քեզ բարձրացնեմ:

Բէն Հուրը բռնեց նրա մէջքից և բարձրացրեց:

—Ի՞նչ կայ այնտեղ:

—Այժմ տեսնում եմ,—ասաց նա:—Մի քանի մարդիկ բրներով ծեծում են ամբոխին:

—Ովքե՞ր են։

—Հրեական հագուստով են, բայց, Աստուած վկայ, հռովմայեցիք են... Բրերը թակի նման թռչկոտում են... Ծերունի ռաբբին դետին ընկաւ։ Ոչ ոքի չեն խնայում։

Բէն Հուրը թողեց մարզուն։

—Գալիլիացիք,—ասաց նա,—այս բոլորը Պիղատոսի հնարքն է։ Եթէ այժմ դուք լինէ հետևէք, մենք այդ մարդկանց ջարդ ու բուրդ կանենք, չնայելով նրանց բրերին։

Գալիլիական ոգին արթնացաւ։

—Այո՛, այո՛,—գոչեցին նրանք։

—Յետ դառնանք դէպի բակի ծառերը։ Որքան էլ Հերովդէսն ապօրինի տնկած լինի այն ծառերը, դուցէ մեզ պէտք կըգան։ Եկէ՛ք։

Բոլորն էլ միասին վազեցին և ամեն մէկը մի ճիւղ կտրեց ծառերի ընից. այժմ նրանք էլ զինուած էին։

Յետ գալիս հանդիպեցին ամբոխին, որ խուճապած փախուստ էր տալիս դէպի դուռը։ Գաւթի մօտերքում տիրում էր շփոթութիւն—գոռում—գոչում, նզովք ու անէծք, լաց ու կոծ։

—Դէպի պարիսպը, հրամայեց Բէն Հուրը։—Դէպի պարիսպը. թողէ՛ք անցկինան։

Աջակողմեան պարսպին յենուելով Բէն Հուրի ընկերները՝ փախստեան խուժանի հրումից ազատ մնացին և քայլ առ քայլ անցան հասան մինչև գաւթի մօտերքը։

—Այժմ լինէ՛ հետևեցէ՛ք, և իրարուց չբաժանուէ՛ք։

Ընկերները Բէն Հուրի ետևից սլացան, և այժմ խուճապելու հերթը ռամկին ծեծող ու ծաղրող հռոմէական զօրքին հասաւ. որովհետև ճարպիկ, ուժեղ, կըռուասէր գալիլիացի քաջերի գրոհն ահռելի էր. նրանց հարուածը արագահաս, մահաբեր, մոլեգնութիւնն աւելի։ Բէն Հուրը հրաշք էր գործում. նրա նախկին մարզանք-



ները պէտք եկան. նրա երկայն բազուկը, արագ շարժումը, անզուգական զօրութիւնը միշտ յաղթող էին հանդիսանում ամեն տեսակ ընդհարման մէջ։ Թէ կըռուող էր, թէ առաջնորդ։ Նրա ճօճած հաստ փայտը երկու անգամ ոսոխին խփելու հարկ չունէր—մէկ հարուածն էլ հերիք էր։ Միևնոյն ժամանակ նա հետևում էր ընկերների կռուին և այնտեղ հասնում, ուր որ նրա ներկայութիւնն ամենից աւելի կարևոր էր։ Նրա մարտի կոչը նրանց եռանդը բորբոքում էր և սարսափ պղղում թշնամուն։ Հռոմայեցիք յանկարծ այսպէս պաշարուելով, սկսեցին քիչ քիչ նահանջել, յետոյ յանկարծ թիկունք դարձրին և գաւիթը փախան։ Անվեհեր գալիլիացիք ուզում էին հալածել նրանց մինչև նոյնիսկ աստիճանները, բայց Բէն Հուրը թոյլ չտուաւ։

—Կացէ՛ք, տղէ՛ք,—գոչեց նա։—Ահա հարիւրապետն ու պահակները գալիս են։ Նրանք սուրեր և վահաններ ունին. մենք չենք կարող նրանց հետ կռուել։ Ինչ որ մենք կարող էինք անել, լաւ արինք. այժմ յետ գնանք։

Գիւղացիք հնազանդուեցին և ծանրաքայլ յետ գնացին, դէս ու դէն ընկած մարմինների վրայից անցնելով, որոնցից ոմանք թաւալւում էին յատակի վրայ ու հեծում, ոմանք օգնութիւն խնդրում, ոմանք էլ իսպառ անշունչ էին։ Սակայն ընկածները միայն հրէաներ չէին, և այս արդէն մի սփոփանք էր գիւղացոց համար։

Մինչ նրանք հեռանում էին՝ հարիւրապետն սկսեց հայհոյել նրանց։ Բէն Հուրը ծիծաղելով հեգնեց նրան և ասաց.—Եթէ մենք հրէայ շներ ենք, դուք հռոմայեցի բորենիներ էք։ Միայն թէ այստեղ մնայիք, մենք նորից յետ կըգանք։

Գալիլիացիք քրքջալով հեռացան։

Դեռևս մի այնպիսի մեծ քաղմութիւն

կաբ, որի նմանն Անտիոքի կրկէսում անգամ չէր տեսնուած: Տների կտուրները, փողոցները, բլուրները միանգամայն բռնուած էին աղօթող ու լացող ժողովրդով:

Բէն Հուրի խումբը դուրս եկաւ առանց արգելքի հանդիպելու պահակների կողմից: Բայց անցան թէ չէ՝ գաւթի պահապան հարիւրապետը վրայ հասաւ և Բէն Հուրի ետևից կանչեց.

—Ա՛յ դու լիրբ: Հռոմայեցի՛ ես դու, թէ՞ հրէայ:

Բէն Հուրը պատասխանեց.

—Ես Յուդայի որդին եմ, այստեղացի: Ասա, ինչ ես ուզում դու ինձնից:

—Կա՛ց և կռուի՛ր:

—Մենա՞կ:

—Ի՛նչպէս կուզես:

Բէն Հուրը նրան ծաղրելով ասաց.

—Ո՛վ քաջ հռոմայեցի, ով հռոմէական Արամազդի արժանի զաւակ, ես անզէն եմ:

—Ես քեզ իմ զէնքն ու զրահը կըտամ, իսկ ինքս իմ պահակի զէնքերը կառնեմ,—պատասխանեց հռոմայեցին:

Այս խօսակցութիւնը լսող մարդիկ լռեցին. լռութիւնը տարածուեց:

Բէն Հուրը նոր էր յաղթել մի հռոմայեցու Արեւելքում, Անտիոքի աչքի առջև. եթէ այժմ երկրորդին էլ Երուսաղէմի դէմ յանդիման յաղթահարէր, իր հռչակն օգտակար կըլինէր Նոր Թագաւորի արդար դատին:

Նա չյապաղեց և մօտենալով հարիւրապետին՝ համարձակ ասաց.

—Պատրաստ եմ: Տո՛ւր ինձ սուրդ և վահանդ:

—Իսկ սաղաւարտս և լանջապանո՞ւկս,—հարցրեց հռոմայեցին:



—Ինձ աւելորդ են. վրադ պահի՛ր:

Սուրն ու վահանն ստանալուն պէս՝ Բէն Հուրը կանգնեց. հարիւրապետն էլ անմիջապէս պատրաստուեց: Այդ միջոցին զինուորներն անշարժ սպասում էին դռան մօտ, իսկ բազմութիւնը, սկսուելու մենամարտին ակնկալող, բերնէ բերան հարցնում էր—ո՞վ է դա:—եւ ոչ ոք չգիտէր:

Հռոմէական զօրքի առաւելութիւնն երեք բանի մէջ էր—հնազանդութիւն հրամանին, լեգէոնների բաժանումն և մի ինքնուրոյն գործածութիւն կարճ սրի: Լեգէոնի զինուորները երբէք հարուած կամ զարկ չէին տալիս սրով, այլ թէ՛ յարձակուելիս և թէ՛ յետ նահանջելիս սուրը մխում էին թշնամու դէմքին:

—Դէ պաշտպանուի՛ր,—գոչեց Բէն Հուրը և ոտքի վրայ սլացաւ:

Մի վայրկեան նրանք ոտք ոտքի դէմ կանգնած՝ վահանների շուրթի վրայով ծուռ ծուռ իրար մտիկ տուին. ապա թէ հռոմայեցին իր վահանը մեկնելով, մի տակի մխում կեղծեց: Հրէան ծաղրեց նրան: Երկրորդ մխումը երեսի դէմ էր: Հրէան խլոյն մի քայլ արաւ դէպի ձախ. մխումն արագ էր, բայց քայլը նրանից էլ արագ: Նա իր վահանը թշնամու վերցուած թևի տակ հրեց և այնպէս ուժով բարձրացրեց, որ սուրն ու թևը վահանի վրայ ճնացին. յետոյ մի երկրորդ քայլ նորից դէպի ձախ, և թշնամու աջ կողմը հարուածի համար մերկ մնաց: Հարիւրապետն այնպէս ընկաւ կրծքի վրայ, որ սալայատակը թունդ հնչեց: Բէն Հուրն արդէն յաղթել էր: Ոտքը թշնամու կռնակին դրած՝ նա սուսերամարտի կանոնով վահանը բռնեց իր ձախի վրայ և ողջոյն տուաւ շուարուած ու ապշած զինուորներին:

Այս յաղթանակը նշմարելուն պէս բազմութիւնը

խելքը թռցրեց։ Թաշկինակները սկսեցին ճօճել տանիքներից և ցնծալ, և եթէ Բէն Հուրը չարգելէր, գալիլիացիք իրենց ուսերի վրայ կըտանէին նրան։

Այդ միջոցին դռնից դուրս եկաւ մի երկրորդ սպայ։ Բէն Հուրը դարձաւ նրան և ասաց.

—Ընկերդ մեռաւ պինուորի պէս։ Ձեմ ուզում նրան կողոպտել. միայն թէ նրա սուրն ու վահանն իմս են։

Ասաց ու հեռացաւ։ Յետոյ դիմեց գալիլիացոց.

—Եղբայրնե՛ր, դուք ցոյց տուիք, որ քաջ էք։ Այժ երեկոյ սպասեցէք ինձ Բեթանիայի խանում։ Ես ձեզ մի բան կառաջարկեմ, որ շատ կարևոր է Իսրայէլի համար։

—Ո՞վ ես դու,—հարցրին մարդիկ։

—Յուդայի որդին,—պատասխանեց նա պարզ կերպով։—Ուրեմն կըգա՞ք։

—Այո՛, այո՛։

—Այս սուրն ու վահանը հետներդ կըբերէք, երբ որ գաք։

Նա բանի ճանապարհ ճեղքեց իրեն իսկոյն շրջապատող հրէաների միջով և արագ արագ անհետացաւ։

Պիղատոսի կարգադրութեամբ ժողովուրդը քաղաքից եկաւ և իր վիրաւորներն ու մեռելները վերցրեց։ Մեծ էր սուգը, բայց ամենքն էլ սփոփւում էին նոր հերոսի յաղթանակով, ամեն տեղ նրա անունը հարցնում և նրա գործը հռչակում էին։ Նրա քաջութեամբ ոգի էր առել ընկճուած ազգը. յիշում էին Մակաբայեցոց դիւցազնական գործերն ու շշնջում իրար հետ.

—Ա՛յլ ևս փոքր ինչ համբերութիւն, եղբայրնե՛ր, և Իսրայէլը կազատուի՛։ Յուսանք և համբերե՛նք։

Այս կերպով Բէն Հուրը համբաւ ստացաւ Գալիլիայում և ճանապարհ հարթեց և՛ աւելի մեծ ծառայութեան համար, որ մտադիր էր մատուցանել իր ապագայ թագաւորին։

Ի՞նչպիսի յաջողութեամբ—այդ յետոյ կըտեսնենք։

## ԻԳ.

## Մարգարէն

Տեսակցութիւնը Բէթանիայի պանդոկում ժամադրութեան համեմատ տեղի ունեցաւ։ Այնուհետև Բէն Հուրը նոր ընկերների հետ Գալիլիացոց երկիրը գնաց, ուր իր հռչակն արդէն ամենքին յայտնի էր։ Դեռ ձմեռը չանցած՝ նա հաւաքեց այնտեղ երեք լեգէոն. կարող էր և աւելի հաւաքել, որովհետև Գալիլիացոց զինուորական ոգին դեռ լիովին արթուն էր. սակայն չարաչ, զգուշանալով թէ Հռոմից և թէ Հերովդէս Անթիպասից։ Աւժամանակ նա բաւականացաւ այն երեքով և սկսեց կրթել նրանց ու մարզել։ Սպաներին նա տանում էր Տրախոնիտիսի հրաբղխային գաւառը և այնտեղ վարժում սուր ու տէգի գործածութեան և լեգէոնական շարժուձևերի մէջ։ Արդէն պատրաստուածներին արձակում էր, որ տուն գնան և իրենց մարդկանց հրահանգեն։

Այս գործը հարկաւ համբերութեան, ճարտարութեան, եռանդի ու ջանքի կարօտ էր—յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են առանձնապէս այն մարդուն, որ ձգտում է մի դժուար ձեռնարկութեան համար ոգևորել ուրիշներին։ Եւ Բէն Հուրն անշուշտ լիովին օժտուած էր նրանցով։ Եւ որքան էր աշխատում նա, որքան փոյթ ու սէր դնում գործի մէջ։ Բայց և այնպէս նրա ձիգերը զուր կանցնէին, եթէ Սիմոնիդէսը և Իլդերիմը նրան չօգնէին — առաջինը ջենք ու

պրամ հասցնելով, իսկ երկրորդը պարէն ու պահակ։ Սակայն այս էլ չէր նպաստիլ ձեռնարկութեան, եթէ գալիլիացոց քաջութեան ոգին վառ չլինէր։

Այս անունով յայտնի էին Ասերի, Զաբուղոնի, Իսաքարի և Նեփթաղիմի տոհմերը և իհնուց դրանց դաշնակից գաւառների բնակիչները։ Տաճարի մօտերքում ծնուած հրէան արհամարհում էր այս հիւսիսային եղբայրներին. սակայն Թալմուդի մէջ ասուած է. «Գալիլիացին պատիւ է սիրում, հրէան փող»։

Նրանք սրտանց ատելով Հռոմը, սրտանց էլ սիրում էին իրենց երկիրը. և իւրաքանչիւր ապստամբութեան ժամանակ հարիւր յիսուն հազար գալիլիացի կորիճներ էին նահատակուած։ Նրանք սովոր էին մեծ ոտներին զինուորական կարգով երուսաղէմ գալ և զօրքի նման բանակ դնել։ Նրանց միջից էր, որ դուրս եկան եբրայական աղգի փառքը կազմող Երգ Երգոցի երգիչը և Յովսէփի նման մարգարէները։

Անկարելի է, որ այս առոյգ, հպարտ, եռանդուն և հանճարեղ աղգի վրայ մի թուլչկան ազդեցութիւն չաներ գալոց թագաւորի համբաւը։ Հերիք էր և այն մէկ լուրը, թէ թագաւորը պիտի գայ Հռոմը կործանելու համար, որ այս մարդիկ ոգևորուէին Բէն Հուրի քարոզած գաղափարով։ Բայց երբ նրանք այն էլ լսեցին, թէ Նոր Թագաւորն ամբողջ աշխարհի տէր կըլինի, կեսարից էլ զօրեղ, Սողոմոնից էլ փառաւոր, և նրա իշխանութիւնը յաւիտեան կըտևի,—այլ ևս չէին կարող այն հրապոյրին դիմադրել, և հոգւով սրտով նուիրուեցին թագաւորի սուրբ գործին։ Նրանք հարցնում էին Բէն Հուրին, թէ ինչ փաստերով կը հաստատէ իր խօսքերը, և նա առաջ էր բերում մարգարէներին ու կրկնում Անտիոքում սպասող Բաղդասարի պատմութիւնը։ Այս պատմութիւնը գոհացնում էր նրանց,



որովհետև ժողովրդին սիրելի էր Մեսիան, որին վաղուց սպասում էին տենչալով. ահա վերջապէս նա գալու էր։

Այսպէս անցան ձմերային ամիսները. զուարթ գարունն էլ վրայ հասաւ, արևմտեան ծովի կողմից առատ անձրև բերելով։ Բէն Հուրն ու իր ընկերները արդէն այնքան պատրաստ էին, որ կարող էին ասել.—Թող գայ այժմ բարի թագաւորը և յայտնէ, թէ ո՞րտեղ է ուզում իր աթոռը հաստատել։ Մենք այդ աթոռը ձեռքով կըպաշտպանե՞նք։

Գալիլիացիք ճանաչում էին Բէն Հուրին մի՛այն իբրև Յուդայի որդի. բուն անունը չգիտէին։

* * *

Մի երեկոյ Բէն Հուրը մի քանի գալիլիացի ընկերներով նստած էր իր քարայրի առջև Տրախոնիտիսի սահմանում։ Յանկարծ մի արաբացի ձիաւոր արշաւակի մօտեցաւ և մի նամակ յանձնեց նրան։ Նամակի մէջ գրուած էր.

«Երուսաղէմ, Նիզանի 4.

«Մի մարգարէ է յայտնուել, որին մարդիկ եղիան են անուանում։ Շատ տարիներ անապատում ճգնել է. մեր կարծիքով իրաւ մարգարէ պիտի լինի։ Ձեզուն էլ բուն մարգարէական է։ Իր ճառերում միշտ խօսում է մէկի մասին, որ իրենից էլ շատ մեծ է։ Այն մէկը շուտով պիտի գայ, և ինքն ահա սպասում է նրան Յորդանանի արևելեան ափի վրայ։ Ես ինքս տեսայ եղիային, լսեցի նրան և հաւաստի եմ, որ նրա ակնարկած այն մէկը քո սպասած թագաւորն է։

«Ամբողջ Երուսաղէմն շտապում է մարգարէի մօտ գնալ, և նրա բնակած գետափի վրայ այնքան մարդ է

հաւաքուած, ինչքան որ հաւաքւում են Պասեքի տօնին մեր Զիթենեաց սարի վրայ։

*Մալուխա։*

Բէն Հուրի դէմքն ուրախութիւնից բռնկուեց։

—Ո՛վ ընկերներ,—ասաց նա,—այս լուրը վերջ է դնում մեր սպասողական վիճակին։ Թագաւորի մուննատիկը երևացել է և յայտնել, թէ նա արդէն գալիս է։

Մարդիկն էլ նամակի խօսքերը լսելով՝ նրա հետ միասին ուրախացան։

—Վե՛ր կացէք այժմ,—յարեց նա,—և պատրաստուեցէք ձեր տները գնալու, և երբ հասնէք, իմաց տուէք մեր զօրքին, որ հրամանիս սպասեն։ Իսկ ես կերթամ տուգելու, թէ ո՞րտեղ է թագաւորը, և լուր կբտամ ձեզ։ Աւ ժամանակ երջանիկ յոյսով բաժանուեցնք։

Բէն Հուրն իր քարայրը մտաւ և նամակները գրեց Իլդերիմին և Սիմոնիդէսին, իր առած լուրը հաղորդելով նրանց և յայտնելով, թէ ինքը մտադիր է անմիջապէս Երուսաղէմ գնալ։ Նամակներն ուղարկեց երկու արագ սուրհանդակի միջոցով։ Գիշերը վրայ հասնելուն պէս նա ձի հեծաւ և մի արաբի հետ փութաց դէպի Երուսաղէմ, Ռաբբաթ-Ամմոնի և Դամասկոսի կարաւանների ճանապարհը բռնելով։

Արաբ ընկերը վստահելի ուղեցոյց էր, Ալդեբարանը սրընթաց. ձիաւորները կէս գիշերին հրաբղխային գաւառից անցան և արդէն արշաւում էին դէպի հարաւ։



## ԻԳ.

### *Կէս օրուան դաղար*

Բէն Հուրը մտադիր էր արեգակն ծագելուն պէս՝ նորից շեղուել և հանգստանալու համար մի ապահով տեղ ընտրել, բայց նա դեռ անապատուհի էր, երբ արշալոյսը վրայ հասաւ. պէտք եղաւ առաջ գնալ։ Արաբը խոստանում էր փոքր ինչ յետոյ հասցնել նրան մի լեռնապատ հովիտ, ուր կարելի էր թէ ջուր գտնել, թէ արօտ։

Եւ մինչ նա առաջ էր գնում ապագայի վրայ մտածելով, արթուն ուղեցոյցն զգուշացրեց, թէ իրենց հետից օտարական մարդիկ են գալիս։ Առաւօտեան պեղին փայլով լուսաւորուած աւազային անապատը անսահման տարածւում էր և ոչ մի տեղ դալարի նշոյլ չէր երևում։ Այսպիսի ամայութեան մէջ անկարելի է, որ շարժուն առարկան չնկատուի։

—Դա մի ուղտ է հեծեալներով,—ասաց իսկոյն առաջնորդը։

—Ուրիշ ուղտեր չե՞ն հետևում,—հարցրեց նրան Բէն Հուրը։

—Մենակ է։ Ո՛չ... հետն էլ մի ձիաւոր կայ, երևի թէ ուղեցոյցն է։

Փոքր ինչ յետոյ Բէն Հուրն էլ ուղտը նկատեց. դա մի սպիտակ, մեծ ուղտ էր՝ նման այն հրաշալի կենդանուն, որի վրայ նստած մի ժամանակ Դաւինէի անտառն էին մտել Բաղդասարն ու իր դուստրը։ Իսկ և իսկ այն ուղտն էր... Բէն Հուրը յիշեց եգիպտուհուն և անգիտակցաբար իր նժոյգի քայլերը ծանրացրեց. վերջապէս, որոշ տեսաւ մի դեսպակ և մէջը երկու անձն։ Մի՞թէ Բաղդասարն ու Իրասն են... և եթէ նրանք են,

արդեօք ինքը յայտնուէր նրանց։ Բայց անկարելի է, որ նրանք լինին։ Ի՞նչ գործ ունէին անապատում... այն էլ առանց հետևորդների։

Մինչ նա այսպիսի հարցեր էր տալիս ինքն իրեն, մեծաքայլ ուղտն արագ արագ մօտենում էր։ Բէն Հուրը լսեց նրա զանգակների հնչիւնը և ճանաչեց այն շքեղ տապճակն ու սարքը, որոնք այնքան հիացրել էին կաստալեան աղբիւրի ամբոխին։ Ճանաչեց և եթովպացուն, որ միշտ ուղեկցում էր Բաղդասարին։ Ահագին ուղտը նրա ձիու մօտ կանգ առաւ։ Այն ժամանակ Բէն Հուրը վերև նայելով՝ Իրասին էլ ճանաչեց, որ ապշած աչքով նրան էր նայում վարագոյրի ետևից։

—Ճշմարիտ Աստուծու օրհնութիւնը վրադ լինի, —ասաց Բաղդասարը դողդոջ ձայնով։

—Քեզ էլ նրա խաղաղութիւնը,—պատասխանեց Բէն Հուրը։

—Աչքերս տկարացել են ծերութիւնից,—շարունակեց ալևորը,—բայց տեսնում եմ, որ դու Հուրի որդին ես։ Մի քանի ամիս առաջ դու հիւր էիր վհանձն Իլդերիմի վրանում։

—Եւ դու իմաստուն Բաղդասարն ես։ Մասամբ քո ճառերի պատճառով է—ապագայ սուրբ դէպքերին վերաբերեալ ճառերի,—որ ես այժմ անապատումն եմ գտնում։ Իսկ դուք ինչո՞ւ էք մենակ գալիս այսպիսի տեղ։

—Աստուած ամեն տեղ է, և ուր որ նա է, այն տեղ ոչ ոք մենակ չէ,—պատասխանեց Բաղդասարը հանդիսաբար։—Մենք գալիս էինք Երուսաղէմ գնացող կարաւանի հետ, որին ուղեկցում էր և մի կոհորտ, բայց նրա ծանր շարժումից դժգոհ լինելով, մենք այս առաւօտ սովորականից վաղ ճանապարհ ընկանք և ահա այսքան առաջ անցանք։ Աւազակներից չենք վախենում



—ես Իլդերիմ Շեյխի կնիքն ունիմ։ իսկ գիշատիչ գազանների դէմ մեր պաշտպանն Աստուած է։

Բէն Հուրն ուղտի վիզը շոյելով ասաց.

—Բարեսիրտ Շեյխի կնիքը լաւ անցագիր է անապատում, իսկ գալով այս արքայական կենդանուն, որ առիւծը սրա ետևից կըհասնի։

—Այո՛,—վրայ բերաւ Իրասը,—բայց արքաներն անգամ անկարող են երկար դիմանալ ծարաւութեան։ Եթէ դու այն Բէն Հուրն ես, որին ես առիթ եմ ունեցել ճանաչելու, ցոյց տուր այս անապատում մեզ մի աղբիւր, որի մօտ կարելի լինէը զովանալ։

Բէն Հուրն իսկոյն պատասխանեց.

—Ո՛վ սիրուն եգիպտուհի, փոքր ինչ համբերութիւն ունեցիր։ Մենք կըհասնենք այն տեսչալի աղբիւրին, և ես վստահ եմ, որ նրա ջուրը նոյնքան անոյշ ու զովարար կըլինի, որքան և հռչակաւոր կաստալիայի աղբիւրինը։ Շտապենք ուրեմն։

Բէն Հուրն ու իր ընկերը առաջ անցան։

Փոքր ինչ յետոյ խումբը մտաւ մի ծանծաղ հուն, և առաջնորդը դրա միջից դէպի աջ տարաւ ուղևորներին։ Նոյն օրն եկած անձրևից գետակի ձորը փափկացել էր և լպրծուն դարձել։ Նա տեղ տեղ լճանանում էր, յետոյ յանկարծ սեղ ժայռերով սեղմուում։ Վերջապէս ուղևորները մի նեղ կիրճից անցնելով՝ մի ընդարձակ հովիտ մտան, որ դեղնագոյն, միակերպ և արևակէզ անապատից յետոյ մի նորագիւտ դրախտ երևաց նրանց։ Այս դալարուտ հովտի մէջ տեղը մի շքեղ արմաւենի էր բարձրանում և առաջամէտ ապառաժի ներքև բուսած թթենիները ցոյց էին տալիս, որ աղբիւրն այնտեղ է։ Առաջնորդը շիտակ նրան դիմեց. կաքաւներն ու գոյնզգոյն թռչունները կարկաջելով ու սուլելով դէպի վեր թռան իրենց եղէգնուտ թաքստոցից։

Ջուրը ցայտում էր քարի ծերպից։ Մի հոգատար ձեռք կամար էր կապել նրա վրայ և քարի մէջ եբրայական խոշոր տառերով Աստուած բառը փորագրել։ Փորագրող մարդը, որ անշուշտ իր պապակն այնտեղ էր անցրել, մի քանի օր աշխատուած կըլինէր իր գոհունակութիւնը ծնայուն նշանով յայտնելու համար։

Յուսմբն այնտեղ կանգ առաւ։ Բէն Հուրն ու իր ուղեցոյցը ձիերից իջան. Բաղդասարն ու Իրան էլ չոքած ուղտի դեսպակից դուրս եկան։ Ալևորը, դէմքը դէպի արևելք դարձնելով, աղօթեց։

—Մի բաժակ,—պատուիրեց Իրասը եթովպացուն։

Ծառան հանեց դեսպակից մի բիւրեղեայ բաժակ, և օրիորդն ասաց Բէն Հուրին.

—Ես ուզում եմ ծառայել քեզ աղբիւրի մօտ։

Նրանք աւազանին մօտեցան։ Բէն Հուրը կամենում էր օրիորդի համար ջուր հանել, բայց սա արգիլեց, ինքը չոքեց և բաժակը լցնելով նրան առաջարկեց։

—Ո՛չ,—ասաց երիտասարդը կարմրելով,—թող որ ես քեզ ծառայեմ։

—Մեր երկրում մի առած կայ,—շարունակեց Իրասը,—թէ «լաւ է մի երջանիկ մարդու մատուռակը լինել, քան թագաւորի նախարարը»։

—Երջանի՛կ,—գոչեց Բէն Հուրն ապշութեամբ։

—Դու չգիտես կրկէսում։

Բէն Հուրը կարմրեց։

—Դու չէիր, որ մի հռոմայեցի սպայ սպանեցիր մենամարտում։

Երիտասարդն և՛ս աւելի կարմրեց—ոչ թէ չաղթանակների յիշատակութիւնը լսելուց, այլ նրա համար, որ օրիորդը հետևել էր նրա անպարկեշն,—և իսկոյն մտածկոտ դարձաւ։ Նա գիտէր, որ մենամարտի պատմութիւնը հռչակուած է, բայց չաղթողի անունը Մալու-



լեց, Իլդերիմից և Սիմոնիդէսից դատ ոչ մի մարդու չայտնի չէր։ Միթէ այս գաղտնիքը նրանք մատնած կըլինէին... Մինչ նա շփոթուած մտածում էր, Իրասը ոտքի ելաւ և բաժակն աւազանի վրայ բռնելով ասաց.

—Ո՛վ եգիպտական աստուածներ։ Գոհանում եմ քեզնից մի նոր հերոս գտնելուս համար,—գոհանում, որ Իդերնէի պալատի զոհը իմ մարդկանց թագաւորը չէր։ Ջնում եմ ձեզ, ով սուրբ աստուածներ, և խմում։

Բաժակի ջրի մի մասը հոսանքի մէջ թափելուց յետոյ՝ Իրասը խմեց միւս մասը և ծաղրելով ասաց.

—Ո՛վ Բէն Հուր, միթէ վայել է քեզ նման քաջին այսպէս հեշտ չաղթահարուիլ մի կնոջից։ Այժմ դու ճօնիը,—չարեց նա, և բաժակը տուաւ Բէն Հուրին։

Բէն Հուրը բաժակը լցրեց և իր զարմանքը ծածկելու համար ժպտալով ասաց.

—Իսրայէլի որդին աստուածներ չունի, որ նրանց նուէրը մատուցանէ։

Արդեօք Իրասը էլ ինչ գիտէր նրա մասին... Միթէ Սիմոնիդէսի և իր կապերն էլ չայտնի էին նրան։ Այս ծանր գաղտնիքը ո՞վ նրան մատնած կըլինէր... Ջէ որ այժմ, երբ նա գնում էր Երուսաղէմ, այս գաղտնիքի բացուիլը ոչ միայն իրեն, այլև բոլոր ընկերներին և իրենց գաղին կըվնասէր։ Սակայն արդեօք իրա՞ւ թշնամի էր Իրասը...

Լաւ էր, որ մտածելու համար այնքան ժամանակ չէ պահանջւում, որքան մտածմունքը գրելու համար։

Բաժակը լցնելուն պէս՝ Բէն Հուրը առաջ կեղծ նահանջով.

—Ջքնաղ կոյս, եթէ ես մի եգիպտացի, մի յոյն և կամ հռոմայեցի լինէի, այս բաժակը վերցնելիս կըկոչէի.—Ո՛վ գերազօր աստուածներ, փառք եմ տալիս ամենքիդ, որ այս թշուառ աշխարհում գեռ ճնացել է

գեղեցկութեան հրապոյրը և սիրոյ սփոփանքը։ Ջօնում եմ իմ բաժակն սիրոյ և գեղեցկութեան ամենագրաւիչ տիպարին—Իրասին, Նեղոսի գեղափայլ աղջկան։

—Ահա օրէնքի դէմ մեղանչեցիր, սուտ աստուածներին դիմելով։ Յանցանքդ ռաբբիներին չմատնե՞մ։

—Դու, կարծեմ, ուրիշ կարևոր բաներ էլ ունիս մատնելու,—ասաց Բէն Հուրը ծիծաղելով։

—Օրինակի համար՝ մատնելու Անտիոքի հարուստ հրէի աղջկանը, ինչ որ ասացիր այս րոպէիս։

—Նրա աղջկա՞ն...

Բէն Հուրը լռեց, կարծես սպասելով, թէ եգիպտուհին ասելիքը կը շարունակէ։ Նա իսկոյն պատկերացրեց իր մտքում, թէ ինչպէս Եսթերը հօր աթոռի մօտ նստած ականջ է դնում նրա ուղարկած նամակներին... և երբեմն ինքը կարդում։ Եսթերի առջև էր, որ նա պատմել էր Սիմոնիդէսին Իդերնէի պալատի դէպքը։ Իրան և Եսթերը ճանաչում էին իրար—մէկը խորամանկ, ունայնասէր, միւսը համեստ, հեզիկ, միամիտ։ Սիմոնիդէսն անկարող էր դրժած լինել իր խօսքը, ոչ էլ աղնիւ Իլդերիմը, որովհետև ոչ ոք աւելի չէր ջնասուիլ դաւադրութեան մերկացումից, քան թէ նա։ Միթէ Եսթերն էր Իրասի լրտեսուն... Բէն Հուրը չէր մեղադրում նրան. սակայն կասկածը մտքի մոլախոտն է, որ բուսնում է ինքն իրեն և արագ աճում կամքիդ դէմ...

Մինչ Բէն Հուրն ուզում էր պատասխան տալ Իրասի ակնարկութեան փոքրիկ հրէուհու նկատմամբ, Բաղդասարը մօտեցաւ աւազանին։

—Մենք քեզ շատ ենք պարտական, ով Հուրի որդի,—ասաց ալևորը լրջութեամբ։—Այս հովիտը չքնաղ նազ է. դալարը, ծառերը, սուսերն ու ղովը հրաւիրում են մեզ հանգիստ առնել. ե՛կ, դու էլ մեզ հետ նստիր և մեր հացից ճաշակի՛ր։



—Թոյլ տուր նախ ես ծառայեմ քեզ,—ասաց Բէն Հուրը և բաժակով ջուր տուաւ ծերունուն։

Բաղդասարը բաժակն առաւ և մի լուռ գոհութիւն վերառաքեց դէպի երկինք։

Ծառան իսկոյն երեսսրբիչներ բերաւ, երեքն էլ ձեռքները լուացան և նստեցին այն վրանի տակ, որի ներքև տարիներ առաջ նստել էին անապատում իրար հանդիպած մոգերը։ Եւ ապա թէ սկսեցին ճաշել ուղտի կրած պաշարից։

## ԻԵ.

### *Անմահութիւն*

Աղբիւրի կարկաչը, հովի անդորրութիւնը, օդի քաղմութիւնը, շրջակայքի դրախտային գեղեցկութիւնը կարծես յուզել էին ծերունուն. նրա ձայնը, շարժուձևերն ու ամբողջ գոյութիւնը մի անսովոր մեղմութիւն էին արտայայտում և աչքերը կարեկցական գորովով լըցուած, երբ նա մերթ ընդ մերթ մտիկ էր տալիս իրան հետ խօսող Բէն Հուրին։

—Հուրի որդի,—ասաց նա ճաշից յետոյ,—երբ մենք քեզ հետ միացանք, դէմքդ ուղղուած էր դէպի սրբազան քաղաքը։ Արդեօք դո՞ւ էլ այնտեղ ես գնում։

—Այո՛, գնում եմ Երուսաղէմ։

—Արդեօք չի՞ կարելի այնտեղ հասնել աւելի կարճ ճանապարհով, քան թէ Ռաբբաթ-Ամմոնի։

—Գերազայի և Ռաբբաթ-Գիլէադի վրայով անցնող ճանապարհն աւելի կարճ է, բայց անհարթ. ես մտադիր եմ դրանով գնալ։

—Ես էլ կըցանկայի կարճով գնալ,—ասաց Բաղ-

դասարը։—Համբերութիւնս արդէն հատել է։ Շարունակ երազ եմ տեսնում քնիս մէջ... և միշտ մի և նոյն երազը։ Ինձ անդադար կանչում է մի ձայն.—վեր կաց շուտով. ահա գալիս է, որին այնքան սպասում էի՛ր։

—Այսինքն հրէից ապագայ Թագաւորը,—հարցրեց Բէն Հուրը, զարմացած նայելով ծերունուն։

—Այո։

—Նրա մասին մի ուրիշ բան չե՞ս լսած։

—Ոչինչ, բացի իմ երազի խօսքերից։

—Իսկ ես լուր ունիմ, որ քեզ էլ անշուշտ կուրախացնէ։

Բէն Հուրը Մալուխի նամակը հանեց գրպանից և ծերունուն տուաւ։ Նամակը բռնելիս ծերունու ձեռքը սաստիկ դողաց։ Նա սկսեց ձայնով կարդալ և յուզուեց։ Ընթերցումն աւարտելուն պէս արտասուած աչքերը վեր ուղղեց և լռելեայն փառք տուաւ Աստուծոյն։ Հարցմունք չարաւ. կասկած չունէր։

—Ո՛վ Աստուած, դու միշտ գթած ես դէպի ինձ,—ասաց նա։—Աղաչում եմ, արժանացրու ինձ վերստին տեսնել իմ Փրկչին և պաշտել. այնուհետև ծառադ պատրաստ կըլինի այս աշխարհից խաղաղութեամբ մեկնելու։

Այս աղօթքն ու աղօթողի ինքնուրոյն ձևերը մի նոր և խոր տպաւորութիւն արին Բէն Հուրի վրայ։ Դեռ երբէք Աստուծու մերձաւորութիւնն այնքան զգալի չէր եղել նրան. նրան թուում էր, թէ ահա Աստուած ներկայ է իրենց միջև իբրև մի ընկեր, որի օգնութիւնը կարելի է ստանալ ամենապարզ խնդրուածքով,—ներկայ իբրև որդիներին հաւասար սիրող մի բարի հայր,—հայր ոչ միայն հրէաների, այլև հեթանոսների—ոչ ամենքի հայր, որին պէտք չեն ոչ միջնորդներ, ոչ ռաբբիներ։ Թէ այս Աստուածը մի թագաւոր աւազելու տեղ՝ կարող էր մի փրկիչ շնորհել մարդկութեան—այս



գաղափարը ոչ միայն նոր, այլև այնքան շօշափելի երևաց նրան, որ նա կարծես միանգամից թէ Փրկչի կարևորութիւնը և թէ Աստուծու բնութիւնն ըմբռնեց։ Ուստի և անկարող էր չհարցնել.

—Ուրեմն, բաղդասար, այժմ էլ դու այն կարծիքին ես, թէ եկողը Փրկիչ կըլինի, այլ ոչ թէ թագաւոր։

Բաղդասարը մի մտածկոտ և սիրալիր հայեացք ձգեց նրա վրայ և ասաց.

—Խօսքերդ ինչպէս հասկանամ։ Այն օրից ի վեր, որ ես քեզ բարի Շէյխի վրանում տեսայ, առաջնորդ աստղս չէ երևացել ինձ. սակայն հաւատացած եմ, որ երազներիս ձայնը նա է։ Ուրիշ յայտնութիւն չեմ ստացել։

—Կըցանկայի մեր կարծիքների տարբերութիւնը յիշեցնել քեզ,—ասաց Բէն Հուրն ակնածութեամբ։—Դու ասում էիր, թէ եկողը թագաւոր կըլինի, բայց ոչ թէ կեսարի նման թագաւոր. թէ նրա իշխանութիւնը հոգևոր կըլինի, և ոչ թէ այս աշխարհից։

—Այո, այո,—պատասխանեց եգիպտացին,—այսօր էլ ես նոյն կարծիքին եմ։ Տեսնում եմ՝ մեր հաւատները տարբեր են. դու մարդկանց թագաւոր գտնելու ես գնում, իսկ ես՝ հոգիների փրկիչ։

Ծերունին կանգ առաւ, ոգորելով ինքն իր հետ, որպէսզի պարզ ըմբռնէ մի գաղափար, որ դժուար էր ճիշտ արտայայտել։

—Ո՛վ Հուրի որդի,—ասաց նա,—ևկ փորձեմ աւելի որոշ բացատրել քեզ իմ հաւատը։ Երբ որ տեսնես, թէ նոր հաստատուելիք՝ մէյայն հոգևոր թագաւորութիւնը պրպան գերազանց է կեսարական շքեղութիւնից, այն ժամանակ գուցէ հասկանաս, թէ ինչու եմ այսպիսի տեսիլով սպասում նրան, որին գնում ենք ողջունելու։—Աբդիսօք քրբ է ծագել մարդու մտքում հոգու գոյու-

թեան գաղափարը,—չգիտեմ։ Հաւանական է, որ մեր առաջին ծնողները նրան դրախտից բերած լինին։ Այս գաղափարն այնուհետև նսեմացաւ, բայց երբէք չանհետացաւ։ Մի քանի ազգեր կորցրին նրան, բայց ոչ ամենքը։ Եղան դարեր, երբ հոգու գոյութեան հաւատը կասկածների ազդեցութեամբ թուլանում էր. բայց Աստուծու առաքած հանճարները գալիս էին վերստին նրան այժ տալու։—Ինչո՞ւ ենք կարծում, թէ մարդս անշուշտ հոգի ունի։ Ո՛վ, Հուրի որդի, լաւ մտածիր, և կըտեսնես, որ հոգին մեզ անհրաժեշտ է։ Պահել և մեռնել... չէք դառնալ, յաւիտեան չէք—ժամանակ չէ եղել, որ մարդս մի այսպիսի վախճան ուզենար և մի աւելի լաւ բան չփայփայէր իր սրտում։ Մահից յետոյ չքանալուն դէմ բողոքում են ազգերի կրթողները, արձանները, արձանագրութիւնները, նոյնիսկ պատմութիւնը։ Մեր եգիպտական փարաւոններից ամենամեծը պատուիրել էր, որ իր պատկերը մի կարծր ժայռի վրայ քանդակուի։ Նա ամեն օր գնում էր անձամբ տեսնելու գործի ընթացքը։ Վերջապէս պատկերը պատրաստուեց—մի ահագին և դիմացկուն ձեռակերտ՝ յար և նման փարաւոնին։ Արդեօք նա այն բոպէին հպարտութեամբ չասա՞ց իրեն. «Թող այժմ մահը գայ, ես կապրեմ ապագայո՛ւմ»։—Այդպէս էլ եղաւ. արձանը դեռ կանգուն է։

—Բայց ի՞նչ էր այն երկրորդ կեանքը, որ այդ կերպով ապահովեց փարաւոնը։ Մ՚ոյն մի յիշատակ մարդկանց մտքում... արձանի դէմքը լուսաւորող լուսնի երերուն փայլի նման մի թոյլիկ փառք, քարաշէն պատմութիւն—աւելի ոչինչ։ Եւ ի՞նչ դարձաւ փարաւոնը։ Արքայական գերեզմանում մի զմբուռած մարմին կայ, որ մի ժամանակ նրանն էր... մի պատկեր, որ շատ ատոր է քարակերտից։ Սակայն



է, ո՛վ Հուրի որդի, նոյն ինքն փարաւոնը։ Ձի՛ք դարձաւ։ Այն օրից ի վեր, երբ նա ինձ ու քեզ նման կենդանի մարդ էր, անցել են երկու հազար տարիներ։ Միթէ իր վերջին շնչի հետ ինքն էլ ընդ միշտ վերջացաւ։ Այո՛ ասելը բողոք կըլինէր Աստուծու դէմ։ Լաւ է հաւատալ Նրա կամքին՝ մահից յետոյ էլ կեանք տալու մեզ, մի իսկական կեանք, ուր գալ ու գնալ, գալ ու գիտենալ, ճանաչել ու կարենալ կայ,—մի կեանք, որի տևողութիւնն անսահման է։ Հանդերձեալ կեանքի գիտակցութիւնն ոչնչացնում է մահուան սարսափը. մահը միայն մի անցք է դէպի մի լաւագոյն վիճակ, իսկ թաղումը մի սերմանում, որից պիտի նոր կեանք աճի։ Ահա տես ինձ, ինչպէս որ եմ. տես այս տակառ, յոգնած, զառամ ու ծեր մարմինս. զգայարաններս բթացած, ձայնս անզօր... Ո՛հ, ինչ երջանկութիւն է մտածել, որ երբ էլ բացուի գերեզմանը մաշուած պատեանս ընդունելու համար, Աստուծու օթևանն էլ իսկոյն կըբացուի՝ ազատուած, անմահ հոգիս ընդունելու։ Ո՛հ, եթէ կարենայի ապագայ կեանքի երանութիւնը նկարագրել։ Ջասես, թէ այդ մասին ոչինչ չգիտեմ. ես գիտեմ, և այս ինձ բաւական է, որ հոգին աստուածային յատկութիւններ ունի։ Նրա էութեան մէջ ոչ անցաւը վհշի կայ, ոչ էլ մի անարժան բան. նա օդից էլ նուրբ է, լոյսից էլ ջինջ, բուրումից թեթև—նա կատարեալ մաքրութիւն է։

—Էլ ի՞նչ ասեմ, որդիդ Հուրի։ Այսքանն իմանալուցս յետոյ միթէ վիճե՞մ ինքս ինձ հետ և կամ քեզ հետ անէական բաների մասին, օրինակի համար, թէ ինչպէս է հոգու ձևը, կամ ո՞րտեղ է նրա կայանը. և կամ թէ նա մի բան ուտում և խմո՞ւմ է... Ոչ։ Աւելի լաւ է, լի հաւատով ապաւինել Աստուծուն։ Նրանից է ծագում ամենայն գեղեցկութիւն. նա է ամեն ձևերի

հեղինակը. նա է պճնում շուշանը, գոյն տալիս վարդին և փայլ ցօղին. բնութեան ամբողջ ներդաշնակութիւնը նրա գործն է. կարճ ասել—նա է մեզ այս կեանքի համար ստեղծել և սրա օրէնքները սահմանել: Եւ այս օրէնքները այնքան հաստատ գրաւական են ինձ համար, որ ես իբրև մի միամիտ մանուկ վստահաբար նրան եմ թողնում իմ մահից յետոյ հոգուս վիճակը կարգադրել: Գիտեմ, նա ինձ սիրում է:

Ծերունին լուռ և չուր խմեց. բաժակը ձեռքում դողում էր: Իրան ու Բէն Հուրը մանկութիւն էին նրա յուզման և նոյնպէս լուռ: Արդէն գիտութեան լոյս էր ծագել երիտասարդի սրտի մէջ: Նա սկսեց առաջին անգամ պարզ տեսնել, որ հոգևոր թագաւորութիւնը կարող է շատ աւելի կարևոր լինել մարդկութեան համար, քան մի աշխարհային թագաւորութիւն, և իրօք որ Փրկիչը մի աւելի աստուածային պարգև է, քան թէ ամենամեծ թագաւորը:

—Մ'թէ կարելի է,—շարունակեց Բաղդասարը,—մեր այս վշտալից և վազանցուկ կեանքը հոգու կատարեալ և անզրաւ կեանքից նախապատիւ համարել: Ջարցրու ինքդ քեզ՝ երջանկութեան մի ժամից և երջանկութեան մի տարուց ո՞րն է աւելի ընտրելին: Վերջապէս ինչ է այս երկրաւոր կեանքի հօթանասուն տարին այն յաւիտենական կեանքի դիմաց, որ անցնելու ենք Աստուծու մօտ: Այսպէս մտածելով, ո՛վ որդիդ Հուրի, դու վերջապէս կըմբռնես, թէ որքան ցաւալի է հոգու հաւատի գրեթէ իսպառ անհետանալն աշխարհից: Գուցէ դեռ կան մի քանի բացառիկ փիլիսոփաներ, որոնք ճառում են հոգու մասին, ընդունելով նրան լոբև մի սկզբունք. բայց որովհետև նրանք ոչ մի բան լուրջ հաւատով չեն ընդունում, չեն էլ դաւանում, որ հոգին մի գոյութիւն ունեցող էակ է, հետևաբար և հոգու խոր-



հուրդը բոլորովին մութն է մնում նրանց համար:—Իրաքանչիւր կենդանի արարած իր էութեան համապատասխան ձիրքեր ունի: Զարմանալի չէ, որ մարդն է միայն ապագայի մասին խորհրդածելու ձիրքով օժտուած: Ես հաւատացած եմ, որ Աստուած սրանով կամեցել է իմացնել մեզ, որ մենք մի ուրիշ և աւելի լաւ կեանքի համար ենք ստեղծուած, որին և իրօք մեր բնութիւնը կարիք է զգում ձգտելու: Սակայն, աւաղ,—ինչ վիճակի մէջ են ընկել ազգերը: Միայն այսօրուայ համար են ապրում, կարծես թէ սրանով վերջանալիս լինեը ամեն բան, և ասում.—Մահուանից յետոյ էլ բան չկայ, և կամ եթէ լինի էլ, մեզ ինչ փոյթ, քանի որ նրա մասին ոչինչ չգիտենք...—Եւ այսպէս, երբ որ մահը նրանց կանչէ, նրանք հանդերձեալ կեանքի երանութիւնից զուրկ կլինեան, որովհետև չեն պատրաստուած նրա համար: Ո՜հ, որդիդ Հուրի, ցաւով սրտի պիտի ասեմ—ինչքան որ այս ուղտն է յաւիտենական կեանքի մասին մտածում, այնքան էլ այսօր վեհապետը սուրբ տաճարի քահանաներն են նրա մասին մտածում: Մարդիկ նուիրուել են այս հողեղէն ստոր կեանքին և մոռացել հանդերձեալը... Արդ՝ աղաչում եմ մտածիր՝ ինչ կարելի է անել փրկուելու համար: Ինձ պատով, հոգու ապագայ կեանքի մի հատիկ բոպէն ես չէի փոխանակիլ երկրաւոր կեանքի հազար ու հազար տարիների հետ:

Աչերը կարծես մոռացաւ լսողներին և խոր մտածման մէջ ընկաւ: Յետոյ սթափուելով շարունակեց.

—Ներիր ինձ, որդիդ Հուրի, որ այսքան շատ խօսեցի: Գաղափարի վսեմութիւնը լեզուս բաց արաւ. սակայն խօսքերս անզօր են հաւատիս հիմքը բացատրելու քեզ: Դու ինքդ հետազօտիր ճշմարտութիւնը և այն ժամանակ կըմբռնես, որ մեր սպասածը չպիտի

լինի սուր կրող և թագազարդ միապետ։—Այժմ կըմեայ մեզ իմանալ, թէ ինչպէս պէտք է ճանաչել նրան։ Եթէ դու շարունակես կարծել, թէ նա, օրինակի համար, Հերովդէսի նման մի խագաւոր կըլինի, ուրեմն դու մի ծիրանի հագած և գայիսոն բռնած մարդ կըսպասես։ Այն ինչ ես հաւատում եմ, որ մենք մի չքաւոր, հեզ ու խոնարհ մարդ կըտեսնենք, և ես իսկոյն կըճանաչեմ նրան, որովհետև նա ինձ և ամենքին յաւիտենական կեանքի, հոգևոր և մաքուր կեանքի ճանապարհը ցոյց կըտայ։

Մի քանի ժամանակ երեքն էլ լուռ նստած մնացին։ Վերջապէս Բաղդասարն ասաց.

—Այժմ վեր կենանք և յառաջ գնանք։ Յօսքեր նորից վառեցին իմ մէջ նրան տեսնելու փափագը, և ներիր ինձ, որդիդ Հուրի, որ այլևս համբերութիւն չունիմ սպասելու։ Պէտք է շտապել։

Աչերի նշան տալուն պէս՝ սպասաւորը մի փոքրիկ տակով գինի բերաւ. երեքն էլ խմեցին և ոտքի ելան։

Մինչ ծառան անօթներն ու վրանը հաւաքելու վրայ էր, իսկ արաբը ձիերն էր բերում, նրանք ձեռքերը լուացան և փոքր ինչ յետոյ բոլորն էլ նորից մեծ ճանապարհով առաջ գնացին։ Կարաւանն անցել էր։

## ԻԶ.

### *Բեթաբրայի մօտերքում*

Ուղևորութեան երրորդ օրը խումբը կանգ առաւ Յարբուկ գետի եզերքին, ուր արդէն հանգստանում էին հարիւր և կամ աւելի մարդիկ։ Եկւորներն իմացան թէ չէ՞ մի անծանօթ մարդ ջուր տուաւ նրանց, որ և նրանք



շնորհակալութեամբ ընդունեցին։ Այնուհետև մարդն ասաց, ուղտին նայելով.

—Գալիս եմ Յորդանանից, ուր այժմ մեծ բազմութիւն կայ, բայց այսպիսի ուղտ չեմ տեսած։ Ի՞նչ ազնիւ և փառաւոր կենդանի է։ Կընեղէք, հարցնեմ—ձի ցեղից է։

Բաղդասարը պատասխանեց և լռեց. Բէն Հուրը սակայն շտապեց հարցնել.

—Գետի ո՞րտեղն է բազմութիւնը։

—Բեթաբրայի մօտերքում։

—Դա հօ մի աննշան հուն է,—նկատեց Բէն Հուրը։—Չեմ հասկանում, թէ ինչու յանկարծ այնքան մարդիկ են հաւաքուել այնտեղ։

—Տեսնում եմ, որ հեռուից ես գալիս և աւետիքը չես լսած։

—Ի՞նչ աւետիք։

—Մի մարդ է երևացել անապատից, շատ սուրբ մարդ, որ զարմանալի խօսքերով հիացնում է լսողներին։ Նա մի նազիր [1]) է։ Յովհաննէս է անուանում իրեն, Զաքարիայի որդի, և ասում, թէ Մեսիայի կարապետն է։

Իրան անգամ ուշի ուշով սկսեց լսել. մարդը շարունակեց.

—Ասում են, թէ այդ Յովհաննէսն իր ամբողջ երկտասարդութիւնը մի այրի մէջ է անցկացրել Էնգեդիի մօտերքում, աղօթելով ու ճգնելով աւելի խիստ քան թէ յեսսեանք։ Ժողովուրդը գունդ գունդ վազում է նրա քարոզները լսելու. ես էլ գնացել էի միւսների հետ։

---

[1]) Մազերը չկտրելու և գինի չխմելու ուխտող հրէայք կոչւում էին նազիր, որ եբրայերէն նշանակում է անջատուած, նըշուած։

—Այս մարդիկն էլ ամֆատղից են։

—Մի քանիսն արդէն յետ են գալիս, շատերն էլ դեռ գնալու վրայ են։

—Ի՞նչ է քարոզում ճգնաւորը։

—Մի նոր բան, դեռ Երուսաղէմում չլսուած բան, որ իր ասելով ապաշխարութեան և մկրտութեան քարոզ է։ Ոարբիները չգիտեն, թէ ինչ կարծեն նրա մասին, մենք էլ չգիտենք։ Ոմանք նրան հարցրին, թէ արդեօք Քրիստոսն է, ոմանք էլ, թէ Եղիան է։ Իսկորին էլ պատասխանեց.—Ես եմ ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք զճանապարհս Տեառն։—

Այդ լսելին մարդիկ կանչեցին իր ընկերները, և մինչ նա ուզում էր հեռանալ, Բաղդասարը հարցրեց նրան.

—Ասա, բարեկամ, արդեօք մենք էլ նրան քարոզած տեղում կը գտնենք։

—Այո, Բեթաբրայում կը գտնէք։

—Ո՞վ կարող է լինել այն քարոզիչը, եթէ ոչ մեր թագաւորի մունետիկը,—ասաց Բէն Հուրը Իրասին։

Բաղդասարն արագ վրայ բերաւ.

—Ես յոգնած չեմ, շտապենք։

Նրանք փութով ճանապարհ ընկան և առանց խօսակցելու գնացին հասան մի իլևան, Ռամոթ-Գիլէադից փոքր մինչ դէպի արևմուտք։

—Առաւօտեան վաղ վերկենանք, որդիդ Հուրի,—ասաց ալևորը.—եթէ ոչ Քրկիչը կըզայ և մենք նրան չտեսած կըմնանք։

Հետևեալ օրուայ երրորդ ժամին նրանք արդէն դուրս էին ելած Գիլէադ լերան կիրճերից և ուղղուած այն անջրդի դաշտի վրայ, որ տարածւում է սրբազան գետի արևելեան կողմերում։ Այստեղից նրանք նշմարեցին իրենց առջև Երիքովի արմաւենեաց այգեստանի վերին մասը, որ մինչև Հրէաստանի լեռնոտ գաւառն է տարածւում։ Բէն Հուրի սիրտն սկսեց թնդալ։ Յորդանանի հունն արդէն մօտիկ էր։

—Ուրախացիր, Բարդասար,—ասաց նա,—արդէն դրեթէ հասել ենք։

Առաջնորդը ուղտի քայլերը փութացրեց։

Փոքր ինչ յետոյ նրանք տեսան տաղաւարներ, վրաններ, դաշտում կապուած գրաստներ, յետոյ գետը և ահագին բազմութիւն նրա երկու ափերի վրայ։ Նկատելով որ քարոզիչը ճառում է, ուղևորներն և՛ս աւելի շտապեցին. բայց հասան թէ չէ՝ ժողովը շարժուեց և սկսեց ցրուիլ։

Եկեղեցիներն ուշացել էին։

—Այստեղ սպասենք,—ասաց Բէն Հուրը, Բաղդասարին սփոփելով։—Քարոզիչը գուցէ այստեղով անցնի։

Բազմութիւնն այնքան զբաղուած էր նոր լսած քարոզի նիւթով, որ նորեկներին ուշադրութիւն չդարձրեց։ Արդէն հարիւրից աւելի մարդիկ էին անցել նրանց մօտով. քարոզչին դէթ այս անգամ տեսնելու յոյսը նրանք արդէն կորցնելու վրայ էին, երբ եղերքի կողմից մի անձն սկսեց մօտենալ նրանց, որի ինքնուրոյն երևոյթը նշմարելիս նրանք ամեն բան մոռացան։

Մօտեցողի պատկերը խոշոր ու բիրտ էր, մինչև անգամ վայրենի. արևակէզ թաւ մազերը ալիքներով ընկնում էին ժժգոյն ու նիհար դէմքի և ուսերի վրայ։ Աչքերը վառ վառ փայլում էին։ Այ ուսը և այ կողքը մերկ էին. մարմնի միւս մասերը մինչև ծունկերն ուղտաստև կոշտ հագուստով ծածկուած. մէջքի լայն գօտին կաշուից էր։ Նա բոկոտն էր։ Գօտուց կախուած էր մի տոպրակ՝ նմանապէս բիրտ կաշուից։ Ձեռքին մի երկայն գաւազան ունէր։ Շարժուձևերն արագ, փութկոտ, շտապ

էին։ Շուտ շուտ յետ էր տանում ճակատի վրայ ընկնող հոծ մազերը և շուրջը նայում, ասես թէ մէկին որոնելով։

Գեղեցիկ Իրան ապշութեամբ, եթէ չասենք զզուանքով, էր մտիկ անում անապատի այդ որդուն։ Յետոյ յետ քաշեց պատգարակի վարագոյրը և ասաց ձիաւոր Բէյն Հուրին.

—Դա՞ է քո թագաւորի մունետիկը։

—Դա նազիր է, ասաց Բէյն Հուրը, առանց վերև նայելու։

Ճշմարիտն ասել՝ նա ինքը շատ յուսախաբուած էր։ Թէև նա ծանօթ էր Էն-Գեդիի ճգնաւորների հետ, ճանաչում էր նրանց հագուստը, գիտէր որ նրանք աշխարհի կարծիքն արհամարհում են, խստամբեր ու չարքաշ են, և առաջուց լսած էր, թէ ինքն իրեն անապատի ձայն անուանող մի կրօնաւոր կըտեսնէ,—բայց և այնպէս մտածելով հզօր թագաւորի վրայ, որ այնքան բաներ պիտի կատարէր, նա յոյս ունէր, որ այդ թագաւորի կարապետը փառքի և մեծութեան մի որ և է նշան կունենայ։ Մօտեցողի վայրագ պատկերը դիտելիս նա յիշում էր Հռոմի շքեղ դրանիկներին և շփոթուած ու մոլորուած՝ ուրիշ պատասխան չէր գտնում, բայց միայն.

—Մի նազիր է, ճգնաւոր։

Բաղդասարն այդպէս չէր։ Նա համոզուած էր, որ Աստուծու ճանապարհն ուրիշ է, մարդկանցն ուրիշ։ Նա տեսած էր մանուկ Փրկչին մսուրում. նրա հաւատը պատրաստուած էր չքաւորութեան և պարզութեան մէջ տեսնել աստուածային երևումը. նա բոլորովին հանդիպում ճնաց ուղտի վրայ և միայն մի ջերմ աղօթք մրմնջեց։ Նա ոչ մի թագաւորի չէր սպասած։

Մինչ երեքն էլ նայում էին այսպէս տարբեր զգացումներով, գետեզերքի քարի վրայ մի մարդ էր նստած, գուցէ նոր լսած քարոզի մասին մտածելով։



Այժմ մարդը վեր կացաւ և հանդարտ գնաց քարոզչի կողմը։

Նրանց միջև մի քանի քայլի տարածութիւն էր ճնացել, երբ ճգնաւորը կանգ առաւ, մազերն աչքերից հեռացրեց, շուրջը նայեց և այն մարդուն տեսնելուն պէս՝ ձեռքը վերցնելով նշան արաւ բազմութեան. ամենքն էլ լուռ կանգ առան։ Այն ժամանակ նա գաւազանը մեկնեց և օտարականի վրայ ցոյց տուաւ։

Բոլորի աչքերն այժմ դրա վրայ ուղղուեցին։

Նոյն րոպէին Բաղդասարն էլ, Բէյն Հուրն էլ շտապեցին դիտել նրան։ Նա յամրաքայլ անցնում էր։ Հասակը միջակից փոքր ինչ բարձր էր, երևոյթը նուրբ ու թեթև. երեսն անգորր, մտածկոտ, ինչպէս որ լինում է լուրջ բաների վրայ շատ մտմտած մարդու երեսը։ Հանդերձն էր կոճերին հասնող մի ներքնակ և տալիթի կոչուած վերարկուն։ Ձախ թևի վրայ բռնած ունէր գլխի սովորական փաթթոցը, որի կարմիր երիզն արձակ ընկնում էր դէպի վայր։ Այս երիզից և տալիթի կապոյտ եղերքից զատ՝ ամբողջ հագուստը սպիտակ կտաւից էր, որ փոքր ինչ դեղնած էր ճանապարհի փոշուց։ Բացաւութիւն էին և հագուստի ծոպերը, որոնք նոյնպէս կապոյտ էին։ Սանդալները շատ հասարակ էին։ Նա ոչ մախաղ ունէր, ոչ գաւազան, ոչ գօտի։

Մարդու արտաքին երևոյթի այս կէտերը միայն վեր ի վերոյ ի նկատ առան մեր երեք դիտողները. թէ նրանց և թէ ամբողջ բազմութեան ուշքն ու միտքը միանգամայն հրապուրուած էր նրա գլխով ու ղէմքով, մանաւանդ ղէմքով։

Բայց գլխի երկայն և փոքր ինչ գալարուն մազերը բաժանուած էին գանգի վրայ և շագանակի գոյն ունէին, որ փայլում էր արևի լոյսից։ Լայն ճակատի և աղեղնաձև սև յօնքերի տակ ճառագայթող մութ կապոյտ և

խոշոր աչքերը վերին աստիճանի գողտրիկ էին թւում շատ երկայն թերթերունքի պատճառով, որոնք յատուկ են մանուկներին: Դժուար էր որոշել՝ արդեօք յունական, թէ հրէական էին նրա դէմքի գծերը. քթի և շուրթերի նրբութիւնը վերջին տիպին ներհակ էր: Այս բոլորից յետոյ ոչ էլ նրա աչքերի հեզութիւնը, գունատ երեսի քնքշութիւնն ու ալիքաձև փափուկ մօրուքն ի նկատ առնէր, անշուշտ կասէր, որ նա լիովին գեղեցիկ մարդ է: Ոչ մի զինուոր չէր գտնուիլ, որ նրան պատահելիս մի հեգնական ժպիտ ցոյց տար. ոչ մի կին, որ նրան վստահանալուց վախենար. ոչ մի երեխայ, որ իր սիրտն անկեղծ սիրով նրան ընծայել չուզենար:

Նա յամրաքայլ մօտենում էր երեքին:

Պերճ նժոյգ հեծած և նիզակը ձեռքին բռնած Բէն Հուրը կարող էր մի թագաւորի աչքն անգամ իր վրայ դարձնել. սակայն մօտեցողի հայեացքը ոչ նրա վրայ, ոչ էլ զեղեցիկ Իրասի, այլ ալևոր Բաղդասարի վրայ էր ուղղուած:

Տիրում էր խորին լռութիւն:

Յանկարծ քարոզիչը, նորից գաւազանը մեկնելով, բարձրաձայն գոչեց.

—Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի:

Այս խօսքերի բազմութեան վրայ արած տպաւորութիւնն անկարելի է նկարագրել: Բաղդասարը միանգամայն ցնցուեց. վերջապէս արժանացել էր նորից տեսնելու մարդկութեան Փրկչին—իր հաւատի առարկան, որ տեսքով, զգեստով ու շարժուածքով կատարելութեան տիպարն էր:

Քարոզիչը դարձեալ գոչեց.



—Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի:

Բաղդասարը չոքեց: Այլ ևս ոչ մի բացատրութեան կարօտ չէր նա: Կարծես թէ այս իմանալով, քարոզիչը բազմութեան դարձաւ և շարունակեց.

—Սա է, վառնորոյ ես ասէի՝ զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել: Տեսանէի զհոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից և հանգչէր ի վերայ նորա: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց զիս. Ոյր վերայ տեսանիցես զհոգին, զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ հոգւովն սրբով: Եւ ես տեսի և վկայեցի, եթէ սա է—քարոզիչը նորից շարժեց գաւազանը՝ ասես թէ իր խօսքերին բացարձակ ստուգութիւն տալու համար—և վկայեցի, եթէ սա է Որդին Աստուծոյ:

—Դա է, դա է՜,—գոչեց Բաղդասարը, արտասուալից աչքերը բարձրացնելով, և ուշաթափ վայր ընկաւ:

Այն ինչ Բէն Հուրը բոլորովին ուրիշ մտքով էր հետազօտում անծանօթին: Հարկաւ զգում էր նրա դէմքի սրբութիւնը, մտահարուստ լրջութիւնը, քաղցրութիւնը, հեզութիւնը. բայց այն րոպէին անկարող էր մի ուրիշ բան մտածել, բայց թէ—Ո՞վ է այս մարդը և ինչ է՝ Մեսիայ, թէ՞ թագաւոր...

Այն աստիճան թագաւորականի չնմանող դէմք նա դեռ երբէք չէր տեսել: Այս հանգիստ ու գթասէր նայուածքի առջև պատերազմի, յաղթութեան և աշխարհակալութեան վրայ մտածելը մի սրբապղծութիւն կըլինէր: Եւ Բէն Հուրն ասում էր ինքն իրեն.—Այո, Բաղդասարն արդար է, Սիմոնիդէսը սխալուած. այս մարդը Սողոմոնի գահը վերականգնելու չէ եկած, ոչ

էլ Հերովդէսի բնութիւնն ունի կամ ոգին։ Գուցէ թագաւոր է, բայց ոչ այնպիսի պետութեան, որ հռոմէականից մեծ և փառաւոր լինէր»։

Այս տպաւորութիւնների ներքոյ, շարունակ նայելով հրաշալի դէմքին, Բէն Հուրն սկսեց իր հին յիշատակները մաքրել և վերջապէս ասաց ինքն իրեն.

—Ես այս մարդուն տեսած եմ, բայց ո՞րտեղ և ե՞րբ...

—փոքր առ փոքր ստուգութիւն դարձաւ նրա համար, որ այն խաղաղ ու կարեկից աչքերը մի օր իր վրայ էլ այնպէս էին հանգչել, ինչպէս որ այժմ Բաղդասարի վրայ։ Նախ անորոշ և ապա թէ ճառագայթի պայծառութեամբ նա յիշեց Նազարէթի ջրհորի մօտ անցած դէպքը և ժամը, երբ հռոմէական զինուորները թիւրկութեան էին տանում նրան։ Նրա բոլոր գոյութիւնը սասանուեց։ Այդ ձեռքերն էին օգնել նրան, երբ նա ծարաւից ու տանջանքից մեռնելու վրայ էր. այդ երեսի պատկերն էր, որ նա նոյն օրից ի վեր անջինջ կրել էր իր սրտում։ Այս յիշատակներով ալեկոծուած՝ նա ժամանակ չգտաւ քարոզի բացատրութեան ականջ դնելու, այլ միայն նրա վերջին խօսքերն ըմբռնեց, որոնք այսօր էլ հնչելով հնչում են աշխարհում.

*«Սա՛ է Որդին Աստուծո՛յ»։*

Բէն Հուրը վայր ցատկեց նժոյգից՝ մեծարանք ընծայելու իր բարերարին. սակայն և նոյն վայրկենին Իրասի աղաղակը լսեց.

—Օգնի՛ր, օգնի՛ր, որդիդ Հուրի. հայրս մեռնում է։

—Բէն Հուրը շտապեց նրան օգնելու։ Իրասը նրան մի բաժակ տուաւ։ Երիտասարդը դէպի գետը վազեց և մինչ յետ էր գալիս ջուր բերելով, օտարականն արդէն անհետացել էր։



Վերջապէս Բաղդասարը ուշքի եկաւ և տկար ձայնով հարցրեց.

—Ո՞րտեղ-է նա։

—Ո՞վ,—ասաց Իրասը։

Ալևորի երեսի վրայ մի անսովոր շարժում խաղաց—ասես թէ իր վերջին փափագը լրացած լինէր, և նա պատասխան տուաւ ցնծութեամբ.

—Նա... Փրկիչը... Աստուծու Որդին, որին ահա վերստին տեսայ։

—Հաւատո՞ւմ ես այդ բանին,—կամացուկ հարցրեց Իրասը Բէն Հուրին։

—Ժամանակը հրաշքներով լի է. սպասենք,—լսեց նա, իբրև պատասխան։

Հետևեալ օրը, երբ երեքն էլ ականջ էին դնում ճգնաւորին, նա յանկարծ քարոզն ընդհատեց և նռանդով գոչեց.

—Ահա գառն Աստուծոյ։

Երեքն էլ նրա ցոյց տուած կողմը նայելով, նորից տեսան օտարականին, և Բէն Հուրը նրա շնորհալի ու պարզութեամբ պայծառացած սուրբ երեսը դիտելիս ինքն իրեն ասաց.—Բաղդասարի ասածն իրաւ է, բայց Սիմոնիդէսի ասածն էլ իրաւ։ Միթէ Փրկիչը չէ՞ կարող և՛ փրկիչ լինել և՛ թագաւոր։

Եւ նա հարցրեց իր մօտ կանգնած եկեղեցիներից մէկին.

—Ո՞վ է այն մարդը։

Եկեղեցը պատասխանեց մի հոգնական ծիծաղով.

—Մի նազովրեցի հիւանի որդի։

## Ութ.

### Հուրի տան հիւրերը

—Եսթե՛ր, Եսթե՛ր, ասա՛ ծառային, որ մի բաժակ ջուր բերէ։

—Աւելի լա՛ւ չէ՞, որ գինի բերէ, հայրիկ։

—Ուրեմն երկուսն էլ բերել տուր։

Այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ Երուսաղէմում, Հուրի պալատի վերնայարկի օթոցում։ Տանիքի ծնօտից Եսթերը կանչեց բակում կանգնած սպասաւորին։ Միևնոյն րոպէին մի ուրիշ սպասաւոր վերև եկաւ։

—Մի ծրար տիրոջս համար,—ասաց նա, ակնածութեամբ ողջունելով, և յանձնեց օրիորդին մի նամակ, որ կտաւով փաթաթուած և կնքուած էր։

Պէտք ենք համարում այստեղ ասել, որ այն օրը մարտ ամսի 21-ն էր։ Բաթաբրայի մօտ, Քրիստոսի ծանուցուելուց համարեա թէ երեք տարի յետոյ։

Նոյն միջոցին Բէն Հուրի յանձնարարութեամբ, որ չէր կարող այլ եւս իր հայրենի տան ամայացած վիճակը տեսնել, Մալուխը գնել էր Պոնտացի Պիղատոսից այն տունը և հիմնովին մաքրել ու նորոգել։ Պղտտաւոր անցեալի ոչ միայն հետքը չէր մնացել, այլև ամեն բան այժմ աւելի շքեղ էր յարդարուած։ Այցելուն ամեն մի քայլափոխին աղնիւ ճաշակի նշաններ կըտեսնէր, ճաշակի, որ տանտէրը նրբացրած էր Միջերկրեայ ամարանոցում և Հռոմում։

Սակայն Բէն Հուրը հրապարակով չէր ատանձնել իր կալուածքը. նրա կարծիքով այդպէս անելու ժամանակը դեռ չէր հասած. իր յաւուրկ անունն անգամ նա տակաւին ծածկում էր։ Պատրաստութիւններ տեսնելու համար Գայիլիայում մնալով, նա անհամբեր հետևում



էր Նազովրեցուն, որ օր ըստ օրէ մի հանելուկ էր դարձել նրա համար. նա շատ անգամ անձամբ տեսնում էր Նազովրեցու հրաշքները, բայց նրա բնութիւնն ու առաքելութիւնը մի տագնապալի երկբայութիւն էին պատճառում իրեն։ Երբեմն երբեմն նա գալիս էր սուրբ քաղաքը և հայրենի տանն իջնում, բայց միշտ իբրև օտարական և կամ հիւր։ Բաղդասարը և Իրասը բնակուել էին առ ժամանակ նրա տանը, և Բէն Հուրի այցելութիւնները գլխաւորապէս նուիրուած էին օրիորդին, որ նրան սաստիկ գրաւում էր. սակայն հայրն էլ գրաւում էր նրան, շրջագայող Աստուածորդու հրաշալիքները պատմելով։

Սիմոնիդէսն ու Եսթերը նոր էին վերադարձել Անտիոքից Երուսաղէմ։ Այս ուղևորութիւնը տաժանելի էր ծերունու համար. նրան բերել էին երկու ուղտի միջև կապուած դեսպակով, որ ի հարկէ կըտատանուէր նրանց անհաւասար քայլերից։ Տուն հասնելուց յետոյ քարի մարդը չէր յագենում իր հայրենիքը տեսնելուց։ Ժամերով նստած էր մնում վերնայարկի օթոցում, սարերից փչող զմայլական սիւքը շնչելով, արեգակի ելքն ու մուտքը դիտելով. իր աղջկայ խնամքը վայելելով և նրա վաղուց թաղուած ժողը յիշելով։ Բայց և այնտեղ անդամալոյծ վաճառականն անգործ չէր։ Ամեն օր մի սուրհանդակ լուր էր բերում նրան Սանբալատից, որին նա Անտիոքի վաճառատան գործակալ էր նշանակել, և ամեն օր ինքն ուղարկում էր Սանբալատին ճիշտ ու որոշ հրահանգներ, նախատեսելով ամեն մի դէպք, բացի նրանցից, որոնց մասին յառաջատես լինելու շնորհ չէ տրուած ադամորդուն։

Մինչ Եսթերն ընդունում էր ծրարը, արևի լոյսը նրա վրայ ընկաւ և կարելի եղաւ պարզ տեսնել, որ նա այժմ մի բողբոջուն մանկամարդ է՝ վայելուչ ու

գեղեցիկ պատկերով, վարդագոյն առոյգ դէմքով, որ որոշ արտայայտում էր նրա խելքն ու անձնուէր ոգին:

Նա մտիկ տուաւ ծրարին, կանգ առաւ, նորից նայեց ուշադրութեամբ և, իր այտերը վառուեցին— ծրարի կնիքը Բէն Հուրինն էր: Նա շտապով մօտեցաւ հօրը:

Սիմոնիդէսը ծրարն առաւ, կնիքը ջննեց, յետոյ կոտրեց և միջի թուղթն աղջկանը տուաւ, ասելով.

—Կարդա:

Նա մտիկ էր տալիս Եսթերին. յանկարծ իր երեսի վրայ էլ շփոթութեան նշան երևաց:

—Այո, դիտեմ, մեր... մեր տիրոջից է:

Վարանած աղջիկը մի պարկեշտ անկեղծութեամբ հօր քննող աչքերին նայեց:

—Դու նրան սիրում ես, Եսթեր,—ասաց հայրը հանգիստ ձայնով:

—Այո, հայրիկ:

—Արդեօք մտածե՞լ ես, թէ ինչ ես անում:

—Այո, հայրիկ, միշտ ջանացել եմ մտածել, որ նա մեր տէրն է և մենք նրա ծառաներն ենք, բայց ջանքերս զուր են անցել:

—Դու մի բարի աղջիկ ես, Եսթեր, ինչպէս որ էր և մայրդ,—ասաց հայրը, մտածութեան մէջ սուզուելով:—Թող ներէ ինձ Աստուած, բայց... բայց գուցէ սէրդ զուր չլինէր, եթէ ես պահած լինէի այն բոլորը, ինչ որ ունէի և կարող էի դեռ պահել: Փողի ոյժը մեծ է, դստրիկ:

—Այդ դէպքում իմ դրութիւնս այժմեանից վատ կըլինէր... նրա հայեացքին ես անարժան կըլինէի և քեզնով պարծենալու անկարող: Արդեօք չկարդա՞մ:

—Մի վայրկեան էլ համբերիր, դստրիկ: Թոյլ տուր, որ յատկապէս քո օգտի համար աչքերդ բանամ:



Ձմարտութիւնն ինձնից որ լսես, գուցէ սարսափդ այնքան սաստիկ չլինի... Նրա սէրն արդէն ուրիշին է պատկանում:

—Դիտեմ, հայրիկ,—ասաց Եսթերը հանդարտ ձայնով:

—Եգիպտուհին իր ցանցի մէջ է պահում նրան,—շարունակեց հայրը.—Այդ օրիորդն իր ազգի պէս խոհեմանկ է և շատ գեղեցիկ... շատ գեղեցիկ, բայց և անսիրտ: Մի աղջիկ, որ իր հօրն արհամարհում է, ամուսնուն էլ թշուառ կանէ:

—Մի՛թէ այդպէս, ո՛վ հայրիկ:

Սիմոնիդէսը շարունակեց.

—Բաղդասարը թէև հեթանոս, բայց հրաշապէս Աստուծու աջն շնորհ գտած մի իմաստուն ծերունի է. հաւատը զարդարում է նրան, բայց իր աղջիկն այդ հաւատը ծաղրում է: Դեռ երեկ իմ ներկայութեամբ իր հօր մասին խօսելիս նա ասաց. «Ջահել հասակին ներելի է յիմարութիւններ անել. իմաստութիւնը ծերերի բաժինն է: Եթէ մի ծեր այդ էլ կորցնէ, լաւ է մեռնի»:—Անագորոյն, միայն հռոմայեցուն վայել լեզու: Այդ խօսքերը ես ինձ վրայ ընդունեցի...չէ՞ որ ես էլ նրա հօր նման մի թոյլ էակ կըդառնամ, և դիտեմ, շուտով... Բայց դու, Եսթեր, երբէք չես ասիլ իմ մասին, այո, երբէք չես ասիլ.—Լաւ է մեռնի: Ո՜չ, քո մայրն իսրայէլի աղջիկ էր:

Եսթերն արտասուելով համբուրեց հօրը և ասաց.

—Ես մօրս աղջիկն ե՞մ:

—Եւ իմ զաւակս—իմ աղջիկս, որ նոյնն ես ինձ համար, ինչ որ Տաճարն էր Սողոմոնի համար:

Մի կարճատև լռութիւնից յետոյ հայրը Եսթերի ուսին դրաւ ձեռքը և ասաց.

—Եթէ նա եգիպտուհուն կին առնէ, այն ժամա-

նակ ջերմ ղջանքով և կարօտով կըյիշէ քեզ, Եսթերիկ, որովհետև վերջ ի վերջոյ կիմանայ, որ իր կնոջ փառամոլութեան սորուկ է դարձել։ Հառամն է այդ եգիպտուհու բոլոր տենչերի կենդրոնը։ Նրա աչքում Բէն Հուրն Արիուս երկապետի որդին է, այլ ոչ թէ Երուսաղէմի իշխան Հուրի որդին։

Եսթերը չփորձեց այս խօսքերի արած տպաւորութիւնը թաքցնել և աղաչական ձայնով գոչեց.

—Ազատէր նրան, հայրիկ իմ. դեռ ուշ չէ։

—Խեղդուող մարդուն կարելի է ազատել, բայց սիրահարուածին՝ ոչ երբէք,—ասաց հայրը ժպտալով։

—Բայց դու նրա վրայ ազդեցութիւն ունիս։ Նա մենակ է այս աշխարհում։ Ցոյց տուր նրան իրեն սպառնացող վտանգը։ Ասա նրան այն մէկի ինչ կլին լինելը։

—Անելովս գուցէ նա ղզուի այն կնոջից, բայց դէպի քեզ կըգառնայ արդեօք։ Ո՛չ։—Ծերունու թաւ յօնքերն աչքերի վրայ կախուեցին։—Ես մի ծառայ եմ, ինչպէս որ և հայրերս էին սերունդից սերունդ։ Ես չեմ կարող ասել նրան.—Տէս, տէր, ահա աղջիկս. սա եգիպտուհուց գեղեցիկ է և աւելի սերտ է սիրում քե՛զ։—Ո՛չ. լեզուս չէր դառնալ այսպիսի բան ասելու։ Լեռներն անգամ շուռ կը գային ամօթից։ Մեր նահապետները վկայ, Եսթե՛ր. ես լաւ կը համարէի, որ երկուսս էլ մօրդ կողքին հանգչէի՛նք։

Եսթերի երեսը շառագունեց։

—Մոքիս անգամ չէ անցել, հայրիկ, որ դու նրան մի այդպիսի բան ասես։ Ես նրա անձը միայն ի նկատի ունէի, նրա երջանկութիւնը, ոչ թէ իմը։ Համարձակուելով սիրել նրան, ես կաշխատեմ արժանանալ նրա յարգանքին և դրանով կը քաւեմ անմիտ արարքիս յանցանքը։ Թոյլ տուր այժմ նամակը կարդալ։

—Այո, կարդա։



Եւ խօսակցութեան կսկծալի առարկայից մի ուրիշ նիւթի անցնելու համար Եսթերն իսկոյն սկսեց կարդալ.

«Նիզանի 8.

«Գալիլիայից Երուսաղէմ տանող ճանապարհի վրայ։

«Նազովրեցին էլ այս ճանապարհի վրայ է։

«Ես մի լիաթիւ լեգէոնով հետևում եմ նրան առանց իր գիտութեան։ Երկրորդ լեգէոնը գալիս է իմ ետևից։ Ջատկի տօնը կարդարացնէ այսպիսի բազմութեան կուտակումը։ Նազովրեցին ասաց, թէ գնում է Երուսաղէմ, որպէսզի մարգարէների ասածն իր մասին կատարուի։

«Սպասելու ժամանակն արդէն լրանալու վրայ է։

«Շտապում եմ։

«Խաղաղութիւն քեզ, Սիմոնիդէ՛ս։

«Բէն Հուր»։

Նամակը հօրը յետ տալիս Եսթերը գրեթէ արտասուում էր։ Գրութեան մէջ մի բառ անգամ չէր ընծայուած իր անձին... ողջունի մէջ էլ չէր յիշուած։ Այն ինչ որքան հեշտ էր աւելացնել՝ «Խաղաղութիւն և՛ աղջկանդ»... Այս առաջին անգամն էր իր կեանքում, որ Եսթերը նախանձի սուր խայթ զգաց։

—Նիզանի ութին,—ասաց Սիմոնիդէսը,—ութին, իսկ այսօ՛ր...

—Այսօր ինն է,—պատասխանեց աղջիկը։

—Ուրեմն արդէն Բեթանիա հասած կըլինին։

—Եւ գուցէ հէնց այս երեկոյ տեսնենք նրան,—յարեց Եսթերը, իսկոյն և եթ իր կսկիծը մոռանալով։

—Կարելի է, շատ կարելի։ Վաղը տօն է Բաղարջակերաց, և նա կուզենայ մասնակից լինել այս տօնին, Նազովրեցին էլ կուզենայ. և մենք գուցէ տեսնենք նրան... երկուսին էլ տեսնենք, Եսթեր։

Այդ րոպէին սպասաւորը եկաւ, հաց ու գինի

քերելով։ Եւ մինչ Եսթերը ծառայութիւն էր անում հօրը, Իրասը տանիքի վրայ բարձրացաւ։

Ոչ մի ժամանակ եգիպտուհին այնքան գեղեցիկ չէր երևացել հրէայ աղջկան, որքան այժմ։ Նա հագած էր մշուշային ամպի նման մի շղարշէ զգեստ. ճակատը, վիզը, բազուկները պճնուած էին գոհարներով։ Երեսը փայլում էր գոհութեամբ։ Բայլերը թեթև էին, ինքը զուարթ և համարձակ։ Նրան տեսնելուն պէս Եսթերը դողաց և աւելի մօտեցաւ հօրը։

—Խաղաղութիւն քեզ, Սիմոնիդէս, և քեզ, սիրուելիկ Եսթեր,—ասաց Իրասը, թեթևակի գլուխ տալով աղջկան։—Քեզ տեսնելիս, ով ալևոր բարեկամ, միաքս են գալիս—խնդրեմ ասածս վիրաւորանք չհամարես—Պարսկաստանի քուրմերը, որոնք երեկոյեան դէմ կատուների վրայ են բարձրանում մայր մտնող արեգակին ջերմ ազօթք կարդալու համար։ Եթէ քեզ այդ պաշտամունքն անյայտ է, հօրս կըկանչեմ. նա ծագումով մոգերից է։

—Գեղեցիկ եգիպտուհի,—պատասխանեց ալևորը, հանդիսաբար գլուխ տալով,—հայրդ մի բարի մարդ է, որ չէր վշտանալ, եթէ նրան ասէի, թէ պարսկական գիտութիւնն իր իմաստութեան մի փոքրագոյն մասն է միայն։

Իրասի շուրթերը կարծես փոքր ինչ կծկուեցին։

—Քեզ նման փիլիսոփայաբար խօսելով—փոքրագոյն մասը մեծագոյնի մասնիկն է։ Խնդրեմ շնորհ անես ասելու ինձ, թէ ո՞րն է քո կարծիքով հօրս իմաստութեան մեծագոյն մասը։

Սիմոնիդէսը լուրջ կերպով ասաց Իրասին.

—Շշմարիտ իմաստութիւնը միշտ Աստուածուն ձըգտող է։ Մեծագոյն իմաստութիւնն Աստուածուն ճանաչելն է, և իմ ծանօթների շրջանում մի մարդ չկայ, որ



Աստուածուն աւելի լաւ ճանաչէր և իր գիտցածն աւելի լաւ արտայայտէր խօսքով ու գործով, քան բարեսիրտ Բաղդասարը։

Եւ ծերունին իր շուրթերին դրաւ բաժակը ցոյց տալու համար, թէ կըցանկար վերջ տալ խօսակցութեան։

Եգիպտուհին նեղանալով՝ դէպի Եսթերը շուռ եկաւ։

—Մի լիոններով և անթիւ նաւերի տէր մարդն անկարող է մեզ նման տխմար կանանց հաճոյքները հասկանալ։ Թողնենք դրան, գնանք այն անկիւնում խօսակցենք։

Նրանք մօտեցան տանիքի ծնօտին և կանգ առան այն կէտի մօտ, որտեղից տարիներ առաջ Բէն Հուրի ակամայ շարժումով մի աղիւս էր ընկել և Գրատուսի գլխին դիպել։

—Դու ոչ մի ժամանակ Հռոմ չե՞ս եղած,—սկսեց Իրասը, իր ապագրանջանի հետ խաղալով։

—Ո՛չ,—ասաց Եսթերը պարզութեամբ։

—Ձեռս էլ փափագած գնալու։

—Ո՛չ։

—Ուրեմն որքան սահմանափակ է եղել կեանքդ։ Ո՛հ, ափսո՛ս։

Այս հառաչանքը աւելի ջերմ չէր հնչիլ, թէ նոյն իսկ եգիպտուհին ինքը լինէր կարեկցութեան առարկան։ Մի վայրկեան չանցած նա այնպէս սաստիկ ծիծաղեց, որ փողոցում անգամ լսելի եղաւ։

—Ո՛վ, միամիտ մանկիկս,—գոչեց նա,—Մեմփիսի սֆինքսի ականջում աշխարհ եկած նորափեսուր ծիտիկներն անգամ քեզնից աւելի բան գիտեն։

Եսթերի լռութիւնը նկատելով, Իրասը փոխեց խօսելու եղանակը և մեղմական ձայնով ասաց.

—Մի վշտանար, ես հանաք եմ անում։ Ե՛կ, սիրելիս, ցաւս համբոյրովս փարատեմ և քեզ մի բան ասեմ, որ ուրիշ մարդու չեմ ասիլ։

Իրասը դարձեալ քրքջաց և քօղարկեց իր սուր հայեացքը, որ նետել էր հրէուհու վրայ։ Յետոյ ասաց.

— Թագաւորը գալիս է։

Եսթերը նայեց նրան մի անմեղ զարմանքով։

—Նազովրեցին,—շարունակեց Իրասը,—նա, որի մասին այնքան խօսել են մեր հայրերը, որի համար այնքան տանջուել ու մաշուել է Բէն Հուրը—Իրասի ձայնը փոքր ինչ իջաւ—Նազովրեցին վաղն այստեղ կըլինի... իսկ Բէն Հուրը հէնց այս գիշեր։

Եսթերն աշխատում էր հանգիստ երևալ, սակայն ի զուր. նրա աչքերը կախ ընկան, դաւաճան կարմրութիւնը այտերն ու ճակատը ներկեց։ Նա չնկատեց եգիպտուհու երեսի վրայ արագ փայլած յաղթական ժպիտը։

—Տես, ահա նրա խոստումը,—ասաց Իրասը և մի ծրար հանելով գօտուց, շարունակեց.—Ուրախացիր ինձ հետ, սիրելի Եսթեր։ Այս գիշեր նա այստեղ կըլինի։ Տիբերի վրայ գտնուող արքայական պալատն արդէն վաղուց սպասում է ինձ. այն պալատում տիրուհի լինելը կընշանակէ...

Այս խօսքերն ընդհատուեցին փողոցից հնչող արագաշարժ քայլերի ձայնով։ Իրասը կռացաւ եկուորին տեսնելու. յետոյ գոչեց.

—Օրհնած լինի իմ բախտը։ Բէն Հուրն է...ինքը Բէն Հուրը՝։ Բարի նշան չէ, որ նրան յիշելուս պէս ինքն էլ եկաւ։ Եթէ այս զուգադիպութիւնը մի հրաշք չէ, ասել է թէ աստուածները չկան։ Համբուրիր ինձ, Եսթեր՛կ։

Հրէուհին վերև նայեց. նրա թշերն այրուում էին, աչքերը վառուում իր բարի բնութեան դեռ անծանօթ



բարկութիւնից։ Նրա հեզութիւնն անչափ կոպիտ փորձութեան էր ենթարկուել։ Բաւական չէ, որ նա իր սիրած մարդու վրայ, երազում միայն համարձակուում էր մտածել, դեռ մի անապարհ տարփածու մտերմաբար յայտնում էր նրան, թէ ինքն աւելի սէր է գտած այն մարդուց և արդէն մօտ է իր տենչերի իրագործման։ Նա՝ մի ճորտի ճորտ աղջիկը մի բառով անգամ չէր յիշատակուած նամակում. մինչդեռ միւսը ցոյց էր տալիս մի ուրիշ նամակ միևնոյն մարդուց, թողնելով ճորտին երևակայել, թէ ինչ էր գրուած նրա մէջ։ Եսթերը հարցրեց Իրասին.

—Ո՞ւմ ես սիրում դու իսկապէս—նրա՞ն, թէ Հոմը։

Իրասը մի քայլ յետ նահանջեց և գոռոզաբար բարձրացնելով գլուխը՝ պատասխան տուաւ.

—Ի՞նչն է նա, ով Սիմոնիդէսի աղջիկ։

Եսթերը զրդռուելով ուզում էր ասել.

—Նա իմ...—սակայն չասաց, այլ միայն գունատուեց և դողաց։—Նա իմ հօր բարեկամն է,—յարեց նա յետոյ։

Նրա լեզուն չդարձաւ խոստովանելու իր ճորտութիւնը։

Իրասը նկատեց ժպտալով.

—Միայն այդքան... համբոյրներդ քեզ պահիր։ Եսաւելի լաւերը կըստանամ... և... ահա գնում եմ ստանալու... Բարո՛վ մնաս։

Եւ հպարտ հպարտ հեռացաւ։

Եսթերը տեսաւ նրա իջնելը սանդուղքից և երեսը ծածկելով լաց եղաւ։ Արտասուքը յորդ հոսում էր մատների միջով—ամօթի և ճնշուած սիրոյ արտասուք։ Եւ ասես թէ իր զայրոյթի դառնութիւնը սաստկացնելու համար, որ այնքան խորթ էր նրա հեզ բնութեան, նա յիշեց նօր խօսքերը, որոնք այժմ մի աւելի դառն

իմաստ առացան,—գուցէ սէրդ զուր չէր լինել, եթէ ես պահած լինէի այն բոլորը, ինչ որ ունէի և կարող էի դեռ պահել։—

Աստղերն արդէն շողում էին քաղաքի և լեռների վրայ, երբ Եսթերն այնքան տիրեց ինքն իրեն, որ նորից այժ առաւ օթոցը գնալու և հօրը ծառայելու։ Կարծես այս էր այնուհետև նրա ծալիկ հասակի, եթէ ոչ ամբողջ կեանքի, միակ պարտքը։ Եւ ճշմարտութիւնն ստիպում է ասել, որ հոգեկան ցաւի ճգնաժամն անցնելուց յետոյ նա վերստին յօժար սրտով անձնատուր եղաւ այս պարտքին։

## ԻԸ.

### *Բէն Հուրի պատմածը*

Տանիքի վրայ տեղի ունեցած անցքից մի ժամ յետոյ Բաղդասարը, Սիմոնիդէսը և Եսթերը պալատի մեծ դահլիճը մտան. նրանցից յետոյ Բէն Հուրն էլ մտաւ Իրասի հետ։

Նա մօտեցաւ նախ Բաղդասարին, ողջունեց նրան, փոխարէնն ընդունեց, յետոյ դիմեց Սիմոնիդէսին, իսկ Եսթերին նկատելուն պէս՝ շուարուելով կանգ առաւ։ Հասակ առած Եսթերի շնորհալի տեսքը շփոթեց նրան և յիշեցրեց իր առաջուայ զղացումները դէպի նա և այն սրբազան պարտքերն իր մօրն ու քրոջ նկատմամբ, որոնք տակաւին անկատար էին մնացած։ Հռոմից վերժ հանելու, հայրենիքն ազատելու, նոր թագաւորին ծառայելու տենչին նուիրուելով և մասամբ փառասէր իրասի ազդեցութեան ենթարկուելով, նա կարծես թէ դադրել էր իր գերդաստանի գաղտնիքը պարզելուն հետամուտ լինել. կարծես թէ մօրն ու քրոջը գտնելու իղձն



այլ ևս չէր մաշում նրան, չէր տանջում։ Իր վարանման յաղթելուց յետոյ նա Եսթերին էլ մօտեցաւ։

—Աղաղութիւն քեզ, չքնաղ Եսթեր, —ասաց նա։—Տիրոջ օրհնութիւնը վրադ լինի, Սիմոնիդէս, որ միշտ բարի հայր ես եղած ինձ համար։

Եսթերն ակնկոր լսեց ողջոյնը, իսկ հայրը պատասխանեց.

—Ես կրկնում եմ բարի Բաղդասարի մաղթանքը, ով որդիդ Հուրի։ Պապերիդ տունը դատ գնելդ բարի լինի։ Նատիր և պատմիր—ո՞րտեղ էիր, ինչե՞ր արիր, ո՞րտեղ տեսար զարմանալի Նազովրեցուն... ո՞վ է նա և ի՞նչ է։ Նատիր մեր առջև, ան՛ա այստեղ, որ բոլորս էլ լաւ լսենք։

Եսթերն իսկոյն մի աթոռ բերաւ և առաջարկեց Բէն Հուրին։

—Շնորհակալ եմ քեզնից,—ասաց վերջինս սիրելաբար։

Նստելուց յետոյ նա սկսեց, այր մարդկանց դիմելով.

—Եկած եմ պատմելու ձեզ, ինչ որ գիտեմ Նազովրեցու մասին։ Ես օրերով հետևեցի նրան և ամենամեծ ուշադրութեամբ դիտեցի նրան այն ամեն պարագաների մէջ, ուր մարդուս ինչ լինելն աւելի որոշ է երևում։ Եւ այժմ համոզուած եմ, որ թէպէտ նա մարդ է ինձ նման, բայց աւելի, քան թէ մարդ։

—Ի՞նչպէս թէ աւելի,—հարցրեց Սիմոնիդէսը։

—Ահա կասեմ...

Նա լսեց մի ներս մտնողի ոտքի ձայն և յետնայելուն պէս տեղից թռաւ բազկատարած։

—Ամրա՛մ, ով բարի Աբրա՛մ,—գոչեց նա։

Պառաւը մի այնպիսի ուրախ դէմքով մօտեցաւ նրան, որ երեսի կնճիռները և մութ գոյնը չէին նկա-

տիլ։ Նա չոքեց տղամարդու առջև, նրա ծնկներին փարուեց և ձեռքերը մի քանի անգամ համբուրեց։ Բէն Հուրը մեղմիւ հեռացրեց նրա ճակատից ալևոր մազերը, համբոյր տուաւ նրա այտերին և ասաց.

—Բարի Ամրա, լինչ կասես ինձ նրանց մասին... Միթէ դարձեալ ոչ մի նշան, ոչ մի հետք...

Կինն սկսեց վիզ ձգելով լալ, որ բառերից աւելի պարզ պատասխան էր Բէն Հուրի համար։

—Աստուծու կամքն է,—ասաց Բէն Հուրը հանդիսաւոր եղանակով։

Այս եղանակից երևում էր, որ նա այլ ևս յոյս չունի մօրն ու քրոջը տեսնելու։ Նրա աչքերում արտասուք ցոլաց, որ իրրև տղամարդ չէր ուզում ցոյց տալ ուրիշներին։ Ապա թէ յուզմունքը ճնշելով, նորից նստեց և ասաց.

—Ե՛կ, Ամրա, կողքիս նստիր... հէնց այստեղ։ Ջե՛ս ուզում։ Դէ ուրեմն ոտքերիս մօտ։ Ես շատ բաներ պիտի պատմեմ մի նորայայտ և հրաշալի մարդու մասին։

Կինը սակայն մի կողմ գնաց և ծալապատիկ նստեց պատի տակ, ի սրտէ գոհ որ կարող էր հեռուից նայել տիրոջ դէմքին։

Բէն Հուրն այնուհետև ծերերին դառնալով շարունակեց.

—Չեմ կարող պատասխանել ձեր հարցմանը Նազովրեցու մասին, մինչև որ նրա արած և իմ տեսած բաներից մի քանիսը չպատմեմ։ Եւ կըպատմեմ, որովհետև նա հէնց վաղը պիտի քաղաք գայ և մտնէ տուրը տաճարը, որ իր հօր տունն է անուանում։ Այնտեղ էլ պիտի հրապարակաւ ծանուցանէ իր անձը։ Ուրեմն վաղը կիմանանք, թէ ո՞վ է ձեզնից իրաւացին—դո՞ւ, Բաղդասար, թէ՞ դու, Սիմոնիդէս։



Բաղդասարն իր դողդոջ ձեռքերը շփելով հարցրեց.

—Ո՞ւր պիտի գնամ, որ նրան տեսնեմ։

—Բազմութեան իրարանցումը շատ մեծ կըլինի։ Իմ կարծիքով լաւ կանէք, եթէ բոլորդ էլ Սողոմոնի նախապաւթի կտուրը բարձրանաք։

—Դու էլ մեզ կուղեկցե՞ս։

—Ո՛չ,—ասաց Բէն Հուրը։—Ընկերներս կուզենան, որ ես թափօրին մասնակցեմ։

—Թափօրի՞ն,—գոչեց Սիմոնիդէսը։—Միթէ հանդիսաւոր շքով է գալիս։

Բէն Հուրը նրա միտքը հասկացաւ։

—Նա բերում է իր հետ տասներկու մարդ.. ձկնորսներ, մշակներ, մի մաքսաւոր... բոլորն էլ հասարակ մարդիկ։ Եւ նրանք հետի են գալիս, և փոյթ չէ նրանց ոչ տնձրևը, ոչ խորշակը, ոչ ցուրտը, ոչ էլ քամին։ Երբ նրանք ընթրելու և հանգստանալու համար նստում էին ճանապարհների եզերքին, ես յիշում էի խաչնարած հովիւներին, բայց իշխաններ և թագաւորներ մտքիցս անգամ չէին անցնում։ Սակայն երբ Նազովրեցին մի մի ժամանակ իր գլուխը մերկացնում էր քրտինքն ու փոշին սրբելու համար, չէր կարելի իսկոյն չտեսնել, որ նա նրանց վարժապետն է և մեծը։ Դուք իմաստուն մարդիկ էք,—ասաց Բէն Հուրը մի կարճատև լուռթիւնից յետոյ.—Արդ լինչ կասէք մէկի մասին, որ կարող էր ոսկի դարձնել ոտքի տակի քարերը, բայց և այնպէս իր ամբողջ կամքով աղքատ է։

—Յոյները նրան փիլիսոփայ կանուանէին,—կարծիք յայտնեց Իրասը։

—Ո՛չ, աղջիկս — ասաց նրան Բաղդասարը։—Երբէք փիլիսոփաները զօրութիւն չեն ունեցել այդպիսի բան անելու։

—Ո՞րտեղից գիտես, որ այն մարդն ունի։

Բէն Հուրն իսկոյն պատասխանեց.

—Ես ինքս տեսայ, թէ ինչպէս նա ջուրը գինի դարձրեց։

—Տարօրինակ բան, շատ տարօրինակ,—ասաց Սիմոնիդէսը։—Բայց և՛ս աւելի տարօրինակ, որ նա լաւ է համարում աղքատ ապրել, մինչ կարող էր հարուստ լինել... Իրա՞ւ աղքատ է։

—Ոչինչ չունի և ոչ ոքի չէ նախանձում, այլ դեռ խղճում է հարուստներին։ Սակայն այդ թողնենք. ինչ կասէք, եթէ մէկը այնքան շատացնէ ձեր հատ հացը և երկու ձուկը, որ հինգ հազար մարդ կերակրելուց յետոյ՝ զամբիւղները դեռ լիքը մնան։ Ի՞նչ կասէք, եթէ մի այսպիսի բան տեսնէք։ Ե՛ս տեսայ Նազովրեցու այդ հրաշքը։

—Ինքդ տեսա՞ր,—բացականչեց Սիմոնիդէսը։

—Այո, դեռ ինքս էլ նոյն հացից և ձկնից կերայ։

—Եւ աւելի զարմանալին։—Շարունակեց Բէն Հուրը։—Ի՞նչ կասէք այն մարդու մասին, որի մէջ մի այնպիսի բուժիչ զօրութիւն կայ, որ բաւական է, եթէ հիւանդները նրա զգեստը միայն շօշափեն և կամ հեռուից նրան կանչեն, որպէս զի իսկոյն առողջանան։ Այս բանին էլ ես ինքս անձամբ վկայ եղայ, և ոչ թէ մէկ, այլ շատ անգամ։ Երբ Երիքովից դուրս էինք գալիս, ճանապարհին նստած երկու կոյրեր Նազովրեցուն կանչեցին. նա նրանց աչքերը շօշափեց, և նրանք տեսան։ Յետոյ մի անդամալոյծ բերին նրա մօտ, և Նազովրեցին մի՛այն ասաց. «Արի, ա՛ռ զմահիճդ քո և երթ ի տուն քո», և մարդն առողջացած հեռացաւ... Ի՞նչ կասէք այս բանի մասին։

Վաճառականը պատասխան չունէր։

—Եթէ կարծէք ոմանց պէս, թէ իմ պատմած բա-



նները մի ձեռնածուի կամ ճապարարի հնարքներ են, ես ձեզ կը պատասխանեմ և՛ս աւելի մեծ հրաշքներ պատմելով, որ նա գործեց իմ առջև։ Յիշեցէք բորոտութիւնը... այս աստուածային անէծքը, որ միայն մահով է վերջանում։

Ամրան այս խօսքերը լսելուն պէս ձեռքերը յատակին դէմ տուաւ և կիսով չափ բարձրացաւ աւելի լաւ լսելու համար։

Բէն Հուրը մեծ լրջութեամբ շարունակեց.

—Ի՞նչ կասէք հետևեալ դէպքի մասին, որ դարձեալ աչքիս առջև կատարուեց։ Գալիլիայում մի բորոտ եկաւ Նազովրեցու մօտ և ասաց. «Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել»։ Նազովրեցին դիպաւ նրան ձեռքով և ասաց. «կամիմ, սրբեա՛ց»։ Եւ բորոտը նոյն վայրկենին մաքրուեց և մի քաջառողջ մարդ դարձաւ, ինչպէս որ էինք այս բժշկութեան ականատես վկաներս, և մեր թիւն ահագին էր։

Ամրան վերկացաւ և մազերն աչքից հեռացրեց նիհար ձեռքով։ Խեղճի սիրտը տրոփում էր. էլ չէր կարող աւելի երկար ականջ դնել յուզմունքից։

—Մի օր էլ,—շարունակեց իսկոյն Բէն Հուրը,—նրա մօտ եկան տասը բորոտ և գոչեցին—այս բոլորին ես ինքս տեսայ և լսեցի—«Յիսուս վարդապետ, ողորմեա՛ մեզ»։ Եւ նա ասաց. «երթա՛յք, ցուցէք զանձինս քահանայիցն»։ Եւ հեռացան թէ չէ՝ մաքրուեցին։

—Իրա՞ւ։

—Այո։ Մինչ հեռանում էին՝ բորոտութիւնը նրանց թողեց, և կեղտոտ շորերից զատ մի ուրիշ հետք չմնաց։

—Այդպիսի բաներ ոչ մի ժամանակ չէին լսուած Իսրայէլում... երբէք, երբէք,—շշնջաց Սիմոնիդէսը։

Իսկ Ամրան զգուշութեամբ մօտեցաւ դռանը և

կամացուկ դուրս գնաց. ոչ ոք նրա հեռանալը չընկատեց։

—Կարող էք երևակայել, թէ ինչ մտքեր յարուցին իմ մէջ այս դէպքերը,—ասաց Բէն Հուրը։—Սակայն կասկածներս, երկիւղս և շփոթութիւնս դեռ գագաթնակէտին չէին հասած։ Գիտէք, որ գալիլիացիք բուռն ու կրքոտ մարդիկ են։ Տարինեռով պատերազմի սպասող մարդիկ այլ ևս չէին կարող իրենց սուրը պատեանում պահել։—Ինչո՞ւ է յապաղում յայտնել իր անձը։ եկ ստիպենք նրան,—գոչում էին նրանք։ Իմ համբերութիւնն էլ սկսեց նուազել։ Եթէ նա թագաւոր պիտի լինի, ինչո՞ւ հէնց այժմ չգահնայ։ Լեգէոնները պատրաստ են։ Եւ այսպէս՝ մինչ նա մի օր ծովափի վրայ քարոզում էր, մենք վճռեցինք, ուզէր, չուզէր, թագ դնել գլխին. բայց նա իսկոյն անհետացաւ, և երբ որ նորից նրան տեսանք, արդէն հեռանում էր նաւակով։ Սիրելի Սիմոնիդէս, ուրիշ մարդկանց խելքը թոցնող տենչերը — հարստութիւն, իշխանութիւն, նոյնիսկ արքայական թագ ու բարձ—մի մազի չափ չեն շարժում նրան։ Ի՞նչ կասես։

Վաճառականը մի քանի ժամանակ գլուխը կախ նստած էր. յետոյ շտկուեց և վճռաբար ասաց.

—Աստուած կենդանի է և նրա մարգարէների խօսքն անմահ։ Վաղուան օրը մեզ լոյս կըբերէ։

—Ամէն,—ասաց Բաղդասարը ժպտալով։

Բէն Հուրը շարունակեց.

—Դեռ չեմ վերջացրել։ Այժմ կանցնեմ ուրիշ դէպքերի, որոնք անհամեմատ գերազանց են և աշխարհի սկզբից ի վեր մարդկային ուժից վեր են եղել։ Ասացէք, երբ և է լսուած բան է, որ մի մարդ մահուան ձեռքից խլած լինի, ինչ որ մահուան աւարն էր։ Ո՞վ է երբէք շունչ տուել արդէն անշունչ դիակին։ Ո՞վ, եթէ ոչ...



—Միայն Աստուած,—երկիւղածութեամբ ասաց Բաղդասարը։

Բէն Հուրը գլուխը խոնարհեց։

—Ո՛վ իմաստուն եգիպտացի,—ասաց նա,—և դու, Սիմոնիդէս, ինչ կասէիք դուք, եթէ ինձ նման անձամբ տեսնէիք, որ մի մարդ երկու-երեք խօսքով կեանք է տալիս մեռածին. և այնպէս հեշտ, ինչպէս որ մի մայր զարթեցնում է քնած մանկանը։ Եւ այս բանը տեղի ունեցաւ Նայինում։ Մենք մօտեցել էինք քաղաքին, և ահա դռնից մի քանի մարդիկ դուրս եկան, մի մեռել տանելով։ Նազովրեցին կանգ առաւ և թողեց, որ յուղարկաւորներն անցկենան։ Նրանց թւում կար և մի կին, որ լալիս էր։ Ես նկատեցի, որ Նազովրեցու երեսը գթութիւնից մեղմացաւ։ Նա խօսեց կնոջ հետ, յետոյ դագաղին մօտեցաւ և ասաց պառկած մեռելին. «Պատանի դու, քեզ ասեմ, արի»։ Եւ նոյն վայրկենին մեռելը նստեց և սկսեց խօսել։

—Միայն Աստուած այդպիսի զօրութիւն ունի,—ասաց Բաղդասարը Սիմոնիդէսին։

—Ուշը դրէք, յարեց Բէն Հուրը,—որ իմ պատմածը միայն այն է, ինչ որ ես ինքս եմ տեսել միւս շատերի հետ միասին։ Այստեղ գալիս աչքովս տեսայ և՛ մի ուրիշ գործ, մի և՛ աւելի զօրաւոր հրաշք։ Բեթանիա քաղաքում Ղազարոս անունով մի մարդ կար, որ արդէն մեռած ու թաղուած էր, նրա այրի վրայ էլ չորս օրից ի վեր քար դրուած։ Նազովրեցին այնտեղ գնաց։ Հէնց որ քարը վերցրին, բոլորս էլ այրում մի պատանեաց մեռել տեսանք, որ արդէն նեխուել էր։ Շատ մարդիկ էին հաւաքուած և բոլորս լսեցինք, թէ ինչպէս Նազովրեցին բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարէ, արի՛ եկ արտաքս»։ Անկարող եմ նկարագրել, թէ ինչ զգացի, երբ մեռելը յանկարծ վերկացաւ և դէպի

մեզ եկաւ պատանքով... «Լուծէք զդա և թողէք երթալ», ասաց Նազովրեցին: Եւ յարուցեալի երեսից վարշամակը վերցրին թէ չէ, ո՛վ սիրելիք, և ահա նրա երակների մէջ արիւնն սկսեց նորից վազել, և նա վերստին այն դարձաւ, ինչ որ էր մեռնելուց առաջ: Եւ նա դեռ կենդանի է, և ամեն ժամ կարելի է տեսնել նրան և հետը խօսել: Դուք կարող էք վազը գնալ և նրան տեսնել: Արդ՝ այս բոլորը պատմելուցս յետոյ գալիս եմ դարձեալ այն խնդրին, որի դրդմամբ եկած եմ այստեղ, և որ գրեթէ քո հարցման կրկնութիւնն է, Սիմոնիդէս. ինչ է այդ Նազովրեցին, որ աւելի է, քան մի լոկ մարդ:

Այս հարցումը հանդիսաւոր էր:

Ընկերութիւնը կէս գիշերից յետոյ էլ անբաժան ճնաց, նոր լսած հրաշքների մասին խօսակցելով: Այս անգամ էլ Սիմոնիդէսը հակամիտ չէր ուրիշ կերպ մեկնել մարգարէների խօսքերը, բայց թէ այնպէս, ինչպէս որ միշտ մեկնած էր. մինչդեռ Բէն Հուրի պընդելով՝ Նազովրեցին թէ Փրկիչ էր, Բաղդասարի ասածին պէս, և թէ հանդերձեալ Թագաւոր, ինչպէս որ վաճառականն էր ուզում տեսնել նրան:

—Վազը կիմանանք: Խաղաղութի՛ւն ամենքիդ:

Այս ասելուն պէս Բէն Հուրը վեր կացաւ փութալով վերադառնալ Բեթանիա:

## ԻԹ.

### *Որոտները թողնում են քարայրը*

Հետևեալ առաւօտը առաջին անձը, որ Նախրի դուռը բացուելուն պէս շտապով դուրս եկաւ քաղաքից, Ամրան էր: Պահապանները ոչ մի հարցում չարին նրան, որովհետև վաղուց սովոր էին տեսնել նրան այդ պահուն և գիտէին, որ նա մէկի հաւատարիմ աղախինն է, և այս արդէն բաւական էր:

Ամրան գնաց արևելեան ձորի ճանապարհ: Ջրթենեաց լերան մութ կանաչ զառիվայրը ծածկուած էր տօնի համար եկած ուխտաւորների սպիտակ վրաններով: Դեռ վաղ էր և ոչ մի օտարական չէր հանդիպում նրան: Նա անցաւ Գեթսեմանէի, Բեթանիա տանող ճանապարհին կից գերեզմանների և Սելոամի լճակի մօտով: Պառաւի մարմինը դանդաղում էր. նա մի անգամ նստեց շունչ քաշելու, սակայն շուտով վերկացաւ և աւելի արագ առաջ փութաց: Եթէ երկու կողմի ժայռերն ականջ ունենային, նրա մրմնջելը կլսէին. եթէ աչք ունենային, նրա շուտ շուտ վերև նայելը և առաւօտեան աղջամղջի փարատուելուց դժգոհ լինելը կըտեսնէին. եթէ լեզու ունենային, անտարակոյս կասէին.—Մեր պառաւը շատ է շտապում այս առաւօտ. երևի իր տարած կերակրին կարօտները շատ են սուված:—

Վերջապէս Արքայական այգիներին հասնելուց յետոյ նա քայլերը ծանրացրեց, որովհետև արդէն սկսել էր երևալ բորոտների զարհուրելի քաղաքը, որ փռուած էր Հինոմ հովտի հարաւային ծայրում, լերան լանջքի երկայնութեամբ:

Ընթերցողը հարկաւ գուշակեց, որ Ամրան գնում էր իր տիրուհու մօտ, որի քարայրն էին Րոգելի Ջրհորի հանդէպ էր գտնւում:

Թշուառ կինը, չնայելով առաւօտեան վաղ ժամին, արդէն նստած էր այրի առջև, մինչ Թիրզան ներսը քնած էր: Երկար տարուայ ընթացքում ախտն արագ և անհելի աւերմունք էր առաջ բերել: Իր պատկերի ինչպէս լինելն իմանալով, կինը միշտ իր մարմինը ծած-

կած էր պահում և Թիրզային անգամ հնար եղածին չափ արգելում իր վրայ նայել:

Բայց այս առաւօտ նա գլխաբաց էր օդ շնչում. գիտէր, որ չորս կողմը մարդ չկայ, որ վախենար իր դէմքից: Լոյսը դեռ պայծառ չէր, բայց հիւանդութեան առաջ բերած քայքայումը բաւական պարզ երևում էր: Կնոջ ձիւնափայլ և կոշտացած մաղերը չուանների պէս կախ էին ընկած ուսերի և մէջքի վրայ: Կոպերը, շրթերը, ականջները և այտերը կամ մաշուած էին և կամ ժահրոտ վէրքերով ծածկուած: Վիզը մոխրագոյն թեփով պատած մի այլանդակ կոշկոռ էր: Հագուստի լայն ծալքի վրայ հանգչող մի ձեռքը ասես թէ մի կարծր կմախք լինէր. եղունգները թափուած էին, մատնայօղերը մինչև ոսկրը բաց և կամ կարմրահեռ կոշտուցքով բոլորուած: Գլուխը, երեսը, վիզն ու ձեռքերը ցոյց էին տալիս, թէ ամբողջ մարմինն էլ պիտի լինէր: Նրան այսպէս տեսնելուց յետոյ հեշտ էր հասկանալ, թէ ինչպէս էր կարողացել այնքան տարի անծանօթ մնալ Հուր իշխանի մի ժամանակ գեղեցիկ այրին:

Նա գիտէր, որ Զիթենեաց լերան կատարի վրայ արեգակը վայելելուն պէս Ամրան կըգայ և ուսեալիք ու ջուր կըբերէ: Այս կարճատև այցերից զատ Թշուառի համար ուրիշ բան չէր մնացել նախկին կեանքից. այդ միջոցներին նա կարող էր իր որդու բարօրութիւնն իմանալ և լսել նրա մասին, ինչ որ կասէր լրաբերը: Լուրերը սովորաբար կարճ էին, բայց և այնպէս շատ ափսոսական նրա համար: Երբեմն լսում էր, թէ որդին տանն է, և այն ժամանակ արշալուսին իր քարայրից դուրս էր գալիս և մինչև կէսօր, կէսօրից էլ մինչև իրիկուն իբրև մի սպիտակապատ անշարժ արձան մտիկ տալիս դէպի մի կէտ—տաճարից դէպի,—ուր կանգնած էր այնքան, այնքան յիշատակներով իր



պրտին ախորժ հին տունը, որ այժմ և՛ս աւելի ախորժ էր, որովհետև սիրելի որդին այնտեղ էր: Ուրիշ ոչինչ չէր մնացել նրան: Թիրզային արդէն մեռած էր համարում. երբեմն գալով՝ սպասում էր միայն մահուան ժամին, որ կարող էր յանկարծ վրայ հասնել:

Նրա բնական լերան բնութիւնը գրաւիչ չէր. անասուններն ու թռչունները խուսափում էին այնտեղից. գալարները ծլելուն պէս խամրում էին. հողմերը շտապում էին ոչնչացնել ամեն մի թուփ և արօտ: Ո՛ր կողմն էլ նայէր, տեսարանի անվերջ գերեզմաններն էին... Իր վշտերի փոխարէն գուցէ նա փոքր ինչ սփոփանք գտնէր պայծառ ու ջինջ երկնքի մէջ. բայց, աւաղ, ամեն բան գեղեցկացնող երկնային լոյսը չէր սփոփում նրան, այլ և՛ս աւելի մերկացնում էր նրա քաոսնեալ պատկերը: Եթէ այս լոյսը չլինէր, նա այնքան չէր զարհուրիլ ինքն իրենից, ոչ էլ այնքան սարսափ կըզգար Թիրզայի վրայ նայելիս:

Արդեօք հարցնենք, թէ ինչո՞ւ անձնասպանութեամբ վերջ չէր դնում իր ցաւերին:

Այդ արգելուած էր օրէնքո՛վ:

Հեթանոսը կըծիծաղէր մի այդպիսի օրէնքի վրայ, բայց Իսրայէլի որդին ոչ երբէք:

Մինչ Թշուառը տխուր տրտում նստած էր, մի մարդ սկսեց բլրի վրայ բարձրանալ: Այրին իսկոյն ոտքի ելաւ, գլուխը ծածկեց և գոչեց.—Զգուշացէ՛ր, տըրո՛ւա ենք:

Փոքր ինչ յետոյ, չնայելով այս ձայնին, Ամրան արդէն նրա ոտքի տակ չորած էր: Բարի սպասուհու վաղուց ի վեր ճնշուած սէրը վերջապէս բռնի ուժով դուրս ցայտեց: Լալով համբուրեց նա տիրուհու հանդերձը: Տիրուհին ուզում էր փախչել նրանից, բայց սպասուհին չթողեց:

—Այդ ի՞նչ ես անում, ա՛յ Ամրա,—ասաց տիրուհին։—Այդ կոյր սիրուդ չես փրկիլ մեզ։ Այժմ դու կորած ես և չես կարող վերադառնալ նրա մօտ... սիրոջդ մօտ։

Ամրան հեկեկում էր փողու մէջ ընկած։

—Դու էլ այժմ մերժուածների կարգն ընկար և և չես կարող վերադառնալ Երուսաղէմ։ Ի՞նչ կըլինէր մեր վիճակը։ Այսուհետև ո՛վ հայ կըբերէ մեզ համար։ Ա՛յ դու թշուառ, թշուառ Ամրա։ Այժմ դո՛ւ էլ ուրուկ ես, և բոլորս կորած ենք։

—Գթա՛ ինձ, գթա՛ ինձ,—հեծում էր Ամրան։

—Դու ինքդ պիտի քեզ գթայիր, որ մեզ էլ խնայած լինէիր։ Ո՞ւր փախչինք այժմ։ Այստեղ ոչ ոք չի օգնիլ մեզ։ Ա՛յ չար աղախին։ Մինչ Աստուծու բարկութիւնը քո՛ւ էր ծանրացած մեզ վրայ։

Այդ միջոցին Թիրգան երևաց այրի մուտքում։ Մեր գրիչը հրաժարւում է նրա պատկերը նկարագրելուց... Ամենասուր աչքն անգամ այդ կիսամերկ, թեփոտ, ձեռքերն ու ոտքերն ուռած, կապտագոյն սպիներով ծածկուած և գրեթէ կոյր երևոյթը տեսնելիս չէր ճանաչիլ այն շնորհալի և մաքրափայլ էակին, որ ծանօթ էր մեզ երբեմն։

—Ամրա՞ն է դա, մայրիկ։

Սպասուհին փորձեց նրան էլ մօտենալ չոքելով։

—Կաց, Ամրա,—հրամայեց մայրը։—Արդելում եմ քեզ դիպչել նրան։ Վե՛ր կաց և հեռացի՛ր, քանի որ ոչ ոք չէ նկատել քեզ։ Բայց... արդէն ուշ է. պիտի ճնաս և ինքդ էլ մեր վիճակով տառապիս։ Վե՛րկաց։

Ամրան կանգնեց ծունկերի վրայ և սրտակոտոր աղաղակեց.

—Ո՛վ բարի տիրուհիս, ես չարամիտ չեմ, անըզգամ չեմ... բարի լուր եմ բերել ձեզ։



—Յուդայից,—գոչեց այրին եռանդով։

—Մի զարմանալի մարդ է յայտնուել, որ կարող է բժշկել ձեզ։ Նրա մի խօսքով հիւանդները առողջանում են, մինչև անգամ մեռածները կենդանանում։ Եկել եմ նրա մօտ տանելու ձեզ։

—Խե՛ղճ Ամրա,—ասաց Թիրզան կարեկցաբար։

—Ո՛չ,—գոչեց Ամրան, այդ խօսքերի մէջ պարունակուող կասկածն զգալով։—Տէ՛րս վկայ, ձեր և իմ Տէրը վկայ լինի, որ խօսքերս ճշմարիտ են։ Աղաչում եմ, եկէ՛ք և ժամանակ մի՛ կորցնէք։ Այս առաւօտ նա անցնելու է այստեղով, Երուսաղէմ գնալու համար։ Տեսէ՛ք, արդէն ցերեկ է։ Ահա, կերէ՛ք, խմեցէ՛ք, և գնա՛նք։

Մայրն ուշադրութեամբ լսում էր։ Գուցէ արդէն իր ականջին էլ հասած լինէր հրաշալի մարդու համբաւը, որ երկրի ամենահեռաւոր անկիւններն անգամ տարածուած էր։

—Ո՞վ է նա,—հարցրեց մայրը։

—Մի Նազովրեցի։

—Ո՞վ պատմեց քեզ նրա մասին։

—Յուդան։

—Յուդա՞ն։ Տա՞ճն է Յուդան։

—Երեկոյին եկաւ։

Այրին, իր սրտի բաբախումը հանդարտեցնել ջանալով, մի քանի վայրկեան լուռ մնաց։

—Յուդա՞ն ուղարկեց քեզ մեզ մօտ։

—Ո՛չ. նա ձեզ մեռած է համարում։

—Երբեմն կար մի մարգարէ, որ մի բորոտ բժշկեց,—ասաց մայրը Թիրզային,—սակայն նրա զօրութիւնն Աստուծուց էր։—Յետոյ Ամրային դառնալով հարցրեց.—Որդիս ո՞րտեղից գիտէ այն մարդու հրաշագործ զօրութիւնը։

—Ճանապարհել է նրա հետ և լսել, թէ ինչպէս ուրուկները կաչել են նրան և առողջացած հեռացել: Առաջ մի բորոտ է դիմել նրան, յետոյ տասը, և բոլորին էլ բժշկել է:

Մայրը դարձեալ լուռ մնաց: Ոսկորոտ ձեռքերը դողում էին: Նա մտքով կշռում էր իր լսածը և հաւատում նրա ճշմարտութեան, որովհետև վկան իր որդին էր. միայն թէ ճգնում էր ըմբռնել՝ ինչ է արդեօք այն զօրութիւնը, որով մի մարդ կարողանում էր այնպիսի հրաշքներ կատարել: Վերջապէս ասաց Թիրզային.

—Մեսրան է անշուշտ:

Ոչ թէ սառն, մտածկոտ եղանակով ասաց այս, այլ իբրև Իսրայէլի դուստր, որ քաջ գիտէր Աստուծու խոստումներն իր ազգին և երջանիկ կըլինեը նրանց կատարման դէպ մի նշանը տեսնելով:

—Յիշում եմ, որ մի ժամանակ ամբողջ Երուսաղէմն ու Հրէաստանը նրա ծննդեան աւետիքով լի էին: Այժմ նա արդէն մի այր մարդ դարձած կըլինի: Արդարև նա է: Այո,—ասաց այրին Ամրային,—գնանք քեզ հետ: Տուր մեզ վոքը ինչ հաց և ջուր. յետոյ գնանք:

Նախաճաշը վերջանալուն պէս՝ մայրը, աղջիկը և Ամրան ճանապարհ ընկան: Թիրզան էլ սիրտ էր առել մօր ու Ամրայի վստահութիւնից: Միայն մի բան կար, որ տագնապում էր երեքին: Ամրայի ասելով՝ մարդը գալու էր Բեթանիայից: Արդ այնտեղից երեք ճանապով կարելի էր գալ Երուսաղէմ—մէկն անցնում էր Ջրեհենեաց սարի կատարով, միւսը նրա ստորոտով և երրորդը Ջրեհենեաց և Գայթակղութեան սարերի միջև... Երեքն էլ շատ հեռու չէին իրարից, բայց և այնքան անջատ ու զատ, որ խեղճերը կարող էին Նազովրե-



ցուն չտեսած մնալ, եթէ վրիպէին նրա բռնելու ճանապարհից:

Մի քանի հարցուփորձերից յետոյ մայրը նկատեց, որ Ամրան ոչ կիրճրոնից դէպ նը գնուղ շրջակայքին տեղեակ է, ոչ էլ գիտէ, թէ ո՞ր ճանապով անցնելու էր այն մարդը, որին գնում էին տեսնելու. նկատեց նոյնպէս, որ թէ Թիրզան և թէ Ամրան միայն իրեն են ապաւինած. ուստի և իր վրայ առաւ առաջնորդութիւնը:

—Նախ գնանք Բեթփագէ,—ասաց նա:—Եթէ Տէրը կամենայ, այնտեղ կիմանանք, թէ յետոյ ինչ պիտի անենք:

Իջան սարից դէպի Տուիէթի և Արքայական այգու ձորը ու կանգ առան ներքևի ճանպի վրայ:

—Այստեղ մնալը վտանգաւոր է,—ասաց մայրը:—Լաւ է ժայռերի ու ծառերի կողմը բարձրանանք: Այսօր տօն է և այս ճանապով շատ մարդ կանցնի: Բազմութիւնից խուսափած կըլինինք, եթէ Գայթակղութեան սարի միւս կողմը հեռանանք:

Թիրզան դժուարութեամբ էր առաջ շարժուել մինչև այժմ. նա վհատուեց մօր խօսքերը լսելիս:

—Մայրիկ, սարի վերելքը դժուար է,—ասաց նա,—և ես չեմ կարող բարձրանալ:

—Աղջիկս, չէ՞ որ մենք բժշկութիւն և կեանք գտնելու համար ենք գնում: Տես՝ օրն ինչպէս պայծառ է... Եւ դէմից կանայք են գալիս Ջրհորից ջուր տանելու. նրանք մեզ կըքաջալերեն, եթէ շարունակենք այստեղ մնալ: Ե՛կ, զօրացիր այս անգամ:

Այսպէս մայրը, թէև ինքն էլ չարչարուած, աշխատում էր սիրտ տալ Եսթերին. Ամրան էլ օգնում էր նրան: Մինչև այժմ նա չէր շօշափել բորոտներին. իսկ այժմ համարձակ մեկնեց իր թևը Թիրզային և ըզնջաց.

—Յիսնուկիր ինձ. ես դեռ ուժով եմ։ Ա՜յ այդպէս։ Այժմ գնանք։

Նրանց անցնելու սարի լանջքը փոսերով, քարերով և հին աւերակների մնացորդներով կտրտուած էր, ուրեմն և տաժանելի։ Սակայն երբ նրանք գագաթին հասան և դէպի հիւսիս նայելով, Սիոնի տաճարը, գաւիթները և բարձր ու սպիտակ աշտարակները նշմարեցին, մայրը նորից ապրելու սէր զգաց։

—Տես, Թիրզա,—գոչեց նա,—ահա Դեղեցիկ դռան ոսկէձոյլ թիթեղները։ Ի՜նչպէս են պսպղում արևից։ Յիշո՞ւմ ես, երբքան ենք անցել այդ դռնով։ Երանի՛ թէ կարողանայինք նորից անցնել։ Մեր տունն էլ այնտեղից հեռու չէ։ Ես տեսնում եմ նրան։ Յուդան էլ այնտեղ կըլինի և մեզ սիրով կընդունէ։

Այժմ սկսեցին սարից իջնել։ Թիրզան ամեն մի քայլին հառաչում էր, թէև Ամրան օգնում էր նրան։ Երբ որ նրանք Զիթենեաց և Գայթակղութեան սարերի միջև անցնող ճանապարհն հասան, Թիրզան ուժասպառ վայր ընկաւ։

—Դու Ամրայի հետ առաջ գնա, մայրիկ,—ասաց նա տկար ձայնով,—իսկ ես այստեղ կըմնամ։

—Ոչ, ոչ, Թիրզա։ Ի՞նչ օգուտ, եթէ ես բժշկուեմ, իսկ դու ոչ։ Երբ որ Յուդան քո մասին հարցնէ, և անպատճառ կըհարցնէ, ես ի՞նչ պատասխան տամ նրան։

—Ասա՛ նրան, որ ես նրան սիրում էի։

Աղջկայ վրայ խոնարհած մայրն իր շուրջը նայեց յուսահատութեան տագնապով, որ ծանր էր մահուան երկունքի չափ։ Բժշկուելու գաղափարի բերկրութիւնը և Թիրզան իրարուց անբաժան էին նրա մտքում։ Մինչ մայրն արդէն վհատել էր իր աղջկանը յորդորելուց և որոշել Աստուծու կամքին թողնել նրան,



մի մարդ նկատեց, որ շտապով գալիս էր արևելքից։

—Սիրա՛ ու, Թիրզա,—ասաց մայրը,—ահա մի մարդ, որ լուր կըտայ մեզ Նազովրեցու մասին։

Ամրան օգնեց աղջկանը գոնէ նստած մնալ, իսկ մարդն արդէն մօտենում էր։

—Մոռանում ես, մայրիկ, թէ ի՜նչ ենք մենք։ Այդ մարդը մեզնից խոյս կըտայ և նրա պարգևը մի՛այն անէծք կըլինի, եթէ ոչ քար։

—Կըտեսնենք։

Մայրը մի ուրիշ պատասխան չունէր, քանի որ գիտէր, թէ մարդիկ ի՜նչպէս են վարւում իր նման թշուառների հետ։

Ճանապարհը մի ոլորուն շաւղի նման անձուկ էր։ Եթէ օտարականը նրանով գար, երեքին էլ կըհանդիպէր։ Այդպէս էլ եղաւ։ Նրա հասնելուն պէս՝ այրին գոչեց.

—Բորոտնե՛ր ենք։

Բայց մարդը ուղղակի առաջ եկաւ։

—Ի՞նչ էք կամենում,—հարցրեց նա, կանգ առնելով։

—Տեսնում ես՝ ի՜նչ ենք. զզուշացի՛ր,—ասաց մայրը ծանրութեամբ։

—Ա՜յ կին, ես կարապետն եմ այն մէկի, որի մի խօսքով ձեզ նմանները բժշկւում են։ Չեմ վախենում։

—Նազովրեցո՛ւ կարապետը։

—Մեսիայի,—ասաց մարդը։

—Ճշմարի՛տ է, որ նա այսօր քաղաք է գալիս։

—Բեթփագէումն է այս րոպէիս։

—Ո՞ր ճանապարհով պիտի գայ։

—Ա՛յս։

Կինը գոհանալով երկինք նայեց։

—Դու ինչ ես համարում նրան,—հարցրեց մարդը կարեկցութեամբ։

—Աստուծու Որդի,—պատասխանեց կինը։

—Ուրևմն դու այստեղ մնա, և կամ բազմութիւնից չնեղուելու համար՝ գնա այն սպիտակ ժայռի մօտ կանգնիր, ահա այն ծառի տակ։ Եւ նրա անցնելու ժամանակ մի՛ վախենար կանչել նրան։ Եթէ նրան տեսնելու փափագիդ չափ հաւատդ էլ զօրեղ է, նա քեզ կլսէ, նոյնիսկ եթէ հազար որոտներ թնդային։ Ես գնում եմ յայտնելու քաղաքի մէջ և քաղաքի շուրջը համախմբուած Իսրայէլին, որ նա մօտ է. թո՛ղ պատրաստուին ընդունել նրան։ Աղաղութիւն քեզ և քոյիններիդ։

Անծանօթը հեռացաւ։

—Լսեցի՛ր, Թիրզա, լսեցի՛ր։ Նազովրեցին գալիս է այս ճանապով, և նա մեզ կըլսէ։ Է՛լի մի անգամ զօրացիր, աղջիկս... մի՛այն մի անգամ, և գնանք այն ժայռի մօտ։ Մի՛այն մի քայլ է։

Թիրզան արիանալով՝ դարձեալ Ամրայի ձեռքից բռնեց և ոտքի կանգնեց։ Բայց մինչ արդէն գնալու վրայ էին, ասաց.

—Սպասի՛ր, մարդը յետ է գալիս։

Եւ սպասեցին։

—Կին դու,—ասաց մարդը,—մինչև Նազովրեցու այստեղ հասնելը արևի տապը կըսաստկանայ։ Ա՛ռ այս ջուրը, որ քեզ աւելի հարկաւոր կըլինի, քան թէ ինձ։ Խմեցէ՛ք և միամիտ եղէ՛ք։ Հէնց որ նա անցնելու լինի՝ կանչեցէ՛ք նրան։

Այս ասելով մարդը մեկնեց այրի կնկանը մի ջրով լի դդմի անօթ։

—Դու հրէա՞յ ես,—հարցրեց կինը զարմացած։

—Այո՛, հրէայ եմ և աւելի քան թէ հրէայ—ես



աշակերտ եմ Քրիստոսի, որ ամեն օր իր խօսքով և օրինակով ուսուցանում է այն անել, ինչ որ ահա ես արի ձեզ։ Աշխարհս վաղուց գիտէր սէր բառը, բայց իմաստը չէր հասկանում։ Աղաղութիւն քեզ և քոյիններիդ. զուարթ եղէ՛ք։

Նա գնաց, և կանայք մօտեցան նրա ցոյց տուած ժայռին, որ երեսուն քայլի չափ ճանապարհից դէպի աջ էր։ Նրա տակ կանգնելով՝ մայրը տեսաւ, որ անցորդները վարդ են նկատել և լսել իրեն։ Այնուհետև երեքն էլ նստեցին և ջուր խմեցին։ Թիրզան իսկոյն քուն եղաւ. մայրն ու Ամրան չկամենալով խանգարել նրան, լուռ ու հանդարտ մնացին։

## Ա.

### *Հրաշք*

Երկրորդ ժամին բորոտների առջևից անցկացող ճանապի վրայ, սկսեցին բազմաթիւ մարդիկ երևալ, որոնք Բեթփագէ և Բեթանիա էին գնում, իսկ չորրորդ ժամին Ջիթենեաց լերան գագաթի վրայ մի մեծ բազմութիւն նկատելի եղաւ։ Երբ այդ հազարները վայր էին իջնում, երկու արթուն բորոտները զարմանալով նկատեցին, որ ամեն մարդ մի արմաւենու ոստ է կրում։ Եւ մինչ նրանք մտիկ էին տալիս այս անսովոր տեսարանին, մի ուրիշ բազմութիւն աղմուկ հանելով երևան եկաւ արևելքից։ Այն ժամանակ մայրը զարթեցրեց Թիրզային։

—Ի՞նչ է նշանակում այս բոլորը։

—Նա գալիս է,—պատասխանեց մայրը։—Ահա այս խումբը քաղաքից է դիմաւորում նրան, իսկ

արևելեան կողմից եկողները նրա ուղեկից ընկերներն են։ Հաւանական է, որ երկու թափօրներն էլ այստեղ մեր առջև իրար հանդիպեն։

—Այն ժամանակ մեր ձայնը գուցէ չլսուի։

Մայրն էլ միևնոյն կասկածն ունէր։

—Ամրա, — հարցրեց նա,—տասնի բժշկութեան դէպքը պատմելիս Յուդան չասաց, թէ ինչ խօսքերով են դիմել նրանք Նազովրեցուն։

—Գոչել են. «Տէր, ողորմեաց մեզ» կամ «վարդապետ, ողորմեաց մեզ»։

—Միայն այդքան։

—Ես աւելի բան չեմ լսել։

—Այդ էլ հերիք է,—ասաց մայրն ինքն իրեն։

—Այո, — հաստատեց Ամրան,—Յուդան ասաց, թէ նրանք բժշկուած հեռացան։

Այդ միջոցին արևելեան բազմութիւնը հետզհետէ իջնում էր։ Թափօրի առաջին մասը յայտնուելուն պէս՝ բորոտների աչքը յառած մնաց մի մարդու վրայ. նա աւանակի վրայ նստած գալիս էր երևի թէ բարեկամների խմբի հետ, որոնք երգում և պարում էին։ Մարդը գլխաբաց էր և բոլորովին սպիտակ հանդերձով։ Երբ նա այնքան մօտեցաւ, որ արդէն կարելի էր նրան պարզ տեսնել, անձկութեամբ դիտող կանայք մի բերի դէմք նկատեցին, որ գագաթի վրայ բաժանուող շագանակագոյն երկայն մազերով բաժանուած էր։ Ոչ դէպի աջ էր մտիկ տալիս նա, ոչ դէպի ձախ, և կարծես բնաւ մասնակից չէր իր հետևորդների ցնծութեան։ Նրանց աղաղակը ոչ շփոթում էր նրան, ոչ էլ փարատում այն խորին տրտմութիւնը, որ բացայայտ երևում էր իր երեսի վրայ։ Արևի փայլը մի ոսկեճաճանչ պսակ էր կազմել նրա գլխի շուրջը։ Կարիք չկար ասելու բորոտներին—Ահա դա է Նազովրեցին։



—Ահա նա, Թիրզա,—ասաց մայրը։—Ահա գալիս է։ Ե՛կ, աղջիկս։

Մայրը չոքեց ժայռի մօտ. աղջիկն ու ապաստինին էլ նրա կողքին չոքեցին։ Այդ րոպէին քաղաքից եկող բազմութիւնը, առջևի թափօրը նշմարելով, կանգ առաւ, կանայք ուռենու ոստերը ճօճեց և երգեց.

«Օրհնութիւն Որդւոյ Դաւթի։ Օրհնեալ է, որ գայ յանուն Տեառն»։

Եւ հազարաւոր մարդիկ, որոնք գալիս էին հեծեալի առջևից և ետևից, պատասխան տուին այս օրհնութեան, և նրանց աղաղակը, որոտագոչ հոդմի նման օդը վոխթորկեց։ Այս ընդհանուր գոռոցի մէջ խեղճ ուրուկների տկար ձայնը ճնճղուկների ծլվլոցի պէս անհետացաւ...

Երկու թափօրներն իրար հանդիպելու վրայ էին. եթէ Թշուառներն այդ րոպէից օգուտ չքաղէին, պատեհ վայրկեանը կըկորչէր, դրա հետ էլ նրանց յոյսը։

—Մօտենանք, աղջիկս. եկ, աւելի մօտենանք։ Այստեղից մեր ձայնը չի լսուիլ,—ասաց մայրը։

Նա ոտքի ելաւ, մի քանի քայլ առաջ անցաւ և սոսկալի ձեռքերը բարձրացնելով, միայն ձիչ հանեց։ Ժողովուրդը տեսաւ նրան... տեսաւ նրա ահռելի դէմքը... և սարսափած կանգ առաւ։ Փոքր ինչ յետ մնացած Թիրզան յոգնութիւնից և երկիւղից վայր ընկաւ։

—Բորոտնե՛ր, ուրուկնե՛ր։

—Բարկութեամբ դրանց։

—Ա՜յ Աստուծու նզովածնե՛ր։ Սպանեցէ՛ք դրանց։

Եւ օրհնութեան հետ միասին սպառնալիքներ հնչեցին բազմութեան ետևի շարքերից, որոնք չէին կարող տեսնել և հասկանալ թափօրի դադարման պատճառը։ Սակայն Նազովրեցին առաջ գնաց և կանգ առաւ կանանց առջև։ Կանայք ակնապիշ նայում էին

նրա երեսին—նրա հանգիստ, բարեմոյն, հեզ ու հրաշագեղ երեսին, անհուն սիրով լի աչքերին։

Եւ մայրն ասաց.

—Վարդապետ, Վարդապետ։ Դու տեսնում ես մեր տառապանքը և կարող ես բժշկել մեզ։ Ողորմիր մեզ, ողորմիր։

—Հաւատամ, եթէ կարող եմ առնել զայդ,—հարցրեց Նազովրեցին։

—Դու նա ես, որի մասին մարգարէները խօսած են... Մեսիան ես դու,—պատասխանեց կինը։

—Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո. եղիցի քեզ, որպէս և կամիս։

Նազովրեցին, կարծես թէ մոռանալով խուռնեբամ բազմութիւնը, մի վայրկեան, մի՛այն մի վայրկեան յապաղեց և հեռացաւ։

Ո՛րքան քաղցր պիտի թուէր աստուածային, բայց միանգամայն և մարդկային ազնիւ զգացումներով լի սրտին, որ ի սէր մարդկութեան կամաւ գնում էր մարդու հնարած ամենագարշ մահուան պատիժն ընդունելու,—որքան ախորժ և սիրուական պիտի լինէր շնորհակալ կանանց հրաժեշտի ողջոյնը.

—Փառք ի բարձունս Աստուծոյ։ Օրհնեալ Որդիդ Աստուծոյ։

Երկու կողմի թափօրներն ոտներ ճօճելով, ովսաննաներ հնչեցնելով անմիջապէս շրջապատեցին Նազովրեցուն, և այսպէս նա ընդ միշտ հեռացաւ ուրուկների տեսութիւնից։

Մայրը վազեց Թիրզայի մօտ և գրկելով նրան, ուրախ ուրախ բացականչեց.

—Ցնծա, աղջիկս, ես նրա խոստումն ընդունեցի։ Նա յիրաւի Մեսիան է։ Մենք բժշկուած և փրկուած ենք։



Մինչ խմբերը հետզհետէ հեռանալով անհետանում էին սարի հետև, կանայք չոքած մնացին։ Երբ ձայներն էլ փոքր առ փոքր մեղմացան, հրաշքն սկսեց իրագործուիլ։

Բորոտները նախ սրտի արեան թարմանալն զգացին. արիւնն սկսեց արագ ընթանալ և մի զմայլական զգացումով լցնել նրանց խօթացած մարմինը։ Երկուսն էլ խոյն ախտի դուրս գալն իմացան, նրանց ոյժը յետ եկաւ։ Եւ յետոյ—ասես թէ բժշկութիւնը լիակատար անելու համար—կազդուրումը ոգուն անցաւ և անպատում բերկրանք պատճառեց։ Այս կենսատիպ զօրութիւնը մի կտրուկ դեղի ազդեցութիւն արաւ հիւանդների վրայ, միայն թէ այն տարբերութեամբ, որ նրա բուժիչ ներգործութիւնը ոչ թէ աստիճանաբար, կամաց կամաց զգացին նրանք, այլ միանգամից և լիովին։

Ամբոխից զատ այդ վերակենդանութեան վկայ էր և մի ուրիշ անձն։ Ընթերցողն արդէն գիտէ, թէ ինչպէս էր հետևում Նազովրեցուն Բէն Հուրը. և եթէ մենք նախընթաց գլուխներում խօսակցութիւնը մատնեցինք, զարմանալի չի թուիլ, որ երբ բորոտ կանայք թափօրի առջև երևացին, երիտասարդ հրէան ներկայ էր։ Նա նրանց աղաչանքը լսեց, այլանդակուած դէմքերը տեսաւ. Նազովրեցու պատասխանն էլ լսեց և չնայելով որ այսպիսի բժշկութիւնները շատ էր տեսել, չէր կարող մի անտարբեր վկայ լինել նոր դէպքին։ Եթէ կամենար էլ անտարբեր մնալ, վարդապետի իւրաքանչիւր հրաշքի առթիւ ծագող վէճերը բաւական էին, որ նրա հետաքրքրութիւնը վառ պահուէր։ Բացի այս՝ նրան դրդում էր այդ խորհրդաւոր մարդու առաքելութեան մասին մի բաւարար ծանօթութիւն ստանալու յոյսը, որ այժմ աւելի զօրացել էր, որովհետև

Նա հաւաստի էր, թէ մարդը դեռ արևը մայր չմտած՝ իր ով լինելը հրապարակաւ կըյայտնէ։

Նա զատուել էր թափօրից և քարի վրայ նստած սպասում էր ամբոխի անցնելուն։ Նստած տեղից ողջոյն էր տալիս ծանօթներին—դրանք դաշնակից գալիլիացիք էին, թիկնոցների տակ դաշոյն կրող զինուորներ։ Փոքր ինչ յետոյ մի սև արաբ առաջ եկաւ, երկու նժոյգ բերելով։

—Այստեղ մնա,—ասաց նրան Բէն Հուրը,—մինչև թափօրի վերջին մարդիկն էլ հեռանան։ Ես պիտի քաղաք շտապեմ. Ալդեբարանն ինձ հարկաւոր կըլինի։

Նա շփեց երիվարի լայն ճակատը—կենդանին այժմ իր գեղեցկութեան և հասակի արբունքի մէջ էր—և հեծնելով, քշեց ուղղակի կանանց կողմը։

Կանայք նրան ծանօթ չէին, և նրան հետաքրքրողը մի ուրիշ բան չէր, բայց միայն նրանց բժշկութիւնը, որ գուցէ կօգնէր իրեն հրաշագործի ով լինելը լուծելու։

Մօտենալիս պատահմամբ նայեց ժայռի մօտ կանգնած փոքրիկ կնկանը, որ երեսը ձեռքով ծածկել էր։

—Վկայ է Աստուած, դա Ամրան է,—ասաց Բէն Հուրն ինքն իրեն։

Նա շտապ անցաւ մօր ու քրոջ դիմացով՝ առանց նրանց ճանաչելու, և աղախնու առջև կանգ առաւ։

—Ամրա,—ասաց նա,—ինչ ես անում դու այստեղ։

Կինը առաջ նետուեց և ուրախութիւնից ու երկիւղից արտասուելով, ծունկ չոքեց։

—Ո՜վ տէր իմ, տէր իմ։ Ո՛րքան բարի է քո Աստուածն... և իմը։

Բէն Հուրն իմացաւ մի անբացատրելի ազդումով, որ պառաւի ներկայութիւնն այն երկու կանանց հետ կապ ունի, և նրանց կողմը շուռ եկաւ։ Կանայք արդէն



ոտքի վրայ էին։ Նրա սիրտը բաբախելուց դադարեց. ինքը գամուածի պէս անշարժ մնաց ճանապի վրայ—անբարբառ և ահաբեկ։

Այն կինը, որին տեսել էր Նազովրեցու առջև, այժմ աչքերը դէպի երկինք վերուղղելով, ձեռնամած և արտասուաթոր կանգնած էր։ Հրաշալի փոխակերպութիւնն արդէն բաւական էր խպատ շլացնելու Բէն Հուրին, բայց մ՛այն այս չէր նրա հիացման պատճառը... Արդեօք սխալո՞ւմ էր... Ոչ մի կին այս աստիճան չէր նմանած իր մօրը. իսկ և իսկ այսպէս էր մայրը հռոմայեցուց յափշտակուելու րոպէին, միայն փոքր ինչ ալևորած էր։ Եւ ո՞վ էր նրա մօտ կանգնած կակը, եթէ ոչ Թիրզան—յար և նման այն նազելի, այն գեղեցիկ, միայն թէ աւելի հասունացած աղջկան, որի հետ նա ներքև էր նայել տանիքից Գրատուսի պատահարի առաւօտեան... Նա մեռածների թիւն էր դասել մօրն ու քրոջը, ընտելացել էր կորուստի հետ, արդէն դադարել նրանց ողբալուց, արդէն հանել իր երազած ծրագիրներից։

Հազիւ հաւատալով իր աչքերին, նա պառաւ ապատուհու գլխին դրաւ իր ձեռքը և դողալով հարցրեց.

—Ամրա, Ամրա... Միթէ մա՞յրս է, Թիրզա՞ն է... Աստ, արդեօք ճի՞շտ եմ տեսնում։

—Տէր իմ, խօսի՛ր, խօսի՛ր նրանց հետ,—պատասխանեց պառաւը։

Բէն Հուրն այլ ևս չսպասեց, այլ բազկատարած վազեալ նրանց մօտ, գոչելով.

—Մայրի՛կ, Թիրզա՛, ես այստե՛ղ եմ։

Այս ձայնը հնչելուն պէս մայրն ու քոյրը ցնծութեամբ նրա դէմ վազեցին. բայց մայրը յանկարծ կանգ առաւ, յետ նահանջեց և հին ազդն արձակեց.

—Կանգնիր, Յուդա, մի մօտենար, որդեակ իմ Մենք բորոտ ենք, անմաքուր։

Եւ ոչ այնքան սովորութիւնից այսպէս գոչեց, որքան երկիւղից. բայց այս երկիւղն զգուշաւոր մայրենի սիրոյ արդիւնք էր։ Նրանց մարմինը թէև բուժուած էր, բայց գուցէ զգեստների մէջ վարակիչ նիւթ մնացած լինէր։ Որդին սակայն երկիւղ չունէր։ Մայրը և քոյրը նրա առջևն էին. նա կանչել էր նրանց և նրանք պատասխանել։ Այլևս ո՛վ կարող էր բռնել նրան... Այնքա՜ն տարիներ անջատուածները հեռևեալ ակնթարթին լալով իրար գիրկն ընկան։

Առաջին հրճուանքից յետոյ մայրն ասաց.

—Զաւակներս, երախտամոռ չլինինք այս երջանկութեան մէջ։ Մեր նոր կեանքի հէնց սկզբին երկրպագենք այս կեանքը մեզ պարգևողին։

Երեքը միասին ծունկ չոքեցին, Ամրան էլ նրանց հետ, և երջանիկ մօր աղօթքը մի սաղմոսի պէս հնչեց։

Թիրզան կրկնեց մօր աղօթքը բառ առ բառ. Բէն Հուրն էլ կրկնեց. բայց ոչ միևնոյն միամիտ և անպայման հաւատով, որովհետև վերկենալուն պէս հարցրեց.

—Այն մարդու ծնուած տեղում, Նազարէթում, հիւանի որդի են անուանում նրան։ Ո՞վ է նա։

Մայրը գորովանօք որդուն նայելով պատասխանեց, ինչպէս որ պատասխանել էր և ինքը Նազովրեցուն.

—Նա Մեսիան է։

—Ո՞րտեղից է նրա զօրութիւնը։

—Այդ իմանալու համար պէտք է տեսնել, թէ ինչպէս է նա իր զօրութիւնը գործադրում։ Արդեօք կարող ես նրա արածների մէջ մի բան գոյց տալ, որ բարի չլինէր։

—Ո՛չ։



—Այդ նշան է, թէ նրա զօրութիւնն Աստուծուց է։

Տարինելով մեզ պարարող և մեր բնութեան մանդարձած յոյսերից շատ դժուար է մի վայրկեանում հրաժարուիլ. և թէպէտ Բէն Հուրն ասում էր ինքն իրեն, թէ աշխարհիս ունայն բաները ոչ մի արժէք չպիտի ունենան Մեսիայի համար, բայց և այնպէս իր խոցուած փառասիրութիւնը յամառ էր և չէր ուզում ընկճուիլ։ Նա էլ այժմեայ մարդկանց նման իր չափով էր Քրիստոսին չափում. մինչդեռ որքան լաւ կըլինէր, եթէ մենք Քրիստոսի չափով չափէինք մեզ։

Այնուհետև մայրն առօրեայ կեանքի պէտքերը յիշեց։

—Ի՞նչ պիտի անենք այժմ, որդեակ. ո՞ւր պիտի գնանք,—հարցրեց նա։

Այսպէս յիշելով նա իր պարտքը, Բէն Հուրը նոր նկատեց, որ հիւանդութեան հետք անգամ չէր մնացել իւրայիններուի վրայ։ Մայրը և քոյրը լիովին վերստացել էին իրենց նախկին պատկերը։ Նրանց մարմինն էլ մանկական փափկութիւն էր ստացել։ Բէն Հուրը հանեց իր թիկնոցը և Թիրզայի վրայ ձգեց։

—Ա՛ռ,—ասաց նա ժպտալով։

Երբ Բէն Հուրը թիկնոցը հանեց, իր գօտու սուրը երևաց։

—Մի՞թէ պատերազմի ժամանակ է այժմ,—իսկոյն հարցրեց նրան մայրը։

—Ո՛չ։

—Ուրեմն ի՞նչ բանի համար է այդ զէնքը։

—Գուցէ պէտք գայ պաշտպանելու Նազովրեցուն։

Այսպէս ահա Բէն Հուրն սքօղեց ճշմարտութիւնը։

—Մի՞թէ նա թշնամիներ ունի։ Ովքե՞ր են նրանք։

—Դժբախտաբար թշնամիները միայն հռոմայեցիք չեն, սիրելի մայրիկ։

—Մի թէ նա իսրայելացի չէ՞ և խաղաղութեան պաշտօնեայ։

—Ոչ ոք աւելի, քան թէ նա. բայց և այնպէս ռաբբիների և դպիրների կարծիքով նա մի մեծ յանցաւոր է։

—Յանցաւո՞ր։

—Որովհետև նրա համար անթլփատ հեթանոսն էլ նոյն յարգն ունի, ինչ որ ունի բուն հրէան։ Նա մի նոր վարդապետութիւն է քարոզում։

Մայրը լուեց, և նրանք հեռացան ծառի ստուերում կանգնելու։ Բէն Հուրը կըփափագէր անմիջապէս տուն տանել նրանց, բայց պէտք էր նախ օրէնքի պահանջած կարգը կատարել։ Նա կանչեց արաբին և հրամայեց մինչև Բեթէզդայի դուռը գնալ ձիերով և այնտեղ սպասել։ Այնուհետև կանայք և նա ճանապարհ ընկան Գայթակղութեան սարի կողմով, որովհետև նա ուզում էր դէթ փոքր ինչ մօտեցնել նրանց քաղաքին, ուր դեռ մանել չէին կարող։ Ո՛րքան տարբեր էր կանանց այժմեայ ճանապարհն առաջուանից. ո՛րքան հեշտ էր վերադարձը։ Արագ ու թեթև քայլելով նրանք շուտ հասան մի նորաշէն գերեզմանի, որ գտնւում էր Աբիսողոմի շիրմի մօտերքում, կիդրոն ձորից ոչ հեռու։ Գերեզմանը դատարկ էր. կանայք իսկոյն դրաւեցին նրան, իսկ Բէն Հուրն շտապով հեռացաւ պատրաստութիւններ տեսնելու նրանց նոր վիճակին համեմատ։

## ԼԱ.

### *Պասեքի ուխտաւորները*

Բէն Հուրը երկու հատ վրան կանգնել տուաւ կիդրոնի վրայ՝ Արքայական շիրիմներից փոքր ինչ դէպի արևելք, անհրաժեշտ կարասիքով յարդարեց. յետոյ



մօրն ու քրոջն այնտեղ տարաւ, որպէս զի սպասեն քահանայիին, որ պիտի վաւերացնէր նրանց կատարեալ բուժումը։

Այս պարտքը կատարելիս նա ինքն էլ—օրէնքի ասելով—պղծուեց, ուստի և չէր կարող յառաջիկայ տօնին մասնակցել. օրէնքը կարգելէր նրան տաճար մտնել։ Հետևաբար մասամբ հարկից ստիպուելով, մասամբ էլ իր ջերմ ցանկութեան հետևելով, նա ինքզ իր սիրելիների մօտ։ Շատ բան ունէր լսելու նրանցից, շատ բան էլ իր մասին պատմելու նրանց։

Այս տեսակ բաներ—տարիներ տևած մարմնական և հոգեկան ցաւեր—պատմելու համար երկար ժամանակ է պահանջւում, որովհետև ամեն մի դէպք յաջորդական կարգով առաջ բերելը դժուար է։ Մայրն ու քոյրը իրենց սոսկալի տառապանքը պատմեցին։ Բէն Հուրն ամենամեծ ուշադրութեամբ ականջ էր դնում և ոչ մի նշանով չէր մատնում իր սիրտն ալեկոծող զայրոյթը, թէև այդ միջոցին իր առելութիւնը Հռոմի դէմ աւելի էր վառւում, քան երբէք։ Լսած աղէտների դառնակսկիծ ազդումից նրա վրէժխնդրութեան ծարաւն ամենատաստիկ բորբոքման հասաւ։ Շատ մոլեգին դաղափարներ յուղեցին նրան. մերթ ճանապարհների վրայ թշնամիներին կոտորելու փափագով էր հրապուրւում, մերթ Գալիլիայում ապստամբութիւն գրգռելու տենչով. մերթ ծովն էր—ահռելի ծովն էր պատկերանում նրա զայրացած ոգու առջև, և այդ ծովի վրայ՝ հռոմէական ապրանքով կամ աւարով բեռնաւորուած նաւատորմիդ, կըցանկար դերի վարել։ Սակայն հանգիստ մտածելիս նա զսպում էր իր կրքերը և միշտ այն վճռին գալիս, թէ մի՛այն ուժով Հռոմի դէմ մղուած պատերազմը մի կատարեալ յաղթանակի կըհասցնէր. ուստի և միշտ

վերադառնում էր միևնոյն կէտին, որի վրայ հիմնուած էր իր յոյսը,—Նազովրեցուն։

Ի՞նչ սքանչելի բան կըլինէր, եթէ այս Նազովրեցին ոտքի ելնէր և հռչակէր.—Լսիր, Իսրայէլ. ես եմ Աստուծու խոստացած հրէից թագաւորը։ Վեր կաց և տէր դարձիր աշխարհին։

Սակայն արդեօք մի այսպիսի բան նա կանէ՞...

Իր տենչից մղուած Բէն Հուրը մոռանում էր Նազովրեցու երկեակ բնութիւնը և անտես թողնում, որ մարդկայինը կարող էր նրա մէջ աստուածայինին ստորադաս լինել։ Իր մօր ու քրոջ վրայ կատարուած հրաշքում, որին ինքն էլ ականատես վկայ էր, նա գտնում էր մի այնպիսի զօրութիւն, որ կարող էր յաղթուած Հռոմի աւերակների վրայ մի հրէական գահ հաստատել, բոլոր աշխարհը նորոգել և ամբողջ մարդկութիւնը մի երջանիկ գերդաստանի վերածել։ Եւ եթէ այս գործը գլուխ բերուի, այնուհետև ոչ կուրանայ, որ դա իրօք Աստուծու Որդուն արժանի գործ է և նրա հեղինակը մի Փրկիչ։ Եւ քաղաքական հետևանքները մի կողմ թողած—ինչպիսի փառք կըստանայ նա իբրև մարդ։ Մի սոսկ մահկանացուի բնութեան հակառակ է մի այսպիսի ասպարէզից հրաժարուիլը։

Մինչ այս, մինչ այն՝ կիդրոնեան ձորը, Բեղեթայի մօտերքը և Դամասկոսի դռան ճանապարհն արդէն ծածկուել էին ամեն տեսակ տաղաւարներով ու վրաններով, ուր բնակելու էին Պասեքի տօնին երուսաղէմ եկած ուխտաւորները։ Բէն Հուրը գնաց եկեղեցիների մօտ, խօսեց նրանց հետ և զարմացաւ նրանց բազմութեան վրայ։ Մարդիկ եկած էին աշխարհի ամեն մասերից—Միջերկրական ծովի քաղաքներից, Հնդկաստանից, հիւսիսային Եւրոպայի երկիրներից. խօսում էին տարբեր լեզուներ, բայց ամենքի նպատակը մի էր—



տեսնել ազգային մեծ տօնը։ Այս հանգամանքը մի նոր միտք թելադրեց նրան։ Արդեօք նա թիւր չէ՞ր հասկացել Նազովրեցուն։ Գուցէ այս մարդն իր երկայնամիտ համբերութեան քօղի տակ ծածուկ մտքեր է թաքցնում և դրանով իսկ հաստատում, որ ընդունակ է իր փառաւոր կոչումը կատարելու... Պարագաները շատ աւելի նպաստաւոր էին այժմ, քան առաջ, երբ գալիլացիք ուղում էին թագաւոր հռչակել նրան Գեթսեմանէի եղերքին։ Այն ժամանակ նրա կուսակիցների թիւը մի՛այն մի քանի հազար էր. իսկ այժմ միլիոններ կերթան նրա ետևից։ Այսպէս մտածելով Բէն Հուրը եղրափակեց, թէ Նազովրեցին իր արտաքին հեզութեան և զարմանալի անձնուրացութեան ներքոյ մի քաղաքական հանճար և ռազմական դիտումներ է թաքցնում։

Այդ միջոցին նրա վրանը գալիս էին կարճատասակ, թխադէմ և սևամօրուս մարդիկ և ծածուկ բանակցութիւն անում նրա հետ։ Մօր հարցումներին, թէ ովքեր են նրանք, Բէն Հուրը պատասխանում էր.

—Գալիլէացի բարեկամներ։

Այդ մարդիկն էին լուր բերում Նազովրեցու մասին և հաղորդում, թէ ինչ որոգայթներ են լարում նրա դէմ Թշնամիները ռաբբիների և հռոմայեցոց շրջանից։ Նա լաւ գիտէր, որ բարի մարդու կեանքը վտանգի մէջ է. բայց չէր հաւատում, թէ Թշնամիները կը համարձակուին ձեռնել նրան ներկայ տօնի ժամանակ։ Նազովրեցու մեծ հռչակը, ժողովրդականութիւնն ու հետևողների բազմութիւնը ամեն վտանգի դէմ մի ապահով պատուար էր թուում Բէն Հուրին. սակայն իր վստահութիւնը նա հիմնում էր առաւելապէս Նազովրեցու հրաշագործ զօրութեան վրայ։ Բուն մարդկային տեսակէտից դատելով, նա բացէ ի բաց անհնարին էր համարում, որ կեանքի ու մահուան վրայ այնպիսի իշ-

Հանուխիին ունեցող և այնպէս յաճախ ուրիշների օգտին գործ դնող մարդը, չկամենայ նաև իր պաշտպանութեան համար նոյն իշխանութիւնը գործ դնել:

Ջմռռանանք, որ այս բոլոր դէպքերը մարտի 21-ի և 25-ի միջև տեղի ունեցան:

Վերջին օրուայ երեկոյին Բէն Հուրը կորցրեց իր համբերութիւնը և փութաց քաղաք գնալ, խոստանալով շուտ վերադառնալ: Նրա ձին աշխոյժ էր և արագավազ: Ճանապարհի տնակները դատարկ էին, վրանների առջև կրակները մարած—Պասեքի նախատօնն էր. բոլոր ժողովուրդը հաւաքուած էր տաճարի գաւիթներում և պրաղուած զոհի գառներ մորթելով, որոնց արիւնը քահանաները տանում էին սեղանների մօտ: Ամեն մարդ աճապարում ու շտապում էր, որովհետև աստղերը ծագելուն և նշանը տրուելուն պէս ամեն բան պիտի վերջանար. յետոյ միայն կարելի էր խորովել, ուտել և երգել:

Ջիաւորն անցաւ հիւսիսային դռնով և մտաւ երուսաղէմ—դեռ չ'ընկած, դեռ պանծալի քաղաքը, որ լապտերներով ու ջահերով լուսաւորուած էր ի փառս Տեառն:

## ԼԲ.

### Սեղոսի օձը

Բէն Հուրը կանգ առաւ այն խանի առջև, ուր երեսուն տարի առաջ իջած էին Բեթղեհէմ գնացող իմաստունները: Այնտեղ իր ձին արաբ ուղեկցին յանձնելով, ինքը ուղղակի հօր տունը գնաց և հանգուն պէս դահլիճը մտաւ:

Ամենից առաջ Մալուխի մասին հարցրեց. նա տանը չէր: Յետոյ Սիմոնիդէսին և եգիպտացուն ողջոյն ուղարկեց: Երկուսն էլ պատգարակով տարուել էին քաղաք տօնական հանդէսին ականատես լինելու: Բէն Հուրը լսեց, թէ երկրորդ ձերունին արդէն շատ թուլացած է և տրտում:

Մինչ սպասաւորը նրան պատասխան էր տալիս, դռան վարագոյրը յետ քաշուեց և Իրասը ներս մտաւ իր շղարշէ թեթև հանդերձով:

Սպասաւորը դուրս գնաց:

Վերջին օրերի այնքան յուզիչ դէպքերի միջոցին Բէն Հուրը գրեթէ մոռացել էր եգիպտուհուն, բայց այժմ, այն լուսափայլ դահլիճի մէջ, օրիորդի թովչութիւնը նորից սկսեց ազդել նրա վրայ: Նա փութաց պիմաւորել Իրասին, բայց և իսկոյն շուարուելով կանգառաւ: Իրասը փոխուած երևաց նրան:

Մինչև այժմ օրիորդն աշխատել էր նրան գրաւելու համար ամեն հնարք գործ դնել, իսկ այժմ կարծես սառն էր, անտարբեր և գլուխը հպարտ կերպով յետ ձգած՝ մի արձանի պէս կանգնած էր:

Առաջին խօսողը նա եղաւ:

—Ի դէպ ես գալիս, որդիդ Հուրի,—ասաց նա, իր խօսքերը սուր շեշտելով:—Ես կըցանկայի հէնց այժմ ընդհակառակութիւն յայտնել հիւրասիրութեանդ համար, որովհետև երկու օրից յետոյ մեկնում եմ:

Բէն Հուրը թեթև գլուխ տուաւ, անշեղ նայելով նրա դէմքին:

—Լսած եմ,—շարունակեց Իրասը,—որ ջերմեռանդ խաղացողները սովոր են հաշուել իրենց շահն ու կորուստը և շահողին պսակել: Մենք էլ մի խաղ ունեցանք, որ շատ օրեր ու գիշերներ տևեց: Այժմ, երբ նա վերջացել է, կըցանկայի իմանալ, թէ պսակն ո՞ւմն է պատկանում:

Բէն Հուրն զգուշութեամբ պատասխանեց.

—Մի կնոջ ցանկութեան հակառակել՝ անպատշաճ է տղամարդուն:

—Աւա՛ ինձ, ով իշխանդ Երուսաղէմի,—շարունակեց օրիորդը քամահրական եղանակով,—որտեղ է այն Նազովրեցի հիւանի, միանգամայն և Աստուծու որդին, որից վերջերս այնքան մեծ մեծ բաներ էին սպասւում:

—Ես նրա պահապանը չեմ,—պատասխանեց Բէն Հուրը ձեռքի անհամբեր շարժումով:

Օրիորդն իր գեղեցիկ գլուխը դէպի նա հակեց և ասաց.

—Արդեօք նա Հռոմը խորտակե՞ց:

Բէն Հուրը դարձեալ մի անհամբեր շարժում արաւ:

—Ո՞րտեղ հաստատեց իր ոստանը,—հարցրեց Իրասը:—Կըցանկայի տեսնել նրա պալատը...նրա գահը: Նա մեռելներ է յարուցանում. ինչ կընշանակէ նրա համար մի ոսկէ տուն կառուցանելը—բաւական է, որ գետինը ոտքով տրոփէ, և ահա տունը պատրաստ է:

Արդէն պարզ էր, որ Իրասը չէ կատակում. նրա հարցումները խայթիչ էին, ձևերն ու ձայնը թշնամական: Բէն Հուրն այս նկատելով՝ և՛ աւելի զգուշաւոր դարձաւ և հանաքով ասաց.

—Ե՛կ դարձեալ մի օր, մի քանի օր ապասենք նրա պալատին և գահին:

Օրիորդն արհամարհեց այս հրաւէրը և շարունակեց.

—Եւ ինչո՞ւ եմ այդ հանդերձով տեսնում քեզ: Դա Հնդկաստանի կուսակալի և կամ ռ և է վոխարքայի հագուստ չէ: Ես տեսած եմ պարսից բդեշխին. նրա հագուստ չէ: Ես տեսած եմ պարսից բդեշխին. նրա խոյրը մետաքսից էր և թիւնոցն ոսկեճամուկ. նրա սրի կոթն ու պատեանը շլացրել են ինձ իրենց շողշողուն



ակներով: Չեմ կարծում, որ դու ստացած լինես այն իշխանութիւնը... ուր ես պիտի քեզ պատուակից լինէի:

—Իմաստուն հիւրիս սիրուն դուստրը իր կարծածից աւելի բարի է,—ասաց Բէն Հուրը ամենասառն քաղաքավարութեամբ.—Նա ցոյց է տալիս ինձ, որ գեղեցիկ մարմնում երբեմն կարող է մի շատ գաժան սիրտ բնակուիլ:

—Չէի կարծում, որ Հուրի որդին այդքան սրատես հրէայ կըլինի: Ես տեսայ հրաշագործ հերոսիդ Երուսաղէմ մտնելը: Դու ասում էիր, թէ նա տաճարի աստիճաններից հրէից թագաւոր կըհրատարակէ ինքն իրեն: Տեսայ նրան ուղեկցող թափօրները, լսեցի նրանց ովսաննայի երգերը. գեղեցիկ էր արմաւենեաց ոստերի ճօճումը: Ես աչքերովս որոնում էի բազմութեան մէջ մի պատկեր, որ արքայական շուք ունենար... մի ծիրանակիր ձիաւոր, մի ոսկեզօծ կառք, մի վահանաւոր քալ ասպետ և սպառազէն թիկնապահներ, որոնց գնդապետը Երուսաղէմի իշխանը կըլինէր... Սակայն ի զուր:

Իրասը մի արհամարհիչ հայեացք նետեց Բէն Հուրի վրայ և այսպէսօք քրքջաց:

—Փոխանակ մի յաղթական Սեզոստրիսի կամ Ղրահավառ կեսարի... հա, հա, հա...ես տեսայ մի կանացի դէմքով ու մազերով մարդ, իշուքուռակի վրայ նըստած մի մարդ: Ա՞յդ է թագաւորը, Աստուծու Որդին, աշխարհի Փրկիչը՞: Հաճահահա:

Բէն Հուրը մի ակամայ սարսուռ զգաց ամօթից:

—Այնուամենայնիւ, ով իշխանդ Երուսաղէմի, ես իմ տեղից չհեռացայ: Ծիծաղ չերևաց երեսիս վրայ, այլ ասացի ինքս ինձ.—Սպասի՛ր, նա իր փառքը տաճարի մէջ ցոյց կըտայ, ինչպէս վայել է ամբողջ աշխարհը նուաճելու եկած դիւցազնին:—Տաճարի գաւիթներում, սրահներում, կամարների տակ, աստիճան-

ների վրայ բիւր և բիւր մարդիկ կային՝ անձկութեամբ նրա ծանուցման ակնկալու։ Ներանք կանգնած էին շրջակայ սիւներուի պէս անշշուկ... ես էլ նրանց հետ։ Հա, հա, հա։ կարծես թէ արդէն լսում էի Հռոմի կործանման ճարճատիւնը։ Հա, հա, հա։ Բայց, Սողոմոնի հոգին վկայ, սիեզերքի թագաւորն իր վերարկուն ձիգ քաշեց և տաճարից հեռացաւ՝ առանց մի բառ ասելու։ Եւ... Հռոմի պետութիւնը դեռ կանգնած է։

Բէն Հուրն աչքերը խոնարհեց։

Ոչ մի ժամանակ նա, չնայելով Բաղդասարի առաջ բերած փաստերին, չնայելով իր իսկ տեսած հրաշքներին, այնքան պարզ չէր ըմբռնած Նազովրեցու բնութեան խնդիրը, ինչքան որ այժմ ըմբռնեց հեգնող Իրասի նկարագրից։ Նրա աչքերի կեղևն ընկաւ—Նազովրեցու առաքելութիւնը քաղաքական չէր. Լոկ մարդը չէր դիմադրիլ այն ցնծալից ընդունելութեան։

—Դուստրդ Բաղդասարի,—ասաց նա լրջութեամբ,—եթէ այդ է ակնարկած խաղդ, ուռ պսակը, քեզ եմ տալիս։ Հերիք է խօսել այդ մասին։ Ես հաւատամ եմ, որ դու մի որոշ դիտում ունիս։ Միտքդ յայտնիր, և ես քեզ պատասխան կըտամ։ Այնուհետև բաժանուենք և մոռանանք, որ իրար հետ ծանօթ ենք եղած։ Կըլսեմ քեզ. խօսիր, բայց առաջուայ եղանակով։

Իրասը սուր սուր նայեց նրան՝ ասես թէ իր անելիքը որոշելու, գուցէ և նրա միտքն իմանալու համար, և ապա թէ ասաց սառնութեամբ.

—Ազատ ես, գնա։

—Խաղաղութիւն քեզ,—պատասխանեց Բէն Հուրը և հեռացաւ։

Եւ մինչ նա դռնից անցնելու վրայ էր, Իրասը կանչեց.

—Մի՛յ ևս մի խօսք։



Բէն Հուրը յետ եկաւ։

—Ջմռռանա՛ս՝ ինչ որ դիտեմ քո մասին։

—Ի՞նչ գիտես դու իմ մասին, ով գեղանի եգիպտուհի։

—Դու աւելի հռոմայեցի ես, Հուրի որդի, քան. որ և է մեկը քո հրէական եղբայրներից։

—Միթէ ես բնաւ նման չեմ վերջիններին։

—Ջէ՛ որ բոլոր հերոսները հռոմայեցիք են։

—Ա՞յդ է դիտցածդ իմ մասին։

—Կարծեմ նկատողութիւնս բաւական է, որ զգուշանաս։

Իրասի մատները սկսեցին խաղալ վզի փայլուն զարդերի հետ և ձայնը յանկարծ մեղմացաւ. սակայն սպառնալի էր նրա սանդալի թեթև բախումը յատակին։

Բէն Հուրը սոսկաց։

—Կար չկար՝ մի հրէայ կար,—սկսեց Իրասը կամացուկ,—մի փախստական թիավար սորուկ, որ յետոյ մի մարդ սպանեց Իդերնէի պալատում։

Բէն Հուրը դողաց։

—Միևնոյն հրէան մի հռոմայեցի սպայ էլ սպանեց Երուսաղէմի դռան շուկայում. միևնոյն հրէան երեք քաջալաւարժ լեգէոն ունի Գալիլիայից բերած՝ այս պիղծ հռոմէական կուսակալին բռնելու համար. միևնոյն հրէան դաւադիր է պատերազմ սկսելու Հռոմի դէմ, և Իլդերիմ Շէյխը դաւակից է նրան։

Ե՛ւս աւելի մօտենալով Բէն Հուրին, Իրասը շշնջաց.

—Դու ապրած ես Հռոմում։ Երևակայիր, թէ խօսքերս հասնում են մեկի ականջին, և գիտես՝ ում... Ա՜, սիրելիս եմ ես։

Բէն Հուրը յանկարծ յետ քաշուեց իբրև մի մարդ,

որ կատուի հետ խաղալ կարծելիս մի վագր է տեսնում իր առջև։ Իրասը շարունակեց.

—Դու գիտես Հռոմի արքունիքը և ճանաչում ես ամենազոր Սէյանուսին։ Դէյցուք թէ փաստերով հանդերձ և կամ առանց փաստերի պատմէի նրան, թէ մի և նոյն հրէան ոչ միայն Արևելքի, այլև ամբողջ կայսրութեան առաջին հարուստն է։ Տիբերի ձկներին մի լաւ ճաշ կըտրուէը, չէ՞... Եւ մինչ ձկները քէֆ կանէին...հը՞, Հուրի որդի... Ի՞նչպիսի հանդէս կըսարքուէր կրկէսում։ Ժողովրդին զուարճացնելը նուրբ արուեստ է. արուեստի համար ոսկի ճարելը՝ և՛ աւելի նուրբ արուեստ. և ոչ աւելի հմուտ է դրան, քան նոյն ինքը Սէյանուսը։

Իրասի ականջին սաորուբիւնը այնքան չպղտորեց Բէն Հուրի միտքը, որ նա ամեն բան մոռանար։ Նա յանկարծ Յորդանանի ճանապարհին տեղի ունեցած դէպքը յիշեց և, կարծելով, ինչպէս կարծել էր այն ժամանակ, թէ եսթերը նրան մատնած կըլինի, ըստ կարելւոյն հանդարտ պատասխանեց.

—Ո՞վ եգիպտուհի, եթէ ուզում ես իմանալ, դէ իմացիր, որ սաոանուբիւնդ խոսոովանում եմ և տեսնում, որ ես ձեռքիդ գերին եմ։ Գիտեմ, ոչ մի գթութիւն չպիտի գտնեմ ես քեզնից։ Ես կարող էի սպանել քեզ. բայց դու կինդ ես։ Անապատն ինձ ընդունելու պատրաստ է, և թէպէտ Հռոմը լաւ մարդասէր է, սակայն երկար կըչարչարուի, մինչև կարենայ բռնել ինձ, որովհետև անապատում ոչ միայն աւազ, այլև տեգեր ու սրեր կան։ Ո՛րքան էլ դու իմ դէմ թակարդ լարես, դարձեալ պիտի պատասխան տաս—ոչ պատմեց քեզ այն բոլորը, ինչ որ գիտես իմ մասին։ Փախստեան թէ գերութեան մէջ, նոյն իսկ մահուան բոպէին ինձ համար սփոփանք կըլինի թողնել մատնիչիս մի մարդու անէծք,



մի մարդու, որ իր կեանքում բացի վշտից մի ուրիշ բան չէ իմացել։

Գուցէ կեղծիք էր, գուցէ և ճշմարիտ զգացում... եգիպտուհու դէմքի վրայ կարեկցութեան նշան երևաց։

—Հուրի որդի,—ասաց նա,—իմ հայրենի երկրում արհեստաւորները սովոր են փոթորկից յետոյ խեցիներ հաւաքել ծովափին, այդ խեցիները մանր մանր կտրտել և կաորներից նուրբ պատկերներ շինել։ Իմ արածն էլ հենց այդ էր... Ես որսում էի մեկից այս ինչ փոքրիկ տեղեկութիւնը, միւսից միւսը, մեկ ուրիշից երրորդը և բոլորը միասին շարակցելով՝ ուրախանում էրբև մի կին, որ մի մարդու բախտ ու կեանքը իր ձեռքին բռնած ունի, մի մարդու...—Իրասը կանգ առաւ, ոտքով զարկեց յատակին, մի կողմ նայեց, ասես թէ մի յաւ թաքցնելու համար, և յարեց—որին չգիտէ ինչ անել։

—Ո՛չ, այդ բաւական չէ,—ասաց Բէն Հուրը։—Բոլորն ասա։

—Դէ, ուրեմն մի քանի բան էլ Շէյխից եմ լսած... չէ՞ որ նրա վրանի պատերը քարից չեն. մի քանի էլ... մանրիկ բաներ...

—Ուսմնից։

—Նոյն իսկ Բէն Հուրից։

—Եւ ոչ մի։

Բէն Հուրն ազատ շունչ քաշեց և թեթևացած սըրտով ասաց.

—Շնորհակալ եմ։ Այժմ շտապիր, որ Սէյանուսը շատ երկար չսպասէ քեզ։

Այս ասելով Բէն Հուրն ուզում էր դուրս գնալ, բայց Իրասը դարձեալ չթողեց։

—Սպասի՛ր,—ասաց նա։

Եւ Բէն Հուրը մնաց, կարծելով, թէ Իրասն այժմ կասէ իր գլխաւոր ասելիքը։

—Ես խնայում եմ քեզ, սկսեց Իրասը.—Դու երիտասարդ ես, քաջ և հարուստ. դառնութիւններ շատ ես կրել... բաւական է: Այժմ արա, ինչ որ կասեմ, և կեանքդ փրկուած կըլինի—երդուում եմ քեզ:

Երբէք Իրասն այնպէս հրապուրիչ չէր երևացել Բէն Հուրին, ինչպէս այդ խօսքերը ջերմ եռանդով ասելիս:

—Երբեմն դու մի ընկեր ունէիր,—շարունակեց եգիպտուհին շոյապով.—Այն ժամանակ դու պատանի էիր: Յանկարծ ձեր միջև մի կռիւ ծագեց, և դուք իրար հետ թշնամացաք: Նա շատ անիրաւ վարուեց քեզ հետ: Տարիներ անցնելուց յետոյ դու նրան նորից հանդիպեցիր Անտիոքի կրկէսում:

—Մեսալան:

—Այո, Մեսալան: Դու նրա պարտատէրն ես: Ներիր նրա յանցանքը, դարձեալ ընկեր ճանաչիր նրան, յետ տուր նրա կարողութիւնը, որ կորցրել էր մեծ գրաւում. փրկիր նրան: Վեց տաղանդը ոչինչ բան է քեզ համար, կամ թէ նոյնքան, ինչքան որ սաղարթալի ծառից ընկնող մի տերև. բայց նրա համար, որ անդամալոյծ ընկած է, ամեն բան: Ո՛վ Բէն Հուր, ազնիւ իշխան, նրա պէս տոհմիկ հռոմայեցուն աղքատ լինելը մեռնելուց էլ վատթար է: Փրկիր նրան մուրալու հարկից:

Իրասն արագ արտասանեց այս խօսքերը, որպէս զի ոնկնդիրը մտածելու ժամանակ չունենայ. բայց նրա նենգ հաշիւը սխալ դուրս եկաւ: Աղերսաւոր կնոջ ուսերի եռևը Բէն Հուրի առջև կարծես կանգնած էր ինքը Մեսալան, որ ոչ թէ ընկերաբար, այլ հեղնութեամբ էր մարիկ տալիս և նոյն պատրիկական ամբարտաւան խրոխտութեամբ, ինչպէս առաջ:

—Մեսալան ոչինչ չի ստանայ,—ասաց Բէն Հուրը



հատու ձայնով:—Իմ վճիռն անդառնալի է... հռոմայեցու վճիռ՝ հռոմայեցու դէմ: Նա է քեզ ինձ մօտ ուղարկել:

—Նա ազնիւ է, քեզ էլ ազնիւ է համարում:

—Քանի որ դու այդպէս լաւ ես ճանաչում նրան, ուրեմն գիտես, որ եթէ նա իմ տեղը լինէր, նոյնը կանէր, ինչ որ խնդրում է ինձանից:

Բէն Հուրի աչքերը շանթում էին:

—Ո՜հ,—սկսեց Իրասը,—նա...

—Հռոմայեցի է, ուզում ես ասել՝ հաւասկացնելու համար, թէ ես, իբրև հրէայ, իրաւունք չունեմ նոյնը նրանից պահանջելու, ինչ որ նա է ինձանից պահանջում. թէ ես իբրև հրէայ, պարտաւոր եմ իմ շահածը նրան ընծայել, որովհետև նա հռոմայեցի է: Եթէ մի ուրիշ ասելիք էլ ունիս, ուրեմն դուստրդ Բաղդասարի, շուտով ասա. որովհետև, Իսրայէլի տէրը վկայ, եթէ արիւնս և՛ աւելի տաքանայ, ես կըմոռանամ, որ դու մի գեղեցիկ կին ես, և ուրիշ բան չեմ համարիլ քեզ, բայց միայն հռոմայեցու ստոր արբանեակ և լրտես: Դէ՛, շո՛ւտ արա:

Իրասը մի քայլ յետ նահանջեց և իր բնութեան ողջը չարութիւնը դուրս թափելով, աղաղակեց.

—Ա՜յ մրուր խմող և սխտորակեր, դու համարձակուում ես Մեսալային հետ համեմատել քեզ: Քեզ նման մարդիկ նրան ծառայելու համար են ծնուած: Նա գոհ կըլինէր, եթէ հրաժարուէիր վեց տաղանդից. բայց ես ասում եմ—այդ վեցի վրայ դեռ քսան տաղանդ կըդնես... լսո՞ւմ ես—քսան: Կարծում ես, թէ Մեսալային տեսնելուցս յետոյ ես կարող էի քեզ սիրել: Արդ իմացիր, որ ճկուքիս տուած ամեն մի համբոյրիդ համար մի մի տաղանդ պիտի վճարես. պիտի վճարես և այն երկար կեղծաւորած համակրութեանս

փոխարէն, որ ես քեզ ընծայել եմ, թէպէտև նրան ծառայելով։ Այս տանը պտնուող վաճառականը քո փողերի տնօրէնն է. եթէ նա վաղը քո յաուկ առաքրքրութեամբ վաւերացուած մի մուրհակ չտասցնէ ինձ, քսանևվեց տաղանդի մուրհակ — լաւ նկատիր այս գումարը—այն էլ Մեսալային վճարելի—այնուհետև Սէյանուսը քեզ հետ հաշիւ կըտեսնէ։ Ուռեմ եպիր... և բարով մնաս։

Իրան ուզում էր հեռանալ. Բէն Հուրը նրա ճանապարհը կտրեց։

—Ա՜յ նենգամիտ եպիպատուհի,—ասաց նա,—երբ էլ տեսնես, ուր էլ տեսնես Մեսալային—այստեղ և կամ Հռոմում, ասա նրան, որ ես արդէն չեմ ստացել հայրենի գոյքս, որից նա իր մատնութեամբ զրկել էր ինձ։ Ասա նրան, որ ես չմեռայ իր թեզադրած թիւաբարութեան մէջ։ Ասա նրան, թէ իր մարմնի թշուառ վիճակը Իսրայէլի Աստուծու կողմից՝ իմ ձեռքով նրան տուած մի պատիժ է, այն չար ոգրի փոխարէն, որ նա գործել է անոքների դէմ։ Ասա նրան, որ իր սաղրանքով Անտոնիա բերդի զնդանը ձգուած մայրս ու քոյրս բորոտութիւնից չկորան, այլ ողջ առողջ են շնորհիւ այն նազովրեցու, որին դու այնքան ատում ես։ Ասա նրան, որ երկուսն էլ ինձ չեն շնորհուած երջանկութիւնս լրացնելու համար։ Գնա ասա, որ այսուհետև ես նրանց սիրով պիտի ապրեմ և այս սիրոյ մէջ հազար անգամ աւելի հաճոյք վայելեմ, քան թէ այն գարշ կրքերում, որ դու տանում ես քո պակշռտին նուիրելու։ Ասա նրան, ով դու ոգի նենգութեան... և երկուսդ էլ սիրտուեցէք իմանալով, որ երբ Մէյանուսն իմ գոյքերը դրաւելու գայ, ոչ մի դինար չի գտնի, որովհետև երկապետի ինձ կատկած կարողութիւնը, ինչպէս և Միզենումի ապարանքը,



վաճառուած է և փողը հեռացուած նրա իշխանութեան սահմանից. և թէ այս տունն ու այն բոլոր ապրանքը, շէնքերը, նաւերը և կարաւանները, որոնցմով առևտուր է անում Սիմոնիդէսը և արքայական շահեր ստանում,—բոլորն էլ ինքնակալի հրովարտակով ապահովուած են։ Մի հանճարեղ գլուխ հնար գտաւ հրովարտակի գինը վճարելու և Մէյանուսը լաւ համարեց մի շահաբեր նուէրով շատանալ, քան ձուկ որսալ անիրաւութեան և արեան լճում։ Ասա՛ նրան, որ եթէ այս բոլորն այսպէս էլ չլինէր, այլ ամեն ստացուածքներն ու գումարները յաուկ իմս լինէին, դարձեալ նա մի դանկ անգամ չէր ստանալ, որովհետև ես միշտ մի ելք կըգտնէի—կայսրին կըտայի բոլորը։ Այս հնարքը, ով եգիպատուհի, ես Հռոմումն եմ սովորել։ Ասա՛ նրան վերջապէս, թէ ես նրան մի լոկ նզովք չեմ ուղարկում, այլ իբրև մի և՛ս աւելի պատշաճ նշան իմ ոխերիմ ատելութեան դէպի նա. ուղարկում եմ նրան մի անձն, որ բոլոր անէծքների գումարումն է։ Ուրամանկ հռոմայեցին քեզ տեսնելուն պէս կիմանայ, թէ ով է այդ անձը։ Այժմ գնա, ես էլ կերթամ։

Նա մինչև դուռն առաջնորդեց Իրասին և վարպետը քաղաքավարի բանալով՝ ասաց.

—Աղաղութիւն քեզ, օրիորդ։

## Ա. Գ.

### *Դարձ դէպի Նսէթերը*

Մտածկոտ դէմքով, գլխակոր և ծանրաքայլ դուրս եկաւ Բէն Հուրը դահլիճից։ Կոտրուած ողնաշարով մարդն անգամ չէր դադարել նրա դէմ չարիք հնարելուց...

—Ա՜հ, — ասում էր նա ինքն իրեն, — այժմ պարզուեց ինձ համար Իդերնէի պալատի ժամադրութեան գաղտնիքը։ Փառք Աստուծու, որ այդ կինն աւելի երկար չիշխեց վրաս։ Ես նրան երբէք չէի սիրել։

Փոքր ինչ յետոյ նա մի բեռից ազատուած ղգաց ինքն իրեն և աւելի թեթև առաջ գնաց։ Հասնելով պատշգամի սանդուղքին, որ տանում էր դէպի վեր, նա կանգ առաւ։

—Մի թէ Բաղդասարն էլ մասնակից էր իր անզգամ աղջկայ այսքան տարւայ խաղերին,—մտածեց նա։—Ո՛չ, ո՛չ։ Կեղծաւորութիւնը յատուկ չէ այդ ալևոր հասակին։ Նա բարի մարդ է։

Այս համոզումով Բէյն Հուրը ոտք դրաւ աստիճանին և տանիքի վրայ բարձրացաւ։ Երկնքում կանգնած էր լիալուսինը, սակայն նրա փայլը նսեմանում էր փողոցներում և շուկաներում վառուած անթիւ կրակների կարմիր լոյսից։ Օդը լի էր սաղմոսների դաշնակաւոր հնչիւնով։ Վշտակիր սրտերից թռչող կայծերը կարծես ասում էին.—Ո՛վ, որդիդ Յուդայի, մենք այսպէս ենք արտայայտում մեր հաւատարմութիւնն Աստուծուն և սէրն այն երկրին, որ նա մեզ պարգևել է։ Ո՛հ, թէ գար մի Գեդէոն, մի Դաւիթ և կամ թէ մի Մակաբէ։ Մենք պատրաստ ենք։—Բէյն Հուրի ոգեկան աչքին Նազովրեցին երևաց։ Դարձեալ անդորը էր նրա դէմքը և դարձեալ Բէյն Հուրը հարցնում էր իրեն—Ո՞վ է դա։

Այս հարցումը կրկնելով՝ նա վայր նայեց տանիքից և մեքենաբար հովանոցի կողմը գնաց։

—Թող ինչ չարիք ուզենան նրանից,—ասաց նա ինքն իրեն,—ես չեմ ներիլ հռոմայեցուն, իմ կարողութեան մի մասն անգամ չեմ տալ նրան, չեմ էլ վախ



չիլ նրա պատճառով իմ հայրենի քաղաքից։ Գալիլիացիք և բոլոր ցեղերն ինձ օգնութեան կը հասնեն և մենք այստեղ պատերազմ կը տանք Թշնամուն։ Մեր Աստուածը, որ մի Մովսէս շնորհեց ազգիս, այժմ էլ կը տայ մի առաջնորդ, եթէ ես ընկնեմ։ Եւ եթէ այդ առաջնորդը Նազովրեցին չլինի, մէկ ուրիշը առաջ կը գայ այն շատերից, որոնք պատրաստ են ազատութեան համար մեռնելու։

Հովանոցի միջից աղօտ լոյս էր երևում։ Ներս նայելիս Բէյն Հուրը տեսաւ Սիմոնիդէսի բազկաթոռը մի անկիւնում, որտեղից աւելի լաւ կարելի էր աչքի անցնել հրապարակը։

—Բարի մարդը վերադարձել է,—մտածեց նա,—և եթէ չէ քնած, կը խօսեմ հետը։

Նա ներս մտաւ և յուշիկ մօտեցաւ բազկաթոռին, որի մէջ քնած էր Եսթերը, հօր վերմակով ծածկուած։ Աղջկայ մազերը մասամբ ընկած էին երեսի վրայ. Նրա գեղեցկութիւնն անկասկած էր. մի անգամ կարծես հառաչեց։ Այս հառաչը և կամ աղջկայ մենութիւնն աւելի էր տալիս կարծելու, թէ նա ոչ թէ յոգնութիւնից, այլ վշտից է հանգստանում։ Չէ՞ որ բնութիւնը պարգևում է մանուկներին այդպիսի հանգիստ, և Բէյն Հուրը սովորած էր մանուկ համարել Եսթերին։ Եւ աթոռին յենուելով՝ նա մտքերի մէջ սուզուեց...

—Չեմ զարթեցնիլ։ Ասելու բան չունիմ... ոչ մի բան... ոչ մի բան, բայց թէ այս, որ ես իրեն սիրում եմ։ Յուդայի աղջիկ է և սիրունիկ... և այնքան տարբեր եպիսկոպոսուհուց։ Այն մէկը խաբէութիւն է, սա միայն ճշմարտութիւն, նա փառամոլ, սա պարկեշտ. նա եսասէր, սա անձնազոհ... Ո՛չ, խնդիրն այն չէ, որ ես սրան սիրում եմ, այլ թէ՝ ինքն էլ արդեօք սիրո՞ւմ է ինձ։ Հէնց սկզբից մտերիմս էր։ Ի՞նչպէս էր խնդրում

այն գիշեր, Անտիոքի տան կտրի վրայ, որ Հռոմն իմ դէմ չգրգռեմ։ Ես սիրում եմ սրան... Քաղաքում դեռ չգիտեն, որ ես գտել եմ հարազատներիս։ Ես զգուշանում էի յայտնել այս գիւտը եգիպտուհուն. բայց այս հրեշտակն ինձ հետ միասին կուրախանայ և նրանց վերադարձն ամենայն սիրով կողջունէ։ Սա մօրս համար երկրորդ դուստր կըլինի, Թիրզայի համար հարազատ քոյր։ Կըցանկանայի զարթեցնել և ամեն բան պատմել նրան... բայց ոչ այժմ, շնորհալի Եսթեր, բարի վաւակ, դու Յուդայի աղնիւ աղջիկ։

Ինչպէս որ Բէն Հուրը եկել էր, այնպէս էլ յուշիկ հեռացաւ։

## ԼԴ.

### Դեթսեմանի։—«Զո՞ խնդրէք»։

Փողոցները լիքն էին շարժուն բազմութեամբ և կամ կրակների շուրջը հաւաքուած՝ միս խորովող, ուտող, խմող և երգող հրէաներով։ Օդի մէջ փռուած էր ձենձերի հոտ և եղևնափայտի թանձր ծուխ։ Այս այն ժամն էր, երբ ամեն մի Իսրայէլի որդի եղբայր էր ճանաչում միւսին և հիւրասիրութիւնը սահման չունէր։ Բէն Հուրն ամեն մի քայլին ողջոյն էր ստանում, ամեն մի խմբից հրաւէր լսում.

—Ե՛կ, մասնակից եղիր մեր սեղանին. եղբայր ենք ի Տէր։—Սակայն նա շնորհակալութիւն յայտնելով, աճապարում էր առաջ գնալ դէպի խանը. մտադիր էր իր ձին հեծնել և Կիդրոնի վրանները վերադառնալ։

Այնտեղ հասնելու համար նա կտրելու էր մի ճանապարհ, որի յիշատակը յաւերժանալու էր մի սոսկա-



կալի և քրիստոնէութեան համար ամենադառն եղելութեամբ։ Ճանապարհին մտիկ տալիս նա տեսաւ մօտեցող ջահեր. սակայն քանի նրանք առաջ էին գալիս, այնքան էլ երգերը լռում էին։ Նրա զարմանքն ևս աւելի սաստկացաւ, երբ որ յանկարծ կայծերի և ծխի միջից հռոմէական զինուորների փայլուն տեգեր, սաղաւարտներ և նիզակներ երևացին։ Ի՞նչ գործ ունէին այս հեթանոս զինուորները մի հրէական տօնի թափօրում... Այդ չլսուած բան էր։

Բէն Հուրը կանգ առաւ բանի էութիւնն իմանալու համար։

Լուսինը պայծառ փայլում էր. բայց կարծես թէ քիչ համարելով լուսանի, ջահերի և կրակների լոյսը, ոմանք դեռ լապտերներ ունէին թափօրի մէջ։ Անցնողներին լաւ տեսնելու համար Բէն Հուրը փողոցի եզերքին տեղ բռնեց։ Ջահ ու լապտեր կրողները ծառաներ էին՝ զինուած սրով և կամ բրով. նրանք շտապով ճանապարհ էին հարթում եռանից եկող պաշտօնական անձերի համար։ Իսկ սրանք էին երէցներ ու քահանաներ, երկրամօրուս, թանձրայօն, արծռունգ ռաբբիներ, կայիափայի և Աննայի խորհրդակից աւագներ։ Ո՞ւր էին գնում։ Հարկաւ ոչ դէպի տաճարը, որովհետև նրա ճանապարհն ուրիշ էր։ Եւ եթէ մի խաղաղական նպատակ ունէին, զինուորներն ինչացու էին...

Թափօրի միջից երեք անձն Բէն Հուրի ուշադրութիւնը գրաւեցին։ Երեքն էլ գալիս էին առջևից։ Ջահակողմեան մարդուն Բէն Հուրը ճանաչեց—նա տաճարի պահակապետն էր. աջ կողմինը մի քահանայ. միջինն սկզբից լաւ նկատելի չէը, որովհետև ծանր յենուած էր միւսների բազկին և գլուխն այնպէս վայր կախած, որ ամբողջ երեսը չէր երևում։ Նրա պատկերը յիշեցնում էր մի նոր բռնուած կալանաւոր, որ տակաւին չէ սթափուած

սարսափից, և կամ գիտէ, որ գնում է մի ահռելի պատիժ—լկանք կամ մահ ընդունելու։ Երկու կողմից նրան օգնող պաշտօնեաների ուշադրութեան նայելով, այս միայն կարելի էր ասել, որ եթէ նա թափօրի շարժման բուն առարկան էլ չլինէր, գոնէ այդ առարկայի հետ մի որ և է յարակցութիւն կունենար՝ կամ իբրև վկայ, կամ թելադրիչ, կամ մատնիչ և կամ մի իրագիտ մարդ։ Եթէ Բէն Հուրը նրան ճանաչէր, թափօրի նպատակն էլ կիմանար. այս պատճառով նա քահանայի աչ կողմն անցաւ և սկսեց նրա հետ քայլել։ Եւ ահա մի-չին մարդը գլուխը բարձրացրեց։ Լապտերների լոյսը նրա երեսի վրայ ընկաւ—այդ երեսը դունատ, շփոթուած, անաբեկ էր... մօրուքը խառնուած, աչքերը մարած, ներս ընկած և յուսահատ։ Երկար ժամանակ Նազովրեցու հետ շրջած և նրա աշակերտներին լաւ ճանաչող Բէն Հուրն այն դալկահած դէմքը տեսնելուն պէս՝ աղաղակեց.

—Սկարիովտացին։

Մարդու նայուածքը Բէն Հուրի վրայ ընկաւ. շարժուն շուրթերը կարծես ուզում էին մի բան ասել, բայց քահանան խօսելու ժամանակ չտուաւ նրան և գոչեց, Բէն Հուրին մի կողմ հրելով.

—Ո՞վ ես դու, գնա, կորիր։

Երիտասարդը լուռ ընդունեց այս հրումը և փոքր ինչ յետոյ նորից մտաւ թափօրի մէջ։ Եւ թափօրի հետ գնալով, անցաւ այն խոր ճանապարհը, որ ընկած էր Բեզէթա բլրի և Անտոնիա բերդի միջև, և վերջապէս Բեթէզդայի լճի մօտով անցնելուց յետոյ՝ հասաւ մինչև Նախրի դուռը։ Ամեն տեղ մարդիկ սուրբ ուշով էին դրաղուած։

Դուռը բաց էր։ Դռնապաններն երևի թէ պասէք էին ուտում որ և է տեղ։ Թափօրը դռնից անցաւ. դի-



մացը կիդրոնեան ձորն էր սկսում և Ձիթենեաց սարը բարձրանում իր մթագոյն մայրիների և ձիթենիների անտառով։ Ձորն իջնելով թափօրը հասաւ մինչև Ներքևի կամուրջը և բազմութիւնը փութաց միւս կողմ անցնել խառն ի խուռն ընթացքով։ Այնուհետև նրանք դէպի ձախ շեղուեցին, և յատկապէս դէպի քարէ պատսպով շրջապատուած ձիթաստանը։ Բէն Հուրը գիտէր, որ այնտեղ բացի մի երկու հին ծառերից, չոր խոտից և քարի մէջ փորուած մի հնձանից՝ ուրիշ բան չկայ. և մինչ զարմանալով մտածում էր, թէ ինչ էր պատճառը, որ այնքան մարդիկ, այն էլ գիշերուայ ուշ ժամին, շտապում են այդ յետ ընկած տեղը հասնել, թափօրը յանկարծ կանգ առաւ։ Առջևի կողմից զրգռուած ձայներ հնչեցին. բազմութիւնը սարսուռ զգաց, և մարդիկ իրար անցնելով սկսեցին իրար կոխկռտել։ Միայն դինուորներն անշարժ մնացին։

Բէն Հուրը նոյն րոպէին ամբոխից դուրս եկաւ և առաջ վազեց. նա այդին տանող մի անդունդ մուտք պտաւ պարսպի մէջ և այնտեղ կանգնեց՝ տեսնելու թէ ինչ պիտի անէ թափօրը։

Մուտքի առջև մի սպիտակազգեստ մարդ էր կանգնած՝ գլուխը մերկ, ձեռքերը կրծքին, իրանը կոր, մազերը երկայն, դէմքը նիհար—անտրտունջ հպատակութեան կենդանի պատկեր։

Նազովրեցին էր։

Նրա եաևը, անմիջապէս մուտքի մօտ, երևում էին իր աշակերտները. նրանք տագնապած էին, այն ինչ վարդապետը լիովին հանդիստ, անվրդով էր։ Ջահերի լոյսը մի կարմրագոյն երփն էր տալիս նրա մազերին. դէմքը բարեմոյն և հեզ էր, ինչպէս և միշտ։

Ամբոխն ապշած և զարհուրած կանգ առաւ այդ հանդարտիկ երևոյթի առջև՝ նրա բարկութեան մէկ

նշանից վախչելու պատրաստ: Նրան տեսնելուն պես Բէն Հուրը նայեց ամբոխին, յետոյ Յուդային, որ երեւում էր մէջ տեղում... և դիշերային յարձակման բուն նպատակը հասկացաւ: Այնտեղ կանգնած էր մատնիչը, այստեղ մատնուածը, և սպառազէն զինուորներն եկած էին բռնելու նրան:

Ոչ մի մարդ չէ կարող համարձակ ասել, թէ ինչպէս կըվարուի, երբ գործելու վայրկեանը հասնի: Բէն Հուրի տարիներից ի վեր սպասած րոպէն հասել էր. իր պատրաստած զօրքերի, իր յոյսերի մարդը, որին ուսուցած էր պաշտպանել, այժմ անձնական վտանգի մէջ էր, և... և նա դեռ անգործ, պարապ նայում էր:—Այսպիսի հակասութիւններ անպակաս են մեր մարդկային բնութեան մէջ:—Ճշմարիտն ասել՝ նրան բռնում էր խորհրդաւոր Նազովրեցու վսեմական անդորրութիւնը թշնամիների դէմ յանդիմման. գուցէ մարդն իր հրաշագործ զօրութիւնը վերջ ի վերջոյ ցոյց կըտայ... Նա միշտ սէր, հաշտութիւն, թողութիւն էր քարոզել. բայց մի՞թէ այս դէպքումն էլ ներողամիտ կըմնայ... Նա կեանքի և մահուան տէր էր. արդեօք ի՞նչպէս կըգործադրէ այժմ իր ոյժը... կըպաշտպանուի՞, և ի՞նչպէս: Մի բառ... մի շունչ... մի միտք անգամ հերիք է նրան...

Բէն Հուրը հաւաստի էր, որ այս մարդու զարմանալի, գերբնական զօրութիւնն իսկոյն և եթ կերևայ, և այս հաւատով սպասում էր... Նա իր չափով էր չափում Նազովրեցուն:

Եւ ահա Քրիստոսի ձայնը հնչեց.

—«Ձո՞ խնդրէք»:

—ՁՅիսուս Նազովրեցին:

—«ես եմ»:

Այս խօսքերն առանց դրդռւթեան և պարզ կերպով ասուեցին, բայց և այնպէս խաժամուժը յետ նահանջեց. շատերը գետին ընկան, շատերն էլ գուցէ հետանային, եթէ նոյն վայրկենին Յուդան նրան չըմօտենար:

—Ողջոյն լեր, վարդապե՛տ:

Եւ այս ասելով համբուրեց նրան:

—«Յուդա՛», ասաց Նազովրեցին մեղմութեամբ,—«համբուրելո՞վ մատնես զՈրդի Մատուածոյ: Վասն որո՞յ եկիր դ»:

Վարդապետը պատասխան չընդունեց և նորից դարձաւ ամբոխին.

—«Ձո՞ խնդրէք»:

—Ձ՞իսուս Նազովրեցին:

—«Ասացի ձեզ, թէ ես եմ: Արդ՝ եթէ զիս խնդրէք, թոյլ տուք դոցա երթալ»:

Որբբինները նրա դէմ վազեցին. աշակերտներից ոմանք, որոնց համար նա միջնորդել էր, և՛ աւելի մօտեցան նրան: Ամբոխման մէջ մի աշակերտ սրով կարեց քահանայապետի ծառայի ականջը, բայց չազատեց Վարդապետին:

Եւ դարձեալ Բէն Հուրը անգործ ու ձեռնպահ էր մնում:

Իսկ Նազովրեցին, մինչ զինուորները գալիս էին նրան չուանով կապելու, նորից իր գերմարդկային համբերութիւնը, բարեսիրութիւնն ու զթութիւնը ցոյց տուաւ:

—«Թո՛յլ տուր մինչև ցայդ վայր»,—ասաց նա աշակերտին, և զինուորի ականջին դիպչելով, նրա վէրքը բժշկեց:

Թէ բարեկամները և թէ թշնամիները զարմացան,—ոմանք որ նա մի այդպիսի հրաշք գործելու, ոմանք էլ՝ որ այդպիսի պարագայի մէջ գործելու ոյժ ունի:

—Անտարակոյս Թոյլ չի տալ կապել իրեն,—մտածում էր Բէն Հուրը։

—«Ա՛րկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր։ Զբաժակն զոր հատ ինձ Հայր ոչ ըմպիցեմ զնա»։—Եւանգոտ աշակերտից շուռ գալով, Վարդապետն ասաց դահիճներին.—«Իբրև ի վերայ աւազակի իւիք սուսերօք և բրօք ունել զիս։ Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, և ոչ ձգեցէք զձեռս յիս. այլ այս է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի»։

Ամբոխը սիրտ առաւ և շրջապատեց նրան։

—Բէն Հուրը շուրջը նայեց. աշակերտներն անհետացել էին—ոչ մէկը չէր մնացել։ Մենակ Թողուած մարդու շուրջն ամբոխը գոռում, փոթորկւում էր։ Երիտասարդը մի թռուցիկ ակնարկ նետեց դերու վրայ։ Մի այդպէս անօր, այդպէս լքուած, այդպէս խղճալի էակ նա դեռ բնաւ չէր տեսել։ Այն ինչ, մտածում էր նա, այս էակն ընդունակ է պաշտպանել իրեն և կարող՝ մէկ շնչով ոչնչացնել թշնամիներին, բայց չէ ուզում։ Եւ ինչ բաժակ է տուել նրան Հայրը... Եւ ով է այն Հայրը, որին այդքան հնազանդ է։ Գաղտնիք գաղտնիքի վրայ... ոչ թէ մէկ, այլ շատ գաղտնիք։

Այդ րոպէին բազմութիւնը զինուորների հետ ճանապարհ ընկաւ դէպի քաղաք։

Բէն Հուրն սկսեց տագնապ զգալ։ Նա դժգոհ էր ինքն իրենից։ Յանկարծ նա վճռեց նորից տեսնել Նազովրեցուն, որ արդէն վերադարձող ամբոխի մէջ էր և ջահերով շրջապատուած. փափագում էր մի հարց ուղղել նրան։

Նա իր երկայն վերարկուն և գլխի շալը հանեց, երկուսն էլ պատի վրայ ձգեց և վազեց ամբոխի հետևից, որին և համարձակ միացաւ։ Մէկին, միւսին հրելով, նա ուղիղ մօտեցաւ այն մարդուն, որ բռնած էր կապուած Նազովրեցու չուանի ծայրից։



Նազովրեցին յամրաքայլ առաջ էր գնում—գլուխը կախ, ձեռքերը մէջքին պրկուած, թաւ մազերը դէմքի վրայ ընկած, մարմինը կքուած։ Նա կարծես մոռացել էր ամեն բան, ինչ որ կատարւում էր իր շուրջը։ Մի քանի քայլ նրանից առաջ գնում էին քահանաներն ու ծերերը, խօսակցելով և մերթ յետ նայելով։ Նրանք կամրջին որ հասան, Բէն Հուրը ծառայի ձեռքից չուանը խլեց և սկսեց Նազովրեցու հետևից քայլել։

—Վարդապետ, վարդապետ,—շշնջաց նա Նազովրեցու ականջին։—Ձի՛ս լսում, վարդապետ։ Մի խօսք միայն... մի՛այն մի խօսք։ Ասա՛ ինձ...

Ծառան չուանը յետ պահանջեց։

—Ասա՛ ինձ,—շարունակեց Բէն Հուրը,—յօժար կամքո՞վդ ես սրանց հետ գնում։

Այդ միջոցին վրայ հասնող գրգռուած մարդիկ հարցրին նրան.

—Ո՞վ ես դու։

—Ո՛վ վարդապետ,—շարունակեց Բէն Հուրը,—ես բարեկամդ եմ և քեզ փրկող։ Աղաչում եմ՝ ասա՛—եթէ ես քեզ օգնութիւն բերեմ, կընդունի՞ս։

Նազովրեցին ոչ աչքերը վերցրեց, ոչ էլ մի ուրիշ նշան տուաւ։

Չինուորները յարձակուեցին Բէն Հուրի վրայ, գոռալով.

—Սա էլ նրանցից է։ Բռնեցէ՛ք սրան, սպանեցէ՛ք։

Բարկութեան ուժգին թափով Բէն Հուրը յետ մղեց տասնեակ մարդիկ և դուրս պրծաւ պաշարողների շրջանից։ Նրա ղեկտը մի զինուորի ձեռքում մնաց. նա մերկ փախաւ. կրճի մթութիւնը փրկեց նրան։

Այդու պատի վրայ թողած վերարկուն և գլխի

շալը վերցնելով, նա գնաց Թափօրի ետևից մինչև քաղաքի դռները. այնտեղից դիմեց դէպի խանը, ձին հեծաւ և փութաց մօր ու քրոջ վրանները հասնելու։

Ճանապարհին նա ասում էր ինքն իրեն, թէ անպատճառ առաւօտեան յետ կըդայ Նազովրեցուն տեսնելու։ Զգիտէր, որ Նազովրեցին նոյն գիշերն իսկ Աննայի տունը կըտարուի և հարց ու փորձի կենթարկուի։

Բէն Հուրը սրտի սաստիկ բաբախումով անկողնին մտաւ այն գիշեր։ Արդէն տեսել էր, որ իր վայելչացած հրէական թագաւորութիւնը մի ուրիշ բան չէ, բայց միայն երազ։

Արդէն ըստ ինքեան ցաւալի է, երբ մեր օդային դղեակները տապալուում են հետզհետէ և տարինների ընթացքում. բայց երբ բոլորն էլ միասին են կործանուում, նաւերի պէս յանկարծակի ծովը սուզուում, երկրաշարժից խախտուած տների նման մի անգամից փուլ գալիս,—այն ժամանակ մարդս պիտի մի շատ ամուր սիրտ ունենայ, որ կարողանայ հանգիստ մնալ։ Բէն Հուրը չունէր այսպիսի սիրտ։

Այժմ նա հասել էր իր կեանքի այն դարձակէտին, ուր ամեն բան կախուած է լուսացող օրից և Նազովրեցուց։

## ԼԲ.

### *Գողգոթայի Ճանապարհը*

Հետևեալ առաւօտեան, երկրորդ ժամին, երկու ձիաւոր սրարշաւ դիմեցին դէպի Բէն Հուրի վրանը և ձիերից իջնելուն պէս նրան տեսնելու ցանկութիւն յայտնեցին։ Նա դեռ պառկած էր, բայց հրամայեց ներս ընդունել եկւորներին։



—Խաղաղութիւն ձեզ, եղբայրներ,—ասաց նա։—Նստեցէք։

Եկւորներն իրեն մտերիմ գալիլիացիք էին։

—Ո՛չ,—կարճ կերպով ասաց աւագը։—Նստել հանգստանալը կընշանակէր մեռցնել տալ Նազովրեցուն։ Վէր կաց, Յուդայի որդի, և միասին գնանք։ Դատաստանը կարուած է. արդէն խաչը Գողգոթայի վրայ է։

Բէն Հուրը շուարուած նայում էր նրանց երեսին։

—Ինչը,—միայն կարողացաւ կրկնել նա այդ վայրկեանին։

—Այս գիշեր նրան բռնեցին և դատապարտեցին,—շարունակեց աւագը։—Լուսադիմին Պիղատոսի մօտ տարան։ Հռոմայեցին երկու անգամ պարզ յայտնեց, թէ նրան մեղապարտ չէ գտնում։ Վերջապէս ձեռքերը ջրով լուաց և ասաց.—«Բաւական եմ ես յարենէ արդարոյդ այդորիկդ։ Դուք գիտասջիք». —և նրանք պատասխանեցին...

—Ո՞վքեր պատասխանեցին։

—Նրանք... քահանայապետը և ժողովուրդը.—«Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց»։

—Ո՛վ սուրբ, Աբրահամ հայր,—գոչեց Բէն Հուրը։—Հռոմայեցին աւելի բարի է հանդիսանում դէպի իսրայէլացին, քան թէ նոյն իսկ իսրայէլացիք։ Եւ եթէ... ո՛հ, եթէ նա իրօք Աստուծու որդի է, ո՞վ կարող է նրա արիւնը նրանց որդիներից լուանալ։ Չէ, այդ բանը չպիտի լինի... կռուելու ժամը հասել է։

Բէն Հուրի երեսն արիութեամբ բորբոքուեց, և նա իսկոյն ծափահարեց։

—Ձիերը, և շուտ արա,—ասաց նա արաբ սպասաւորին, որ նշանը լսելուն պէս ներս էր մտել։—Եւ թող Ամրան ուրիշ հանդերձ ուղարկէ ինձ, իսկ դու սուրս բեր։ Բարեկամներ, ժամանակ է Իսրայէլի համար մեռնելու։ Սպասեցէք դուրսը, մինչև որ դամ։

Նա մի պատառ հաց կերաւ, մի բաժակ գինի խմեց և շատ չանցած արդէն ճանապարհ վրայ էր։

—Ամենից առաջ դէպի ծուր,—հարցրեց գալիլիացին։

—Լեգէոնները կանչելու։

—Աւաղ.—հառաչեց մարդը և ձեռքը բարձրացրեց։

—Ինչո՞ւ աւաղ։

—Տէր իմ,—ասաց մարդն ամաչելով,—տէր, ես և այս ընկերս միայն... մենք հենք միայն հաւատարիմ մնացել. միւսները քահանաների կողմն են անցել։

—Ի՞նչ մտքով,—հարցրեց Բէն Հուրը և իր ձիու սանձը քաշեց։

—Նրան սպանելու մտքով։

—Նազովրեցո՞ւն։

—Դու ասացիր։

Բէն Հուրը կամաց մտիկ տուաւ նախ մէկին, յետոյ միւսին։ Կարծես դարձեալ լսում էր երեկոյեան հարցումը. «Զբաժանո՞ղ դու ես ինձ Հայր ոչ ըմպեցիմ»... դարձեալ կրկնում էր Նազովրեցուն իր հարցումը. «եթէ ես օգնութիւն բերեմ, կընդունի՞ս»։ Նա ասում էր ինքն իրեն.—Չէ կարելի նրա մահուան առաջն առնել։ Հէնց իր առաքելութեան սկզբից նա կատարեալ գիտակցութեամբ մահուան էր ձգտում։ Այդպէս է անօրինել մի գերագոյն կամք, և որի՞ կամքը,—եթէ ոչ Աստուծո՞։ Եթէ նա յօժար սրտով հնազանդւում և հետևում է այդ կամքին, էլ ի՞նչ կարող է նրա դէմ անել մի ուրիշը... Բէն Հուրը գալիլիացի ընկերների վրայ էր յոյս դրել. նրանց դասալքութեամբ այս յոյսը չէք էր դառնում։ Սակայն ինչո՞ւ այս բոլորը հէնց այս առաւօտ պիտի պատահէր... Բէն Հուրը սոսկաց։ Գուցէ իր դիտումները, ձգտումները, ջանքն ու ճիգը, այնքան արծաթ ծախսելը մի ամբարիշտ գործ էր Աստուծու դէմ։ Ուսաի



երը նա նորից նժոյգի սանձն արձակեց և ասաց.—Յառա՛ջ գնանք, եղբայրներ,—մի անստոյգ ապագայից զատ ուրիշ բան չկար նրա առջև։ Արագ ու ժիր գործ տեսնելու եռանդը, առանց որի չէ կարելի հերոս լինել աղմկալի դէպքերում, արդէն մարած էր նրա սրտում։

—Գնանք, եղբայրներ, Դողգոթա գնանք։

Նրանք անցան մի քանի գրգռուած խմբերի մօտով, որոնք իրենց նման դէպի հարաւ էին դիմում։ Քաղաքի բոլոր հիւսխակողմը մի ահագին շարժման մէջ էր։

Երեք ձիաւորները, կարծելով թէ Հերովդեան պալատի շրջակայքում կը հանդիպեն դատապարտուած մարդուն տանող թափօրին, այն կողմը դարձան, Ակրայից դէպի հարաւ-արևելք։ Ուուն բազմութիւնն արգելք եղաւ առաջ անցնել Եզեկիայի լճի հովտով. նրանք ստիպուեցին ձիերից իջնել և մի տան անկիւնի մօտ սպասել։

Նրանց թուում էր թէ կանգնած են մի յորդահոս գետի եզերքին—այնքան զօրեղ էր յառաջ մղուող մարդկանց շարժումը։

Կէս ժամի չափ, մի ժամի չափ թաւալուում էր այս մարդկային հեղեղը Բէն Հուրի և նրա ընկերների առջևից։ Երուսաղէմի բոլոր դասակարգերը, Հրէաստանի բոլոր աղանդները, Իսրայէլի բոլոր ցեղերը, աշխարհի բոլոր ազգերը ներկայացուած էին այս հոսանքում։ Անցնում էր Լիբիայի հրէան, եթովպացի հրէան, Հռոմի հրէան, Հռենոսի հրէան, կարճ ասել—հրէաներ Արևելքից, հրէաներ Արևմուտքից և այն ամեն կղզիներից, ուր որ նրանք առևտրական գործեր ունէին։ Անցնում էին հետևի, ձիով, ուղտով, պատգարակով, կառքով, սայլով, ամեն տարազի հագուստով, բայց և այնպէս այն զարմանալի միօրինակ պատկերով, որ այսօր էլ զատում է նրանց միւս ամեն ազգերից։ Անցնում էին աշխարհի բոլոր ծանօթ լեզուներով խօսելով—այս էր չոկում խումբը

խմբից—և անցնում ճեպով, իրար հրելով, բոլորն էլ մի խեղճ Նազովրեցու, մի չարագործի մահուան տանջանքը տեսնելու համար։

Այս մարդաշատ ամբոխից զատ՝ գալիս էին հազարաւոր ուխ հրէաներ, հրէաներին արհամարհող, ատող մարդիկ—յոյներ, հռոմայեցիք, արաբացիք, ասորիք, ափրիկեցիք, եգիպտացիք, արևելցիք։ Կարելի է ասել, թէ ամբողջ աշխարհն աճապարում էր ներկայ լինել խաչելութեան։

Ջնայելով այս խուռներամ կուտակման՝ թափօրի մէջ մի ինքնուրոյն լռութիւն էր տիրում, որ մէկ մէկ ընդհատւում էր ամբակների բաղխումով, անիւների շառաչումով և ջոկ ջոկ խօսակցութեան ձայներով։ Ամեն մէկի դէմքի վրայ երևում էր այն փոյթը, որ մարդիկ ցոյց են տալիս մի ահեղ դէպք, մի աւերմունք և կամ կռիւ տեսնելու համար վազելիս։

Վերջապէս Բէն Հուրը լսեց աշտարակների կողմից հնչող մի հեռաւոր աղաղակ։

—Լսի՛ր, գալիս են,—ասաց նրա ընկերներից մէկը։

Նրանց առջևից անցնող մարդիկ կանգ առան, ականջ դրին և երբ ձայները մօտենալով սաստկացան, շարունակեցին յառաջ գնալ անշշուկ։

Գոռում-գոչումը հետզհետէ մօտենում էր, օդը թնդում ձայներից։ Բէն Հուրը նկատեց դեսպակով բերուող Սիմոնիդէսին և նրա կողքին հետի եկող Եսթերին. նրանից բերւում էր մի ուրիշ դեսպակ։

—Խաղաղութիւն քեզ, Սիմոնիդէս, և քեզ, Եսթե՛ր,—ասաց Բէն Հուրը նրանց ընդ առաջ գնալով։—Եթէ գնում էք Գողգոթա, այստեղ սպասեցէք, մինչև որ թափօրն անցնի. յետոյ ես էլ ձեզ հետ կերթամ։

Սիմոնիդէսը կարծես յարկաբ սթափուելով ասաց,

—Բաղդասարի հետ խօսիր. ինչպէս կամենայ,



այնպէս կանեմ։ Նա ետևի դեսպակումն է։

Բէն Հուրն այն դեսպակի վարագոյրը յետ քաշեց։ Եգիպտացին մեռելի նման պառկած էր։ Բէն Հուրի առաջարկը լսելուն պէս նա նուազ ձայնով հարցրեց.

—Հնար կունենանք նրան տեսնելու։

—Նազովրեցո՛ւն։ Այո՛։ Նա այս տեղով պիտի անցնի, մի քանի քայլ մեզնից հեռու։

—Ո՛վ Աստուած,—ջերմութեամբ գոչեց ալևորը։—Այլ ևս մի անգամ, մի անգամ միայն։ Ո՛հ, ինչ սոսկալի օր աշխարհի համար։

Այժմ բոլոր խումբը հաւաքուած էր անկիւնի տան սուեւերում, Նազովրեցուն սպասելով։ Խօսող չկար։ կարծես թէ վախենում էին իրենց մտքերը յայտնելուց։

Բաղդասարը փոքր ինչ բարձրացել էր դեսպակից և մի ծառայի յենուել։ Եսթերն ու Բէն Հուրը կանգնած էին Սիմոնիդէսի մօտ։

Մարդկանց ամբոխը շարունակում էր առաջ ընթանալ աւելի հոծ գնդերով. աղաղակը մօտենում էր աւելի սաստիկ, աւելի սուր, խլացուցիչ ճիչերով։ Վերջապէս եկաւ հասաւ դատապարտուածին բերող թափօրը։

—Տեսէ՛ք,—ասաց Բէն Հուրը,—երուսաղէմը գալիս է։

Եկող թափօրի առաջին մասը կազմուած էր նախընթացիկ մանուկներից։ Նրանք ճըւում էին.

—Հրէից թագաւո՛րը։ Ճանապարհ տուէ՛ք հրէից թագաւորին։

Սիմոնիդէսը նրանց կայթիւնը դիտելով ասաց.

—Ո՛վ Բէն Հուր, վայ երուսաղէմ քաղաքին, երբ դրանք իրենց ժառանգութեան տէր դառնան։

Տղաներին յաջորդեց լեգէոնական զինուորների մի սպառազէն վաշտ անտարբեր ու հպարտ լռութեամբ։

Ապա թէ եկաւ Նազովրեցին։

Նա մեռելի նման էր։ Ամեն մի քայլափոխին գայթում էր և գրեթէ ընկնում։ Վերարկուն գզգզուած էր և անկար շապկի վրայ ընկած։ Մերկ ոտքերն արեան կարմիր հետք էին թողնում քարերի վրայ։ Վզին կախուած էր մի տախտակ մակագրով։ Գլխին հագցուած էր մի փշէ պսակ, որ ծակոտում էր ճակատը։ Վէրքերից հոսած արիւնն արդէն ցամաքել էր նրա երեսի և ուսերի վրայ։ Փշերի հետ խառնուած մազերն արիւնոտ էին։ Մօրթը մեռելի գոյն ունէր։ Ձեռքերն առջևից կապուած էին։ Քաղաքից անցնելիս նա ընկել էր իր ծանր խաչի տակ, որ իբրև մահապարտ պարտաւոր էր անձամբ կրել մինչև բուն կատարման տեղին։ Այժմ նրա փոխարէն մի գաւառակից էր տանում խաչը։ Զորք գինուոր պաշտպանում էին նրան խուժանից. բայց և այնպէս շատերը փայտով խփում էին նրան և լրբաբար երեսին թքում։ Սակայն նա լուռ էր. ոչ տրտունջ էր հանում բերնից, ոչ հառաչանք։ Չէր էլ բարձրացնում աչքերը։ Այդպէս հասաւ նա Բէն Հուրի խմբին, որ լի էր մի սրտագին կարեկցութեամբ դէպի նա... Եսթերը կպաւ հօր կողքին. հայրը—այն զօրեղ կամքով ծերունին—երեխայի պէս սարսափեց։ Բաղդասարն անխօս վայր ընկաւ։ Բէն Հուրն անգամ բացագանչեց.

—Աստուած իմ, Աստուած իմ։

Այն ժամանակ Նազովրեցին, ասես թէ նրանց սրտերի խորքը տեսնելով, իր գունատ երեսը նրանց կողմը դարձրեց և ամեն մէկին մի մի նայուածք ընծայեց—նայուածք, որ նրանք մինչև իրենց վերջին շունչը անմոռաց պիտի պահէին։ Նրանք զգացին, որ նայողը ոչ թէ իր վրայ, այլ նրանց վրայ է մտածում, և իր հոգեվար աչքերով մի օրհնութիւն շնորհում նրանց, որ անզօր էր արտասանել շուրթերով։



—Ո՞րտեղ են լեգէոնները դ, ով Բէն Հուր,—հարցրեց Սիմոնիդէսը։

—Աննման թող պատասխան տայ։

—Ի՞նչ. մի՞թէ անհաւատարիմ գտնուեցին։

—Բացի այս երկուսից։

—Ուրեմն ամեն բան կորած է, և այս բարի մարդը կըմեռնի։

Ուժգին ցաւից վաճառականի երեսը կծկուեց և գլուխը կրծքի վրայ ընկաւ։ Նա աղնուաբար մատնացած էր Բէն Հուրի բոլոր ձգտումները, յոյսերին. այս բոլորն այժմ չքանում էր...

Նազովրեցուն հետևում էին երկու ուրիշ խաչակիր մարդիկ։

—Ո՞վքեր են դրանք,—հարցրեց Բէն Հուրն իր գալիլիացի ընկերներին։

—Նազովրեցու հետ մահուան դատապարտուած աւազակները,—պատասխանեցին նրանք։

Յետոյ գալիս էր ոսկեհուռ զգեստով պճնուած և տաճարի թիկնապահներով շրջապատուած քահանայապետը. նրա հետից գալիս էին Սինեդրիոնը և քահանաների երկայն շարքը—բոլորն էլ սպիտակ, լայնաքղանց հանդերձով և խայտաճամուկ գօտիներով։

—Աննայի փեսան,—ասաց Բէն Հուրը կամացուկ։

—Կայիափան։ Ճանաչում եմ նրան,—պատասխանեց Սիմոնիդէսը. և քահանայապետին մի քանի վայրկեան դիտելուց յետոյ՝ շարունակեց.—Այժմ ահա հասկացած եմ և ամենայն դիտեմ, որ վրէժ վրայ մատկագիրը գրերով անցնող մարդն իսկութեամբ այն է, ինչ որ ասում է մակագիրը—Թագաւոր Հրէից։ Մի հասարակ աւազակ, մի գեհենիկ խաբեբայ և կամ չարագործ այսպիսի հանդիսով չէր տարուիլ։ Տես, ահա գալիս են ազգք և ազինք, Երուսաղէմը, Իսրայէլը։ Ահա

եվուդը [1]), ահա ծիրանի նռներով և ոսկեզօծ բոժոժներով պատմուճանը, որ այն օրից ի վեր, երբ Յադդուսը դիմաւորել էր Մակեդոնացուն, չէր տեսնուած փողոցներում—բոլորն էլ ապացոյց, որ այդ Նազովրեցին թագաւոր է: Ա՜խ, երանի թէ կարենայի վերկենալ և հետևել նրան:

Բէն Հուրն ապշած էր:

Սիմոնիդէսն արագ վրայ բերաւ.

—Ասա՛ Բաղդասարին, թէ ժամանակ է հեռանալու այստեղից: Արդէն գալիս է Երուսաղէմի մրուրը, խաժամուժը:

Այդ րոպէին Եսթերն ասաց.

—Թափօրում տեսնում եմ մի քանի կին: Լաց են լինում: Ո՞վքեր են արդեօք:

Նրա ցուցմամբ խմբի մարդիկ նկատեցին չորս լացող կանայք: Մէկը յենուած էր մի մարդու թևին. մարդը բաւական նման էր Նազովրեցուն: Բէն Հուրն իսկոյն պատասխանեց.

—Կնոջը բռնողը Նազովրեցու ամենասիրելի աշակերտն է. իսկ կինը Վարդապետի մայրն է՝ Մարիամը: Միւսները գալիլիացի ընկերուհիք են:

Եսթերը տամուկ աչքերով մտիկ էր տալիս սգաւոր կանանց, որոնք լալով անցնում էին:

Չարմանալի էր զառանցող խուժանի մոլի եռանդը, արեան ծարաւը: Այդտեղ կային ծառաներ, ուղտապաններ, մանրավաճառ վերեզակներ, դռնապաններ, պարտիզպաններ, միրգ ու գինի վաճառողներ, նորադարձներ, տաճարի պահապաններ, աւազակներ, գողեր և մի որոշ դասակարգի չպատկանող բիւրաւոր մարդիկ, որոնք այսպիսի դէպքերում յայտնի չէ թէ ո՞րտեղից սուաց, ծարաւ

[1]) Հրէից քահանայապետի վակասը:



դուրս են գալիս, գերեզմանի հոտ սփռելով և զազանաբար մռնչելով: Ոմանք սուրեր, շատերը տէգ ու գեղարդ ունէին. մեծ մասը սակայն գաւազաններ, բրեր և կամ թէ պարսատիկներ, որոնց քարերը պահուած էին գրպաններում կամ պարկերում: Հէնց որ ամբոխը ձանձրանում էր մի աղաղակ հնչեցնելուց, իսկոյն հնարում էր մէկ ուրիշը, և յատկապէս—Թագաւոր հրեից... Տեղ տուէք հրէից Թագաւորին... Ա՜յ դու, Աստուծու հայհոյիչ... Տաճարի պղծի՛չ... Խաչեցէք դրան, խաչեցէ՛ք:

Ամենից յաճախ կրկնւում էր մանաւանդ վերջին աղաղակը, որովհետև դա աւելի պարզ էր արտայայտում բոլորի տենչը:

—Նկէ՛ք,—ասաց Սիմոնիդէսը,—եկէք գնանք:

Բաղդասարն արդէն պատրաստ էր:

Բէն Հուրը սակայն այս հրաւէրը չլսեց:

Նոր անցնող խուժանի վայրագ երևոյթը և արեան պապակը յիշեցնում էր նրան Նազովրեցու գթութիւնը և այն անթիւ բարիքը, որ նա հասցրել էր թշուառ մարդկանց: Յանկարծ նա մտաբերեց, որ ինքն էլ պարտական է Նազովրեցուն. յիշեց այն ժամը, երբ ինքն էլ տաբուում էր դէպի մահ. այն ջուրը, որ խմել էր Նազարէթի հորի մօտ, և ջուր տուողի երկնային դէմքը. յիշեց Ծաղկազարդի կիրակուայ հրաշքը իր մօր ու քրոջ վրայ և վերջապէս իր այժմեայ անկարութիւնը՝ ձեռք մեկնելու օգնողին: Այս բոլորը յիշելով նա չարաչար տանջւում էր և պարսաւում ինքն իրեն:—Ի՞նչ արի ես, մտածում էր նա: Մի՞թէ չէի կարող արթուն հսկել գալիլիացոց վրայ, որպէս զի հաւատարիմ ճնայինն: Ա՜հ, հարուած տալու րոպէն այս էր: Մի համարձակ յարձակումով կարելի էր ոչ միայն ջարդել, ցրուել այս խառնիխուռնը և իսկոյն փրկել Նազովրե-

ցուն, հապա և Իսրայէլը ոտքի հանել և ազատութեան սուրբ պատերազմը վերթափնել։ Պատեհ ժամը կորցրի, և եթէ այս րոպէն էլ անհետ կորչի... Ո՜հ, Աստուած Աբրահամի։ Միթէ այլ ևս չէ՞ կարելի ոչինչ անել— ոչինչ։

Նա մի քանի գալիլիացի նշմարեց և շտապելով նրանց կողմը վազեց։

—Հետևեցէք ինձ,—գոչեց նա։—Ձեզ ասելու բան ունիմ։

Նրանք եկան պարսպի մօտ և Բէն Հուրն ասաց։

—Դուք այն մարդիկն էք, որ ինձնից սուր ընդունելով ուխտած էք պատերազմել ազատութեան և ապագայ թագաւորի համար։ Այժմ զինուած էք. ժամանակ է գործադրելու ձեր զէնքը։ Գնացէք, գտէք մեր ընկերներին. ես ձեզ Դողգոթայի վրայ կըսպասեմ, Նազովրեցու խաչի մօտ։ Շտապեցէք։ Նազովրեցին թագաւոր է. նա որ մեռնի, ազատութիւնն էլ կըմեռնի։

Մարդիկ նրան լսում էին, բայց պատասխան չէին տալիս։

—Ձ՞ք լսում,—գոչեց Բէն Հուրը։

Ապա թէ երկուսից մէկը պատասխանեց։

—Որդիք Յուդայի—այս անունով էին ճանաչում նրան—որդիք Յուդայի, դու խաբուած ես. Նազովրեցին ոչ թագաւոր է, ոչ էլ թագաւորի ոգի ունի։ Նրա Երուսաղէմ մտնելու ժամին մենք էլ այնտեղ ներկայ էինք. տեսանք նրան տաճարում. նա մեզ սաեց, սաեց և ամբողջ Իսրայէլին։ Նա Աստուծուն անտես արաւ տաճարի առջև և Դաւթի գահն արհամարհեց։ Նա թագաւոր չէ, Գալիլիան էլ նրա կողմը չէ։ Այժմ պիտի մեռնի։ Սակայն լսիր, Յուդայի որդի։ Քո սրերը մեր վրայ են, և մենք պատրաստ ենք ազատութեան համար մեռցնել սրանց։ Միայն ասա, որ նպատակդ



ազատութիւնն է, և մենք բոլորս կըմիանանք քեզ խաչի մօտ։

Բէն Հուրի ճգնաժամը հասել էր։ Եթէ ընդունէր այս առաջարկը և խօսք տար, մարդկութեան պատմութիւնն այժմեանից տարբեր կըլինէր. բայց այն ժամանակ դրա ընթացքի ղեկավարն էլ մարդիկ կըլինէին, ոչ թէ Աստուած,—մի բան, որ ընաւ երբէք չէ եղած, յաւիտեան էլ չի լինիլ։ Նա մի ծանր չփոթութեան մէջ ընկաւ, որի պատճառն անկարող էր բացատրել, բայց որը յետոյ Նազովրեցուն վերագրեց։ Նազովրեցու յարութեամբ միայն Բէն Հուրը համոզուեց, որ նրա մահն անհրաժեշտ էր յարութեան հաւատը հաստատելու համար, որովհետև առանց դրան քրիստոնէութիւնը մի հիմք չունեցող բան կըլինէր։ Շփոթութիւնը մի վճիռ դնելու կարողութիւնից զրկեց նրան — նա անճարակ և լուռ մնաց։ Ձեռքերի մէջ թաքցնելով իր երեսը, նա դողում էր ներքին կռուից, որ կռիւ էր իր կամքի և մի գերագոյն զօրութեան միջև։

—Ե՛կ, քեզ հնչ ասասում,—գոչեց Սիմոնիդէսը չորրորդ անգամ։

Բէն Հուրը մեքենաբար գնաց պեսպակների հետևից։ Եսթերը նրա կողքին էր։

Ինչպէս որ Բաղդասարը և նրա իմաստուն ընկերներն անապատում, այնպէս էլ այժմ Բէն Հուրը մի գերագոյն զօրութեան էր հետևում։

## ԼԶ.

### Խաչելութիւն

Երբ Բաղդասարը, Սիմոնիդէսը, Բէն Հուրը, Եսթերը և երկու գալիլիացիք խաչելութեան վայրը հասան,

Բէն Հուրը յանձն առաւ մի տեղ գտնել նրանց համար։ Ի՞նչպէս կարողացաւ բազմութեան միջով ճանապարհ բանալ և կամ թէ ինչպէս եկան և որ ուղղութեամբ,—այս ամենից նա բան չգիտէր. նա եկել էր անգիտաբար՝ առանց լսելու, առանց տեսնելու և կամ մտածելու, թէ ո՛ւր է գնում կամ ինչո՛ւ։ Այս դրութեան մէջ նա հարկաւ մի երեխայի պէս ապիկար կը լինէր այն եղերական ոճիրը խափանելու, որին շուտով ականատես պիտի լինէր։—Աստուածու խորհուրդներն անքննելի են, բայց ոչ նուազ անքննելի են և այն բոլոր միջոցները, որոնցով Նրանք կատարւում են և մատչելի դառնում մեր հասատին։

Բէն Հուրը և ընկերները կանգ առան։ Նրան պաշարող թովչութիւնը յանկարծ անցաւ, և նա սկսեց որոշ տեսնել ամեն բան։

Նա գտնւում էր մի բլրի վրայ, որի կոնաձև գագաթը փոշոտ ու չոր էր և ծորիրնի վախտ ծղօտներից զատ մի ուրիշ բոյս չէր արտադրում։ Այս գագաթը շրջապատուած էր մարդկային կենդանի պարսպով։ Հռոմէական զինուորներն արգելում էին բազմութեանն առաջ խուժել և մի հարիւրապետ արթուն հսկում էր, որ ներքին շրջանն ազատ մնայ։ Բէն Հուրն եկել էր իսկ և իսկ մինչև այդ շրջանի գիծը և կանգնել երեսով դէպի հիւսիս-արևմուտք։ Բլուրը հին արամէական Գողգոթան էր, որ լատիններէն կալվարիա է կոչւում [1]։

Նրա լանջերի, ստորոտի և չորս կողմի տարածութեան վրայ մի արձակ տեղ, մի ժայռ, մի քար, մի կանաչ վայր չէիր տեսնիլ, այլ միայն դէմքեր, դէմքեր, և դէմքեր... Երեք միլիոնի չափ մարդիկ երեք

[1]) Հայերէն՝ Կառափ կամ Գագաթ։



միլիոն բաբախուն սրտերով հետևում էին բլրի վրայ տեղի ունեցող դէպքերին՝ անտարբեր դէպի աւազակները և ատելութեամբ կամ երկիւղով ակնկառոյց միայն և եթ Նազովրեցուն, միայն Նրան, որ Նրանց բոլորին սիրում էր և բոլորի համար մեռնելու էր։

Անթիւ բազմութեան կուտակումը մի ծածանուող ծովի նման տագնապ է ազդում նայողին. բայց այդ ծովին Բէն Հուրը գրեթէ չէր նայում. նրա ուշքն ու միտքը ներքին շրջանում տեղի ունեցող բանների վրայ էր ամփոփուած։

Բլրի գագաթին և կենդանի պարսպի գլուխներից վեր կանգնած էր իր միտրով, զգեստով, գոռող դէմքով ճանաչելի քահանայապետը։ Ե՛ւս աւելի վեր, բլրի բուն կատարի վրայ և ամեն կողմից տեսանելի կանգնած էր մենակ Նազովրեցին—գլխակոր, ցաւակիր, վշտաչարչար, բայց լռիկ։ Իրրև յաւելուած նրա փշէ պսակի՝ զինուորներից մէկը հեգնութեան համար մի եղէգ էր դրել նրա ձեռքը, իրրև արքայական գաւազան։ Նրա շուրջը մերթ առանձին, մերթ միասին որոտում էին ծիծաղ, անէծք, հայհոյանք... Այս փոթորկուող կրքերի հանդէպ մարդ էակը, լոկ մարդը, ով ընթերցող, մարդկութեան համար ունեցած սիրոյ վերջին նշոյլն էլ կըկորցնէր։

Ինչպէս ասացինք՝ ամենքի աչքը Նազովրեցու վրայ էր ըևեռուած։ Բէն Հուրի սրտում—արդեօք կարեկցութեան ազդումից, թէ՞ մի ուրիշ դրդումից—մի փոփոխութիւն առաջ եկաւ։ Նա սկսեց մի բան զգալ, որ կարող է տակաւին անգամ զօրութիւն տալ համբերելու հոգու և մարմնի ցաւերին. մի բան, որ ցանկալի է անում մահը, իրրև մի անցք դէպի մի լաւագոյն կեանք —հոգեկան կեանք, որին այնքան հաւատացած էր Բաղդասարը։ Նա սկսեց հասկանալ, որ Նազովրեցու

կոչումն էր՝ տանել իրեն սիրողներին այս նիւթական կեանքի սահմանից այն վերին աշքայուխիւնը, որ պատրաստուած էր իր համար։ Եւ կարծես ոգւով լսեց և կամ հաւատաց, թէ լսեց Նազովրեցու խօսքերը, որ արդէն մոռացել էր.

«Ես եմ Յարուխիւն եւ Կեան՛ք»։

Այս խօսքերը նորից և նորից նրա ոգու մէջ հընչեցին և իրենց խոր իմաստն իմանալի արին նրա մաքին։ Եւ ինչպէս որ մենք սովոր ենք կրկնել ար և է հարց՝ դրա իմաստն աւելի լաւ հասկատելու համար մեր մաքում, այնպէս էլ նա, շարունակելով անքթիթ նայել բլրի վրայ կծկուած դէմքին, հարցնում էր ինքն իրեն.—Ո՞վ է Յարուխիւնը, ո՞վ է Կեանքը։

«Ես ե՛մ»,—

ասաց կարծես այն դէմքը... և Բէն Հուրին ասաց, որովհետև նոյն րոպէին նա մի այնպիսի խաղաղուխիւն զգաց, որի նմանը դեռ չէր զգացել իր կեանքում,—մի խաղաղուխիւն, որ ամեն տարակոյսների, կասկածների վախճանն էր և հաւատի, սիրոյ և համոզման սկիզբը։

Մուրճերի հարուածն այս հիացումից սթափեցրեց Բէն Հուրին։ Նա տեսաւ բլրի գագաթին, ինչ որ ցարդ չէր տեսել,—խաչեր պատրաստող բանուորներ։ Փոսերն արդէն փորուած էին. այժմ սիւների լայնքին դերաններ էին ամրացնում։

—Շտապեցրէք այդ մարդկանց,—ասաց քահանայապետը սպային։—Մահապարտները պիտի մեռնին և Թաղուին դեռ արևը մայր չմտած. օրէնքն այսպէս է։

Մի բարի զինուոր Նազովրեցուն մօտենալով խմելու բան առաջարկեց. նա մերժեց։ Այնուհետև եկաւ մի ուրիշ զինուոր, նրա վրի տախտակը հանեց և խաչափային մեխեց. պատրաստուխիւնը դրանով վերջացաւ։



—Խաչերը պատրաստ են,—ասաց սպան քահանայապետին, և սա ձեռքը շարժելով պատասխանեց.

—Թող նախ Աստուծու հայհոյիչը առաջ գայ։ Աստուծու որդին անշուշտ կազատէ ինքն իրեն։ Տեսնենք։

Բազմուխիւնը լռեց։ Ամենատոսկալի րոպէն հասել էր—երեք մարդիկ պիտի գամուէին խաչերին։ Երբ զինուորներն այդ անելու համար ամենից առաջ Նազովրեցուն մօտ քաշեցին, նայողների միջով սարսուռ անցաւ, ամենաբիրտ սրիկաներն անգամ քստմնեցին։ Յետոյ ոմանք ասում էին, թէ օդը յանկարծ սառցի նման ցրտացաւ և նրանք ցրտից դողացին։

—Ի՜նչ ահռելի լռուխիւն է,—ասաց Եսթերը հօր վղին փարուելով։

Վերջինս իր կրած լկանքը յիշեց և սարսափ զգաց։

—Ուրիշ կողմ նայիր, Եսթերիկ, մի ուրիշ կողմ,—ասաց նա։—Ինձ թւում է, թէ այս ժամից սկսած՝ այս տանջանքի ականատեսները—մեղաւոր լինին, թէ անմեղ—պիտի անիծուին։

Բազդասարը չոքեց։

—Ո՛րդիդ Հուրի,—ասաց Սիմոնիդէսը տագնապով,—որդիդ Հուրի, եթէ Եհովան իր բազուկը չմեկնէ, Իսրայէլը կորած է... մենք էլ կորած։

Բէն Հուրը հանդիսատ պատասխանեց.

—Ես երազում էի, Սիմոնիդէս, և լսեցի, թէ ինչո՞ւ է այս բլուրը կատարուում և ինչո՞ւ պիտի կատարուի։ Նազովրեցու կամքն է այս, Աստուծու կամքը։ Հետևենք եգիպտացու օրինակին. լռենք ու աղօթենք։

Երբ նա դարձեալ բլրին նայեց, զարհուրական լռուխեան մէջ խօսքեր հնչեցին դէպի նա.

«Ես եմ Յարուխիւն եւ Կեան՛ք»։

Եւ նա երկիւղածութեամբ ծունկ չոքեց՝ ասես թէ իրօք իրեն բան ասող անձի առջև։

Այն ինչ բլրի վրայ առաջ էր գնում չար գործը։ Զինուորները Նազովրեցու հանդերձը խլեցին, և նա միլիոնաւոր աչքերի առջև մերկ մնաց։ Առաւօտեան ընդունած խարազանի արիւնաթոր գծերը դեռ որոշ երևում էին մարմնի վրայ։ Բայց և այնպէս քարասիրտ մարդիկ տապալեցին նրան և խաչի վրայ տարածեցին —նախ բազուկները դերանի վրայ աջ ու ձախ քաշելով։ Մեխերը սուր էին... մի քանի հարուած, և նրանք քնքուշ ափերի միջով թափ անցան։ Յետոյ նրա ծընկները պրկեցին, որպէս զի ներբաններն ամուր կենան փայտի վրայ. յետոյ մէկ ոտքը միւսի վրայ ճնշեցին և երկուսի մէջ մի հատ բևեռ վարսեցին։ Կռանների խուլ հարուածը թնդում էր և չլսողներն անգամ սոսկում էին նրանց անկումը տեսնելիս։ Սակայն չարչարուող նահատակի շուրթերից ոչ մի ձայն, ոչ մի հեծուծիւն, ոչ մի տրտունջ չէր լսւում... ոչ մի բառ, որ չարակամին ծիծաղ ազդէր, բարեկամին կարեկցութիւն։

—Դէպի ո՞ր կողմը դարձրուած լինի սրա երեսը —բիրտ բիրտ հարցրեց մի զինուոր։

—Տաճարի կողմը,—պատասխան տուաւ քահանայապետը։—Թող մեռնելիս տեսնէ, որ սրբազան տունը քանդուած չէ։

Ծառաները խաչը վերցրին և բեռով հանդերձ հաստատելու տեղը տարան, ուր և անկեցին փոսի մէջ։ Նազովրեցու մարմինը արիւնահոս ձեռքերից կախ ընկած մնաց։ Դարձեալ նա ոչ մի հառաչանք չըհանեց, այլ միայն մի խնդրուածք, որից աւելի աստուածայինը դեռ չէր լսուած աշխարհում։

«Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։



Մոլեգին ազաղակով սկսեցին այժմ այպանել խաչը, որ ուղղաբերձ կանգնած էր ամեն մարդու տեսանելի, և ովքեր որ կարող էին մակագիրը կարդալ, կարդացին և բովանդակութիւնն ուրիշներին յայտնեցին։ Եւ ահագին բազմութիւնը մի ծայրից մինչև միւսը հեգնաբար գոռաց.

—Հրէից թագաւոր։ կեցցէ՛ս հրէից թագաւոր։

Այս մակագրի իմաստը լաւ հասկացող քահանայապետը բողոքել էր դրա դէմ, բայց ի զուր։

Թագաւոր կոչուածը հոգեվարքի մէջ մտիկ էր տալիս ապերախտ քաղաքին, որ այնպիսի նախատինքով վռնդել էր նրան իր միջից։

Աբեգակն արդէն միջօրէի բարձրութեան վրայ էր։ Հեռաւոր լեռները, քաղաքի տաճարը, պալատները, աշտարակները և բոլոր գեղեցիկ կէտերը ճաճանչում էին նրա պայծառ շողքերի մէջ։ Յանկարծ մի նօսր մէգ երկինքը պատեց, իբրև մի տարաժամ մթնշող, որ յանդէպս վրայ է հասնում լուսափայլ կէսօրին։ Հետզհետէ նա թանձրացաւ, մռայլացաւ. աղաղակներն ու քրքիջը լռեցին։ Մարդիկ սկսեցին տագնապելով իրար նայել, յետոյ նայել արեգակին, անհետացող լեռներին, նսեմացող երկնքին, սուսերով ծածկուող շրջակայքին և այն բլրին, որի վրայ կատարւում էր եղերական հանդէսը. յետոյ նորից իրար մտիկ տուին և լուռ մնացին սփրթնած։

—Միայն մէգ է և կամ մի վաղանցուկ մշուշ,—ասաց Սիմոնիդէսը, այլայլուած եսթերին սիրտ տալով։ —Իսկոյն նորից կըլուսանայ։

—Ոչ մէգ է, ոչ էլ մշուշ,—ասաց Բէն Հուրը։— Երկնաբնակ ոգիները... մարգարէները և սուրբերը կարեկցաբար խաւար են սփռում, որպէսզի այս ողբալի տեսարանը ծածկուած մնայ իրենց և ընութեան

աչքից։ Ո՛վ Սիմոնիդէս, Տէրը վկայ, այս խաչուածն Աստուծու որդին է։

Եւ ապշած Սիմոնիդէսին թողնելով, նա դիմեց չոքած բաղդասարին և ձեռքը նրա ուսին դրաւ։

—Ո՛վ իմաստուն եգիպտացի, լսիր։ Դու միայն ճանաչեցիր ճշմարտութիւնը—արդարև Աստուծու որդի է Նազովրեցին։

Բաղդասարը պատասխանեց թոյլ ձայնով.

—Ես տեսել էի նրան, երբ նա դեռ որպէս մանուկ պառկած էր մսուրում. զարմանալի չէ ուրեմն, որ քեզնից վաղ ճանաչեցի նրան։ Վայ ինձ, որ այս օրն էլ տեսայ։ Երանի՛ թէ եղբայրներիս հետ մնած լինէի։ Էրջանի՛կ Մելքոն, երջանի՛կ Գասպար։

—Մխիթարուի՛ր,—ասաց Բէն Հուրը։—Նրանք էլ անշուշտ մեր շուրջն են։

Մռայլը մթութեան էր տեղի տուել, մթութիւնը խաւարի։ Սակայն բլրի դահիճները դեռ շարունակում էին իրենց գործը. նրանք աւազակներին խաչեցին և խաչերը կանգնեցրին։ Այնուհետև զինուորները հեռացան և ամբողջն ապատութիւն տացաւ։ Մի անպուսպ հեղեղի պէս նա փութաց պաշարել խաչերը։ Չէնց որ մի մարդ տեղ էր բռնում, միւսն արդէն հրում էր նրան և ինքն իսկոյն առաջ մղւում երրորդից,—և հայհոյանք, ծաղր ու ծիծաղ, յիշոցներ ու թշնամանք էին, որ հնչում էին Նազովրեցու չորս կողմը։

—Հա՛, հա՛։ Եթէ թագաւոր է Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէդ, և հաւատասցուք դմա,—գոչեց մէկը։

—Այո՛,—վրայ բերաւ մի քահանայ,—պայլա՛ պրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել։

Միւսները գլուխները շարժելով ասում էին.

—Վա՛հ, որ քակէիր զաւաճանն և զերիս աւուրս շինէիր. ապրեցո՛ զքեզ։



Գարձեալ.

—Յուսացաւ յԱստուած։ Փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի զդա, քանզի ասաց՝ «Աստուծոյ որդի եմ»։

Անյաւտակ չարամտութիւն։ Ոչ մի ժամանակ Նազովրեցին ինքս չէր տուած ժողովրդին. ժողովրդի մեծ մասը չէր էլ տեսած նրան այդ օրից առաջ. բայց և այնպէս հայհոյում և նախատում էր նրան, իսկ աւազակներին կարեկցում։

Գերբնական դիշերն ահաբեկ արաւ ետթերին, ինչպէս և նրանից շատ քաջերին։

—Տուն գնանք, հայրիկ,—երկու-երեք անգամ ասաց նա։—Սա Աստուծու բարկութիւն է։ Ո՞վ գիտէ, թէ ինչ բաներ կըպատահեն այսուհետև։ Ես սարսափում եմ։

Սիմոնիդէսը չուզեց լսել։ Նա քիչ էր խօսում և ակնարկ գրգռուած էր։ Առաջին ժամից յետոյ, երբ խռնումը բլրի վրայ սկսել էր փոքր ինչ նուազել, ընկերները նրա առաջարկութեամբ գնացին, խաչին մօտեցան։ Այս նոր դիրքից էլ նրանք որոշ չէին տեսնում Նազովրեցու մթապատ մարմինը, բայց յոգոց հանելը պարզ լսում էին։

Աչելութեան երկրորդ ժամն էլ առաջինի նման անցաւ. այպանութիւնն ու թշնամանքը Նազովրեցու դէմ չէին դադարում։ Այդ միջոցին նա մի անգամ միայն բան խօսեց։ Մի քանի կանայք լալով չոքած էին նրա խաչի տակ։ Նա ճանաչեց իր մօրը և նրա հետ եկած իր սիրելի աշակերտին։

—«Կին դու», ասաց նա ձայնը բարձրացնելով, «ահա որդի քո»։—Եւ աշակերտին. «Ահա մայր քո»։

Երկրորդ ժամին արդէն երրորդն էր յաջորդել, սակայն ժողովուրդը դարձեալ խլրտուում էր բլրի շուրջը, կարծես թէ մի ձգողական զօրութեամբ կաշկանդ-

ուած լինէը այդ տեղին։ Կէսօրին իջած խաւարը անտարակոյս սաստիկ ազդել էր նրա վրայ։ Այժմ մարդիկ փոքր ինչ աւելի հանգիստ էին, քան առաջ, բայց և այնպէս կարելի էր լսել, թէ ինչպէս մթութեան մէջ մէկը միւսին կանչում էր և կամ մի խումբ ձայն էր տալիս միւս խմբին։ Նկատելի էր նմանապէս, որ Նազովրեցուն մօտենալիս ձայները իսկոյն կտրում են, լուռ նայում են նրա երեսին, լուռ անցնում խաչի մօտով և անշշունչ հեռանում։ Այս փոփոխութեան ենթակայ էին նաև պահապան զինուորները, որոնք փոքր ինչ առաջ վիճակ էին ձգել նոր խաչուածի հանդերձի վրայ. այժմ նրանք էլ լուռ էին սպայի հետ։ Երբ խաչուածը շունչ էր քաշում և կամ ցաւից գլուխը շարժում, նրանք իսկոյն ցնցւում էին։ Սակայն ամենից աւելի աչքի ընկնողը քահանայապետի և նրա խմբի պատկերն էր,—այն գերիմաստ խմբի, որ վերջին գիշերուայ ժողովում նրան համամիտ էր դատուել և գոռալով մահուան վճիռ պահանջել։ Խաւարը սաստկանալուն պէս նրանց վստահութիւնը կորել էր։ Նրանց մէջ կային աստեղագիտութեան հմուտ մարդիկ։ Այժմ նրանք քահանայապետին շրջապատած վախսում էին պատահարի մասին։

—Այժմ լիալուսին է,—ասում էին նրանք,—և արևի խաւարում չէ կարող լինել։

Բայց որովհետև խնդիրը պարզելու ձեռնհաս չէին և ոչ ոք չէր կարող անժամանակ խաւարի պատճառը բացատրել, ուստի ամենքն էլ իրենց սրտի մէջ Նազովրեցու հետ շաղակապեցին նրան և շփոթուեցին։ Եւ քանի խաւարը թանձրացաւ, այնքան էլ նրանց տագնապը սաստկացաւ։ Զինուորների հետևը քաշուած՝ նրանք անքթիթ սպասում էին Նազովրեցու որ և է խօսքին կամ շարժման, ականջ դնում նրա հևքին... Մարդը



կարող էր Մեսիան լինել... այն ժամանակ... այն ժամանակ։ Բայց և այնպէս դեռ սպասելով սպասում էին։

Բէն Հուրը սակայն ազատ միաց բոլոր նախկին կասկածներից։ Մի կատարեալ խաղաղութիւն էր իջել նրա սրտի մէջ։ Նա միայն պարզ աղօթում էր, որ խաչուածի վախճանը շուտ հասնի։ Նա տեսնում էր Սիմոնիդէսի այլայլումից, որ նա էլ մօտեցել է հաւատի շեմքին։ Տեսնում էր նրա մտածկոտ դէմքը, արեգակի կողմն ուղղուած հարցաքննող աչքերը, խաւարման պատճառն իմանալու ձգտումը։ Եսթերը դեռ փարուած էր հօրը։

—Մի վախենար,—ասում էր հայրն աղջկան,—այլ մօտս կաց և սպասիր։ Երկու անգամ էլ ինձնից աւելի ապրելու լինիս, այսպիսի բան երկրորդ անգամ չես տեսնիլ։ Գուցէ մի նոր յայտնութիւն լսենք։ Սպասենք մինչև վերջին րոպէն։

Երրորդ ժամը դեռ չէր անցած, երբ մի քանի դեռահիկ և ցնցոտաւոր մարդիկ եկան և միջին խաչի դէմ կանգ առան. մէկն ասաց.

—Սա է թագաւորն հրէից։

Միւսները ծիծաղելով գոչեցին.

—Ողջ լեր, թագաւորդ հրէից։

Պատասխան չընդունելով՝ նրանք աւելի մօտեցան խաչին և գոռացին.

—Եթէ թագաւոր ես հրէից և կամ որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։

Այդ վայրկենին խաչուած աւազակներից մէկը նոյնպէս գոչեց Նազովրեցուն.

—Այո, եթէ դու ես Քրիստոսը, փրկեա զանձն քո և զմեզ։

Մարդիկ քրքջալով ծափահարեցին, և ահա երկրորդ աւազակն ասաց առաջնին.

—Չերկնչի՛ս դու յԱստուծոյ, զի ի նմին պատժի կաս, և մեք՝ յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ոչ գործեաց։

Շրջակայ մարդիկ զարմացան և լռեցին. իսկ երկրորդ աւազակն այս անգամ Նազովրեցուն դառնալով ասաց.

—Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։

Սիմոնիդէսը զղջաց։ «Յորժամ գայցես արքայութեամբ քո՛վ»... Այս էր նրա կասկածների այն խոկ կէտը, որի մասին այնքան վիճած էր Բաղդասարի հետ։

—Լսեցի՛ր,—ասաց նրան Բէն Հուրը։—Այս աշխարհից չպիտի լինի թագաւորութիւնը։ Այն վկան ասաց, որ թագաւորը դեռ գալու է. ես էլ նոյնն եմ լսած երազումս։

—Լռի՛ր,—խնդրեց Սիմոնիդէսը,—աղաչում եմ, լռի՛ր։ Դուցէ Նազովրեցին պատասխան տայ։

Եւ հէնց որ այս ասաց, Նազովրեցին պարզ ձայնով պատասխանեց.

—«Ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ի դրախտին»։

Սիմոնիդէսը ձեռքերը կցեց, սպասելով այլ ևս մի բան լսելու, և յետոյ ասաց.

—Բա՛ւ է, որդիդ Բէն Հուրի։ Աւարն արդէն փարատուած է. այժմ տեսնում եմ ուրիշ աչքով, հաւատի աչքով, ինչպէս և Բաղդասարը։

Հաւատարիմ ծառան վերջապէս գտել էր իր վարձքը։ Փոյթ չէր նրան, որ իր մարմինը ջախջախուած էր. փոյթ չէր, որ կրած վշտերի յիշատակը պիտի ապրէր. այժմ նա ճանաչել էր մի նոր կեանք, և դրա անունը դրախտ էր։ Այնտեղ կըգտնէր իր երա-



զած թագաւորութիւնը և թագաւորին։ Նրա սիրտը խաղաղուել էր։

Սակայն վերը, խաչի շուրջը, չփոթութիւն և սարսափ էր տիրել։ Խորամանկ դպիրները տապնապած էին. նրանք մտնում էին դատապարտել Նազովրեցուն այն պատճառով յատկապէս, որ նա Մեսիա էր անուանել իրեն։ Արդ՝ խաչի վրայ էլ նոյնն էր կրկնում և դեռ չարագործին դրախտ խոստանում... Նրանք խուճապած էին իրենց արարքից։ Քահանայապետն անգամ, այս խրոխտամիտ պետն անգամ զարհուրած էր։ Ո՞րտեղից էր Նազովրեցու վստահութիւնը, եթէ ոչ ճշմարտութիւնից։ Եւ ի՞նչ էր ճշմարտութիւնը, եթէ ոչ Աստուած։ Փոքր ինչ ևս, և նրանք իսկոյն կըփախչէին...

Նազովրեցու շունչը ծանրանում էր, հևքը բռնում։ Միայն երեք ժամ խաչի վրայ, և նա արդէն մեռնելու մօտ էր։

Այս լուրն անցաւ բերնից բերան, և ամէն տեղ լռութիւն տիրեց։ Օդի մէջ մի խեղդուկ դողրջի տարածուեց. խաւարի վրայ տօթ աւելացաւ։ Ով որ չգիտէր, չէր իմանալ, որ դագաղի ծածկոյթի պէս վայր իջած սև ամպի տակ երեք միլիոն էակներ ահաբեկ սրտով սպասում են, թէ ինչ կըլինի...այն աստիճան լուռ էին նրանք։

Եւ յանկարծ խաչի վրայից մի տրտմագին ձայն հնչեց.

—«Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»։

Ամենքն էլ սարսափ ղգացին այս ձայնից, և մեկը ճիչ հանեց։

Զինուորները մի սափոր ջուր էին բերել քացախով խառն և Բէն Հուրի կանգնած տեղը դրել։ Եթէ այդ ջրի մէջ մի սպունգ թաթախուէր և եղէգնի ծայրով չարչարուողին մատուցուէր, կարելի կըլինէր դէթ

վոքը ինչ նրա լեզուն զովացնել։ Բէն Հուրը յիշեց Նազարէթի հորի մօտ իրեն մատուցուած պաղ ջուրը մի ներշնչման հետևելով՝ նա իսկոյն սպունգն առաւ, անօթի մէջ թաթախեց և դէպի խաչը վազեց։

—Թող այդ, թող այդ,—գոչեց նրան բազմութիւնը։

Առանց ականջ դնելու՝ նա փութաց Նազովրեցու շուրթերին մօտեցնել սպունգը։

Արդէն ուշ էր...շատ ուշ էր։

Բէն Հուրը տեսաւ խաչուածի թէև արիւնաթաթաւ ու փոշոտ, բայց նոյն վայրկենին մի գերբնական լուսով փայլուն երեսը. տեսաւ նաև աչքերը, որոնք նայում էին դէպի երկինք՝ յառուած մէկին, որ միայն իրեն էր տեսանելի։ Հաճութիւն, դիւրութիւն և նոյնիսկ յաղթութիւն կար այն ձայնի մէջ, որ արձակեց այժմ ղոհը.

—«Ամենայն ինչ կատարեաւ է։

Նրա աչքերի լոյսը հանգաւ. պսակուած գլուխը հետզհետէ կախուեց դէպ ելևէջը անող կրծքի վրայ։ Բէն Հուրը կարծեց, թէ մահուան երկունքը վերջացել է. սակայն մեկնող հոգին դարձեալ մի անգամ ոյժ առաւ, և Բէն Հուրն ու մօտիկ գտնուողները լսեցին.

—«Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ»։

Բազմաչարչար մարմնի միջով դող անցաւ. նորից մի ծանր հեծութիւն, և Նազովրեցու առաքելութիւնն ու երկրային կեանքը վերջացան։ Նրա սիրալիր սիրտը բեկուել էր վշտից... դրանից մեռաւ նա, ընթերցող։

Բէն Հուրը դարձաւ ընկերներին և պարզ ասաց.

—Վերջացաւ... հոգին աւանդեց։



## ԼԸ

### *Փախուստ*

Այս գոյժը զարմանալի արագութեամբ ժողովրդին էլ հասաւ։ Ոչ ոք չէր յանդգնում բարձրաձայն յայտնել նրան. միայն շշունջ էր, որ անցնում էր բերնից բերան—մեռաւ, մեռաւ—աւելի ոչինչ։ Բազմութեան փափագը կատարուած էր. Նազովրեցին արդէն մեռած... Բայց ինչո՞ւ էին սարսափով նայում մէկ մէկու։—Որովհետև նրա արիւնն ամենքի վրայ ծանրացել էր։

Եւ մինչ նրանք ապշած իրար էին նայում, գետինն սկսեց տատանուիլ։ Ընկնելու համար մարդիկ սկսեցին իրար յենուիլ։ Մի վայրկենում խաւարը կորաւ, արևը ծագեց և ամենքը բլրի վրայ կանգնած խաչերը տեսան։ Տեսան երեք խաչ, բայց ամենից որոշ աչքի ընկնողը միջինն էր. կարծես թէ նա իր բեռի հետ աճում էր և աճելով դէպի երկինք բարձրանում։ Եւ ամեն մարդ ամբոխի միջից, որ հայհոյել էր Նազովրեցուն, ամեն մէկը, որ ծաղրել էր նրան, ամեն մէկը, որ գոչել էր «ի խաչ հան զդա», ամեն մէկը, որ հետևել էր նրան քաղաքից և նրան սրտանց մահ կամեցել—ամեն մէկը պարզ զգաց, որ մենակ ինքն է ընդհանուրի յանցանքը կրում, և թէ փախչելով պիտի փախչի, եթէ ուզում է կենդանի մնալ։

Եւ սկսեցին փախչել, հապճեպ փախչել—հետի, ձիով, իշով, ուղտով, կառքով, սայլով... Եւ երկրաշարժը հալածում էր նրանց՝ ասես թէ անմեղ ղոհի փոխարէն վրէժխնդիր լինելու համար. գետնով էր տալիս և սաստկացնում նրանց խուճապը՝ ժայռերը պայթեցնելով, գերեզմանները բանալով։ Նրանք կոծում էին իրենց կուրծքը և լալագին ճչում սոսկումից... Անպար-

ու արիւնը նրանց վրայ էր։ Բնիկները և օտարազգիք, քահանաներ և սոսկականք, հարուստ և մուրացիկ, սադուկեցի և փարիսեցի—անխտիր իրար հրելով վազում էին և գլորւում։ Նրանց աղաղակին առ Աստուած զայրագին դղրդիւնով պատասխան էր տալիս գետինը՝ առանց ի նկատ առնելու ոչ հասակ, ոչ աստիճան, ոչ պատիւ. մէկ էին նրա համար թէ քահանայապետը և թէ սրա ոճրակից խորհրդատուները։ Ամենքի վրայ ծանրացած էր Նազովրեցու արիւնը։

## ԼԸ.

### *Սուրբ պնուններ*

Երբ արեգակը բացուելով խաչելութեան վայրը լուսաւորեց, ուրիշ մարդ չէր մնացել բլրի վրայ, բայց միայն Նազովրեցու մայրը, աշակերտը, բարեպաշտ կանայք, հարիւրապետն իր զինուորներով և Բէն Հուրը։ Նրանք ժամանակ չունէին ոչ բազմութեան ամեհի փախուստը դիտելու, ոչ էլ իրենց վրայ մտածելու։

—Նստիր այստեղ,—ասաց Բէն Հուրը Եսթերին, հօր ուրքի տակ տեղ պատրաստելով նրա համար։—Աչքերդ փակիր, վերև մի նայիր։ Յոյսդ Աստուծու վրայ դիր և այն արդարի, որին չարաչար սպանեցին։

—Այժմ Քրիստոս, այժմ Փրկիչ անուանենք նրան,—ասաց Սիմոնիդէսը երկիւղածութեամբ։

—Ամէն,—հաստատեց Բէն Հուրը։

Երկրաշարժի մի նոր հարուած բլուրը ցնցեց։ Սոսկալի էր աւազակների ողբն ու լացը երերացող խաչերի վրայ։ Շարժից սասանուող Բէն Հուրը ժամանակ գտաւ գետնատարած Բաղդասարին նայելու և



դէպի նա վազեց... բարի ծերունին արդէն մեռած էր։ Այժմ միայն Բէն Հուրը յիշեց այն ձայնը, որ հնչել էր իբր պատասխան Նազովրեցու վերջին հեծութեան, և իմացաւ, որ եգիպտացու հոգին երկնային դրախտն է անցել իր վարդապետի հոգու հետ, վարձատրութիւն գտնելով իր հաւատի, սիրոյ և բարի գործերի համար։

Բաղդասարի ծառաները թողել էին նրան ընդհանուր իրարանցման ժամանակ։ Այժմ երբ ամեն բան վերջացել էր, երկու գալիլիացիք ալեւորի դին վերցրին և դեսպակով հասցրին մինչև քաղաք։ Արեգակի մայր մտնելու միջոցին դեսպակը Բէն Հուրի պալատը տարուեց հարաւային դռան միջով։ Համարեա թէ այդ ժամին էլ Քրիստոսի մարմինը խաչից վայր իջեցրին։

Բաղդասարի մարմինը դահլիճում դրին։ Բէն Հուրի տան սպասաւորները լալով եկան նրան տեսնելու, որովհետև նա ամենքի սէրը գրաւած էր. բայց երբ տեսան, որ նրա երեսը ժպտուն է, սրբեցին իրենց արտասուքը և ասացին.

—Երանի՛ դրան։ Այս երեկոյ շատ աւելի երջանիկ է, քան առաւօտեան տանից դուրս գնալիս։

Բէն Հուրը չուզեց սպասաւորի բերնով յայտնել իրասին հօր մահը, այլ անձամբ գնաց նրան տեսնելու և բերելու հօր մարմնի մօտ։ Նա երևակայեց աղջկայ դրութիւնը... այժմ մենակ պիտի մնար. ժամանակ էր ներել նրան և խղճալ։ Նա չէր հարցրել առաւօտեան, թէ ինչու օրիորդը բացակայ է ընկերութիւնից և կամ որտեղ է, որովհետև չէր մտածել նրա մասին։ Այս պատճառով նա ամաչեց և պատրաստ էր մեղայ ասել օրիորդին՝ մանաւանդ մի այսպիսի գործ նրան յայտնելիս։

Նա շարժեց դռան վարագոյրը, և թէպէտ լսեց ներսից մի հնչակի ձայն, բայց պատասխան չընդու-

նեց։—Իրաս, Իրաս, կանչեց նա.—սակայն դարձեալ պատասխան չկար։ Յետոյ յետ քաշեց վարագոյրը և ներս մտաւ. օրիորդն այնտեղ չէր։ Շտապով բարձրացաւ տանիքի վրայ. այնտեղ էլ չկար։ Հարցրեց սպասաւորներին. ամբողջ օրը նրան տեսնող չէր եղել։ Տան բոլոր անկիւնները խուզարկելուց յետոյ՝ Բէն Հուրը դահլիճը վերադարձաւ և նստեց ննջեցեալի մօտ, ուր իսկապէս աղջիկը պիտի նստած լինէր։—Ո՛րքան Յիսուս ողորմած է դէպի իր ալևոր ծառան,—մտածեց Բէն Հուրը։—Արքայութեան շէմքի առջև սա կըմոռանայ այս աշխարհի վշտերը, մինչև անգամ անսիրտ աղջկայ պատճառած վիշտը...

Թաղման կարգը կատարուելուց յետոյ—հրաշալի բժշկութեան իններորդ օրը—Բէն Հուրն իր մօրն ու Թիրզային տուն բերաւ։ Եւ այն օրից ի վեր այդ տանը աղօթք չէր ասւում, ուր երկիւղածութեամբ չյիշուէին այս սուրբ անունները՝ «Հայր Աստուած և Քրիստոս Որդի»։

## ԼԹ.

### Հինգ տարի անց

Յաջելութիւնից հինգ տարի յետոյ, Բէն Հուրի կինը՝ Եսթերը մենակ նստած էր Միզենիումի ամարանոցի մի գեղեցիկ սենեակում։ Կէս օր էր. այգու վարդերը և որթերն արդէն բացուել էին իտալական արևգակի ջերմ շողքի տակ։ Ամեն բան հոռմէական էր այս սենեակում. Եսթերի տարազն էր միայն հրէական։ Թիրզան և երկու մանուկ խաղում էին յատակին փըռուած առիւծենու վրայ։ Թիրզայի աչքերից երևում էր, որ երեխաների մայրն լինքն է։



Տարիների ընթացքում նա և՛ աւելի գեղեցկացել էր. այժմ նա տանտիկինն էր, և երջանիկ տանտիկին։

Ներս մտաւ մի սպասուհի և ասաց.

—Տիրուհի, գաւթում մի կին է սպասում քեզ։

—Աւա՜, որ ներս գայ. ես այստեղ կընդունեմ նրան։

Եկաւ մի անծանօթ կին։ Հրէուհին նրան տեսնելուն պէս ոտքի կանգնեց, ուզում էր խօսել, սակայն յանկարծ շփոթուեց և դունատուելով՝ յետ նահանջեց։ Յետոյ ասաց.

—Ես ճանաչում էի քեզ, բարի կին. դու...

—Ես Իրասն եմ, Բաղդասարի աղջիկը։

Եսթերը ջանաց իր այլայլումը թաքցնել և պատուիրեց սպասուհուն աթոռ տալ հիւրին։

—Պէտք չէ, պէտք չէ,—ասաց Իրասը սառնութեամբ։—Ես իսկոյն կըհեռանամ։

Երկուսն էլ իրար մտիկ տուին։ Եսթերը մի գեղեցիկ կին էր, երջանիկ մայր և երջանիկ ամուսին։ Միւս կողմից ահներև էր, որ բախտը այդքան չէր ժպտացել նրա նախկին հակառակորդին։ Բարձրահասակ Իրասի առաջուայ հրապոյրներից մի քանիսը դեռ մնացել էին. բայց նրա ամբողջ պատկերը մի վատթար կեանքի կնիք էր կրում։ Երեսը կոպտացել էր, խոշոր աչքերը կարմրել էին, այտերը դեղնել։ Շուրթերի վրայ մի լպիրշ բրտութիւն էր երևում և իր անխնամ արտաքինը վաղահաս ծերութեան նշանները սաստկացնում։ Նրա հագուստը ոչ վայելուչ էր, ոչ մաքուր. վողոցի կաւը կպած էր սանդալներին։

—Քո՛ երեխաներն են դրանք,—ասաց նա, ծանր լռութիւնն ընդհատելով։

Եսթերը մի խանդակաթ ժպիտ նետեց մանուկների վրայ և ժպտաց։

—Այո՛: Չէ՛ր կամենալ խաղալ սրանց հետ:

—Ոչ, չեմ կամենում վախեցնել,—պատասխանեց Իրասը: Յետոյ մօտեցաւ Եսթերին և նրա սարսափը տեսնելով ասաց.—Մի՛ զարհուրիր: Մարդուդ համար լուր եմ բերել: Աստ նրան, որ իր թշնամին մեռած է. ես ինքս եմ սպանել նրան ինձ հասցրած թշուառութեան վրէժխնդրէն:

—Իր թշնամի՞ն:

—Մէսալան: Այս էլ աստ ամուսնուդ, որ ես այնքան պատժուած եմ իր դէմ նենգած չարիքներիս համար, որ ինքն անգամ գութ կըզգար դէպի ինձ:

Եսթերի աչքերը տամկացան. ինքն էլ ուզեց մի բան ասել:

—Ո՛չ, ո՛չ,—գոչեց Իրասը:—Կարեկցութեան կամ արտասուքի կարօտ չեմ ես: Աստ նրան վերջապէս, որ հոռմայեցի լինելը՝ գազան լինել է: Մնաս բարով:

Ուզում էր դնալ: Եսթերը նրան յետ կանչեց:

—Մնա՛, սպասիր մարդուս գալուն: Նա աւելութիւն չունի դէպի քեզ: Նա քեզ միշտ որոնում էր: Նա բարեկամդ կըլինի, ես էլ նոյնպէս: Մենք քրիստոնեայ ենք:

—Ո՛չ,—ասաց յամառութեամբ Իրասը:—Ես այն եմ, ինչ որ էի ազատ կամքովս: Շուտով ամեն բան կըվերջանայ:

—Բայց...—կմկմաց Եսթերը,—արդեօք ո՛ր և է կարիք, ցանկութիւն...

Եգիպտուհու դէմքը մեղմացաւ. նա երեխաների վրայ նայեց:

—Մի անգամ միայն:

Եսթերը նրա միտքն ըմբռնեց և ասաց.

—Ազատ ես:

Իրասը մօտեցաւ մանուկներին և չոքելով՝ երկուսին էլ համբուրեց: Յետոյ կամաց վեր կացաւ, լաւ դիտեց նրանց և առանց մնաս բարով ասելու՝ դռան կողմը գնաց: Եւ մինչ Եսթերն ուշքի կըգար, կինն սրդէն հեռացել էր:

Այս այցելութեան դէպքից յետոյ Բէն Հուրն իմացաւ, ինչ որ վաղուց դուշակել էր—խաչելութեան օրն իսկ Իրասն իր հօրը թողնելով գնացել էր Մէսալայի հետից:

Բէն Հուրը դարձեալ սկսեց որոնել, սակայն ի զուր...

Այնուհետև ոչ ոք չտեսաւ Իրասին, ոչ էլ նրա մասին բան լսեց: Կապոյտ ծովախորշը, չնայելով իր ժպտուն երեսին, շատ ահռելի գաղանիքներ ունի իր խորքում: Եթէ նա լեզու ունենար, Իրասի վախճանը կըպարզէր...

Սիմոնիդէսը մինչև խորին ծերութիւնն ապրեց: Ներոնի կայսրութեան տասներորդ թուականին նա յետ քաշուեց Անտիոքի գործերից, որ այնքան տարի կառավարել էր: Իր կորովի միտքը և սրտի բարութիւնը մինչև վերջը պահպանեց, մինչև վերջն էլ յաջողակ մնաց գործերում:

Նոյն թուականին, մի երեկոյ, նա նստած էր բազկաթոռում մթերանոցի տանիքի վրայ: Բէն Հուրը և Եսթերը իրենց երեք զաւակներով նրա շուրջն էին: Նրա նաւերից վերջինը խարխափ նետած ճօճւում էր ջրի երեսին. մխանեըն արդէն վաճառուած էին: Յաչելութեան օրից ի վեր միայն մի հատիկ վիշտ էր հասել ծերունուն. այդ էր Բէն Հուրի մօր մահը... և այս վիշտը, ինչպէս որ մահուան ժամին, այնպէս էլ այժմ ամռքում էր քրիստոնէական հաւատով:

Վերոյիշեալ նաւը նախորդ օրն էր ժամանել, լուր բերելով, թէ քրիստոնեաները Ներոնի ձեռքից հալածւում

են Հռոմում։ Մինչ տանիքի վրայ հաւաքուած խումբն այս ցաւալի դէպքի մասին խօսակցելով նստած էր, հաւատարիմ Մալուխը եկաւ և մի ծրար յանձնեց Բէն Հուրին։

—Ո՞վ բերաւ այս նամակը,—հարցրեց վերջինս, կարդալուց յետոյ։

—Մի արաբ։

—Ո՞րտեղ է նա։

—Նոր հեռացաւ։

—Ականջ դիր, Սիմոնիդէս,—ասաց Բէն Հուրը և հետևեալ նամակը կարդաց.

«Վեհանձն Իլդերիմի որդի Իլդերիմը և Իլդերիմ ցեղի Շէյխը՝ Հուրի որդի Յուդային։

«Ո՜վ հօրս բարեկամ, խմացիր, թէ հայրս ոչքան էր սիրում քեզ։ Կարդա՛ ինչ որ ուղարկում եմ քեզ, և կիմանաս։ Նրա կամքը և՛ իմ կամքն է. հետևաբար ինչ որ նա քեզ տալիս է, քոնն է։

«Նա ընկաւ մեծ պատերազմում. բայց ես նրա վրէժը հանեցի և ինչ որ պարթևները նրանից յափշտակել էին՝ յետ գրաւեցի—ի միջի այլոց այս գրութիւնը և Միթրայի ամբողջ սերունդը, այն Միթրայի, որ հռչակաւոր աստղերի [1]) մայրն էր։

«Ապաղաւթիւն քեզ և քոյրիններիդ։

«Այս ձայնն անապատի խորքից—ձայնն է քո բարեկամ՝

«Իլդերիմ Շէյխի»։

Այնուհետև Բէն Հուրը բացեց մի պրոնուի թերթիկ, որ թթենու տերևի նման դեղնած էր, և կարդաց.

«Իլդեր ցեղի Շէյխ Վեհանձն կոչուած Իլդերիմին իր որդուն.

[1]) Այսինքն ձիերի, որոնք աստղերի անունով կոչւում էին Շնիկ, Ոլիկ, Անտաբէս, Անթայր։ Միբան վերջին երեքի մայրն էր։ Տես II հատոր բ. գլուխ։



«Ամեն բան, ինչ որ ունիմ, ով որդի, Թող քեզ լինի, բացի Անտիոքի մօտերքում գտնուող Արմաւենեաց անտառից։ Դա Թող հասնի Հուրի որդուն, որ այնպիսի փառք բերաւ մեզ կրկէսում. նրան Թող հասնի և ընդ միշտ նրա սերնդի ժառանգութիւնը լինի։

«Հօրդ չանպատուեա։

«Վեհանձն Իլդերիմ, Շէյխ»։

—Ի՞նչ կասես,—հարցրեց Բէն Հուրը Սիմոնիդէսին։

Եսթերն ուրախութեամբ թերթիկն առաւ և ինքն իրեն կարդաց։ Սիմոնիդէսը լուռ էր. աչքերն ուղղուած էին նաւի վրայ, ինքն էլ մտածկոտ։ Վերջապէս լրջութեամբ ասաց.

—Որդիդ Հուրի, այս վերջին տարիներս Աստուած դթած է դէպի քեզ։ Գոհացիր նրանից։ Արդեօք ժամանակ չէ՞ ձեռքիդ տակ դիզուած հարստութիւնը գործ դնելու, որ արդէն ահագին է և դեռ աճելով աճում է։

—Արդէն վաղուց ես վճռած եմ այս խնդիրը։ Հարստութիւնս պիտի ծառայէ Տուողին, և ոչ միայն մասամբ, այլ ամբողջապէս։ Կը մնայ միայն որոշել—ինչպէս անեմ, որ ըստ կարելւոյն լաւ ծառայէ նպատակին։ Այս դէմ ասա ինձ, բարեկամ։

Սիմոնիդէսը պատասխանեց.

—Յայտնի է ինձ, թէ ինչ ահագին գումարներ ես նուիրել Անտիոքի եկեղեցուն։ Այժմ Վեհանձն Շէյխի պարգևի հետ միասին մեր հռոմէական եղբայրների հալածուելու գոյժը հասաւ։ Այնտեղ մի նոր ասպարէզ է բացւում։ Պէտք չէ որ լոյսը հանգչի մի այդպիսի քաղաքում։

—Ասա, ինչպէս նրան վառ պահեմ։

—Կասեմ։ Հռոմայեցոց համար, և նոյն իսկ Ներոնի համար, մի՛այն երկու սուրբ բան կայ—գոնէ ես չգիտեմ մի ուրիշ բան, որ նրանք աւելի պաշտէին. դրանք

են մեռելների աճիւնը և գերեզմանները: Եթէ չես կարող գետնի վրայ տաճարներ կանգնել ի փառս Տեառն, գետնի տակ հիմնիր նրանց, և որպէս զի նրանք ազատ մնան պղծութիւնից, թող հաւատով մեռնողներն այնտեղ թաղուին:

Բէն Հուրը յուզուած ոտքի ելաւ:

—Դա մի մեծ գաղափար է,—ասաց նա: Ես չեմ սպասիլ. սպասելու ժամանակ չկայ: Հէնց այս բօթաբեր նաւով ես Հռոմ կերթամ: Վաղն իսկ կերթամ:

Նա դարձաւ Մալուխին.

—Աստ, որ նաւը պատրաստ լինի. և ինքդ էլ Մալուխ, հետս գնալու պատրաստ կաց:

—Լաւ ասացիր,—վրայ բերաւ Սիմոնիդէսը:

—Իսկ դու, Եսթեր, դու ինչ կասես,—հարցրեց Բէն Հուրը:

Եսթերը նրան մօտեցաւ և թևը մեկնելով պատասխանեց.

—Այդ գործով դու ամենից լաւ կըծառայես Քրիստոսին: Ո՛վ ամուսինս, թոյլ տուր—ես էլ քեզ հետ գնամ և քեզ օգնեմ:

* * *

Ով որ մեր ընթերցողներից Հռոմ գնայ և սուրբ Կալիկստոյի գետնափոր գերեզմաններն աչքի անցնէ, որոնք սուրբ Սեբաստիանոսի կատակոմբներից շատ հին են, կըտեսնէ, թէ Բէն Հուրի գանձերը ինչ կերպով գործադրուեցին, և շնորհակալութեամբ կըլիշէ նրան: Այդ ընդարձակ գերեզմաններից էր, որ քրիստոնէութիւնը յաղթանակով վեր կացաւ և հեթանոսական Հռոմը կործանեց:

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան
NL0173909

ՀՀ Ազգային գրադարան
NL0173908

82.
N. - 63